



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

308

9 (~)
2-62

12.08.2013

30 MAY 2011

Հրատարակութիւն Գ. Գևորգեանի „ԳՈՒՅԱՆԵՐԵՐԴԻ“ գրախանութիւն

3(∞)

Վ-62

28 JUN 2005

ԶԵՐՆԱՐԿ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ.

Կ Ա Գ Ժ Ե ց

ՊՈՒԵԼ. ՎԵՆԱԳԻՐԱԴՕՎ.

ՄՈՍԴԱՅԻ ՀԱՄԱԼԱՐԱԾՆԻ ՊՐՕՖԵՍՍՈՒ

Հայերէն բարզմանեց Գ. Խ Ա Ժ Ա Կ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

ՀՀԻՆ-ԱՇԽԱՌՃ


Ժողովրդական լուսաւորութեան նախարարութեան ռատումական
յանձնաժողովը ռուսերէն բնագիրն ընդունել է իր դասագիրք և իր
օժանդակ ձեռնարկ զիմն անեների և հակական դպրոցների համար:

Թ Ի Յ Լ Ի Զ

Տայարան ՀԵԽԹԻՆ, Ընկած Մակարեան փող. № 15-

1906

(136)



ՏԱՐԱՆ 85

ԹԱՐԳՄԱՆ ԿՈՂՄԻՑ.

Առաջարկելով այս ձեռնարկի թարգմանութիւնը հայ ուսուցիչներին, հարկաւոր ենք համարում հետևեալ երկու սոսքն ասել սրա առիթով:

Այս դասագիրքը զբւած է սեղմ ու հակիրճ լեզուով. որա ամենագլխաւոր արժանիքն այն է, որ ընդհանուր պատութիւնը չէ գարձնում հեքիաթ, առասպելների հաւաքածու, այլ միշտ քննում է երևոյթների պատճառները, նրանց հետմանքները, կարծ՝ այս դասագիրքն աշխատում է աշակերտներին գարգացնել, նրա ուղղեղը վարժեցնել քննական հայեացքի ոչ լոկ գիտելիքներ տալ, սանի գլուխը դարձնել «պիտահ» և անպիտան գիտելեաց մի պարկ»:

Դժուար է այս դասագրքով պարապելը, որովհետեւ նա ահանջում է ուսուցչից մեծ համբերութիւն ու տոկունութիւն: Աշակերտն սկզբում, վարժուած լինելով հայերէն դասգրքերի անմիտ ու թութակային ուղղութեանը, չէ կարունում վարժել, իւրացնել այս դասագրքի քննական ողին, սա պատմելու օգատողական» ձեռ. բայց դա տեսում է 2—3 միս միայն. այնունետեւ դասարաննի ընդունակ աշակերտներն իրանք իրանց սկսում են սիրել սրանում գործ ածող թօղը, քննական հայացքը:

Սա թթացնող դասագիրք չէ, այլ զարգացնող, այդ սոճառով էլ մենք թարգմանեցինք և սրանով էլ պարունակ էինք մեր աշակերտների հետ:

Խաժակ

1905 թ. Թիֆլիս:

Ն Ե Բ Ա Ծ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Երկրագնդի մակերեսյթի մեծ մասը բնակութեան վայրենի և համար անմատչելի ջրային տարածութիւններից է կուտաքաղմած. ցամաքի վրայ էլ ամեն տեղ մարդիկ չեն վերաբեր ապրում. բևեռային երկրների ցուրտը, Սահարայի անջրտիութիւնը խանգարում են մարդուն այդ տեղերում բնակութիւն հաստատելու: Թէս սիրիական և հիւս-ամերիկեան սառցադաշտերի (տունդրա) ահազին տարածութիւնների վրայ բնակութիւն գոյութիւն ունի, բայց նա էլ շատ սակաւ է և զրադւած բացառապէս ուտելու, հազնելու և բնակութեան ամենաանհրաժեշտ կարիքներով: Բնական է, որ մարդիկ խմբւում են եւ անում պտղաբեր եւ մեղմ կլիմայով տեղում:

Բայց չէ կարելի ասել, որ մարդկանց բարեկեցութիւնն անպատճառ աճում է այնտեղ, որտեղ բընութեան բարիքները ձեռք են բերում առատօրէն: Օրինակ՝ Ամերիկայի կուսական անտառներում և խոտաւէտ դաշտերում (սլրէրի) ապրում են շատ վայրենի ցեղեր, որոնք հեշտ կերպով սնունդ են ձեռք բերում որսորդութիւնով և զբա համար էլ չեն լարում ու չեն զարգացնում իրանց մտաւոր ուժերը: Մենք նրանց անուանում ենք վայրենի, որովհետեւ նրանք բաւականանում են նրանով, ինչ որ տալիս է բնութիւնը և չեն աշխատում բարելաւել իրանց զրութիւնն արհեստի միջոցով: Դրանց հակառակ՝ եւրոպացիները,

հնդիկները, շինացիները կոչւում են կուլտուրական ժողովրդներ: Կուլտուրա բառը նշանակում է «մշակութիւն», իսկ երբ նա գործ է ածւում մարդկանց կենցաղի վերաբերութեամբ, այն ժամանակ նշանակում է մարդկանց աշխատանքը շրջապատ բնութեան և իրանց վրայ: Իսկապէս մարդիկ աշխատում են իրանց հպատակեցնել բնութիւնը, օգտւել նրանից իրանց կարիքների համար, բայց նրանց համար ոչ պակաս անհրաժեշտ է հոգ տանել իրանց սեփական կատարելագործութեան վրայ՝ զիտութիւն ձեռք բերելու, բնաւորութիւնը մշակելու, իրար մէջ լու յարաբերութիւններ ստեղծելու մասին: Մարդկանց ջանքն ուղղւած է կեանքն ուսումնասիրելու, նրան անվտանգ, օգտաւէտ և հաճելի դարձնելու վրայ: Վայրենիներն անդամ չեն կարող ապրել առանց այդպիսի մի փոքր աշխատանքի: օրինակ՝ բոլոր մարդիկ օգտւում են կրակով, այն ինչ նրա հետ վարւել չեն կարող ամենախելացի կենդանիներն անդամ: Բայց մի քանի ցեղեր այդ աշխատանքը կատարում են ամենասահմանափակ չափերով, ապրում են օրէ ցօր և, հասնելով մի չնչին դիրքի, մնում են միենոյն վիճակի մէջ հարիւրաւոր և հաղարաւոր տարիներ. իսկ միւսները՝ համելով որոշ յաջողութեան, ձգտում են զնալ աւելի հեռու և քայլ առ քայլ իւրացնում են շատ զիտելիքներ, սովորութիւններ ու կարգեր, որոնք նպաստում են կեանքի բարելաւմանը:

Այդ ուղղութիւնով դէպի առաջ արած ամեն մի բայլը մի մեծ գործ է, որն ուժեղ տալաւորութիւն է անում ժամանակակիցների վրայ և յիշատակ թողնում յեանորդների մէջ: Պատմական զիտուրինն իր համար զիտաւոր խնդիր է դնում հետեւելու մարդու աւխատանինին իր եւ բնութեան վրայ: Դժբաղդաբար նա ստիպւած է զրի առնել ոչ միմիայն յաջողութիւններ,

այլ և թշւառութիւններ և անկման շրջաններ: Բայց ընդհանրապէս նա վկայում է, որ մարդկութիւնն առաջ է շարժւում, աւելի խելացի և աւելի լաւ դառնում:

Բարձր կուլտուրայի հասած ժողովրդները երկրագնդի վրայ համեմատաբար քիչ են: Նրանց առաջանալն, ինչպէս արդէն ասացինք, յաճախ կախւած էր աշխարհագրական բարեյաջող պայմաններից: Բայց այդպիսի պայմաններից օգտւելու համար պէտք են ընդունակութիւններ, այն ինչ բոլոր մարդիկ միենոյն կերպով չեն օժտւած բնութիւնից: Պատմաբանն ամենից առաջ պէտք է ուշը դարձնէ ցեղերի տարբերութեան վրայ: Որոշ ընտանիքների մէջ մենք միշտ նկատում ենք արտաքին տեսքի և բնաւորութեան ազգակցական նմանութիւնն: նոյնպէս էլ միենոյն ցեղի անգամները նման են իրար և զանազանուում են օտարներից: Ծննդոց գէրը մեզ հաղորդում է, որ ամբողջ մարդկային ցեղը սերւել է նախահօր առաջին ընտանիքից, որի սերունդը միշտ աճում էր, տեղափոխուում և ցեղական տարբերութիւններ ձեռք բերում, թէև մենք ճշտօրէն չը գիտենք, թէ ինչպէս կատարեցին տեղափոխութիւնները: Ներկայումս մարդիկ՝ իրանց կաշու դոյնով՝ բաժանուում են երեք հիմնական ցեղերի՝ սպիտակ, գեղին և սև: Առաջնին պատկանում են եւրոպայի, Ասիայի և Աֆրիկայի արխական և սեմական ժողովրդները: Բացի կաշու սպիտակութիւնից՝ այդ ցեղն աչքի է ընկնում իր գանգի և անդամների համաչափ զարդացումնից: Դեղին ցեղն ամփոփում է իր մէջ Հին-Աշխարհի մօնղոլական, Փիննական, թուրքական և մալայեան ժողովրդներին: Նրա հետ միանում են Ամերիկայի բնիկները, որոնց կաշին արդէն դառնում է աղիւսի կարմիր դոյնի (պղնձագոյն): Այս ցեղի ներկայացուցիչների մեծամասնութեան դէմքի

բնորոշ յատկութիւններն են դուրս պրծած այտերը
և նեղ ու փոս աչքերը։ Վերջապէս՝ սև ցեղին պատ-
կանում են աֆրիկեան նեղիները և աւստրալական
պապուաները։ Մրանց գլխի կազմի մէջ ամենից
շատ աչքի է ընկնում գէպի առաջ դուրս պրծած ծը-
նուր։

Կուլտուրական ժողովրդների մեծ մասը ծագել է
սպիտակ ցեղից։ Դեղին ցեղն արտադրել է չինական
ինքնուրոյն կուլտուրան։ Ան ամփոփում է միայն
վայրենի ժողովրդներ։ Բայց որովհետեւ մարդիկ սերել
են միենոյն ընտանիքից, դրա համար էլ չը կան անյաղ-
թելի արդելքներ կուլտուրայի տարածման նոյն իսկ
ներկայ վայրենիների մէջ։ Պատմութիւնը յաճախ ցոյց
է տալիս, թէ ինչպէս քիչ օժտւած կամ անբարեյա-
ջող դրութեան մէջ գտնւող ժողովրդները դուրս են
դալիս վայրենի դրութիւնից և ձեռք են բերում բարձր
կուլտուրա՝ երբ փոխւում են նրանց կեանքի պայ-
մանները։

Մինչև այժմ մարդկային պատմութեան մէջ դեր
են խաղացել նամեմատաբար սակաւ թւով ժողո-
վրդներ, որոնք կամաց-կամաց տպեցութիւն են ձեռք
բերել դրացիների վրայ։ Ամենից առաջ կուլտուրան
առաջացաւ արևելքում և այն էլ իրարից բոլորովին
բաժանւած երկու շերտերում։ Մոնղոլները Զինաստա-
նում և արիները Հնդկաստանում կազմեցին նշանա-
ւոր պետութիւններ և հասան մեծ յառաջադիմու-
թիւնների կրթութեան մէջ։ Միւս կողմից՝ Միջեր-
կրականի մօտերում առաջացան եղիպտական և ասո-
րո-բարելոնեան կուլտուրաները։ Արդէն այս վիրջին-
ների ազդեցութեան տակ ծնունդ առաւ յունաս-
տանի և Իտալիայի զարգացումը, որը կամաց-կամաց
տարածւեց ամբողջ Եւրոպայի մէջ։ Ներկայումս այդ
Եւրոպական կուլտուրան անցել է և աշխարհի միւս

մասերը և գարձել մարդկութեան կեանքի կենտրո-
նակէտը։ Զինական և հնդկական կուլտուրաների մա-
սին բաւական տեղեկութիւններ հաղորդւած են աշ-
խարհազրութեան մէջ։ Մենք պէտք է զբաղւենք այս
ժողովրդների պատմութիւնով, որոնք բնակւում են
Միջերկրական ծովի մօտերում։

Ա.Ռ.Ա.Զ.Ի.Ն Մ.Ա.Ս

Արեւելք

Գ.Ա.Ռ.Ա.Խ. Ա.

Ե Գ Ի Պ Տ Ո Ս

Հներն անւանում էին Եգիպտական երկիրը «Նե-
ղոսի պարզեց»: Դա մի օաղիս է, որ ձգւում է
անբերի անապատի մէջ՝ Նեղոսի երկարութիւնով,
գետի նուրբիական ժայռերից դուրս գալուց յետոյ:
Դեսի վերին մասերը կարհոր են նըանով, որ այն
տեղերում պատրաստում է հեղեղումը, որին Եգիպ-
տոսը պարտական է իր պտղաբերութիւնով և կուլ-
տուրայով: Բար-Էլ-Արփաղը կամ սպիտակ Նեղոսը
բերում է արևադարձային երկներից ահազին քա-
նակութիւնով բուսական մնացորդներ, որ թանգաղին
են հողի պարաբռացման համար. բայց նրա հոսանքը,
որ ձգւում է դէպի ծովը հաղարաւոր վերստերով
շատ աննշան թեքութիւնով հեղեղ առաջացնելու հա-
մար չափազանց ծոյլ և դանդաղ է: Հեղեղներն առա-
ջանում են կապոյտ Նեղոսից կամ Բար-Էլ-Ազրէկից,
որ վայր է վիժում Հարէշական սարահարթից և, արեա-
դարձային անձրևներից ջրեր հաւաքելով, կարծես մի-
տեսակ դուրս է շպրտում Նեղոսն իր ափերից: Մար-
դիկ, անասուններն ու բոյսերն սպասում են հեղե-
ղին՝ յունիսեան երաշտից ազատւելու համար, երբ շա-

բաթներով փչում է անապատից տաք քամին: Յունիսի վերջում Նեղոսն սկսում է բարձրանալ, փոխում է գոյնը և, վերջապէս, դուրս է թափւում ափերից: Հեղեղման շրջանը տևում է մօտաւորապէս չորս ամիս:

Գետի թողած տիղմն ու խոնաւութիւնը Եղիպտոսի հողը դարձնում են Երկրագնդի ամենապտղաբեր հողերից մէկը. բայց անհրաժեշտ է հեղեղին ուղղութիւն տալ, որպէսզի կարելի լինի օգտւել նրա բարիքներից: Եթէ գետը թողնւի իր զլսի, նա մի քանի տեղեր ներս կը վիժէ կործանիչ ուժով, ուրիշ տեղերում կը կազմէ կանգնած ջրի վնասակար լճակներ և ճահճներ, իսկ շատ տեղեր էլ երբէք չի թափանցի: Երէ կարելի է այսպէս ասել՝ նեղեղներին կառավարելու համար բնուրիւնը դրդում է բնակիչներին դէպի միահմուռ եւ անդուլ աշխատանի:

Եղիպտոսի ազգաբնակութիւնը կազմւել է ու ցեղի և սեմիտական սպիտակ ժողովրդի խառնուրդից: Նա կարողացաւ օգտւել բնական ալայմաներից և, գետին տիրելու համար, շինեց ոռոգման ջրանցքների մի ամբողջ ցանց, պատմէներ, ջրամբարներ: Այդ շէնքերից ամենանշանաւորն էր Թառմի արհեստական մեծ լիճը, մի քիչ հարաւ Մեմֆիսից (Մէօրիս): Հեղեղման ժամանակ այդտեղ էին հաւաքում աւելորդ ջուրը և յետոյ նրանից օգտւում էին իրրե պահեստի ջրից՝ երբ պէտք էր լինում գետի մակերեսից բարձրացնել:

Որպէս զի այդպիսի աշխատանքները յաջող լինէին, անհրաժեշտ էր կատարել նրանց միահամուռ ջանքերով և ընդհանուր ծրագրով, ոչ թէ առանձինառանձին: Դրա համար էլ Եղիպտացիները շատ շուտ միացան և կազմեցին մի մեծ պետութիւն, որ

բովանդակում էր իր մէջ գետի վերին հոսանքից մինչև ծովը եղած Երկիրը:

Ամբողջ հասարակութիւնը ենթակւում էր մի այնպիսի կարգապահութեան, որպիսին այժմ քաջաւորում է զօրերի մէջ: Բոլորի զիմին կանգնած էր փարաւոնը, որին պաշտում էին ինչպէս երկրային աստծու, արեի որդուն: Նրան ողջունում էին երեսի վրայ գետնին փռւելով. նրան Ներկայացնում էին, ինչպէս և աստւածներին, հսկայի նման, սովորական մարդուց մի քանի անգամ աւելի մեծ: Փարաւոններն աշխատում էին փառաւորել իրանց ոչ միայն լաւ կառավարութիւնով, Երկրի ոռոգման վրայ տարած հոգս սերով ու նրան թշնամիներից պաշտպանելով, այլ և իրանց իրը թէ գերբնական կարողութիւնն ապացուցանող շէնքերով: Քէոպսի գերեզմանի բուրգի *) վրայ 30 տարի շարունակ աշխատում էին 100,000 մարդ, որոնց փոփոխում էին երեք ամիսը մի անգամ: Եւ մինչև օրս էլ այդ բուրգը, որ հասնում է 70 սաժէն բարձրութեան, մարդկային ճարտարապետութեան ամենահսկայական յիշատակարանն է: Զինուրականների եւ նուրմերի դասակարգերում պաշտօնները իրաւունքներն ու արտօնութիւնները հաղորդում էին ժառանգարար. Ժողովրդի հնացած բազմութիւնն զբաղւում էր ծանր Երկրագործական և արդիւնագործական աշխատանքներով: Բայց փարաւոնին արած ծառայութիւնը կարող էր բարձրացնել նոյն իսկ հասարակ մարդկիներին մինչև ամենաբարձր աստիճանների: Հարկաւոր էին բազմաթիւ կառավարիչներ, աշխատանքների

*) Եթէ իրը հիմք վերցնենք մի քառակուսի և նրա վրայ գասաւորենք աստիճանաբար փոքրացող նման քառակուսիներ՝ մինչև որ ծայրը մի կէտ կազմէ—կը ստանանք բուրգ:

վերահսկողներ, հարկահաւաքներ, հաշւետեսներ, պրագիլներ: Այս բոլոր զբաղմունքների համար պէտք էր զբագլատութիւն և գրագէտ մարդու կամ «զբագրի» ծառայութիւնը եզիպատում համարւում էր բոլոր պաշտօններից ամենաձեռնտուն և ամենայարգին:

^{Դիրք} ^{թ. թ. թ.} Եզիպատացիները գիրը հնարել են ինքնուրոյն կերպով և չափազանց շուտ՝ աւելի քան 3,000 տարի ^{թ. թ.} առաջ: Նրանց ամենահին նշանագրերը կոչւում են հիերօգլիմեներ: Սկզբում նա միայն այն առարկաների պատկերներն էր, որոնց մասին խօսւում էր: Օրինակ՝ որպէսզի զրեն «քօտ» (մարդ) բառը, նկարում էին նստած մարդու պատկերը: Յետոյ սկսեցին նոյն պատկերը գործածել «քօտ» վանկը նշանակելու համար, ինչ բառի մէջ էլ նա պատահելիս լինէր: Բացի զբանից՝ պայմանաւորւեցին որոշ նշաններով նշանակել այն մտքերն ու հասկացողութիւնները, որոնց տեսնել, ուրեմն և նկարել չէ կարելի: Օր. Թակարդի մէջ ընկած ոտքը նշանակում էր խարէութիւն:

Ժբանը. Փողովրդի կեանքում մեծ նշանակութիւն ունէր կրօնը: Սկզբում նա ներկայացնում էր կոպիտ բազմասւածութիւն, բնութեան ուժերի եւ երեւոյթների երկապութիւն: Մոտիապաշտական երկիւղն ու աստածացումը տարածւում էին նոյն իսկ մի քանի կենդանիների վրայ. շատ տեղերում երկրպագում էին կոկորդիլոսին. Մեմֆիսում պահում էին սրբազն եզին (Ապիս), որի մէջ տեսնում էին աստածներից մէկի մարմացումը: Եզիպատացիները յաճախ երեակայում էին աստածներին կենդանիների ձեռվ կամ մի մասը մարդկային, միւս մասը դադանի մարմնով: Օրինակ՝ Անուրիսը, մեռածների հոգիների հովիւրը, ներկայացւում էր չաղալի զլխով: Գիգէհի դաշտում բուրգերի մօտ՝ մինչև այսօր էլ կարելի է տեսնել սվինիսը՝ մի հրէշի արձան,

առիւծի մարմնով,—դա արեկ աստծու պատկերացումն էր: Բազմաթիւ հաւատալինների միջից կամաց կամաց զոկւեց զլխաւորը—արեւի երկրպագութիւնը: Արեկ աստծուն անուանում էին Ռա կամ Ամօն: Օզիրիսը, Բայի որդին, կռւում է չար Սէթի, գիշերային խաւարի աստծու հետ: Երբ ցերեկը տեղի է տալիս զիշերին, Օզիրիսը յաղթւում է Սէթից և իջնում հանդերձեալ աշխարհը, մահւան թագաւորութիւնը, բայց յետոյ վերածնւում է և իր հերթին յաղթում է իր թշնամուն:

Եզիպատացիները ենթադրում էին, որ նոզու բաղդը մահից յետոյ կախում ունի մարմնի բաղդից: Որպէսզի հոգին չը կորչի, անհրաժեշտ է պաշտպանել մարմինը նեխւելուց. զրանից էլ ծագեց մումիա պատրաստելու սովորութիւնը. հանգուցեալի մարմնից հանում էին փորոտիքը, դիակը փաթաթում էին անուշահու նիւթերում թաթախած կտորների մէջ, զնում փայտէ արկղում. մարմինը չորանում, դառնում էր «մումիա», որ չէր ենթարկւում նեխման: Յետոյ պէտք էր հոգ տանել հանգուցեալի համար կանոնաւոր բնակարան, նրան կերակուր, ամաններ, ծառաներ մատակարարելու մասին: Եւ անա նրա համար շինում էին ընդարձակ հանգստատեղի, նկարում էին նրա պատերի վրայ մարդուն անհրաժեշտ բորոք առարկաները, կամ գոնէ յիշում էին նրանց անունն արձանագրւող աղօթքների մէջ, որ կրկնում էին գերեզմանին այցելութեան եկողները: Այդքանը բաւական էր համարւում, որպէսզի հանգուցեալն օգտւել կարողանար յիշած առարկաներից: Այդ տեսակէտով հարուստները մահից յետոյ էլ պահպանում էին իրանց առաւելութիւններն աղքաններից, որովհետեւ նրանց մարմիններն աւելի լաւ էին զմբաւում և գերեզմանները կարող էին աւելի լաւ սարքւել: Բայց եզիպ-

տացիները կանգ չառան հանդերձեալ կեանքի այդ կոպիտ, նիւթապաշտական հասկացողութեան վրայ։ Դրա հակառակ առաջանում է Օզիրիսի հանդերձեալ աշխարհի դատաստանի վարդապետութիւնը. ամեն մարդ ենթարկւում է քննութեան իր բարի գործերի և մեղքերի համար, և հոգու ապագան կախւած է արդէն ոչ թէ հարստութիւնից և կամ ազգականների ինամքներից, այլ անաչառ և ամենապէտ դատաւորից։

Արևետառ.

Եզիփտացիները բնաւորութիւնով լուրջ եւ կենս- րոնացած ժողովուրդ էին. այդ բանին նպաստում էին շրջապատ բնութեան միօրինակութիւնը և վե- հութիւնը, հասարակութեան մէջ տիրող խիստ կար- գը, մեծ աշխատասիրութիւնը և կրօնականութիւնը։ Նրանց բնաւորութիւնն արտացոլում է և նրանց ար- ւեստագիտութեան ուշարձանների մէջ, որոնք մինչև օրս վկայում են այդ հին կուլտուրայի նշանակութեան մասին։ Նրանք ամենից շատ բան են արել գերեզ- մանները զարդարելու համար։ Նրանց բոլոր քաղաք- ների մօտ կային մի-մի «մեռելների քաղաք»։ Աստած- ների փառանեղ տաճարներից կարելի է յիշել Ամօնայի տաճարը Թէքէյում, ուր այժմ գտնւում է Կարնակ գեւզը։ Պալատներից հների առանձին զարմանքն էր շարժում Լարիւրինթոսը՝ Ֆայումի լճի ափին, իր 3,000 սենեակներով, որոնց կէսը տեղաւորւած էր գեսնի տակը։ Այդ բոլոր շենքերի զիխաւոր դարդերը կազմում էին պատերի վրայքանդակւած ուսուցիկ պատ- կերները և նկարները։ Նրանք ներկայացնում էին ինչ- պէս աստւածների և թագաւորների քաջագործութիւն- ներն, այնպէս էլ սովորական կեանքի տեսարանները։ Մեղ խիստ զարմացնում է նկարիչների դիտողութեան ձիրքը և միաժամանակ նրանց ճարպկութեան պակա- սութիւնը. բոլոր դէմքերը դրւած են պրօֆիլ (կողքից), իսկ իրականութեան մէջ մէկը միւսի ետեր

դրւած առարկաները ներկայացւած են մէկը միւսի վրայ։ Ք-ից գեռ 3,000 տարի առաջ եղիպտացիներն 3,000 թ. Ք- արևետի մէջ արդէն շատ առաջ էին զնացել, բայց յետոյ նրանք կանգ առան միւնոյն գիրքում և ոկտե- ցին աշխատել եղած օրինակներով, խուսափելով շե- զումներից և նորմուծութիւններից։ Նոյն բանը նկատ- ում է եղիպտական կեանքում ամեն տեղ. սկզբու մ նրանց կեանքի ենթարկելով խիստ եւ որու կանոննե- րի ուներ բարեյացող հետեւանեներ, իսկ յետոյ անփո- փոխ կանոններն սկսեցին անշարժ պահել, կանգնե- ցնել ձեռներեցու բեան ովին եւ զարգացումը։

Դեռ 3,000 թ-ից շատ առաջ Մենթիս բաղամի բա- զաւուներին յաջողուեց միացնել ամբողջ երկիրը՝ ծովից Միջա- դարձի դետի ակունքները՝ և կաղմիւ մի պետութիւն։ *Դօրաւոր* XIV հարստութեան կամ զինատափայի ու- շարձաններն են երեք բուրգերը և սփենքը Գիգէնեան դաշտում։ Յետոյ երերի մէջ զիստուութիւնն անցաւ Թէքէ բաղամին, որ տեղաւորւած էր զետի հոսանքի աւելի վերին մասում։ Այդ ժամանակ առաւելապէս շատ բան արւեց երկրի ոսողման և բարեկեցութեան համար։ Օրինակ՝ XII հարստութեան ժամանակ շին- եց Մէօրիս լիճը։ Ժողովրդի բարդաւաճմանը խիստ հարւած հասցրեց Հիւսոսների՝ սեմական ցիղի բա- փառական հովիւների արշուանին Ասիայից (մօտ 2000 թւին)։ Նրանք իշխեցին մի քանի հարիւր տաւ- առաջ, բայց վերջապէս դուրս քշւեցին Եղիպտացինե- րից։ Փարաւունները, խրախուսւած հիւքոսների կրո- ւում ունեցած յաջողութիւններով, անցան յարձակո- ղական շարժման, XVIII և XIX հարստութիւնների թագաւորները կատարեցին մի շարք յադրական ար- շուանիներ առաջաւոր Ասիայի ժողովրդների դիմ։ Մասնաւորապէս նրանք ջանացին զրաւել ասորական ափերը։ Սկզբում նրանք հեշտ յաղթութիւններ էին

տանում ասիական բաժան-բաժան ժողովրդների վրայ, որոնց ժամանակ առանձնապէս հոչակւեցին թութմէս 1200 թ. Գև Բամաէս Բ (1300 թէին) վարաւոնները: Բայց այդ յաջողութիւնները չէին տալիս հաստատուն նւաճումներ. նրանք միայն աւերում էին թշնամինների երկրները և հարստութիւն բերում Եղիպտոս: Երբ Ասիայում առաջացաւ Ասորեստանի զօրաւոր պետութիւնը, զործը փոխւեց. Եգիպտոսկան զօրքերն ակսեցին յաղթւել և ասորեստանցիւերը գրաւեցին նոյն իսկ Եգիպտոսը: Նրանց լուծը թօթափելու համար՝ վերջին հարստութիւնների վարաւոնները սերտ յարարելու բանի մէջ մտան յոյների ներ, որոնցից նրանք վարձկան զօրքեր էին հաւաքում: Այդ բանի շնորհով Իսամետէք և Նեքաւով¹⁾ վարաւոններին յաջողուեց ժամանակաւորապէս վերականգնել իրանց պետութեան զօրութիւնը:

Բայց Եղիպտոսի այս վերածնութիւնը կարճօրեայ եղաւ. ուղղացինների մեծամասնութիւնը թշնամարար էր նայում եկտոր յոյների և պալատում տիրող յունական կարգերի վրայ: Ներքին խոսվութիւնները նպաստեցին թշնամիններին և արդէն նոյն իսկ Նեքաւով (Նեփո) ջարդւեց Բաբելացիններից: Իսկ 525 թէին Փսամենէտ վարաւոնը վերջնականապէս յաղթւեց պարսիկներից, որոնք Եղիպտոսը միացրին իրանց պետութեան հետ:

Գ. 1. Ա Խ Խ Բ.

ԲԱՐԵԼԱՍՏԱՆ ԵՒ ԱՄՈՐԵՍՏԱՆ

Առաջաւոր Ասիայում կուլտուրան ամենից առաջ երկրը զարգացաւ Միջազետքում: Տիգրիս ու Եփրատը՝ Նեղոսի նման, պտղաբեր են գարձնում այդ տեղերն իրանց հեղեղներով, միայն թէ դա պահանջում է ժողովրդից եռանդուն աշխատանկ զործ դնել երկրի ուղղումը կանոնաւորելու համար: Այն գաշտերը, որոնք հին ժամանակներում Ասիայի հացի ամբարներն էին ներկայումս—թուրքերի անզործունեայ տիրապետութեան օրով՝ զարձել են անապահներ: Միջազետքը բաժանում է երկու մասի. գետերի միջին հոսանքների երկրներում բաւական անձրևներ են զալիս, իսկ ներքին հոսանքն անցնում է բոլորովին հարթ գաշտերով, որոնց ոսոգումն ամբողջապէս կախւած է գետերի ջրից: Հիւսիսային կէսը՝ Նինևէ մայրաքաղաքով՝ կազմում էր Ասորեստանցինների թագաւորութիւնը, հարաւայինը՝ Բաբելոն մայրաքաղաքով՝ Քաղգէան: Արագիսաւոր տարրերութիւնը Եղիպտոսից նրանումն է, որ Նեղոսի հովտի նման սա էլ բնորեան ձեռնով չէ առանձնացած, այլ ընդհակառակը՝ միաւորում է մի շատ բազմազան երկրների ներ: Տիգրիսի և Եփրատի ակունքը դնում են նրան յարաբերութեան մէջ Հայաստանի հետ: Տիգրիսից գէպի արևելք գտնում էին պատերազմաէր Պարսիկները և Մարք, որ միշտ ըսպանում էին այդ երկրի ազգաբնակութեան ապահովութեանը: Եփրատից գէպի արևելուաք բացւում է գմւարանցաննելի անապատը, որի մէջ թափառում էին արաբական աւազակ ցեղերը, իսկ հիւսիս-արևեմուաքից Եփրատը մօտենում է ասորական (սիրիական) Օրոն-

¹⁾ Արա թագաւորութիւնը, ի միջի այլոց, նշանաւոր է նրանով, որ կարմէր ծովից նրա ուղղարկած նաւատօրմիջը շրջեց ամբողջ Աֆրիկայի ափերը և երեք տարի յիշայ վերաբարձաւ Նեղոսի գետարեաններով:

թօի հովտին, և այդտեղում են կատարւում Միշերկրականի ափերի և Եղիպատոսի հետ յարաբերութիւնները:

^{Ազգաբնակութիւնը և} Միջագետքում կուլտուրան ծնունդ առաւ հարաւում, հեղեղմունքների նահանգում, այն ցեղերի մէջ, որոնք իրանց անւանում էին Ակկադացիներ և պատկանում էին զեղին ցեղին: Ինչպէս Եղիպատոսում, այնպէս էլ այստեղ՝ անցիշտակ ժամանակներում երեաց զիրը. սկսեցին առարկաների նշանագրական (հիերոգլիֆական) ձևակերպութիւննից, բայց Քաղղէայում այդ պատկերները շուտով կորցրին իրանց բոլոր նմանութիւնն առարկաների հետ և ստացան զծերի կամ սեպերի ձև, որ միանում էին իրար հետ զանազան անկիւններով: Դրա համար էլ այդ զրերը կոչւում են սեպանձեր:

Հնագոյն Քաղղէացիների կրօնի մէջ նշանաւոր է հաւատը զէսի զները կամ զէսի ամեն տեսակ ոզիները, որոնցով լցւած է տիեզերքը: Դրանց զույգ են կանգնած երեք աստվածային էակներ, որոնցից մէկը կառավարում է երկինքը, միւսը՝ երկիքը, երրորդը՝ հանդերձեալ աշխարհը: Քաղղէացիները հաւատում էին, որ կեանքում ամեն բան կախված է ոզիների օգնութեան կանչելոց իւ նրանց չար ազդեցութիւնը ներացնելոց: Հիւանդութիւնը, գժրազդութիւնը կարելի է հեռացնել կախարդական խօսքերով, կամ թափամաններով, այսինքն՝ կախարդական առարկաներով, որ մարդիկ կրում են իրանց վրայ:

^{3,000թ.թ.-ից առ.} Դեռ 3000 թւկը առաջ երկիքը գրաւեցին սեմական ցեղերը: Նրանք խառնւեցին ակկադացիների հետ և իւրացին այն ամենը, ինչ որ նրանք արել էին: Շատ բան էլ իրանք առաջընկած եկուունները բերին հաւատ, որ ներան էր Ասւածածունիչի վարդապետութեանը, օրինակ՝ նրանց մէջ պահպանուած էր ջրհեղեղի-

մասին մի աւանդութիւն, որ ամենայն մանրամանութիւնով յիշեցնում էր Աստածաշնչի պատմութիւնը: Բայց փոխանակ հրէանների նման մի աստածութեան մէջ հաստատւելու, ոյս սեմիտաներն ընդունեցին ակկադացիների հաւատալիքները և լրացրին նրանց երենային լուսաւուների երեւազութիւնով: Նրանք ճանաչում էին հինգ մոլորակներ և նրանց աստածացնում էին: Ի հարկէ ամենից բարձրն էր արևի աստած Բէլը: Բէլն էր և կառավարիչ ափեղերքի, որ բաշխում էր մարդիկներին բարօրութիւն, և մահաբեր կործանիչ, որին կարելի էր մեղմացնել միայն արինալի զոներով: Իշտարը (Աստարտէն) երկրացին պատղաբերութեան, միրոյ և պատերազմի աստածունին էր: Հաւատացեալիները Եղիպատացիների նման մըշտապէս չէին մտածում հանգերձեալ կեանքի մասին, այլ աստածներից խնդրում էին յաջողութիւն երկրացին կոխների մէջ: Կրօնը համապատասխանում էր ծողովրդի բնաւորութեանը, որ եռանդուն էր և տամադիր բռնութեան եւ խսութիւնների:

Այդ զծերը մտանաւորապէս աւելի նկատելի են ^{Ասորեստանի} Ասորեստանում, այսինքն Եփրատի և Տիգրիսի միջին ^{թիւնը} հոսանքի նահանգում: Ասորեստանցիներն այնքան էին ովերուում իրանց ժողովրդի վարչութիւնով, որ վերադրում էին իրանց կարողութեան տարածւելն Իշտար աստածունուն: Իրը թէ նա ժամանակաւորապէս ընդունել է Շամիրամ թագուհու կերպարանքը, մի շարք արշաւանքներ ու յաղթութիւններ է արել, պատերազմել է հնդիկների և սկիւթացիների հետ և վերջը զարձել է աղաւնի ու երկիքը թողել: Իսկապէս ասորեստանցիներն ստիպւած եղան իրանց շրջապատղ բոլոր ցեղերի հետ կամակոր կոխ մղել: Վեց զար շարունակում էին արինանեալ պատերազմները Հայաստանում և Փոքր-Ասիայում, Մարտա-

նում, Պարսկաստանում և Բարելմնում, Ասորիքում, Փիւնիկում և Պաղեստինում։ Այդ ժամանակ ասորեստանցիները կարծես զնում էին գիմաւորելու եղիպատացիներին—արեւելից դէպի արևմուտք։ Նրանք ամենից քիչ ուշադրութիւն էին դարձնում Հնդկաստանի և Պարսից Ծոցի վրայ, թէ այդտեղ էին թափւում Եփրատն ու Տիգրիսը։ Գլխաւոր նպատակն էր բարի վերջուուրս գալ Միջերկրականի ավել Ասորիքի վրայով։ Ը գարի վերջում Սարգոնը միացրեց իր իշխանութեան տակ ամբողջ առաջաւոր Ասիան՝ Միջերկրականից մինչև Իրանի բարձրավանդակը և Կասպից ծովից մինչև Պարսից Ծոցը։ Նրա թոռ Ասսարդաղոնը հպատակեցրեց Եգիպտոսը։ Բայց այդ անազին թագաւորութեան ժողովուներից մեծ մասի հպատակութիւնը շատ անհաստատ էր։ Տարի չէր անցնում, որ պատերազմ կամ ապատամբութիւնը չըլինէր։ Ասորեստանցիները չէին էլ մտածում յաղթւածներին հաշտեցնել իրանց լի հետ։ Մեզ հասած երկար արձանագրութիւնների մէջ նրանց թագաւորները պարծենում են նրանով, որ թշնամիներին կոտորում էին հազարներով, գետերը լցնում էին արինով, երկիրը ծածկում էին զիակներով, այրում էին քաղաքները, ամայացնում դաշտերը։ Յաղթւածներին յաճախ ամբողջ խմբերով քշում էին օտարութիւն։ Այդպէս վարեց Սարգոնը, Սամարան առնելուց յետոյ, հրէաների մնացորդների հետ։

Այդ ժամանակ յաղթողների երկիրը հասաւ չըլւած հարստութեան և շոայլութեան, որոնց մասին վկայում են մինչև օրս մնացած շինութիւնների հետքերը, որ կառուցել են յաղթական թագաւորները։ Այդ աւերակներից ամենանշանաւորներն աստեածների տաճարներ կամ գերեզմանների ուշարձաններ չեն, այլ պալատների աւերակներ, ինչպէս օրինակ՝ Սարգոնի գղեակը, նինւէից դէպի հիւսիս-արևելք (այժմ Խոր-

սապատ)։ Այդ ժինութիւնների պատերը զարդարող արձանները եւ ուռոցիկ խանդակներն աւելի քիչ բռնագրուիկ են, քան եղիպատականները, բայց եւ աւելի կոպիտ են ժինուած։ Պատկերների զլիաւոր նիւթը կազմում են պատերազմական կեանքի, որսի, յաղթական թափորների և թագաւորների բնողունելութեան տեսարանները։ Բայց չէ կարելի ասել, որ այն ժամանակ հետաքրքրուում էին միայն արտաքին փառքով ու շքով։ Վերջին թագաւորներից մէկը՝ Ասուրբանիպալը՝ թագաւորական հրամանագրերից, պայմանագրերից, բարելոննեան և ասորեստաննեան գրականութեան նշանաւոր արտագրութիւններից կազմեց մի ահազին զրադարան։ Այդ զրադարանը կազմւած էր ոչ թէ զրքերից, այլ կաւէ տախտակներից, որոնց վրայ փորագրուած էին հեղինակութիւնները սեղածե գրերով։ Ասուրբանիպալի պալատի պեղումների ժամանակ, որ կատարեցին անողիացները ՀԻ դարի կէսերին, գտնւեցին այդ տախտակների մեծ մասը։ Նրանք ծուռայում են իրը թանգարին ուշարձաններ այդ հին կուլտուրայի պատմութեան։

Ասորեստանի տիրապետութիւնը հիմնւած էր շըրը՝ ^{Բարեկանեան} ջապատ ժողովրդների անմինայ ճնշման և կողոպտման ^{թւալը.} վրայ։ Նինւէի թագաւորն ամբողջ Առաջաւոր Ասիան պահում էր սարսափի մէջ, բայց ամեն տեղ զաղանի կերպով նրան ատում և անիծում էին։ Պէտք էր միայն մի քիչ խախտել նրա զինուրական ոյժը, որպէսզի նրա չորս կողմում մի անգամից ուղի կանգնէին բոլոր ստրկացած աղքերը։ Վրէժի ժամը հնչեց, երբ Ասուրբանիպալի յաջորդ Սարակի օրով պայթեց մի ծանր պատերազմ մարաց հետ։ Բարելացները չէին կարողանում ներել ասորեստանցիներին Սարգոնի որդու ձեռքով Բարելոնի կործանումը։ Նրանք միացան մարաց հետ։ Դաշնակիցները, կատաղի կուից յետոյ՝ նին-

606

ւէն առան։ Սարսկը չըսպասեց և չըխնդրեց իրան խընայել, այլ այրեց իր պալատը և ինքն էլ իր մտերիմների հետ միասին ոչնչացաւ (606 թ.)։ Յաղթողները նիստէն հիմքից կործանեցին և համարեա երկրի բոլոր բնակիչներին սարկութեան վարեցին։ Ասորեստանցիների գէմ վարած կուռում գաշնակիցներին միացնում էր միայն ընդհանուր առելութիւնը, յաղթութիւնից յետոյ նրանք իսկոյն իրար հետ կուեցին։ Ասորեստանի փառքի յաջորդները մի ժիշ ժամանակ եղան բարեխացիները։ Նրանց նաբուգոզոսոսոր թագաւորի օրով Քաղգէան զարձաւ առաջաւոր Ասիայի համար մի այնպիսի կենարոն, ինչպիսին առաջ Ասորեստանն էր։ Նա յաջող կերպով կարողացաւ սահմանափակել մարաց տարածւելը։ Իսկ նրա գլխաւոր ջանքը գարձած էր գէպի արեմուտը։ Նա պատժեց արարներին իրանց արած արշաւանքների համար, Ասորէքում յաղթեց նախօ (Ներաւով) փարաւոնին, երկու անգում զրաւեց Երուսաղէմը և երկրորդ անգամն կործանեց Սողոմոնի տաճարը (586). պաշարեց Տիւրոսը և հպատակեցրեց Փիւնիկիան. վերջապէս մի յաղթական արշաւանք արեց գէպի նդիալոս։ Զընայելով այդ մշտական պատերազմներին, Նաբուգոզոսորը ժամանակ և ոյժ էր գտնում երկրի ներսում մեծամեծ ձեռնարկութիւններ անելու համար։ Նա վերացինեց Բարելոնն իր նախկին փառահեղութիւնով, շըշապատեց նրան համարեա 60 վերստ երկարութիւնունեցող պարսպով և Եփրատի վըայ կամուրջ շինեց։ Յետոյ նա կանոնաւորեց ոսոզման վերաբերող աշխատանքները, որ քայլայւել էին Ասորեստանի տիրապետութեան ժամանակ և փորեց մի ջրանցք, որով կարող էին Բարելոնին մօտենալ հաց բարձած մեծ նաւերը։ Նրա մահից յետոյ նորոգւեցին արհելեան զրացիների հետ պատերազմները։ Այժմ գուրս եկաւ մի նոր ժո-

538

դովուրդ, որ Զ գարում գերակշռութիւն ստացաւ մարաց վրայ՝ Պարսիկները։ Նրանք տուանց մեծ զժւարութեան յաղթեցին նարուգոգոնոսորի յաջորդ նարոնեղին (Վալտասարին) և 538 թւին գրաւեցին Բարելոնը։

Դ Ա Ռ Ա Կ Ա Գ.

ՄԱՐՍՍԱՆ ԵՒ ՊԱՐՍԿԵՍԱՆ

Տիգրիսից գէպի արեւելք բարձրանում է իրանեան երկեր։ Ըստ Երկիրը չէ միացւում եւ չէ կենդանանում մեծ-մեծ գետերով, ինչպէս Եգիպտոսը կամ Ասոր-Բարելոնը։ Ազգաբնակութիւնն այնահեղ տեղաւորւեց սկզբում ցրւած ձեռվ աւելի եղբներում, քան կենարոնում. մի մասը տեղաւորւեց Ամու-Դարիայի և Սիր-Դարիայի վերին հոսանքներում և կուի մէջ մասաւ հիւսիսային անապատի թափառականների հետ. մի մասը շարժւեց գէպի հիւսիսարևմուտք-Մարտատան, և գէպի հարաւարեւմուտք-Պարսկատան և յարաբերութիւն սկսեց Ասորեստանի և Քաղգէայի հետ։ Հեղեղները չեն նպաստում հողի պաղաբերութեանը և հացի մշակութիւնն աւելի կախւած է առանձին հողատէրերի ջանքերից, քան ոռոգման ճարտար կազմակերպութիւնից։

Արխական ցեղեցի երկալովը նատակեցութիւնը ակիչները. կամաց-կամաց հաստատւեց. այդ ցեղերը կուի մէջ մասն սկզբնական թուրքական ցեղի ազգաբնակութեան հետ և մասամբ տիրեցին նրանց, մասամբ էլ գէպի հիւսիս քեցցին։ Սյս զրաւումը կապւած էր արիական ցեղի տեղափոխութեան հետ. այդ ցեղը գուրս եկաւ իր սկզբնական հայրենիքից՝ Միջին-Ասիայից՝ և ցըր-

ւեց բոլոր ուղղութիւններով։ Երբ մարք և պարսկիները բռնում էին Տիգրիսի արևելեան սարահարթը, նոյն ցեղի մի մասն էլ իջաւ դէպի Փէնջափ։ Այդ ցեղից ծագեցին հնդիկները։ Արիների մեծ-մեծ խմբեր զանազան ժամանակներում չւեցին դէպի Եւրոպա։ Նախ՝ յոյները և իտալացիները, յետոյ՝ կելտերը և գերմանները, վերջապէս՝ լիտվանները և սլաւօնները։ Որքան էլ այս ժողովրդների բաղզը տարրեր եղաւ, այնուամենայնիւ նրանց մօսիկ ազգակցութիւնը երեւում է նրանց սովորութիւնների և մանաւանդ իշխուների նմանութեան մէջ։ Հնդիկների հին արիական բարբառ՝ սանսկրիտերէնը, պարսիկների հին արիական բարբառ՝ գենդերէնը և բոլոր Եւրոպական հիմնական լեզուները ոչ միայն ունեն բազմաթիւ նոյնատեսակ արմատներ ու նման բառեր, բայց և բերականական կազմով կազմում են մի մօսիկ ընտանիք, որ էապէս զանազանում է միւս խրմբերից։

Կրօնը.

Հնդհանուր արիական ծագումը երեսում է և կրօնական հաւատալիքների մէջ։ թէկ աւելի քիչ չափով, քան լեզուներում։ Հնդիկների նման իրանական արիները բոլոր ասւածներից բարձր էին դասում երկնային բանարութեան ժիրով և արել համարում էին նրա աչքը։ Այդ բարի և ճօր աստւածը—Հնդիկների Վարունան և իրանցիների Որմիզդը—մշտական կոփէ է մղում չար դեերի հետ, յաղթահարելով նրանց կայծակի որոտագին հարւածներով։ Սակայն այնինչ հնդիկների կարծիքով բարի աստւածը հպատակեցնում է իրան ամբողջ բնութիւնը և յետ մղում չար ողիներին, իրանի բնակիչներն ընդունում էին, որ չարն ունի ահազին ոյժ։ Որմիզդի դէմ դուրս է դալիս Ահրիմանը, մութ սկզբունքի պիտուրը։ Մի խիս Երկուութիւն (դուալիզմ) բազուրում է ամբողջ բնու-

թեան մէջ։ Լոյսը և խաւարը, կեանքը և մահը, ձըշմարտութիւնը և ստութիւնը, բարիքն ու չարիքը վիճում են իրար հետ տիրապետութեան համար աշխաբնի ստեղծագործութեան սկզբից սկսած։ Արդար մարդը հանդիսանում է բարութեան աստծու զինուոր և ամէն մարդ պէտք է ձգտի երկրի վրայ արդար կեանքի, որովհետեւ զրանից է կախւած մարդու հանդերձեալ կեանքը։ Մեռածների հոգիներն անցնում են մի կամըջով, որի մի ծայրը տանում է Որմզդի բնակութեան տեղը՝ երկինք, իսկ միւսն իշնում է գժուխք։

Պարսկական աւանդութեան համաձայն այս հայեցքը բաց է արել մարդիկների առաջ Զորոաստր (Զարագուշտը) մարզարէն։ Նրանք մեզ հասել են իրանական բուրմերի կազմած սրբազն գրքերից, որ կոչւում են Զենդ-Աւեստ։ Քրիստոն դասակարգը բաժանված էր միւսներից եւ խիս հօր էր, մանաւանդ մարաց մէջ, ուր նա կրում էր մոզ անունը։ Դրանց միջավայրում Որմզդի կրօնը գարձաւ մի բարդ վարդապետութիւն, որից բղխում էին բազմաթիւ խիստ բարոյական պատէրներ։ Հասարակ ժողովուրդը չէր կարող հետեւել բոլոր մանրամանութիւններին, բայց բարու և չարի սկզբունքների մշտական կուի գաղափարը խոր կերպով թափանցեց նրա հոգու մէջ։ Ամենախեղճ գիւղացին անդամ կարծում էր, որ իր տոկուն աշխատանքով հողը մշակելը Որմզդին ծառայել է նշանակում, այն ինչ անօրէն թալանիչը, թափառական թիւրքմէնն Ահրիմանի գործն է կատարում։

Այդպիսով ընդհանուր արիական հաւատալիքներից Մարաց կամ իրանցիների մէջ զարգացաւ մի կրօն, որն ունեցաւ թագաւորում մեծ նշանակութիւն այդ ժողովրդների կեանքի համար։ Կեանքի ուրիշ կողմերի վերաբերութեամբ նրանից ինքարիւցին ասոր-բարելոնեան բարձր կույսուրային, որի հետ շփեցին արեմուտքում։ Այդտեղից նրանք

ե ր

փոխ առան սեպածի զիրը, ճարտարապետութեան և քանդակործութեան ձեւը: Ասորեստանցիների պետութեան տարածման շրջանում մարք և պարսիկները նոյն իսկ քաղաքականապէս կախում ունեցան Ասորեստանի թագաւորութիւնից: Այդ երկրորդական վիճակից նրանց դրւու զարու հարւածը տևց սկիւթացիների արշաւանքը է դարում Ք-ից առաջ: Հարաւային Ռուսաստանում բնակւող թափառական ցեղերը, որոնց մէջ իրար էին խառնւել արիական և թիւրքական ծագում ունեցող ժողովրդները, է դարում ուժեղ արէկոծութեան մէջ ընկան: Նրանց մի մասն ընկաւ իրանի և Փոքր-Ասիայի վրայ: Երկար և սկզբներում անցածող կուից յետոյ՝ մարաց թագաւոր կիաքսարը դաւաճանութիւնով բռնեց և կոտորեց սկլիւթացիների առաջնորդներին, յետոյ էլ գլուխ ելաւ մնացածների հետ: Սկլիւթացիներին տռած այս հարւածը բարձրացրեց մարաց նշանակութիւնը: Նրանք այլ ևս չուղեցին հպատակւել Ասորեստանին, և նոյն կիաքսարը, բարելացիների հետ դաշնակցելով, նինւէի դէմ արշաւանքի ելաւ, որ վերջացաւ Ասորեստանի պետութեան կործանումով: Վարսուն տարի մարտ իրանց ձեռքում պահեցին իրանական ժողովրդների զերիչսանութիւնը: Նրանց մայրաքաղաքը — Եկրաստան (Համատան) շինեց և զարդարեց այդ ժամանակում նինւէի և Բարելոնի նման:

Կիւրոս. Մօտաւորապէս 550 թւին թ. ա. Իրանում գերակշռութիւն ստացան պարսիկները: Պարսկական զօրքը կիւրոսի առաջնորդութիւնով ապստամբեց և իշխանութիւնն անցաւ պարսկական Արեւնեան հարստութեանը և մայրաքաղաքը դարձաւ Սուլլը (Շոշ): Բայց մարտ եւ պարսիկները շարունակում էին զործել միասին և հաւասարապէս աջակ-

ցում էին նոր թագաւորութեան տարածւելուն ու հաստատւելուն:

Այս ցեղերին իր իշխանութեան տակ միացնելով՝ կիւրոսն ամենից առաջ կիւղիայի դէմ դարձաւ: Այս երկրի թագաւորներին յաջապել էր միացնել Փոքր-Ասիայի ցրւած ժողովրդներին: Նրանք իրանց հպատակեցրին նոյն իսկ Եգիպտական ծովի ափերին հիմնւած յունական գաղութները: Լիւդիական թագաւոր կրէսոսի պալատը Սարգայում դարձաւ հպատութեան և շքեղութեան կենտրոն: Նրա ժամանակ կենդանի յարաբերութիւն սկսւեց ոչ միայն Ասորիքի, առաջաւոր Ասիայի և Եգիպտոսի ժողովրդների, այլ և եւրոպական յոյների հետ: Բայց արտղ բարձրանալի անբարեյտչող կերպով ազգեց լիւդիացիների վրայ: Նրանք ընկան քնքշութեան և փափկութեան մէջ և չըկարողացան զիմանալ աւելի վարժ և քարացած պարսիկների ընդհարումին: Կիւրոսը չըվախեցաւ նրանց վրայ արշաւել ձմեռ ժամանակ և գրաւեց Սարգան: Նրա զօրսկարները շարունակեցին նրա գործը և նւաճեցին ամրող Փոքր-Ասիան՝ մինչև ծովը: Բայց զրանից նւաճւեցին և Թաղթէան ու Ասորիքը:

Մահան օրերում (529թ.) կիւրոսին պատկանաստանան նում էին Քաղդէան, Ասորեստանը, Փոքր-Ասիան և Իրանը, իսկ նրա որդի կամբիւսը նւաճեց Եգիպտոսը: Անժառանգ կամբիւսի մահից յետոյ ներքին կարւներ սկսւեցին, բայց Աքեմենեաններից մէկը՝ Դարէհ Վլշտասպեանը՝ խեղդեց այդ ներքին կոիւները և վերջացրեց պարսկական անազին թագաւորութեան կազմակերպութիւնը, որը նրա ժամանակ ամփոփում էր արեւելքում Թուրքեստանը և հիւսիս-արկաման Հնդկաստանը, իսկ արևմուտքում տարածւում էր Թրակիայի վրայ: Դարէհի թագաւորութեան մեծ մասն անցկացաւ իր լայնածաւալ տիրապետութեան երբեմն մի, երբեմն

միւս մտառմ ողայթած ապստամբութիւնները զսպելու համար ձեռնարկւած արշաւանքներում։ Դարձէն, Ասուրեստանի թագաւորների նման, չեր բաւականանում տիրւածներին բոլորովին կոտորելով և գաղթեցնելով։ Նա փորձեց կաղմակերպել իր թագաւորութիւնը կանոնաւոր և միհնոյն ժամանակ իր հպատակների համար ոչ նեղիչ կերպով։ Այդ նպատակով նա բաժանեց իր Երկիրը 23 նահանգների։ Նրանցից ամեն մէկի մէջ նշանակւեց մի-մի նահանգապետ – Սատրապ, — որ պէտք է հոգ տաներ պարսիկների շահերի համար։ Նւաճւած ժողովրդներն իրանց ներքին գործերում շարունակում էին օգտուել տեղական սովորութիւններով և սեփական կառավարութիւններ ունեին, իսկ սատրապն առնում էր նրանցից հարկեր, նրանցից զօրք էր հաւաքում թագաւորին օգնելու համար, վերանսկում էր, որ դաւագրութիւններ չըծագեն։ Սատրապները նշանակում էին թագաւորից և մնում էին իրանց իշխանութեան մէջ այնքան ժամանակ, որքան թագաւորն էր բարեհաճում։ Նրանց վրայ հսկելու համար՝ Դարձէն ուղարկում էր նահանգները հաւատարմատարներ, որոնց կոչում էին «թագաւորի աշքեր և ականջներ»։ Ընդհանրապէս՝ որքան էլ սատրապներն իրանց նահանգներում զօրաւոր լինէին, նրանք ամբողջովին կախւած էին իրանց հրամայողից Սուրայում, և բաւական էր այստեղից մի հասարակ հրաման, որ զրկէր սատրապին իշխանութիւնից, երբեմն էլ նոյն իսկ կեանքից։ Այսպիսով՝ պարսից պետքեան ամբողջովից կարզը հիմնաւած էր «մէծ արքայի» բացարձակ տիրապետութեան վրայ։

ՓԻՒՆԻԿԻԱ

Եւ ասորեստանցիները, և բարելացիները, և պարսիկները մշտապէս ձգտում են արքելքից արեմուտք, իսկ բոլոր արևմտեան երկրներից տուաւելապէս նրանց զրաւում է միջերկրականի փիւնիկեան ափը։ Բանը հողի պտղաբերութեան մէջ չէ։ Փիւնիկիայի ափը մի նեղ շերտ աւագու և ժայռու հող էր։ Բայց Փիւնիկիայի սեմիտական ազգաբնակութիւնը կարողացաւ օգտուել մի քանի բարեյաջող հանգամանքներից։ ափերի վրան ու մօտերը գտնւած ժայռերը կազմում են լաւ պատւար նաւերի համար համու և ալկոծութեան դիմ։ Նրանց վրայ կարելի էր հեշտութեամբ ամրանալ և ցամաքից եղած յարցակումների դէմ։ աչքի առաջ բացւում էր ընդարձակ ծովը, որով կարելի էր մուտ գործել և եւրոպայի, և Օֆրիկայի մէջ։ Նրա անմիջապէս ետևում՝ Ասորիքում (Սիրիա)՝ իրար էին հանդիպում երկու մեծ կույտուրական Երկրեների՝ Եզիդիականի և Ասոր-Բաբելոնի նախապարհեները, եզիդական առևտուրը դիմում էր դէպի հիւսիս, և նրա զիխաւոր պահեստատեղիները գտնւում էին սիրիական Դամասկոսում և փիւնիկեան քաղաքներում։ Այստեղ էին զիմում նոյնպէս բարելական և ասորական ապրանքներն՝ առաջ Եփրատով դէպի վեր, իսկ յետոյ՝ Օրոնթօյով դէպի վար։ Այդ զիրքը շափազնց ձեռնտու էր ամբողջ Սիրիայի (Ասորիք) համար, բայց առաւելապէս օգտում էին դրանով փիւնիկեան նաւահանգստաները՝ Սիրոնը և Տիբրոսը։

Զըրաւականանալով իրանց ձեռքի տակ եղածովք, Փիւնիկեան փիւնիկեան ծովագնացները մտան Միջերկրական ծովը՝ թիւները և հիմնեցին իրանց գաղութները բոլոր ափերի վրայ։ Նրանց ձեռք բերած առաջին տեղն էր կիպրոս կղզին։

Նրանք այնուեղից հանում էին պղինձ, և հէսց կղզու անունն էլ դարձաւ այդ մետաղի հասարակ անունը շատ արևմտեան—եւրոպական լեզուներում (cyprium, cuprum, cuivre, Kupfer), Գրաւելով կիթերա կղզին, նրանք աղղեցութիւն ձեռք բերին հարաւային Յունաստանի վրայ: Այստեղ նրանք հաւաքում էին մի տեսակ խեցիներ, որոնցից պատրաստում էին կարմիր ներկ: Թասոս կղզուց, Արխիպելագոսի հիւսիսում, նրանք հանում էին ոսկի: Մինչև անդամ միջին Յունաստանում շատ քաղաքներ կրում էին փիւնիկեցիների աղղեցութեան հետքերը (Կորնթոս, Արգոս, Թէրէ):

Փիւնիկեցիներն ետալիային համարեած ձեռք չըտւին—նրանք իրանց բնակութիւններով զրաւեցին միայն Սիկիլիան և Սարդինեան: Դրա վոխարէն նրանց գաղթականութիւնն ուզուեց աւելի ուժեղ շափերով դէսլի իսպանիա և հիւսիսային Աֆրիկա: Դադերը (Կաղիբա)՝ Զիրրալտարի նեղուցի մօտ և Կարթագէնը (Նոր քաղաք)՝ այժմեան Թունիսում, նըրանց զիխաւոր յենակէտերն էին: Իսպանիայում նըրանք գտան արծաթի հանք և սկսեցին այնուեղից որ առաջ ուկուց աւելի թանգ էր, խիստ կերտով ընկաւ: Վերջապէս փիւնիկեցիները կանգ չառան նոյն խիլ Ալտանտեան Ովկիանոսի առաջ, նրանք դադութներ հիմնեցին Աֆրիկայի արևմտեան ափերի վրայ և առեսուր սկսեցին Բրիտանական կղզիների ճետ, որտեղից ձեռք էին բերում կրայէկ: Բացի նրանից որ Փիւնիկա էին հոսում ասիսկան կարաւանային առևտուրի արդիւնքներն, այստեղ ստացուում էին Արաբիայից անուշանոտ իրեր, քաղցրեղէններ և ոսկի, նից՝ ծիաններ և երկանինի կառավարական քարեր, Արգամանից հաց և

ձիթապաղի իւղ. շոայլութեան առարկաներն ստայւում էին Եղիպտոսից և Բարելաստանից և, մերջապէս, այն ժամանակի աշխարհի բոլոր ծայրերից ստացւում էին սորուկներ: Փոքրիկ, անսլույ Փիւնիկիան դարձաւ այն ժամանակի աշխարհի առեւտական կենտրոնի:

Փիւնիկեցիները միմիայն առևտուրով չէին զբաղ- շում: Նրանք սովորում և վոխ էին առնում իրանց պատահած զարգացած ժողովուրդներից և իրանք էլ սովորեցնում էին բարբարոսներին: Եղիպտացիներից նրանք սովորեցին ապակի շինել, պատրաստել և ներկել կտորներ, մշակել քարը և մետաղները: Նրանի ձեւափոխեցին եղիպտական զիրը, պարզ ձեփ վերածեցին նրան և կազմեցին առանձին տառերով այբու- բեն, իսկ այս փիւնիկեան այբուբենից գուրս եկան յունական, լատինական և բոլոր եւրոպական, նոյն- ողէս և հրեական, արաբական և ուրիշ արևելեան այ- բուբենները: Այդպիսի զործունէութեան համար հարկաւոր էր մեծ ձեռներէցուրեան ոփի, նամարձակու- թիւն և նկունութիւն, նաևզումանիներից օգտւելու ընորհի: Փիւնիկեցիները լիովին կենարոնացել էին կեն- ական զործունէութեան մէջ և շատ քիչ էին զբաղ- ւում հանդերձեալ կեանքին վերաբերող հարցերով, որոնք այնքան հետաքրքրում էին եղիպտացիներին: Նրանք ասորեստանցիների նման զինւորական փառք էլ չէին որոնում:

Նրանց կրօնը շատ բանով նման էր Յաղթակա- նին. զիխաւոր աստվածներն էին Բաալը և Աստար- տէն, ինչպէս Բէլը և Իշտարը Բարելոնում: Փիւնիկեան աստվածներն ունէին բարկացոտ և դաժան բնաւորու- թիւն. Նրանց սիրաը փափկացնելու համար՝ մարդկա- յին զաներ էին մատուցանում նրանց:

Ժողովրդի բազոն արտափայլում էր այն աւան-

գութեան մէջ, որի համեմատ Բաազր՝ Մելկարս հերոսի կերպարանքով ման եկու ամբողջ երկիրը, ամեն տեղ քաջագործութիւններ անելով՝ հասաւ Զիբրալտարի նեղուցին և զրեց այնակ երկու սիւն իրը նշան այն բանի, որ այդուհի երկիրը վերջանում է: Յետոյ յոյները Մելկարսը փոխուցին Հերկուէսի և այդպիսով առաջացաւ «Հերկուէսիան սիւներին հասնել» առածը, որ նշանակում է հնարաւորութեան ծացրին համնել:

Փիւնիկեցիների հարստութիւնը և ոյժը բոլորովին հաստատուն չէին: Երանց երիխը կազմւած էր սի շարք բազմաթիվից, որոնց մէջ շատ ինչ կալ կա: Գաղթավայրերում փիւնիկեցիները չէին աշխատուած նւաճութեար անել և բնակիչներով լցնել այն նահանգներն, ուր իրանք երեւած էին, այդ ուեւ է կըզու կամ ափի վրայ շինում էին իրանց պանեստահիներն ու գրանինակները տեղացիների հետ յարաքերութեան մէջ մանելու համար: Բայց և այնպէս հազար տարուց ուելի նրանք իրանց ձեռքում պահեցին համաշխարհային առևտուրը: Նրանց ուժեղ հարւած հասցրին ասորեստանցիները, որոնք VIII և VII դարերում մի քանի մնացած պաշարեցին Տիւրոսը: Բայց փիւնիկեցիների վերջնական անկումն առաջացաւ նրանից, որ այն բարբարոսները, որոնց հետ նրանք զարծ ունեին, նրանցից շատ բան սովորեցին և սկսեցին դուրս քշել եկուո՞ներին: Երբ Յունատանում զարգացաւ կուլտուրան և ծովագնացութիւնը, յոյները փակեցին փիւնիկեցիների առաջ Միջերկրականի համապատճեները:

ԵՐԿՐՈՒԴ ՄԱՍ

Յունաստանի

ԳԱՅՈՒԹՅՈՒՆ.

ԱզԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Միջերկրական ծովը հիւսիս-արևելքից ներս է սրբութ մանում մայր ցամաքի մէջ և կազմում Եղէտկան և Մարմարա ծովերը, որոնցով միանում է Սև ծովի հետ: Այս վերջինս բաւական հեռացնում է Ասիան Եւրոպայից: Բայց Մարմարա ծովում աշխարհի երկու մասերը համարեան լիսար շփում են, իսկ Եղէտեան ծովում նրանց միաւորում են Արշակելագոսի կղզիները: Այս կղզիները, Յանիանեան բերակդիմի արեւմուտում եւ Փոքր-Ասիայի ափերն արևելքում՝ պամուրեան մէջ կազմում են մի ամբողջութիւն: այդ բոլոր նահանգները բանւած էին յոյն ցեղի ժողովրդներով և առպում էին իրար հետ մշտական յարաբերութեան մէջ:

Փոքր-Ասիայի մէջ բարձրանում է մի բարձր և միակերպ սարահարթ, որ յիշեցնում է իրանը, զէպի արեմուտք նա ցածրանում է և բաց է թողնում մի քանի բաւական մեծ զեսեր: Ափերը կորսւած են խորշերով և շատ յարմար են ծովագնացութեան հա-

մար: Նրանց առաջն ընկած են մի շարք կղզիներ, որոնցից ամենակարևորներն են Լիսոսը, Թիոսը, Սամոսը և Ռոդոսը: Կրէտէն կարծես փակում է եգեյան ծովը հարավից, իսկ եւրոպական ափի երկարութիւնով դասաւորւած են Կիթերան, Եգէան, Թասոսը և ուրիշները:

Պատմութեան մէջ զիխաւոր նշանակութիւն ունեցաւ բուն Յունաստանը կամ՝ այսպէս կոչւած՝ Հելլադան, Բալկանեան Թերակղզու հարավյին մասը: Նրա սահմանն է հիւսիսից՝ Բալկանեան շղթան, որ խիստ գժւարացնում է Դունայի մօտակայ երկրների հետ հաղորդակցութիւնը: Այսպիսով կարծես Յունաստը դարձել եւ սեղմել ին ծովին: Նա կտրուած է բազմաթիւ թերակղզիներով և կղզիներով, հրւանդաններով, խորշերով և, որքան աւելի դէպի հարաւ է զայխ, այնան աւելի բազմազան են ափերը: Աւելին զարմանալի չէ, որ նրա բնակիչները դարձան լու ծովագնացներ: Արևմտեան ափերը, ծանծաղուտների և ստորջրեայ քարերի պատճառով՝ աւելի անշարժար են և արեկեան ափերն ունեն նրանցից անպայման առաւելութիւններ: Այստեղ լեռներն այնքան էլ շատ չեն մօտենում ափերին, գետերը կազմում են մշակութեան համար յարժար հովիտներ և, որ զիխաւորն է, ափերը կտրուած են բազմաթիւ խորշերով և դարձած են դէպի եղեյեան ծովի կղզիներն ու հանդիպակաց Փոքր-Աստիան: Արեւելիսան կխումնի երե զինուում նելլենական բոլոր զիխաւոր պիտուրիները եւ այդ մասումն էին տեղի ունենում երկրի պատմութեան զիխաւոր դէպիեր:

Յունաստանը բաժնուում է երեք մասի: Հիսուսին՝ բալկաններից մինչև Թերմոպղեան կիրճը, միջին՝ մինչև Կորնթոսի պարանոցը (Կոթմ) և հարա-

Հիւսիսային Յունաստանը լեռնաշղթաներով բաժնուում է չորս մասի: Հիւսիսային կիսում մնում են վայրենի Իլլիրիան և Մակեդոնիան՝ Բնակւած բարբարութիւններով, *) հարաւում Պինդոս շղթան և իր ձիւզերն իրարից բաժանում են Եպիրոսն ու Թեսալիան: Թեսալիան միանում է Միջին-Յունաստանի հետ Թերմութիւնեան կիրճով:

Միջին-Յունաստանը գետեղւած է Պարնասսի բարձունքի շուրջը: Դէպի արևմուտք անդաւորւում են դաժան և սակաւարենակ լեռնական նահանգները (Ակարնանիա, Էտոլիա, Լոկրիա), Արևելքում ընկած են Ֆոկիդան, Բէօվտիան և Ատամիկան:

Միջին Յունաստանից դէպի Պելոպոնէս անցքը կազմում է Իսթմը (Պարանոցը): Պելոպոնէսի մէջ անդում ընկած է լեռնային Արկադիա գաւառը, որի շուրջը գետեղւած են միւս նահանգները. Էլիդան՝ դէպի հիւսիս-արևմուտք, Աքէան՝ դէպի հիւսիս, Ալգորիդան՝ դէպի հիւսիս-արևելք, Լակոնիան և Մեսանան-հարաւում:

Այսպէս ուշեմն՝ Յունաստանը դժւար անցանելի լինաւորաներով եւ ափերի կրտսեածքներով բաժանված էր բազմաթիւ ինքնուրոյն նահանգների: Դրանցից ամեն մէկը կազմակերպւեց իր ուզածի պէս և գարձաւ մի առանձին պետութիւն:

Հելլադայի հողը բաւական աղքատ է և զգացւում է ուսուզան պակասութիւն, որովհետեւ տեղ չկայ մեծ գետերի համար: Ազգաբնակութեան անելու հետ միասին պէտք էր, ինչպէս Փինիկիայում, պիսի առեւտին եւ որոնել բնակութեան նոր վայրեր:

Յունաստանի և Փոքր-Աստիայի ափերի առաջին զեղերը.

*) Անզարդացած ազգեր: Ակզրում յոյնեւն այդպէս էին անւանում բոլոր յունարէն չխօսող ցեղերին:

1100 թ.

բնակիչներին անւանում էին պելազգներ: Մօռաւորապէս 1100 թւին տեղի ունեցաւ ժողովրդների տեղափոխութիւն՝ հիւսիսացին ցեղերի տւած հարւածի պատճառով: Դորիական ցեղը, որ զետեղւած էր Ռիմսկոսի մօսերում, շարժւեց գէպի Պելոպնէս: Ըստ աւանդութեան՝ նրանց զլուխ էին կանգնած երեք Հերակլեաններ՝ Հերակլէս հերսոփ սերնդից: Այդ ժամանակից Յունատանի և փոքր-սախական ափերի բնակիչներն սկսեցին կոչել հելլենին: Նրանք բաժանում էին երեք ցեղի՝ դորևացիք, ամէացիք և յունիացիք: Գործացիները տիրում էին Արգոլիսին, Մեսանային, Լակոնիային և պարանոցին (Խսթմ): Աքէացիները (Էօմացիներ) բռնել էին զլխաւորապէս Պելոպնէսի հիւսիս-արևմասան ափը՝ Աքան, Բէովախան և Թեսալիան: Յոնիացիների զլխաւոր բնակավայրերն էին Ատամիլէն և Եւրէան:

Դադավագութեան

Շարժումը չբաւականացաւ Բալկաննեան թերակղով, այլ անցու ծովի այն կողմը. XI-ից մինչև VI դարը յունական նահանգները մշատապէս ահազին թւով բնակիչներ են դուրս ուղարկում բաղդ որոնելու օտար երկներում և այդպիսով Միջերկրականի բոլոր ափերում սաեղծուում է զաղթականութիւնների մի ամբողջ աշխարհ: Սկզբում շարժումն ուղղուում է գէպի արևելի՝ Արժապելողովի կղզների վրայ և Փոքր-Ասիա, յետոյ ուղղուում է զլխաւորապէս գէպի Յիսուսի՝ գէպի Աև ծովի և Հելլեոպնոսոսի ափերը. վերջապէս՝ զաղթականները զիմում են գէպի արևմուսի՝ Իտալիա և Միկրիա: Դորիական բնակութիւնները հիմնեցին Արշապելագոսի հարաւային կղզների վրայ (Կրետէ, Թրոքոս) և հիւսիսացին Աֆրիկայում (Կիլենտ): Փոքրասիական ափերի վրայ Դորիացիների զլխաւոր կայսան էր Հայիկարնապր. Թավիան նոյնպէս կրաւեց նրանց. Կարնթոսը հիմնեց այսակեղ Պուտիգեան, իսկ Մեդարոսը՝

Բիւղանդիան, որին վիճակւած էր ապագայում դառնալ աշխարհի մայրաքաղաքներից մէկը: Դորիայիների զաղթականութիւնն աւելի նշանաւոր էր արևմատքում: Կորնթոսն ուղարկեց զաղթականներ Կորկիրա (Կորֆու) կղզին: 723 թւին կորնթացիները Միկրիայում հիմնեցին Սիրակուզան: Իտալիայում Լակոնացի զաղթականները հիմնեցին Տարենտոնը:

723 թ.

Ամենից ձեսներէց և յաջող կերպով գործում էին Յունիացիները: Նրանք բռնեցին Արշապելագոսի ամենահամաւոր կղզները (Սամոս, Քիոս, Դելոս) և փոքրասիական ափերի միջն մասը (Միլէտ, Եփեսոս, Ֆոկէա): Այդուղից զաղթականութիւնը զնաց գէպի հիւսիս: Միլէտն իշխանութիւն ձեռք բերեց Սև ծովի վրայ (Օլրէան՝ Բուզի բերանում, Պանտիկապէան՝ այժմեան Կերչը, Սինովը՝ հարաւային ափի վրայ) Թրակիայում մեծ նշանակութիւն ունէր Եւրէա կղզութակիդա քաղաքի զաղթականութիւնը: Այդուղից հիմնել էին 32 քաղաքներ Խալկիդիական թերակղզու վրայ: Դէսպի արևմուտք՝ ՛ոյսպէս զլխաւորաքար Խալկիդիացիները զնացին. Նրանց զաղթականութիւններն էին՝ Նակասոք Միկրիայում, Բէզիոնն՝ Իտալիայում և այլն: Ֆոկէացիներին յաջողեց հիմնել Մասսիկան (այժմեան Մարտէլլը) հարաւային Գալլիայում: Սակա էր սատանում, որ զաղութների քաղաքները երկարժամանակ մնային մետրոպոլի (զաղթականութիւն ուղարկող քաղաքի) իշխանութեան տակ: Սովորաբար նրանք ձեռք էին բերում՝ ինքնուրոյնութիւն և իրանց ծնունդ տւող տեղերի հետ պահպանում էին միայն կրօնական կապ՝ օրինակ՝ ուղարկում էին պատգամամաւրներ նրանց տօներին մասնակցելու: Բայց և այնպէս զաղութների հիմնարկութիւնն ունէր ահազին նշանակութիւն մետրոպոլիների համար, որովհետև նա հնար էր տալիս ազգաբնակութեան անբաւական թեան ավագանութեան առաջարկութեան մասին:

անհանգիս մասերին տեղաւուելու և սեղծում էր մի շաբ յենակէտեր նեռու երկրների հետ ուսեցած առեւտական յարաբերութիւնների համար:

Գ 1. Ա Խ Խ Բ.

ՅՈՅՆԵՐԻ ՍՄԵՆԱՀԻՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՆ

Կրօնը.

Յոյները հաւատում էին, որ Յունաստանի ամենաբարձր սարի՝ Ռիմալոսի վրայ հաւաքւում էն երկնային աստվածները. Նրանց զլուխ կանդնած է տիեզերքի թագաւորը, աստվածների և մարդիկների հայրը, ամպրոպային Զեսը: Երբ նա կիսում է յանքերը, հաւաքւում են մութ-մութ ամպերը. Նրա ձեռքը զինաւած է կայծակով: Սակայն նա ամենազօր չէ: Նա չէ ստեղծել աշխարհն ու մարդուն: Աշխարհի ստեղծագործութիւնը յոյների համար մութն էր միում: Նրանց կարծիքով՝ մարդիկ սկզբում սոսկ անսառուներ էին: Նրանց աստվածային կրակի կայծ, հողի ներշնչեց Պրոմեթէսս աստվածը, որին Զեսն, իրը պատիժ այլպիսի կամացական վարժունքի, մեխեց կովկասի զագաթներից մէկի վրայ: Զեսն առաջինը չէ. նա միայն կառավարում է աշխարհը. Նրանից առաջ իշխում էին Նրա պապը՝ Ռւրանոսը (Երկինքը) և հայրը՝ Քրոնոսը (Ժամանակը), որոնք երկուսն էլ յաղթւած և յետ են քշւած նոր աստվածներից: Վերջապէս նոյն իսկ իր թագաւորելուց յետոյ էլ Զեսն ամենազօր տէր չեղաւ. մարդկանց և նոյն իսկ աստվածների վիճակը կախւած է անդէմ և անդութ բաղդից (մօյրա): Զեսին շրջապատում են զանազան աստվածներ—թեութեան ուժեները. Նրա կինը—Հերան՝ ընտանեկան կեանքի պաշտ-

պանը, Եղբայրը—Պոսէյդոնը՝ գեղեցկութեան և սիրոյ աստվածունին:

Զեսի պատուիրակը, Նրա հրամանների գործադրողը հանգիսանում է Հերմէսը, տունարի ձարպիկ, արագաշարժ, ձկուն պաշտպանը: Զեսի սիրելի զաւակներն են Աթենասը և Ապոլոնը: Առաջին աստվածունին մարմնացնում է իմաստութիւնն, այնպէս՝ ինչպէս այդ հասկանում էին յոյները: Նա ոչ միայն տալիս է զիտութիւն, այլ և սովորեցնում է օգտել նրանից կեանքի մէջ, զգուշացնում է կուրօրէն տարւելուց (զրաւուելուց) առին է մարդկանց հայացքի պարզութիւն, ինքնազապումն, ողու զգաստութիւն, վճռականութիւն: Ապոլոնը (Հելլոս, Ֆեր՝ Փայլուն) արեի աստվածն է, որ կատարում է երկնքի վրայով իր ճանապարհը՝ կասքի վրայ նստած: Նրա ճառագայթները մահարեր նետեր են, որոնցով նա յաղթահարում է աստվածների և մարդկանց թշնամի հրէշներին, նոյնպէս և իրան անախորժ մարդկանց: Նա է ուղարկում հիւանդութիւններն ու մահը և միևնույն ժամանակը ըստ հիւանդութիւնների համար չէ, որ զիմում են նրան. Նրանից է նոյնպէս ինպրում սրբացում այն մարդը, որ իրան պղծել է ոճիլով: Վերջապէս Ապոլոնն է ուղարկում մարդկանց ներեցիում (ոգեսրութիւն). Ապոլոնից են առաջնում նախագուշակութիւնները, և նա հանգիսանում է առաջնորդ մուսաների, որոնց նիրւած են գեղարւեսաները: Գինու աստվածն է Գիտնիսը (Բաքոսը): Նրա տօները, որ կատարում էին աշնանը՝ այդեկութիւց յետոյ՝ առանձնապէս սիրւած էին հասարակ ժողովրդից: Նրանց ժամանակի թագաւորում էր սանձարձակ ուրախութիւն. զինին ստիպում էր մոռանալ ամենօրեայ կեանքի զառնութիւններն ու հոգսերը: Բայց երբեմն բանը համար էր մինչև կատաղի զժութեան:

Ըստ աւանդութեան՝ Դիմնիսի հետևողները (մշնար-ները) կառը-կառը արխն նոյն խել աստծուն, բայց ջնար հաւաքեց կատրները և յարութիւն աւեց նբա մարմինն. Աւելի պարկէշտ և արժանավայել ձեռվ տօն- ում էր՝ հացի հնձից յետոյ՝ Դէմէտրայի (Դէ-մէտէր մայր նող), Երկրի պաղարերութեան աստւածունու տօնը. Աստութիւնում նրա տօնի հետ միացրել էին խորհրդաւոր սրբադործոյ ծէսեր և Եղիսեան խորհր- դաւորութեան թափոշները:

Որովհետեւ երկրի հետաքը չէ կատարւում միմիայն նրա մակերեսոյթի վրայ՝ այլ և նրա խորբուժ, որտեղից ամեն կենդանի էակ ստանում է սնունդ և ուր գառնում են մե- ռածները, զրա համար էլ յոյներն ասում էին, որ Դէմէտ- րայի աղջիկը՝ Պերսիֆոնան, յափշտակւիլ է ստորերկրեայ- աշխարհի թագաւորից—Հաղէսից՝ և ամեն ամառ վերադառ- նում է այնտեղից իր մօր հետ տեսութեան համար:

<sup>Հանդերձեալ
կեանքը.</sup> Ստորերկրեայ աշխարհում են ապրում մեռածնե- րի հոգիները. Այս վերջինների մասին յոյների զաղա- վարները երկար ժամանակ շատ աղքա և հակասական էին. մի կողմից նրանք ողբում էին բոլոր հանգու- ցեալներին, ինչպէս խոտանի բազւորութիւնը մած- ների, ուր ոչ ո՛վ խոնդորիւն չտենի. միւս կողմից նրանք աշխատում էին զանազանութիւն դնել աւզա- ների, որոնք անեղ զատաստանից յետոյ Եղիսեան դաշտերում երջանկութիւնով պիտի վարձատրեն, և մեխուների մէջ, որոնք պէտք է նետեն Տարտա- րասը և Ենթարկեն զանազան տանջանքների. Խել զբա- նաւառում էր, ու մեռած նախնիները ինընանիների միևնուան կայութեան մէջ են մնում. Վերջիններս սրբաւոր էին միշտակել հանգուցեալներին, նրանց գերեզմաններն օծել և զոհեր մատուցանել և զրա փո- խարէն յոյս ունէին մեռածների օրհնութեան և պաշ- պանութեան վրայ. Նախնիքների այս պաշտամունքը

ուրա կերպով կապւած էր լիսանելան օջախի պատ- սամունիքի հետ, որի մէջ արտայայտում էր ընտանիքի միութիւնը՝ փոփոխւող սերունդների ընթացքում. Մար- դիկ ծնւռում և մեռնում են, խել ընտանիքը շարունա- կում է ապրել այնպէս, ինչպէս օջախում միշտ վառ- ում է կլակը, թէս վառելիքը փոխւում է. Եւ եթէ մէկը հեռանում գնում էր տնից մի նոր տեղ, նո- պէտք է իր հետ ասնէր հայրենի օջախից վառուղ ածուխ, որպէս զի իր նոր տեղում կրակը վառէր նախ- ին աղբիւրից:

^{Օրէնք} Յօնիների կրօնական հայտցքները խիստ կերպով մնանանուր պաշտա- փոխւում էին տեղի համաձայն, ամեն մի քաղաք ունէր մաւոքները. Սիրած աստւածները, որոնց համարում էր իր պաշտ- իր սիրած աստւածները, որոնց համարում էր իր պաշտ- պանները. Դրա համար էլ Զեսի, Ասոլլոնի և ուրիշ աստւածների մասին եղած միթերը պատմում էին շատ տարբեր կերպով և միայն կամաց-կամաց կաղմ- շացին մի քանի հայտցքներ՝ ընդհանուր բոլոր յոյների համար. Այսպիսի միացման շատ հապասաց այն հան- գամանքը, որ մի քանի Տեղական պատմունքներ դրացիների մօս հուչակ ուսացան. Օրինակ՝ Միջն Յու- նաստանում բարձրացաւ Ասոլլոնի որրավայրը Դել- ֆիսում (Ֆոկիդայում): Նրա զիթաւոր ձգող ոյժն էր, այսպէս կոչւած՝ Պիլթիս քրմունու գուշակութիւննե- րը. Նա նստում էր իր եռոտանու վրայ՝ ժայռի պատու- ւածքի մօտ, որից գուրս էին զալիս շշմեցնող զագեր. Նա ուշագնաց էր լինում և ներկայ եղող քուրմերը զրում և մեկնաբանում էին նրա անկատ խօսքերը. Որովհետեւ Յունաստանի բոլոր ծայրերից միշտ զիմում էին այդ տաճարը խորհուրդ հարցնելու, զրա համար էլ բուրմերը ննարաւորութիւն ունիին շատ լաւ խման- ալ բոլոր յունական գործերը, եւ սովորաբար նրանց լուսացման նեներն աչքի էին ընկնում իրանց խելացիո- ցունութիւնների. Բացի զրանից՝ տաճարի մօտ կազմեց շըր-

Կրօնական միթերի հետ շփւում են հեռու ան- չերոսները—
յեալի հերոսների մասին եղած աւանդութիւնները—
այն հերոսների՝ որոնք աստվածների մասնակցութիւ-
նով զանազան քաջազործութիւններ են արել։ Այդ
աւանդութիւնները չեւ կարելի ընդունել իբր իրապէս
պատահած դէպքերի խոկական պատկեր։ Եթէ մի քանի
միասի մէջ պատմական ճշմարտութեան որևէ է կտոր
կայ, այն էլ չափազանց դժւար է ջոկել ժողովրդա-
կան երեակայութեան զարդարանքների միջից։ Առաս-
պելական հերոսներից ամենաերելին էր Հերակլէսը (Հեր-
կուլէս)՝ կէսաստածը, Զեսի և մի մահկանացու կոչ
զառակը։ Նա սովորած է լինում ծառայելու իր երեց
Եզրօրը և նրա հրամանով կատարում է մի շարք մե-
ծամեծ քաջազործութիւններ։ սպանում է մի հակայա-
կան տոիւծ և մի բազմազիսանի օձ—հիդրա, յաղթում
է հակայ Անթէային, երկրի սրգուն, աշխարհի ծայրում
ձեռք է բերում ոսկէ խնձորները, վերջապէս ուղևոր-
ում է դժոխք և այնաեղից բերում է դժոխքի պա-
հապան շանը՝ երեք զիսանի Յերբերին։ Վերջապէս
Հերկուլէսը թունաւորուում է իր սպանած կենաւարոսի
(կէս մարդ-կէս ձի) թունաւոր զգեստով և յուսահա-
սութիւնից պատրաստ է լինում ինքն իրան խարոյիկի
վրայ այրելու, բայց Զեսը տանում է նրան երկինք և
նա անմահ է դատնում։ Աստիկայում կազմւեց մի միթ
Թէլքոսի մասին, որն ազատեց այդ երկիրը կրետէի
թագաւոր Մինոսի դրած զարհուընելի հարկից։ Ժամա-
նակ առ ժամանակ պէտք է կրետէ ուղարկէին մինաւ
իին ընտրւած երեսասարդներավ և աղջիկներով, որոնց
բափում էր հրեշտառը Եզր—Մինոտաւրոսը, Մի անգամ
միւնների հետ միասին ուղարկւուած Թէղէտն
սպանում է Մինոտաւրոսին և ազատում է իր հայրենիքը
կրետական իշխանութիւնից։ Արգոնաւորդաց արշաւան-
դի թեսական աւանդութիւնը պատճառ եղաւ միտ-

ջակայ ժողովրդների դաշնակցութիւնն ինչպէս սրբա-
վայրի պաշտպանութեան, այնպէս էլ դաշնակցութեան
անդամների մէջ եղած վիճելի հարցերը վճռելու հա-
մար։ Այս «Անփիկտոնփայի» մէջ մտնում էին դորիա-
ցիք, յոնիացիք, քէովտիացիք, թեսալացիք և մի քանի
մանր ժողովրդներ Միջին Յունաստանից (ընդամենը
12 անդամներ)։

Խաղեր.

Յոյների կեանքի մէջ կար մի միաւորող պայման
էլ այդ խաղերն էին, որոնք սարքուում էին մեծ տօ-
ների ժամանակ և զրաւում էին շրջակայ նահանգնե-
րից հանդիսականներ և մասնակցողներ։ Ընդհանուր
ազգային նշանակութիւն ստացան Ռիմապիայի, Դել-
ֆիսի (Փիլթիական), Նէմէայի (Արգոլիդացում) և
Կորնթոսի պարանոցի (Իսթմոկան) մրցումները։ Ամե-
նահոչակաւորներն էին 4 տարին մի անգամ էլիդա-
յում, Ռիմապական Զեսի տաճարի մօս կստարւող խա-
ղերը։ Սյատեղ դալիս էին Յունաստանի ամեն ծայրե-
րից մրցելու մարմնական վարժութիւնների մէջ—զա-
ղելու, ձիավարելու և կառավարելու, գոտեմարտելու,
շնչոր (դիսկ) և տէգնետելու մէջ։ Յալրուղինի վար-
ձաւոր թիւնը լինում էր հաստակ մի պատի, բայց
ուսանակ այդպիսի մի պատի՝ համարուում էր ամենա-
սեծ պատի թէ մեցութիւն մասնակցողի եւ թէ նրա
հայրենի հաղաքի համար։ 776 թւին Ք. Ա., առաջին
անգամ սկսեցին ցուցակազրել վագելում յազմուունների
անունները, այդ ցուցակները եղան համայունական
տարեզրութեան հիմքը *): Այդ հաւաքումների նշանա-
կութիւնը մեծ էր, որովհետեւ նրանք էին յոյների մէջ
աղջային հաղորդակցութիւն պահպանելու զիսաւոր
միջոցը։

*.) Օրինակ՝ 700 թիւը Ք. առաջ համարուում է 20. դ ոլի-
միադի Ա. տարին (Ու. 20, 1).

ցնելու մի ձեռնարկութեան մէջ զանազան տեղական հերոսների: Յասովիր իոլկոսից — թեսալիայում, ուղևորում է կողքիս (Կոլխիդա — այժմեան Վրաստանոր), այնուած զանւած ոչխարի ոոկէ մօրթը կամ ոոկէ գեղմը ձեռք բերելու: Իր դժւարին զործը զլուխ հանելու համար՝ նա շինում է Արգո նաւը և հաւաքում իր համար 50 զինակիցներ, որոնց թւում են լինում և Հերակլէսը, և Թէզէսուր, և ուրիշ շատ նշանաւոր հերոսներ: Կողքիտում Յասովի այնուեղի թագաւորի կախարդ աղջկայ — Մեդէայի օդնութիւնով ձեռք է բերում գեղմը: Այս կախարդական արկածները կազմում էին բանասեղծութեան հետիարների նիւթ, որոնք երգում էին բնաւորի առյօնակցորդեամբ զեղանակութիւնից (ակդիւր-աւուղիւր): Յոյների համար չէր կարող լինել աւելի մեծ զւարձութիւն, քան երեկոներն այս տուապեները լսելը որևէ ազնւականի կամ իշխանի սեղանի շուրջ նստած:

Հոմերոսի գիւղաղներութիւնները ամենալավ էրկու ընդարձակ պատմութիւնները, որ վերագրուում են կոյր երգիչ Հոմերոսին — Աքիլլէսի բարկութեան և Ողիսակի վերագրձի մասին գիւղաղներզութիւն (պօչմա) (Եղիական և Ողիսական): Թէ մէկը, թէ միւսը կապւած են մի պատմական անցքի հետ, որը զարձաւ տւանդութիւն, առասպել, այդ անցքն է յոյների արշաւանքը փոքրասիական Տրոյա քաղաքի գէմ: Համաձայն աւանդութեան՝ այդ արշաւանքը ձեռնարկւել էր յոյների միացած ուժերով՝ վրէժ առնելու Տրոյայի թագաւոր Պրիամոսից, որի որդիներից մէկը — Պարիսը՝ փափցրել էր Ապարատի Մենելաոս թագաւորի կոտջը՝ Հեղինէին: Յոյների պուխն էր անցել Արգոսի թագաւոր Ազամեմնոնը, արշաւանքին մասնակցում էին յոյների ամենաքաջ առաջնորդները — Դիոմէզէսոն Արգոլիդայից, Ողիսական Իթաքիտ կղուց, Այաքսը Սալամինա կղզուց, ծերունի

Նեստորը Պիլոսից և այն: Բայց արշաւանքի բաղզը կախւած էր զլիաւորապէս թեսալական թագաւոր Սքիլէսից՝ Պեղէայի և Թեղիտա աստւածունու որդուց, որովհետեւ միայն նա ունէր այնքան ոյժ, որ կարող էր յաղթել Տրոյայի զլիաւոր պաշտպանին — Հեկտորին: Ազամեմնոնը վիրաւորում է Աքիլլէսին, խւեղովնրաստրեկունուն: Աքիլլէսը հրաժարւում է այլ ևս պատերազմին մասնակցելուց և քաշւում է իր վրանը: Հետեւեալ ճակատամարտերում, չը նայելով մի շարք փայլուն քաջագործութիւններին՝ աքէացիներն անյաջողութիւն են կրում: Տրոյացիները քշում են նրանց զէսի բանակը և քիչ է մնում, որ այրեն նրանց նաւերը: Թրշւառութիւնը կանգնեցնելու համար անհրաժեշտ է լինում Աքիլլէսի միջամտութիւնը, բայց նա յամառ կերպով մեկուսանում է և միայն ամենապահնդաւոր բապէին ուղարկում է իր փոխարէն իր ընկեր Պատրոկլէսին: Հեկտորն սպանում է Պատրոկլէսին, և այն ժամանակ Աքիլլէսն, ընկերոջ վրէժն առնելու համար, մոռանում է Ազամեմնոնի հասցրած վիրաւորանքը: Նու զիտէ, որ Հեկտորից յետոյ ինքն էլ է մեռնելու, բայց այդ նրան յետ չէ, կանգնեցնում: Նա համում է Հեկտորին և սպանում: Հեկտորի մահովն ու թագումայլը վերջանուում է Եղիականը: Արշաւանքի միւս զէսը Երգերը — Աքիլլէսի մահը Պարիսի նետից, Ողիսակի խորամանկութիւնը, որը շինում է մի հակայական փայտէ ձի տրօյացիներին իբր նւէր և լցնում նրա փորը կուռզներով, Տրոյայի աստվածուն ու աւերտումը — այս ամենը կազմում էին այնպիսի հերիամների նիւթ, որոնք մեզ չեն հասել: Ճիշտ այդպէս էլ յոյն հերոսների տուն վերագրձի մասին եղած բազմաթիւ պատմւածքներից պահպանւել է, իր զբական զեղեցկութեան շնորհով, միայն Ողիսականը: Հերոսը կատարում է իր հրաշալի արկածներն Աթենասի պաշտպանութեան տակ: Նր-

բա մնալը կախարդուհի Յերցէայի մօս, որը Աղիսե-
սի ընկերներին խոզ էր դարձրել, նրա գերութիւնը
մարդակեր Պօլիֆեմ ցիկլոպի (միակնանի հակայ) մօս,
որից հերոսն ազատում է նրանով, որ հանում է նրա
միակ աչքը, վասնպաւոր նաւադնացութիւնը Սցիլլա
և Քարերգա հրէշների մօտով, նրա անցնելը Սիրէն-
ների մօտով, որոնք զրաւում էին ճամբորդներին կա-
խարդական երգեցողութիւնով՝ նրանց տանջելու հա-
մար, նաւարեկութիւնը, որ կործանում է և նաւը, և
նրա ուղեկիցներին—այս բոլորը մի քիչ ժամանակով
յետաձում են Աղիսեին. Նա ամեն վասնպներից
անվաս գուրս է պրձնում և վերջապէս վերադառ-
նում է իր կոսջ մօս, որը միշտ սպասում էր նրան,
չը նայելով Իթաքիա կղզու աղնւական երփառար-
դութեան մշտական խնամախօսութեան. Պատմւածքը
կամ պօէման վերջանում է այդ յանդուզն համհարդ-
ների (փեսացուների) ջարդովը:

Յունական հպոսի, այսինքն բանաստեղծական
պատմւածքի արտադրութիւնները ծառայում են իրր
մեծ ուշարձաններ յոյների լուսաւոր, կենդանի ողու
և նրանց արտաստվոր ձիրքերի համար. Բովանդակու-
թեան հետաքրքրելիութիւնը, բնաւորութիւնների և հո-
գեկան շարժումների նկարագրութեան մէջ ցոյց տած
դիտողութեան շնորհքը, նկարագրութիւնների պատկե-
րաւորութիւնը՝ զնում են այդ պօէմները մեծ արտադ-
րութիւնների շարքում, որոնցով բաւականութիւն է
ստանում, գւարձանում է ոչ թէ մի դարաշընան, ոչ
թէ մի ժողովուրդ, այլ ամբողջ մարդկութիւնը. Պէտք
է աւելացնել, որ այդ պօէմները, բացի զրանից՝ ու
նեն պատմական նշանակութիւնը, որովհետեւ տալիս
են հին յոյների կեանքից բազմաթիւ պատկերներ:

Փողովուրդն իր բանաստեղծութեան մէջ յաճախ
վերապահնում է, երկու զմիաւոր իրերի՝ արեւելի ժո-

ղովրդների նետ վարած կուին և յոյների արած ծո-
վային արշաւամններին: Խսկապէս՝ մենք գիտենք, որ
յոյները, կղզիների և Փոքր Ասիայի վրայ տարածւելու
ժամանակ՝ պէտք է հանդիպէին իրանց ցեղակից բը-
նիկների և փիւնիկեցի վաճառականների հետ: Թէ
առաջինները և թէ երկրորդներն արդէն սնւած էին
տարածական և քաղցէական արեւելեան կուլտուրայի ո-
գով: Յոյներն սկզբներում սովորում էին նրանցից,
իսկ յետոյ ինքնուրոյն դարձան: Յունաստանի վրայ
մասցել են արեւելքի աղղեցութեան շատաշատ հետքեր:
Յոյները հաստատեցին իրանց այրուքենը փիւնիկեանի
օգնութիւնով: Արեւելքից վերցրին նոյնպէս իրանց
ծանրութեան և բովանդակութեան չափերը և փող
կտրելը. այս վերջնիս իրը հիմք ծառայում էր բարե-
լական տաղանդի հաշիւը. մի տաղանդն ունէր 60
մին: Հին Տրօյայի, Արգոլիդայի Միքէն և Բէովախայի
Օրքոմէնա քաղաքների տեղերում եղած պեղումների
ժամանակ գտնուել են բազմաթիւ մետաղէ և կաւէ ի-
րեր, որոնք պատրաստւած են արեւելեան ձեռվ. նոյն-
պէս և մի քանի զարդեր՝ եղիստական և բարելական
ծագումից, որ բերել էին փիւնիկեցի վաճառական-
ները: Փոխառութիւնը երեւում է նոյնպէս և կրօնի
մէջ: Աֆրօդիտէի պաշտամունքը Կիպրոսում, Կիթե-
րայում, Կորսնթոսում և այլ տեղերում կատարւում էր
այնպիսի ծէսերով, որոնք փոխ էին առնւած ասորա-
կան Աստարաէի պաշտամունքներից: Հերկուլէսի մա-
սմին եղած առասպելը կազմեց փիւնիկեցի Մել-
կարտի առասպելի աղղեցութեան տակ: Թէզէսի պատ-
մութեան մէջ արդէն երկում է օտարներին զիմա-
գրելը. հերոսը յաղթում է կրետական եղին, որ էր
Բաաղի մարմնացումը: Ընդհանրապէս յոյն ժողովուր-
դը կարողացաւ յաջող կերպով վճռել իր ունենալք
յարաբերութիւնների հարցը դէպի օտարերկրեայ բար-

ձըր կուլտուրան: Նա չըմենկուսացաւ, չըքաշւեց նրանից
և նոյն խոկ մի առժամանակ մի քիչ ենթարկւեց նր-
րան: Բայց վերջ ի վերջոյ նա կարողացաւ դարձնել
նրան իր սեփականութիւնը եւ սկսեց ինքնուրոյն կեր-
պով զարգանալ, մշակելով մի աւելի ինքնուրոյն կու-
տուր:

*Տանձտական
կազմ*

Ներկայումս բոլոր զարգացած ժողովրդներն
ապրում են պետութիւնների մէջ: Ամեն մի պետու-
թեան մէջ իշխանութիւնը տրւած է մի կամ մի քա-
նի անձերի, որոնց պէտք է ենթարկւեն բոլոր մա-
ցածները. դիմադրութեան գէպըումն՝ իշխանութիւնը
կամ կառավարութիւնն ունի իր տրամադրութեան տակ
զինւած ոյժ: Այդպէս է արւում՝ առաջին՝ նրա հա-
մար, որ մարդիկ չըկարողանան իրար ճնշել, այլ իրար
հետ վէճ ունեցած ժամանակ զիմեն պետական դա-
շտարակին: Երկրորդ՝ նրա համար, որ բոլորը միասն
կարողանան պաշտպանուել ուրիշ ժողովրդների յար-
ձակումներից: Թէ և այս կազմը շատ պարզ է և մենք
այնպէս ենք սովորել նրան, որ մեզ համար դժւար է
երեակայել մի այլ կազմ, բայց խկազէս նա մշակ-
ւեց մեծ դժւարութիւննով և աստիճանաբար: Արե-
ելեան պետութիւններն այնքան վաղ են ծնունդ տաել,
որ մենք համարեա ոչինչ չըդիտենք նրանց կազմելու
մասին: Դրա փոխարէն մենք Յունատանում տես-
նում ենք մի այլ տեսակի կազմութիւն, որը կոչւում
է տոհմական: Առանձին մարդկանց պաշտպանութիւնը
բնութիւնց երկար ժամանակ պատկանում էր ազ-
գականներին և ոչ քաղաքների վարչութիւններին, ո-
րոնց մէջ էր բաժանւած յոյն ժողովուրզը: Հեռու եւ
մօտիկ ազգականները կազմում էին մի համայնք, որ
կոչւում էր տոհմ: Նա կառավարուում էր ամենահա-
նմանում էր հօր ընտանիքի վրայ ունեցած իշխանու-

թեանը: Աւագի ձեռքումն էր դատարանը, որ դա-
տում էր ազգակիցների մէջ ծագած վէճերն ու վի-
րաւորանքները: Նրա տրամադրութեան տակն էր տոհ-
մի զինւած ոյժը, որը կազմուում էր զէնք կրելու ըն-
դունակ բոլոր տղամարդկանցից: Նա էր կառավարուում
տոհմի համայնական, անբաժան սեփականութիւնը—
հողը և հօտերը. վերջապէս նա էր հոգում աստուած-
ներին, և հերոսներին և տոհմի յարգած նախնիբներին
արւելիք պաշտամունքների և զոհերի մասին: Բոլոր
դէպքերում էլ նա ինքնիշխան կերպով չէր գործում,
այլ առանձին ընտանիքների գլխաւորների կամ նոյն
խոկ տոհմի բոլոր հասակաւոր տղամարդկանց ժողովի
համաձայնութիւնով: Ազգականութիւնը հաւում էր
միայն տղամարդկանց զօնով: Եթէ որ և է մէկը կի՞ն
էր առնում մի օտար տոհմից, կի՞նը հրաժարում էր
իր նախնին ազգականների ու նրանց աստուածների
հետ յարաբերութիւն ունենալուց, ընդունում էր ա-
մուսնու կրօնը և ենթարկւում էր նրա տոհմական իշ-
խանութեանը: Եթը ընդհարում էր պատահում տոհմի
անդամին և մի կողմանակի անձի մէջ, տոհմի օգնում էր
իր անդամին, պաշտպանում նրան, իսկ հարկաւոր
գէպըում իր անդամին հասցրած վիրաւորանքի կամ
մահւան համար վրէժ էր առնում կամ դրանց համար
համապատասխան տուգանք էր պահանջում:

*Եթէ ամէն մի տոհմ հնար ունենար բոլորովին առան-
ձին ապրելու և առանց միւսների կառավարւելու, այն
ժամանակ նա կը լինէր մի փոքրիկ պետութիւն: Բայց
տոհմները չըկարողացան բոլորովին առանձին ապրել-
նրանք չափազանց փոքր ու թոյլ էին և անխուսափե-
լի կերպով պէտք է ենթարկւէին օտարների բանու-
թեան և սարկացման. դրա համար ամեն եեղ առան-
ձին տոհմները միանում են իրար նետ բաղադների մէջ,
կազմում բաղադային համայնքներ: Այդպիսի միա-*

թեան առաջին գործն է ընդհանուր զօրքի կազմութիւնը: Բայց միութիւնը կազմւելուն պէս չէր կարող այլիս սառնասրութիւնով թոյլատրել իր մէջ մասած տոհմերի վէճերն ու կոփուները: Տոհմական դատարաններին իբր լրացուցիչ հանդիս են զայխ բաղադին դատարանները, որոնք աշխատում են հարթեցնել միևնույն քաղաքի զանազան տոհմերի անդամների մէջ ծագած վէճերը: Այսպիսով տոհմական իշխանութիւնների վրայ կազմում է կարծես մի երկրորդ յարկ—դաշնակցական քաղաքային կառավարութիւնը: Թէև խիստ շատ էին Յունաստանում ինքնուրոյն քաղաքները, բայց և այնպէս այդ ձեփ կառավարութիւնը նրանց մէջ սկզբում ամեն տեղ միատեսակ կադմեց: Մի քանի տոհմերի աւագները (հերոսներ) կազմում էին խորհուրդ, որը խորհում և վճռում էր բոլոր ընդհանուր գործերը և դատ էր անում այն դէմքում, երբ զանազան տոհմերի պատկանող անդամների մէջ վէճ էր ծագում: Պատերազմում առաջնորդ լինելու համար առաջ էր անցնում զիսաւոր աւագը—քաջանորը (վասիլէսո): Նա մի տեսակ հայր էր համարում ամբողջ քաղաքի և վրա համար էլ զո՞ն էր մատուցանում և կատարում էր քաղաքի համայնքի աստուածների պաշտամանքը: Ամենակարենը դէմքերում հրափրում էին զենք կրելու ընդունակ բոլոր տղամարդիկների ժողովը: Երան հաղորդում էին ընդունած վճիւնները և երրեմն ուշադրութեան էին ընառնում նրա արամազրութիւնը. բայց այդ ժողովում ոչ մի կանոնառը խորհրդակցութիւն չէր լինում: Ճա՞՞ս կանոխ առաջացան անհաւասարութիւններ այդ հասարակութիւնների անդամների մէջ: Պատերազմում առնեած զերիները դառնում էին ստրուկներ—մի իր կամ մի գործիք տէրերի ձեռքին: Այն ընտանիքները, որ միանում էին առաջուց արդէն կաղ-

մւած տոհմերի միութեան հետ, ընկնում էին անձեռնուու վիճակի մէջ. Նրանց անդամները քաղաքային վարչութեան մէջ մասնակցութիւն չէին ունենում: Մինչև անգամ զիսաւոր տոհմերում առաջ էին անցնում այնպիսի ընտանիքներ, որոնք առաւելապէս վարում էին պաշտամունքները և վարչական իշխանութիւնը: Կրտսեր եղբայրների սերունդն աւելի և աւելի յետ էր մնում երէց եղբայրների սերնդից: Այսպիսով արդէն նին ժամանակներում յունական բաղաների ազգաբնակութիւնը բաժանեց ազնւականների (արիստոկրատիա) եւ ժողովրդի (դէմոս), որը պետութեան մէջ միշ նշանակութիւն ուներ:

Գ 1. Օ Խ Խ Խ.

Ս Պ Ա Ր Տ Ա.

Դորիացիների հիմնած պետութիւններից ամենա-^{րի զինուորական կամ Լակէդէմո-կան կազմութիւնը} զօրեղը և նշանաւորն էր Սպարտան կամ Լակէդէմո-կան կազմութիւնը: Որովհետեւ դորիացիները պէտք է ուժով ճանապարհ բաց անէին իրանց համար արդէն տեղաւորւած ժողովրդների մէջ, դրա համար նրանք իւրացըն զինուորական սովորութիւններ և կարգեր: Մինչեւ անգամ խաղաղ ժամանակներում նրանց բաղաներից մի ժանիսը բանակներ էին: Տղամարդ ազգաբնակութիւնը, համաձայն վրանների թւի, խմբերի էր բաժանուած, որոնց անդամները միասին էին ճաշում (սիստիա), կազմում էին երգւեալ ընկերութիւններ (էնօմօթիա) և շարքերի մէջ կանգնում էին առանձին խմբակներով: Սպարտայում պատերազմական վիճակն առանձին խատութիւնով էր գործադրուում, որովհետեւ Լակոնիան զրաւելուց յետոյ՝ սպարտական դորիա-

շիները չըխառնեցին յաղթւած աքէական ազգաբնաւ-
կութեան հետ, այլ նրան հպատակութեան մէջ էին
պահում ուժով։ Նրա մի մասն ստրկացւած էր, միայն
չէր տրւել առանձին-առանձին սպարտացիների տիրա-
պետութեան, այլ ամբողջ պետութեան։ Սյու «հելլո-
ները» մշակում էին հողը և տուրքերը վճարում էին
հացով, որով պահպանուում էին սպարտացի ընտա-
նիքները։ Եթէ սպարտական կառավարութիւնը կառ-
կածում էր, թէ հելլուների մէջ անբաւականութիւն
կամ գաւաղրութիւն կայ, ոչնչացնում էր նրանց
անխնայ կերպով։ Ամեն տարի սպարտացի երիտասարդ-
ների խմբեր (կըբալտիա) էին ուղարկուում, որոնք պէտք
է հակէին հելլուների տրամադրութիւնների վրայ և
սպանէին կասկածաւորներին։ Նւաճւած աքէացիների
մնացած մասը կազմեց պերիկլիների գասակարգը։ Նը-
րանք ապրում էին քաղաքացին համայնքներով մի քիչ
ինքնավար ձևով, բայց կարեւոր գործերում կախւած
էին Սպարտայից։ արշաւանքների ժամանակ նրանք օգ-
նական զօրք էին տալիս և հարկ էին վճարում։

Խըլիքները և մահաւանդ հելոտները չեն սի-
րում իրանց ստրկացնողներին և պատրաստ են թօ-
թափելու նրանց լուծը, եթէ զվախնային սպարտա-
ցիների պատերազմասիրութիւնից և զօրեղ կաղմակեր-
պութիւնից. Վերջիններիս բոլոր ջանքը գործ էր զբր-
ու այդ յատկութիւնները զարդացնելու վրայ. դրական
ամառ նրանք զնում են մնացած բոլոր բաները—
ուրիշ նարսութիւնը, զիսութիւնների և արեսելիքի
զարգացումը, առանձին անհատների ազատութիւնն
ապրելու այնպէս՝ ինչպէս ամեն մէկն ուզում է. Եւ
առողջութեան համեմատ՝ Լիկուրդոս ու-
ունով մի մարդ, թագաւորներից մէկի խնամակալը, դել-
եան պատգամախօսի օժանդակութիւնով, սահմանաց
պարտայում խիստ օրէնքներ, որոնք մօմ 7 դար զո-

յութիւն ունեցան, մինչև հոօմայեցիների գրաւումը։ Քաղաքի զլուխ կանգնած էին երկու քափուրներ։ Քաղաքական իշխանութեան երկութիւնը առաջացաւ նրանից, որ սկզբնական երկու բաժան-բաժան համայնքները միացան և այդ ժամանակ պահպանւեցին երկու թագաւորական տոհմերն էլ)։ Համաձայն հների սովորութեան՝ թագաւորները քաղաքի ներկայացուցիչներն էին աստուածների առաջ և առաջնորդներ պատերազմի ժամանակ։ մնացած դէպքերում նրանք միայն երկու երէց անդամներ էին Գերուսիայի —երեսուն աւագների խորհրդի։ Սկզբներում այդ խորհրդն Սպարտացի ամենանշանաւոր պետական հիմնարկութիւնն էր։ Ժողովրդական ժողովը թէև հաւաքւում էր, բայց մեծ նշանակութիւն չունէր, ինչպէս որ էր բոլոր յունական պետութիւնների մէջ ամենամին շրջանում։ Մօտաւորապէս VIII դարի կէսեւ VIII դ. կէսը բին երեան եկաւ էքորոսների ընտրողական պահօնը։ Երանք 5 հոգի էին, և ժողովն ընտրում էր նրանց միտարով։ Այսպիսով նրանք հանդիսանում էին քաղաքի ընտրում ներկայացուցիչները՝ հակառակ թագաւորների և աւագների (վերջիններս նոյնպէս ընտրում էին, բայց մինչև մահ)։ Էքորոսները կամաց-կամաց իրանց ձեռքն առան պետութեան բոլոր գլխաւոր գործերը։ Երանք էին քննութիւն անում ոճրագործութիւնների մասին, վճռում էին քաղաքացիների մէջ եղած վէճերը, հակում էին բոլոր պաշտօնատար և մամնաւոր անհատների բարոյականութեան վրայ, նոյն իսկ իրաւոնք ունէին գաղաքեցներու թագաւորների իշխանութիւնը և նրանց գտափի ենթարկելու։ Այսպիսով թէև Սպարտան չըվերացրեց թագաւորական իշխանութիւնը, բայց իրապէս նա գարձաւ հասարակապետութիւն։ Նա մի օլիգորիքական հասարակապետութիւն, այսինքն մի խմբակի սրբավետրիւն, ու

բովին ժողովրդական ժողովն խճնուրոյն նշանակութիւն չունէր և իշխանութիւնը միշտ մնում էր մի փոքրիկ խումբ մարդկանց ձեռքին։ Բայց քաղաքացիական յարաբերութիւններում բոլոր սպարտացիները նաւասար էին, չըկար ոչ մի դասակարգային բաժանում։

հետաքի հ-
դանակը

Իրանց կեանքի եղանակով սպարտացիները խիստ կերպով տարբերում էին միւս պետութիւններից։ Սպարտայում ոչ ոք իրան չէր պատկանում, բոլորը պատկանում էին պետութեանը, որը տանում էր քաղաքացիներին դէպի մի նպատակ—զինւորական կատարելութիւն։ Հաղիւ մարդ ծնուռմ էր, տանում էին նրան աւագներին ցոյց տալու, և միայն առողջ երեխաներին էին թոյլ տալիս ապրելու. Թոյլերին առողորմ կերպով դէն էին շպրտում։ Տղային Շ տարեկան հասակից խլում էին ընտանիքից և մինչև 18 տարեկանը դաստիարակում էին հասակակիցների հետ միասին պետական զիմնազիաներում։ Մանուկ սպարտացիները սովորում էին մարմնամարզութիւն, պատերազմական կարգեկուի վարժութիւններ, սրնդի վրայ ածել և երգ. Սպարտացիները յատկապէս աշխատում էին զարգացնել կամքի ոյժը և տոկունութիւնը։ Տըղաները բոլոր եղանակներին թեթէ թիկնոցով, բոկոտն և բաց զիխով էին ման դալիս. Նրանց պահում էին միշտ կէս-կուշտ։ Յաւից բղաւելը կամ լաց լինելը խայտառակութիւն էր համարում, և երիտասարդ ըսպարտացիներն առանց անքալու տանում էին ուղղական վարժութիւնների ժամանակ ստացած հարւածներն ու վէրքերը և այն գանակոծութիւնները, որոնց ենթարկում էին նրանց Արտեմիսի սեղանի առաջ, Կանայք, տղամարդկանց նման, մարմնամարզութիւն էին սովորում. Հասակաւորները մինչեւ զերեզման մնում էին պետութեան խիստ հսկողութեան տակ,

Ընդհանուր ճաշերը խանգարում էին ուտելիքի շոայրութեան զարգացումը. որպէս զի տնական զարգարանքներից հեռացնեն գեղասիրութիւնը՝ շինութեան ժամանակ արգելում էր բանեցնել որ և է գործիք, բացի սղոցից և կացնից։ Կահ-կարասիքի բարելաւումն արգելեց նրանով, որ սպարտական կառավարութիւնն անհնար դարձրեց քիչ ու շատ նշանաւոր առևտութը. Նա ոսկուց և արծաթից փող չէր կտրում, այլ պահպանում էր երկաթէ և բրոնզէ հին, կոպիտ գրամը։ Օտարներին, առանց ծայրայեղ կարեւորութեան՝ չէին թողնում Լակոնիա, իսկ սպարտացիներին չէին թողնում արտասահման։ Հողատիրութիւնը նոյնպէս սահմանափակւած էր. սպարտացիները խիստ կերպով պահպանում էին հին օրէնքը, որի համաձայն հողը պատկանում էր ոչ թէ մասնաւոր մարզու, այլ ամբողջ ընտանիքին և խիստ կերպով որոշւած էր հողի այն քանակութիւնը կամ հողաբաժինը, որը չէ կարելի բաժան-բաժան անել, ծախել կամ կտակել։ Այսպիսի կազմութեան շնորհով սպարտացիներն իսկապէս՝ շատ բաներում դարձան իրար սաստիկ նման և շատ բաներում էլ միւս յոյներից տարբերեցին։ Խրանց մէջ հազիանիւ էին տաղանդաւոր մարդիկ. դրա փոխարեն բոլորն էլ աչի էին ընկենում իրանց առողջ խելքով եւ երկարէ կամունք։ Ամբողջ Յունաստանում յայտնի էր նրանց արտայայտութեան ճիշտ և կարճ ձեր (Լակոնական ոճ)։ Աւելորդ է ասել, որ նրանք դառնում էին օրինակելի կուողներ։ Բայցի մարմնական (ատլետական) նախապատրաստութիւնից և կարգապահութիւնից, նշանաւոր էր և նրանց մերիմ ընկերակցութիւնը. Էնոմոտիկայի անդամների համար, որոնք ամբողջ կեանքերը միասին էին անցկացնում, պատերազմի դաշտում անհնար էր իրարից բաժանել և փախչել։

Տիրապետութիւնով պլուխ չեկան սպարացիւ-
թիւնների VIII Բայց հեշտութիւնով պլուխ չեկան սպարացիւ-
թիւնների պատերազմական յաջողութիւնները: Երկու ան-
գամ նրանք յամառ պատերազմ մղեցին մեսսենացինե-
րի հետ—VIII դարի վերջում և VΙI-ի կէսերում: Բանը
մեսսենական պետութեան հասարակ հպատակեցման
մէջ չէր, այլ նրանց հողերը խլելում և նրանց
անձնականապէս կախման մէջ դնելում: Չունենալով
առևտուր և ծովագնացութիւն՝ Սպարացիները համա-
րեա գաղթականութիւններ չունէին¹⁾: Նրանք պէտք
է նւաճումներ որոնէին հէնց նրա համար, որ պէտք
էր որևէ կերպով տեղաւորել ազգաբնակութեան ա-
ռելորդ մասը: Մեսսենայի զրաւումն ստիպեց նրա
բնակիչների մեծ մասին փախչել, իսկ մացածներին՝
հելու գառնալ: Փոքր առ փոքր Սպարացի հետ միա-
ցան, իբր գաշնակիցներ՝ Պելոպոնէսի պետութիւնների
մեծ մասը մի քանի պետութիւններ էլ պելոպոնէսից
դուրս: Առաջին հայեացքից՝ գաշնակցութեան պայ-
մանները չափազանց ձեռնուու էին. ընդհանուր գոր-
ծերը վճռում էին մի խորհրդում, որի մէջ Սպար-
տան ունէր միայն մի ձայն և նախազանութիւնը. նրան
էր արւած նոյնպէս և պատերազմական ձեռնարկու-
թիւնների առաջնորդութիւնը: Իրապէս՝ Սպարտայի
աղղեցութիւնն անհամեմատ աւելի մեծ էր, ամեն մի
դաշնակց խաղաքում նա պատասխանում էր մի յայտնի
կուտակութիւն—«Սպարտայի բարեկամների կուտակ-
ութիւնը» (սովորաբար աւագներից՝ օլիպարխները) և
նրա օգնութիւնով առաջ էր քշում իր ծրագիրները:
Եթէ «Սպարտայի բարեկամները» պարտութիւն էին
կրում իրանց քաղաքում, այն ժամանակ Սպարտան
մէջ էր խառնուում զէնքով և երրեմն գաշնակից հա-

մայնքն էր ուղարկում մի «հարմոստ» (գործ շինող),
որը սարքում էր գործերն իր բարեհայեցողութեան
համեմատ: Պելոպոնէսան դաշնակցութեան շնորհով
ՎI դարում Սպարտան դարձաւ յունական պետու-
թիւններից ամենազօրեղը:

Գ. I. Ա Խ Խ. IV.

Ա Թ. Է Ն Ք.

Յոնիական առաջնակարգ պետութիւնն Սթէնքն Եւպոտիկա-
ների տիրու-
էր: Աստիկայի բնակիչները պարծենում էին նրանով, պետութիւնը
որ նրանց նահանգը երբէք չը նւաճեց—գորիական
գաղթականութիւնը կանգ առաւ նրա սահմանի մօտ:
Աստիկայի մի քանի փոքրիկ համայնքները կաղմեցին մի
ընդհանուր կառավարութիւն. նրանց բնակիչների մի
մասը հաւաքւեց մի քաղաքում՝ Սթէնքում: Փոքր հա-
մայնքների այդ տեսակ միացումը և մի մեծ համայնք
կազմելու գործողութիւնը շատ անզամ է պատահում յու-
նական պատմութեան մէջ և կոչում է սինօյկիզմ (միա-
սին բնակւել): Կառավարութիւնը գտնուում էր թագաւոր-
րի և արևոպագուի ձեռքում, որ կազմւած էր զիստուր
առնմերի աւագներից: Ինչպէս Սպարտայում թագաւոր-
ները դարձան գերուսիի երէց անդամներն, այդպէս էլ
Սթէնքում չոչնչացաւ թագաւորական իշխանութիւնը,
այլ աստիճանաբար հնֆարկւեց արէուպագոսին:

Սկզբում պատերազմի ժամանակ թագաւորին իր օպ-
նական սկսեցին ընարել մի զօրավար—պայեմարքոս. յիտոյ
դատական գործերի մի մասը աւին արէուպագոսինշանակած
դատինիքն. յիտոյ էլ՝ կրկնն դատավարութեան համար, միա-
ցրին 6 թիսուրեսներ: Կերպացաւ նրանով, որ թագաւորին
մեաց միայն համայնքի կրօնական ներկայացուցչութիւնը և
մարդասպանութեան գործերի քննութիւնը. ժառանգական
պաշնուրդից նա դարձաւ ընտրովի պաշտօնատար մի անձ:
Մի թագաւորի փոխարէն նշանակւեցին 9 ար-

¹⁾ Սպարտացիների միակ գաղթականութիւնը Տարե-
տոնն էր, որ հիմնել էին VIII դարի վերջում:

քոնսաներ կամ առաջնորդներ: Առաջինը (Էպոնիսոս), որի անունով նշանակում էին ատափեան տարին, զիսաւոր դատաւոր էր և, ի միջի այլոց, վճռում էր ժառանգութեան վերաբերող գործերը: Արքոնաներն ընտրում էին մի տարով: ծառայութիւնը լրացրած արքոնատին թոյլ էր տրում արէոպազոս մտնել: Անդալի կերպով Ատտիկան միապետութիւնից զարձաւ հասարակապետութիւն, բայց ժողովրդի մեծամասնութեան—դէմոսի համար այդ փոփոխութիւնից օգուտ չեղաւ: Իշխանութիւնն ամբողջապէս անցաւ ազնւական հարուս ընտանիքների կամ Եւպատրիոների (ազնւազարմ) ձեռքը, որով իրանց անդամներով զրաւել էին արէոպազոսը և արքոնութիւնը: Իր լըրացումն այս ամենի, մանր սեփականատէրեն ընկան Եւպատրիոներից փոխ վերցրած պարտերի տակ: Եւպատրիոներն իրանց սեփականացրին ամենալաւ հողերը և տիրապետում էին որոշ քանակութեամբ դրամական պահեստների կամ դրամագլուխների: Հնձի վատութեան, կենդանիների ջարդի, մնանիացնող պատերազմի դեպքերում խեղձերն ստիպւած էին նրանցից փոխ վերցնել ահազին տոկոններով: պարտքերը վճարում էին դժւալութիւնով, մանր հողատէրերի մեծ մասն ստիպւած էր մշակել իր հողաբաժինը պարտատէրերի օգտին, պահելով հնձի միայն մի վեցերորդ մասն իր սեփական ընտանիքը կերակրելու համար: Այս պարտապահներին, որոնք հող չունեին, ճորտ էին դարձնում և նոյն իսկ ծախում էին իր ստրուկ:

Աթէնքի դէմոսի անտանելի գրութիւնը մշտական ալէկոծութիւն էր առաջացնում պետութեան մէջ: Դէմոսն աշխատում էր կառավարութեան մէջ մասնակցութիւն ունենալ և պարտքերը թեթիացնել: 621 թւին Եւպատրիոները վճռեցին մի քանի զիջումներ անել: Նրանք յանձնեցին թէսմոթէթ Դրակոնին կազ-

մէլ գրաւոր օրէնքներ այն անորոց սովորութիւնների փոխարէն, որոնցով մինչեւ այն ժամանակ առաջնորդում էին Եւպատրի արքոնները: Դրակոնի գրածների մի մասը պահեց իր նշանակութիւնը և ապագայում, օրինակ՝ նրա օրէնքները մարդասալմութեան մասին: Բայց Դրակոնը չըփոխեց պարտքային դաժան օրէնսդրութիւնը: Դրա համար էլ ժողովուրդն անբաւական մնաց նրա գործունէութիւնից, և գրգռումը հասաւ այնպիսի չափերի, որ վերջապէս ստիպւած եղան փոխել հին կարգը: Անհրաժեշտ բարենորոգութիւը կատարւեցաւ 594 թւին Սոլոնի ձեռքով:

594

Հասարակ ժողովուրդն այնքան էր խճճւել պարտ- Սոլոնի ըա-
քերի մէջ, որ Սոլոնն ստիպած էր դիմել ծայրայեղ թիւու-
քիջոցի. նա ոչնչացրեց զյուրին ունեցող բոյր պարտերը և արգելեց այնուհետեւ պարտապահների անձնական նորութիւնը: Նա փոփոխեց կառավարութեան կազմն էլ: Արէոպագոսի հետ միասին նա հաստատեց 400 հոգուց կազմւած մի խորհուրդ, որը պէտք է հետեւ պաշտօնեաների գործողութիւններին և օգնէր նրանց իր ցուցմունքներով: Խորհրդի անդամներին ընտրում էր ժողովուրդը. նրան էր յանձնւած նոյնպէս և արքոնների թեկնածուների ընտրութիւնը: Այն պաշտօնատար անձերը, որոնք վերջացնում էին իրանց ծառայութեան ժամանակը, հաշիւները ներկայացնում էին հասարակական ծոլովին. նա էլ դատում և ընդունում էր ամենախոշոր վճիռները և օրէնքները էր դնում: Պաշտօնեաների վրայ եղած բորբոքները քննելու համար ժողովրդի միջից ընտրւած մարդիկներից կազմւած մի երգւեալների դատարան (գելիէա) հիմուեց: Պետութեան առանձին քայլա- քացիների մասնաւոր կեանքի ընդհանուր հսկողութիւնը մնաց արէոպագոսին, որն իր բարեհայեցողութեան համաձայն կարող էր պատժել ամեն մի մարդու վատ-

վարքի համար և իրաւունք ունէր մինչև անգամ հասարակական ժողովի վճիռները փոխել, եթէ նրանք իրան թւում էին հակառակ պետութեան հիմնական օրէնքներին:

Բացի դրանից Սոլոնը հիմնեց, այսպէս կոչւած, շիմնիրատիան, ամեն մարդու տրւած էին պետութեան մէջ իր պարտականութիւններին համապատասխան իրաւունքներ. ով տա ծառայութիւն էր մատուցանում, նա տա էլ ազգեցութիւն էր ձեռք բերում. Իրաւունքների և պարտականութիւնների բաշխման համար բուրով քաղաքացիները բաժանուած էին 4 դասակարգերի¹⁾. Ամենացած—չորրորդ դասակարգի (թիթեր) մէջ էին հաշուում այն քաղաքացիները, որոնք իրանց հողերից 200 և աւելի պակաս մեղիսն²⁾ դարի էին ստանուում տարեկան. Նրանք զօրքի մէջ ծառայուում էին թեթև կերպով զինւած, այսինքն պատերազմի էին դուրս գալիս վաճանով, աղեղով և նետերով, կամ նաւերի վրայ թիւավար էին լինում. Նրանց մասնակցութիւնը կառավարութեան դործերում սահմանափակուում էր նրանով, որ նրանց թոյլ էին տալիս մասնակցելու հասարակական ժողովին և գելիային. Երրորդ դասակարգի անդամները (զէվզիսներ) ունէին 200—300 մեղին տարեկան եկամուտ. ծառայուում էին ծանրագէն հետեւակ զօրքի մէջ իրր հովիտներ—պատերազմի էին դուրս գալիս կրծքի ու սրունքների վահաններով, սաղաւարտով, ձեռքի վաճանով և աէցով. Նրանք կարող էին ընտրւել 400-ի խորհրդի անդամ. Երկրորդ դասակարգն (ասպեաները) ստանուում էր

¹⁾ Դասակարգերը դոյտթիւն ունէին և դրանից առաջ, բայց Սոլոնը բաժանման իր հիմք գրեց կարողութեան ձիւտ գնահատութիւնը և զրա համեմատ էլ բաշխեց քաղաքացիների.

²⁾ Մեղինը մի քիչ պակաս է կը չհավերիկից.

300—500 մեղինն եկամուտ և ծառայում էր հեծելտղօրի մէջ. Նրանք պաշտօններ վարելու իրաւունք ունէին. Առաջին դասակարգի մարդիկ (պենտակոսիմեղիններ) ունէին 500 և աւելի մեղինն եկամուտ. Բացի պատերազմական ծախքերից՝ նրանք անում էին և ուրիշ զանազան ծախքեր հասարակական կարիքների համար, զինուում էին՝ օրինակ՝ նաւեր, մասնակցում էին տաներ սարքելու ծախքերին և այլն. Նրանք առանձին յարդանք էին վայելում պետութեան մէջ և մեծ մասով վարում էին զիսաւոր ողաշտօնները:

Սոլոնի բարենորոգութիւնը զցեց եւպատրիդների Պետականութիւնը, բայց չըրաւականացրեց ժողովրդին, որովհետեւ զիսաւոր ազգեցութիւնը կրկին արւած էր հարուստներին. Մէկ էլ որ՝ թէկ պարտքերի մասին եղած օրէնքներն զգալի չափով մեղմացրել էին և պարտքերն էլ միաժամանակ ոչնչացւել, բայց իրաց լիակատար ոյժը պահպանել էին այն պատճառները, որոնք ծնունդ էին տալիս պարտերին—սացւածի անհաւասար բաշխումը եւ էժան վարիի բացակայութիւնը, այսինքն՝ դժւար ժամանակը հնար չըկար չտփաւոր տոկոսավ փոխ առնել. Դրա համար էլ այն շարժումը, որ արագացրեց Սոլոնի բարենորոգութիւնը, չըդադարեց նրանից յետոյ էլ. Քաղաքի կաւոակցութիւնների խռովութիւններից օգտւեց ամենանշանաւոր աթէնացիներից մէկը—Պիտիստրատը. Սա մի ընդունակ և փառասէր մարդ էր, որի համար քիչ էր ուրիշ շատ քաղաքացիների հետ հաւասարապէս ունեցած իր նշանակութիւնը. Նա ձգտում էր մենակիշխելու և հասկացաւ, որ կարող է իշխանութեան համեմ, եթէ կարողանայ իր կողմը զրաւել ստորին դասակարգերը և հանել նրանց դժւար դրութիւնից. դասակարգերը և հանել նրանց դժւար դրութիւնից. նա հեռացաւ իր ազնւական ընկերներից և միաւնաւ գէմուսին. Շուտով նա ձեռք բերեց ժողովրդի ցաւ գէմուսին:

սէրը և, յարմար բովէ գտնելով՝ տիրեց Ակրոպոլիշ-
սին¹⁾: Երկու անդամ արտաքսեցին նրան Աթէնքից
և երկու անդամն էլ նա վերադարձաւ: Երկրորդ ան-
դամ յաջողւեց նրան ամուր կերպով հաստատել իր
իշխանութիւնը—բռնապետութիւն (տիրանիա) Աթէն-
քում (540 թւին): ✓

Պիստորատը բռնապետ չէր այդ բառի ներկայ
մարզով՝ այսինքն մի գաժան ճնշող: Ճշմարիտ է, նրա
թշնամիներից շատերը փախան քաղաքից, մնացած
ազնւականների ներկայացուցիչներից նա խլեց երե-
խաներին իր պատանդ, բայց՝ այսպիսով ապահովե-
լով իր անվտանգութիւնը, նա չըդիմեց սպանութիւն-
ների և գաժանութիւնների և թողեց նոյն իսկ Սոլոնի
կարգադրութիւններն իրանց ուժի մէջ: Որովհետեւ
զինաւոր պաշտօնները տրուում էին նրա ազգական-
ներին և կուսակիցներին, իսկ նրա հակառակորդներն
աքսորւած կամ ուժաթափ էին արւած, գուրս էր գալիս,
որ իրապէս կառավարում էր միայն Պիստորատը: Նա
իրան Մջապատեց թրակիացի վարձկան թիմնապահնե-
րով, բայց և այսպէս նրա նշանակութիւնը նիմինում էր
նախ եւ առաջ ժողովրդի համակրութեան վրայ, որը
հրաժարւեց կառավարութեան մէջ մասնակցերուց,
որպէս զի բարեկալէ իր նիւրական դրութիւնը: Պի-
ստորատի առաջին հոգու եղաւ ժողովրդի զրութեան
հիմնական բարեկաւման համելլ. նրա համար նա բաց
արեց էժան վարկ կարիք ունեցող հողագործների հա-
մար և Աթէնքում արտած իր մի ամբողջ շարք շինու-
թիւններով հաղարաւոր աղքատների աշխատանք տւեց:
Նրա օրով Աթէնքն առաջին անգամ հանդէս եկաւ
իր նշանաւոր ծովային պետութիւն. նա յարաբերու-
թիւն սկսեց Եգէական ծովի կղղիների հետ և ջանում

1) Աթէնքի բերդը.

էր հաստատել Տրոփագյում: Վերջապէս Պիսիս-
տորագը չէր մոռանում և հոգեկան շահերը. նա գէպի
Աթէնք գրաւեց իր ժամանակի մի քանի երեսի բա-
նասական գծարին և հոգ էր տանում, որ հաւաքւեն և ճշ-
տորէն արձանագրւեն Հոմերոսի դիւցազներգութիւն-
ները: Մի խօսքով նա ամեն կողմից հանդիսացաւ
իրը մի խոշոր, բազմակողմանի և կայուն պետական
գործիչ: Նրա աիրապետութեան օրից սկսւում է
Աթէնքի ծաղկումը:

Բայց նրա մահից յետոյ (527-ին) Արէնացիները ^{Պիսիստորա-}
ծամօրացան եւ բռնապետութեան հակառակ կողմի ^{որդիները} ^{527 թ.}
նիս: Պիստորագի մեծ որդին՝ նոյնպէս զործունեայ
և եռանդուն կառավարիչ էր, բայց նրա իշխանու-
թիւնը, բազմաթիւ պատճառներով, ծանր եղաւ աթէ-
նացիների համար. առաջին՝ նրանք ծանծրացան վճա-
րել այն հարկը, որ զրել էր նրանց վրայ գեռ Պիսիս-
տորագը իր թանգ նստող վարչութեան ծափերը
ծածկելու համար. երկրորդ՝ նոր աճած քաղաքա-
ցիների սերունդն այլ հա չէր լիշում կուսակցու-
թիւնների անհանգիստ կարւները և հարուստների ճրն-
շումները և սնրաւական կերպով էր նայում պիսիս-
տորագեանների վրայ, որոնք հասարակ քաղաքացուց
գարձան քաղաքի տէրեր և հեռացնում էին միւս բո-
լորին քաղաքական գործերի մասնակցութիւնից: Պի-
ստորագեաններն իրանք էլ սկսեցին մոռանալ իրանց
զրութեան խախուսութիւնը և հօր զգուշութեան փո-
խարեն՝ ցոյց էին տալիս հպարտութիւն, թոյլ էին տա-
լիս իրանց բանութիւն գործ զնել առանձին քաղաքա-
ցիների վրայ: Հիպակիասի եղրայր Հիպարքոսի հասցրած
վիրաւորանքը մի աղնւական աթէնացու քրոջը՝ դա-
ւագրութիւն առաջացրեց. Հիպարքոսին աղանեցին,
բայց Հիպակիասը զսպեց գաւադիքներին և գաժան կեր-
պով վրէժ հանեց նրանցից: Տանջանքներ ու սպանու-

թիւնսեր սկսւեցին: Ժողովրդի գէսի բոնապետն ունեցած նախկին հպատակութեան տեղը բռնեցին երկիւն ու ատելութիւնը: Այդ արամազրութիւնից օդաւեցին աթէնացի աքսորականները, որոնք հաւաքւեցին Աստիկայի սահմանի վրայ և միայն յարմար առթի էին սպասում, որ հայրենիք վերաբառնացին և տապալէին ստրկացնողին: Առանձին եռանդով զրասում էր աթէնացիներին բռնապետի գէմ Ավկմէնիզների ազնւական տոհմը: Նրանց յաջողւեց իրանց կողմը զրաւել Գելֆիսի պատգամախօսին և նրա օգնութիւնով էլ սպարտացիներին: Բայց և այնպէս Հիպալիասը դեռ երկար ժամանակ զիմազրում էր թշնամիներին: Վերջապէս՝ ինքնասիրութիւնները վիրաւուած՝ ըսպարտացիներն ուղարկեցին նրա գէմ կէտոմէնէս թագաւորին, որին յաջողւեց գերել բռնապետի որդիներին և զրանով ստիպել նրան յանձնել Աթէնքը:

✓ Հայոթենէս
բարենորո-
դոթիւնները թշնամիները հնար ունեցան վերակազմելու Աթէնքը համաձայն իրանց բարեհայեցութեան: Սկզբում՝ սպարտական զօրքի աղղեցութեան տակ՝ վերակշռութիւն ստացան ազնւականները. նրանի մշածեցին վերալանալ ոչ միայն Պիտիսրազից առաջ եղած զործերի դրութեանը, այլ եւ Ալրնից էլ առաջ տիրող կարգեցին: Ի հարկէ Աթէնքի ժողովուրդը չէր կարող հաշտել այդպիսի անմիտ ձգտութենքի հետ. ապստամքութիւննով, դուրս արին օլիգարքներին և սպարտացիներին, և Կիսթէնէսը մացրեց իր բարենորոգութիւնները (506), որոնք դարձան Աթէնքի հետեւալ պետական կեանքի հիմքը:

Դրակրնի և Սոլոնի օրէնքները վերաբերում էին միայն քաղաքացին համայնքին, այսինքն Աթէնքի հասարակութեան կարծես միայն երկրորդ՝ բարձր յար-

կին: Ներքին յարկում, տոհմերի մէջ, որոնցից կազմած էր քաղաքը, շարունակում էին կառավարել եւ պատրիդները: Առավել վերջնականապէս փերէ ազնւականների ազնականութիւններին, Կիսթէնէսը ժողովուրդը դասաւորեց նոր բաժանումներով եւ այդ բաժանմունքների մէջ խից եւպատրիդների իշխանութիւնը:

Վառաջ քաղաքացիները բաժանուում էին 4 Ֆիլաների, ամեն մի Փիլան 3 Ֆիլատիալի, իսկ ամեն մի Փիլատիան ուրով տնների: Բոլոր երկրորդական զործերը, որ չէին համառում քաղաքային իշխանութիւններին, վճռուում էին եւ պատրիդների ձեռքով, որոնք վարում էին ըուս գործերը տոհմերի, Քրատրիաների և Փիլաների մէջ: Կիսթէնէսը բուլորովին չոչնացրեց այդ բաժանմունքն, այլ պահեց նրանց նշանակութիւնը կրօնական արարողութեան գործում և մի քանի ընտանեկան բնաւորութիւն ունեցող ինդիքներում, օրինակ՝ նորածինների ընդունելութիւնն ընտանեկան ցուցակի մէջ: Քաղաքական տեսակետից, այսինքն դատարանի, զինուրական կազմի, պաշտօնատար անձերի ընտրութեան համար և այնու նա բաժանեց ժողովուրդը 10 նոր Փիլաների և ամեն մի Փիլան էլ կազմակերպեց տեղական շրջաններից — դևմերից: Դէմերի մէջ տոհմական ազնւականութիւնը ոչինչ նշանակութիւն չունէր — հաւաքւում էին ժողովի ոչ թէ հեռու կամ մօտ ազգականներն, այլ պատահական զրացիները, որ պատկանում էին զանազան տոհմերի: Կիսթէնէսի գործադրած երկրորդ միջոցն էր՝ հաշւել իր քաղաքացի բաւական միծ թւով մերկէ կոչւածներին, այսինքն Աթէնքում իրը օտարենրկրացի ապրող մարդկանց: Նրանք չէին պատկանուու քաղաքացին համայնքին, զրկւած էին նրա գործերի մէջ որ և է առոնակցութիւնից և ենթարկւում էին զանազան ձընշումների գատավարութեան և հարկերի առթով: Մեթէքների ընդունելով քաղաքացիների թւի աճէն՝ ուժեղացրեց գէմուկրատական կամ ժողովրդական կուսակցութիւնը, որովհետեւ նոր ընդունեած քաղաքացիները ոչ մի յարաբերութիւն չունէին ատարիկան տոհմային կարգերի հետ և չէին կարող ենթարկւել ազնւական ընտանիքների աղղեցութեանը:

Պիտական բոլոր նաստառութիւններու վիտիխութիւնը և մերի ենթարկւեցին համաձայն 10 նոր Փիլաների կազմու-

թեան: 400-ի խորհրդի փոխարէն երկաց 500-ի խորհուրդը՝ 50-ական ամեն մի ֆիլայից: Նրա պարտականութիւնն էր առաջւայ նման օդնել պաշտօնեաներին կառավարելու գործում, նոյնպէս և նախապատրաստել հասարակական ժողովի վճիռները՝ կազմելով օրէնքների ծրագիրներ: Ամբողջ մի շարք պաշտօններ եթէ ոչ նոր ստեղծեցին Կլիսթենէսից, դոնէ ընկան տասն անդամների ձեռքը, համապատասխան 10 ֆիլաներին: Ամէնանշանաւորն էր զօրապետի պաշտօնը (սրաւ. զ): Նրանցից ամեն մէկն առաջնորդում էր մի ֆիլայի գիւղուրներին: Սարասէդներին ընտրում էին ձայնաւութիւնով (ձեռք բարձրացնելով) մի տարւայ համար:

Վերջապէս Կլիսթենէսը հաստատեց ասւանիզմը: Նա առաջարկում էր հասարակական ժողովին աքսորել պետութիւնից այն մարդկանց, որոնք կասկածելի էին երեւում՝ գաղտնի քէնարկութիւնով, առանց որևէ կանոնաւոր մեղադրութեան կամ դատի: Այդ միջոցը ննաւած էր նրա համար, որ նեռացնէին բայաբական խռովութիւններ սեւմանողներին: Սատիկայում՝ դառն փորձից խրառւած, վախենում էին կուսակցութիւնների դաւերից, մասաւանդ բռնապետների փորձերից՝ իրանց իշխանութեանը վերադառնարու: Ինդինարապէս Կլիսթենէսի բարենորոգութիւնը դաշնեց Արէնքը գելտկրասիական տիրապետութիւն, այսինն իշխանութիւնը յանձնեց ժողովրդին: Նա մի քիչ ընդունակեց հասարակական ժողովի իրաւունքները, իսկ, որ գիսաւորն է՝ վերջնականապէս կոտրեց Եւպատրիդների նշանակութիւնը:

Շուտով ուժոք եղաւ զէնքով պաշտպանել նոր կարգը: Իրանց գործերի վանաւելուց վիրաւորաւած՝ սպարտացիները Աթէնքի վրայ բաւական մեծ զօրք ուղարկեցին, որի հետ միացան Բէկովտացիները և Եւրէական քաղաքները: Թուում էր, թէ գիսաւորելու հար չըկար: Բայց զախակիցների բանակի մէջ չըկար յաջողութեան գլխաւոր պայմանը—

համաձայնութիւնը: Սպարտական թագաւորները կաւած էին իրար հետ, պելոպոնէսեան զաշնակիցները սրտով չէին օգնում Սպարտային Աթէնքի դէմ, և կորնթացիները տուն դարձան առանց կուրին սպասելու: Նրանց համեմ ըաշւեցին և ուրիշները և, վերջապէս, սպարտացիներն էլ յիտ նահանչեցին: Այն ժամանակ աթէնացիներն ընկան բէովտիացիների և Եւրէացիների վրայ և կորիզուխ ջարդեցին նրանց: Այդ պատերազմն այն պատճառով շատ օգտակար եղաւ Աթէնքի համար, որ աթէնացիները՝ զրա շնորհով հնար ունեցան ուղարկելու իրանց ազգաբնակութեան ամէնազրատ մասը Եւրէա—իրը զայթականներ (կլէրուխա): իսկ դա շնորհանով թեթեացրեց նրանց ներքին վիճակը:

Կուսակցութիւնների խոսքութիւնները և վէճերը, որ ակում էին առնւազը 150 տարի, վերջապէս վերջացան: Աթէնացիները պարծենում էին իրանց նոր կազմակերպութիւնով և զգում էին իրանց մէջ ազտութիւն վայելելու ու նրան պաշտպանելու համար անհրաժեշտ ոյժը:

Գ Լ Ո Խ Խ Վ

ՊԱՐՄԿԱԿԸՆ ՊԱՏԵՐԸԶՄՆԵՐ

ՎI դարի վիրջում վերջնականապէս որոշւեց Երկրորդ Յունաստանի երկու գլխաւոր քաղաքների—Սպարտայի բիռները: և Աթէնքի կազմակերպութիւնը: Միւս բաղակներն էլ նոյն տեսակ պատմութիւնով էին ըստիւում: ամեն ակալ թագաւորական իշխանութիւնը ոչ այնքան ոչնչացւեց, որքան Ենթարկեց ազնւական տոհմերին: ամեն ակալ կոիւ սկսւեց այդ տոհմերի և զէմոսի մէջ: Ամէնաշատ զէպէրում ազնւականութեան պարտութիւնը տեղի ունեցաւ ոչ թէ իշխանութիւնը ժողովրդի ձեռքն անցնելով, այլ բանապետութեան հաստատելով, այսինքն կառավարութիւնը մի քաղա-

քացու յանձնելով, որը հոգ էր տանում ժողովրդի կեանքի նիւթական բարելաւութեան վրայ: Բայց բռնապետութիւնը հազիւ էր յարատել լինում. քաղաքացիների համար դժւար էր լինում վարժւել իրանց միջից մէկի կամայական իշխանութեանը. բռնապետները պէտք է յենարան որոնէին բռնութեան մէջ. աքսորականները և գրացի քաղաքները բորբոքում էին ժողովրդի անբաւականութիւնը և օգնում էին լուծը թօթափելուն: Փողովրդական վարչութեան վերականգման ժամանակ նկատում էր բաւական մեծ տարբերութիւն. մի հանիսը թեմում էին Սպարտայի նման օփարխիական կարգերի կողմը, միւսներև Աթենի վարչութեան ձեւով՝ դէմոկրատիայի կողմը:

Այս ժամանակ, երբ այդպիսով կազմւում էր պետական կարգը յունական քաղաքներում, կրիզիս (ճնաժամ) առաջացաւ արեելքում, պարսկական թագաւորութեան քաղաքականութեան մէջ: Դարեհը ձեռնարկեց մի արշաւանք Աե-ծովի միւս ափերը, դէպի Սկիթացիների երկիրը, որպէսզի ստիպէ ազդ թափառականներին այլ ես չըյարձակւել իր տիրապետութիւնների վրայ: Նրա զօրքն անցաւ թրակիայով և Դանուբով, բայց հարաւային Ռուսաստանի դաշտավայրերում չընասաւ հաստատուն յաջողութիւնների: Թշնամիններին բռնել չէր կարելի: Նրանք անհանդատացնում էին պարսիկներին, ջարդում էին յետ մնացածներին, դժւարացնում էին պաշար բերելը, բայց մեծ ճակատամարտեր չէին տալիս, այլ փախչում էին անապատ դաշտերը: Ստիպւած եղան զատարիածոն վերագառնալ: Այս անյաջողութիւնը եղաւ մի պատրւակ, որ փոթացրեց վազուց պատրաստուղ դէպքերը: Ասիական յոյները չէին կարողանում սառնարատութիւնով տանել պարսկական լուծը: Նրանք ճնշում էին իրանց վրայ զրւած հարկերից, հեռաւոր արշաւանք-

ներին մասնակցելուց, սատրապների կամայականութիւններից, բռնապետների տիրապետութիւնից, որ նրանց վզին էին փաթաթում պարսիկները: Արդէն Դարեհի դէպի Դանուբը նահանջած ժամանակը նրանց միջից ձայներ էին լուսում, թէ պէտք է քանդել Դանուբի կամուրջը և զրանով փչացնել պարսկական բանակը հիւսիսային անհաց անապատներում: Արշաւանքի վերջանալուց յետոյ՝ շարժման զլուխ անցաւ Արխագորաս Միլիտարցին: Նա կարողացաւ ապստամբութիւն առաջացնել: Բարկանեան յոյներից օգնութիւն ստանալու փորձը միայն այն օդուան ունեցաւ, որ Աթէնքն և Երիտրէան (Եւրէայում) ուղարկեցին ամեն մէկը մի քանի նատ: Սկզբում ապստամբների գործերը լաւ էին գնում: Նրանք շարժւեցին դէպի Փոքր-Ասիայի ներսերը, զլաւեցին Սարգան և այրեցին: Այս վերջին քայլը մի ահազին սխալ էր. լիւզիացիները, որ չէին սիրում պարսիկներին և կարող էին միանալ յոյների հետ, իրանց մայրաքաղաքի այրումից յետոյ դարձան թշնամիններ: Երբ պարսկական զօրքերը եկան յոյների դէմ՝ վերջիններս ստիպւած էին յետ նահանջել դէպի ծովագր: Եւ այստեղ նրանց գործը բոլորովին փչացաւ այն պատճառով, որ բադամինը չըկարողացան միանամուռ կերպով գործել: Ամեն մէկն ուղում էր միայն իրան պաշտպանել: Վրանական ճակատամարտում (496 թ.) սամասցիններն առաջինը թողին (լրան) ընկերներին. նրանց օրինակին հետևեցին և ուրիշները: Պարսիկները վակատար յաղթութիւն տարան և մէկը միւսի յետից զրաւեցին բոլոր ապստամբւած գաղութները:

Բայց Դարեհը չըսահմանափակւեց ապստամբներին՝ Դարեհի արշաւանքութիւնները նւաճելով: Նա վճռեց վրէժ հանել աթէնացիներից ապստամբներին ցոյց տւած օգնութեան համար և միաժամանակ ընդարձակել իր պետութեան սահման-

ները, ենթարկելով իրան Բալկանեան Թէրակղզին։ Պարսիկներն արդէն այնքան նւաճումներ էին արել, որ այս վերջին ձևանարկութիւնը չէր կարող սարսափեցնել նրանց։ Յունական կազմի թոյլ կազմը՝ բաժան բաժան վիճակը՝ լիակատար կերպով երևաց փոքր ասխական ապատամբութեան ժամանակ, և Դարեհը չէր սպասում մի առանձին զօրեղ զիմագրութեան։

Յոյների առաջին գործողութիւնները կարող էին միայն ամրապնդել նրա յոյսերը։ Երբ թագաւորն ուղարկեց պատւիրակներ (հերող) Յունաստան «հող և ջուր» պահանջելու, այսինքն երկրի հպատակութիւնը՝ միայն սպարտացինները և աթէնցինները ցոյց տւին դիմագրելու լիակատար պատրաստականութիւն։ Երկու քաղաքներում էլ պարսկական պատրակներն սպանեցին։ Մնացած յոյները մասամբ տատանուում էին, մասամբ էլ ուղղակի հպատակութիւն էին յայտնուում։ Սկզբում Դարեհը մասամբ էր Յունաստանի վրայ զնալ հիւսիսից՝ Թրակիայից։ Ստիպւած եղաւ այդ ծրագիրը թողնել, որովհետեւ պարսկական նաւատորմը խորտակեց, իսկ առանց նաւատորմի չէր կարելի առաջ զնալ, որովհետեւ նրանով էին պաշար տանուում։ Այդ ժամանակ կազմակերպւեց մի երկրորդ նաւատորմ, և նրա վրայ զօրք դրւեց Դամի և Արտափերնէսի առաջնորդութեան տակ (490)։ Այս արշաւանքը, որին միացաւ Աթէնքի նախկին բոնապետ Հավագիասը, զնաց ուղղակի Եգէյսն ծովով, յաջող կերպով զրաւեց Եւրէսն, այլեց Երիտրէտ քաղաքը և նեղուցով շարժւեց դէպի Ատտիկա։ Պարսկական 100 հազարանոց բանակի մեծ մասը դուրս եկաւ Մարաթոնի դաշտը։ Աթէնացինները մենակ մնացին պարսիկների դէմ։ Սպարտացինները դանդուում էին, չընայելով օգնութեան հասնելու սաստիկ խնդիրներին։ Աթէնական 10,000 հետեւակների հետ

միացաւ միայն պլատէացիների մի հազարեակը։ Առաջնորդութիւնը, զօրապետների ընդհանուր համաձայնութիւնով արւեց ֆիլաներից մէկի ստրատէզոս Միլթիադէսին, որը մի ժամանակ բռնապետ էր Թրակիայի Քերսոնէս քաղաքում պարսիկների տիրապետութեան տակ և լու զիտէր նրանց առանձնայատկութիւնները։ Ճակատամարտի մէջ երեացին ոչ միայն աթէնացինների քաջութիւնն ու հայրենասիրութիւնը, այլ և յունական զինուորական կազմի մեծ առաւելութիւնը։ Պարսիկները շարժւում էին անկանոն խմբերով։ Նրանց հետևակ զօրքը զինուած էր աղեղներով և վատ կերպով մատակարարւած սլաշտպանողական գործիքներով։ Բնդհակառակը՝ յոյներն առաջ էին գնում տիգակիրների խիո, միաւորւած շարքերով, որոնք սովոր էին գործել մի մարդու պէտ։ Արէնացիների յալբութիւնը և իամամանակ և սեր կերպով միաւորւած հաղաբային համայնքի յալբութիւնն էր ասիական ցեղերի պատահական խորինալուն հաւաքածուների դէմ։

^{Յոյների} Յնսպասելի կերպով վասնդից ազատւելլ յոյներին չէր խարում սպազայի վերաբերութեամբ։ Բարձինը նորն էլ հասկանուում էին, որ հարկաւոր կըլինի պարսիկների նոր ու աւելի սարսափելի յարձակման հետ զործ ունենալ։ Յմենից շատ պատերազմի պատրաստուում էին Աթէնքում, ուր պատրաստութեան ողին էր հանգիսանուում թէմիսառկէսը։ Նա հոչակւեց իր խորամանկութիւններով և թշնամիների թոյլ կողմերից օգտւելու ձիրքով։ Բայց և պակաս նշանաւոր չէր նրա մաքերի ինքնորոշնութիւնը։ Նրա վրայ ազգեցութիւն չունէին տարածւած սավորութիւնները, որոնք ուրիշներին խանդարում են մի նոր բան նաւրելու, նա նախատեսում էր ճշմարիտ ճանապարհը, երբ գեռ ոչ ոք չէր կարողանում ըմբռնել այդ։ Այսպէս՝

նոր պատերազմի պատրաստութիւնների ժամանակ նա դուրս եկաւ մեծամասութեան կարծիքի դէմ: Մեծամասնութիւնը հպարտանում էր Մարաթոնի յաղթութիւնով և բոլոր յոյսը գնում էր հետևակ դօրքի վրայ: Թեմիստոկլէսը հասկանում էր, որ ցամացի վրայ արենացիները պէտք է խուսափեն բացարձակ կուից, ուպէսզի թիւ շատրիւնից չբնգմւեն: Ծովի վրայ աւելի լաւ կարելի է դիմադրել նեղուցների մէջ: Եւ նա գործ դրեց իր բոլոր ճիգը, որ ստիպէ աթէնացիներին մի մեծ նաւատորմ շինել:

Նրան յաջողեց այդ անել՝ շնորհիւ արէոպազոսի օդնութեան, որն այդ գժւարին ժամանակներում քաղաքային միւս բոլոր հաստատութիւններից աւելի էր առաջ անցել: Արէոպազոսը կաղմւած էր երբեմն արքուն եղած մարդիկներից և զրա համար էլ կարող էր ծագած հարցերը քննել զործին աւելի տեղեակ, ձեռնհաս կերպով: Քաղաքացիներն այնքան խոհեմ էին, որ պարսկական պատերազմների ընթացքում ենթարկում էին նրա զեկավարութեանը:

Բացի իրանց զինւերւց՝ աթէնացիներն ամեն շանք գործ դրին, որ միւս յոյներից դաշնակիցներ ճարին: Վատանդն այնքան ահուելի էր երեսում, որ յունական քաղաքները յետածդեցին իրանց վէճերը և պայմանաւորւցին դաշնակցութիւն կապելու մասին: 481 թւին կորնթոսի պարանոցում համաձայնութիւն կայացաւ սպարտացիների, աթէնացիների և միւս քաղաքներից մեծ մասի միջի: Վճռւած էր հաւաքել մի ընդհանուր դորք, իսկ առաջնորդութիւնը (հեգեմոնիա) տալ ըստ պարտացիներին:

480 թւին երկացին ասխական խոշոր զընդերը: Առաջին արշաւանքից յետոյ Դարէնը մեռել էր, և պարսիկ զօրքը զալիս էր նրա որդու՝ Քսերքուսի առաջնորդութիւնով, Քարքարոսներն անց-

նում էին Հելլէս-Պոնտոսով. այդտեղ կային ահազին պետութեան ամեն ծայրերից հաւաքւած զնդեր. անցնելու ժամանակ հաշւեցին 1,700,000 կռւոդ: Քաերքուսը կարծես յաղթանակի համար էր զնում, արբած իր անլուր ուժովը: Այն ինչ ձեռնարկութիւնը դժւարացաւ նոյն իսկ բանակի բազմարի լինելու պատճառով: Հացով աղքատ յունական նահանգներում ոչինչ չըկար նրանց կերակրելու համար. բանակի համար չափազանց գժւար էր նոյն իսկ առաջ շարժւելը Հելլադայի վատ ճանապարհներով, լեռնաշղթաների մէջ ընկած նեղ հովիտներում: Յամենայն գէպս՝ առաջ գնալ կարելի էր միայն միահամուս գործակցութեամբ ցամաքային զօրքի և նաւատորմի, որ նրա համար պաշար էր բերում: Եթէ որևէ է բան պատահէր նաւատորմին, ցամաքային զօրքին կը մնար միայն հեռանալ: Այս բոլոր առանձնայտակութիւնները սովերեցրին յոյներին պատերազմի ծրագիրը. պէտք էր օգտւել նեղ-նեղ անցքերով—լեռնային կիրճներով և նեղուցներով, որպէս զի չըթողնեն թշնամուն ամբողջ բանակը գործի զնելու. պէտք էր գժւարացնել նաւատորմի շարժումը: Առաջին նպատակի համար յոյները բռնեցին Թերմոպիլեան կիրճը, որ տանում է Թեսալիայից գէպի միջին Յունաստան: Զընացելով որ այնտեղ զրւած էին աննշան ուժեր, այնուամենայնիւ նըրանք յաջող կերպով դիմազրում էին պարսիկներին, որոնք այդ նեղ անցքում չէին կարող օգտւել իրանց թւի զերակլշութիւնից: Բացց գտնուեց մի դաւաճան, որը ցոյց տեղ պարսկական զօրքաբաժնին մի կածան, որով կարելի էր անցնել յոյների թիկունքը:

Յունական զօրքի առաջնորդը՝ սպարտական Լէռնիդաս թագւորը՝ տեսնելով, որ անցնում են իր թիկունքը, արձակեց զօրքի մէծ մասը և մնաց միայն սպարտացիների և բէովոփայցիների մի մասի հետ:

Նրանք բոլորն էլ ընկան մինչև վերջին մարդը:

Թերմոպիլէի կրծի առումով թագաւորի գնդերի առաջ բացւեց միջին Յունաստանը: Բէռփիացիներն ընդունեցին նրանց հազարութիւնով. ատտիքական պղպաքնակութիւնը փախաւ: Քսերքսէսը կործանեց Աթէնքը և պատրաստում էր գործելու Կորնթական պարանոցի դէմ, որը բանւած էր յունական դաշնակից զօրքով: Պարանոցը կարելի էր պաշտպանել, բայց միայն այն դէպքում, եթե պարսկական նաւատորմին թոյլ չը տրէր առաջ խաղալու, որովհետեւ հակառակ դէպքում նա կարող էր միշտ զօրք ափ հանել յոյների թիկնակողմում: Այսպիսով ամեն բան կախւած էր ծովի վրայի գործերի դրութիւնից: Պարսկական նաւատորմը խիստ կերպով վնասուել էր փոթորիկներից, բայց թւով կրկին շատ անզամ աւելի մեծ էր յունականից, և նրանց սիրտը կազմում էին փորձառու ծովագնաց փիւնիկեցիների նաւերը: Թէև յոյների թիւը շատ քիչ էր, բայց նրանք տեղի հետ լաւ էին ծանօթ և կարող էին զիրքից օգտւել վարպետութեամբ: Նրանք մի շատ լաւ զիրք ընտրեցին - նեղուցի մէջ, փոքրիկ Սալամինա կղզու և ցամաքի միջավայրում, ալտեղ էլ սափացիները չըկարողացան գործադրել իրանց բոլոր ուժերը: Բայց և այնպէս յունական առաջնորդներն արգէն պատրաստում էին թողնել այդ զիրքը և գնալ դէպի Խսիմը (պարանոցը), ուր, հաւանօրէն՝ նրանց կը ճգմէին սպարսիկները: Միայն թէմիստուկիւմը, որ առաջնորդում էր աթէնական զօրաբաժինը, հասկացաւ զրութիւնը և համոզում էր յոյներին կռւել նեղուցում: Եթե իր սասածը շընգունեց առաջնորդի խորհրդում, նա մարդ ուղարկեց նախազգուշցներու Քսերքսէսին, որ յոյները պատրաստում են փախչելու: Քսերքսէսը չուզեց ձեռքից թողնել յունական նաւատորմի հետ հաշիւը վերջացնելու յարմար առիթը

և շտապեց կարելու նրա դուրս զալու ճանապարհները: Սկսւեց ճակատամարտը, որին թագաւորը նայում էր ափից, ինչպէս տօնտկան մրցութեան: Յոյները կռւում էին յուսահատական քաջութիւնով. նրանց փորբիկ նաւերն աւելի լաւ էին գառնում ու շարժւում իրանց լաւ ծանօթ նեղուցի ժայռերի և ծանծաղունների մէջ, Ասիացիներն իրար ճնշում էին իրանց շատութիւնով. նրանց նաւատորմում գտնւում էին այնպիսի ժողովրդների զօրաբաժիններ, որոնք ոչ մի ընդհանուր բան չունեին իրար հետ և նոյն իսկ թրշնումի էին իրար. զժւար էր սափել փոքր-ասիական յոյնիրին համերաշխ գործել փիւնիկեցիների հետ: Ժողովրդների այս ամբողջ պատահական խուժանը անտարեւ կերպով և վերաբերում դէպի իր բազաւորի իշխանական ձեռնարկութիւնը: Այդ պայմաններում յոյների վարպետութիւնը և ոգեսորութիւնը լիակատար յաղթանակ տարան, պարսկական նաւատորմի նշանաւոր մասը ոչնչացաւ: Այդ մի հարւածը բաւական էր սափելու սախական ահազին զօրքին յետ փախչելու: Քսերքսէսը չը յանդգնեց յարձակւել պարանոցի վրայ, և նա ոչինչ չուներ իր զօրքին կերակրելու համար աւերակ դարձած միջին Յունաստանում: Նա Ասիա վերապարձաւ, Բէռփիայում թողնելով 300 հազարանոց մի բանակ Մարգսնիոսի առաջնորդութեան տակ:

479 թւին յոյներն սկսեցին պատերազմական գործողութիւնները միանգամից երկու ուղղութիւնով: Յամաքային ուժերը (մօտ 100,000 մարդ), որոնց առաջնորդում էր սպարտացի Պաւսանիասը, շարժւեցին Մարգսնիոսի դէմ: Սպարտական թագաւոր Լէոնցին Մարգսնիոսի աթէնացի Քսանտիպալոսն էլ նաւատորմիգոսը և աթէնացի Քսանտիպալոսն էլ նաւատորմում գնացին ծովով գէպի փոքր-ասիական ափերը, որմով գնացին ծովով գէպի փոքր-ասիական դաղութ-պէսպի այնաեղ ոտի կանգնեցնեն յունական դաղութ-

ները: Բէռվասիայում, Պլատէայի մօտ կրկնւեց ընդհանուր գծերով Մարաթոնի ճակատամարտը: Զբնայելով ասիսկան նետածիզների և հեծելազօրի առաւելութիւններին, պարտական ֆալանգների (գնդերի) միապաղադ պատերը յաղթեցին. իգուր Մարտոնիոսի ընտրովի քաջերը յարձակում էին նրանց վրայ—որպանք կուռում էին բաժան-բաժան, դրա համար էլ անյաջող: Պարսիկների հետ միասին կուռում էին և բէռվասիական ու թեսարտկան համայունական գործին դաւաճանող յոյները. նրանց ջարդեցին աթէնացիները: Յոնական միւս բանակը ոչ-պակաս մի յաղթութիւն տարաւ Միկալէ հրւանդանի մօտ. փօքրասիական քաղաքներն ու կղզիներն շտապեցին դէն շլրտել պարսիկ ճնշողներին և միանալ հայրենակիցների հետ:

<sup>Աթէնական
դաշնակցութիւնը.</sup> Այս ճակատամարտերով վերջացաւ պարսիական պատերազմների առաջին շրջանը: Բայց կոփէր գեռ ըոլորովին չէր վերջացած: Պէտք էր մաքրել Թրակիան և Ս. ըշխափելազոսը պարտկական բերդապահ գրնդերից, ամուր կերպով գրաւել փոքրասիական ափը, փշրել փիւնիկեցիների մեծ ու վատնզաւոր ծովային ոյժը: Հանգամանքներն անբարեյաջող կերպով էին դասաւորւում այդ բոլոր հարցերը վճռելու համար:

Արշաւանքի ժամանակ քաղաքների մէջ եղած տարածայնութիւնները մի բոլէ լուցին. երբ վատնզն անցաւ, նրանք վերսկսեցին նոր ուժով: Սպարտացիները նախանձում էին արէնացիներին, որով ցոյց տիին արտակարգ խելացիութիւն, անձնազօնութիւն եւ եռանդ, այն ինչ իրանի մի աւելորդ անգամ եւս ապացուցեցին իրանց նետեւակազօրքի դիմացկանութիւնը: Բայց և այնպէս դաշնակցութեան մէջ գերիշխանութիւնը (հեգեմոնիան) պատկանում էր Սպարտային, նա արամազիր չէր նրանից հրաժարւել. թէ և այժմ պէտք էր պատերազմ մղել զր-

խաւորապէս ծովի վրայ, ուր սպարտացիները ոչինչ էին: Սպարտացի զօրապետի վրութիւնն անյարձար և անդուրեկան էր այն զօրաբաժնի մէջ, որը կաղմւած էր բացառապէս ուրիշ քաղաքների մարդկանցից և նաւերից: Իսկ Պաւսանիասը, որին յանձնւած էր Թրակիական ջրերում գործող նաւատարութիւնները. նա իր մասին խիստ մեծ կարծիք կազմեց Պլատէայի յաղթութիւնից յետոյ. յանդուզն և խիստ կերպով էր վարւում դաշնակիցների հետ և նոյն իսկ գաղտնի յարարերութեան մէջ մտաւ պարսից թագաւորի հետ, յուսարով բռնապետ գանձալ յոյների վրայ:

Այս լարւած յարարերութիւնը վերջացաւ նրանով, որ Քիսոփի, Լեսրոսի և ուրիշ կղզիների զօրաբաժինները յայտարարեցին, որ իրանք այլ ևս չեն ուզում հպատակւել Սպարտային և ցանկանում են պատերազմը շարունակել աթէնացիների առաջնորդութեան առակ (478-ին): Այս վարմունքը կարող էր բացարձակ ընդհարում առաջ բերել, բայց սպարտացիներն այդ բանին չէին յանդուզում: Իրանք և նրանց պերպոնէսեան դաշնակիցները հեռացան հետեւալ արշաւանքներից և աթէնացիներին թողին գործերու պարսիկների ուժմ: Այսպիսով յունական ընդհանուր դաշնակցութիւնից զատւեց աւելի նեղ՝ արէնական դաշնակցութիւնը: Նա կազմեց Սրբստիգէս աթէնացու ձեռքով, որը վայելում էր ամենաարդարասէր յոյնի անունը: Բոլոր մասնակցուներն ունեին հաւասար իրաւունքներ և հաւասար ձայն դաշնակցական ժողովում, որի համար տեղ էր որոշած Դելոս կղզին: Այսուղ էլ պէտք է զանւէր դաշնակցական զրամարկզը, որը կազմւում էր բոլոր դաշնակիցների անդամագնարներից: Այս կազմակերպութիւնը չափաղանց յաջող էր գործում: Յու-

նական արևելքի քաղաքներն ու կղզիները մէկը
միւսի ետևից միանում էին նրա հետ, մէկը միւսի
ետևից իրար էին յաջորդում նրա յաղթութիւնները
պարսիկների և փիւնիկեցիների գէմ. Վ դարի եօ-
թանանական և վաթսունական թւերից դաշնակցու-
թեան փայլուն զօրավար կիմոնը—Միլլիադէսի որ-
դին—մաքրեց եգէյեան ծովի ափերը պարսիկներից:
Ամենասարսափելի պարտութիւնը պատճառեց նա-
թշնամիներին, որնք պատրաստում էին նոր արշա-
ւանք զործել Յունաստանի վրայ, Եւրիմէդոնայի մօտ
(466), Պամփիլիայում: Մօտաւորապէս 300 տոան-
ձին համայնքներ մտան դաշնակցութեան մէջ նրա
հինգ նահանգներում (թրակիական, հելլէսպոնառ-
ուան, կղզիների, յոնիական և կարիական):

Բայց եթէ արտաքին յաջողութիւնն անսպասելի
արագ և լիակատար էր, դաշնակցութեան ներքին
կազմութիւնն այդ ժամանակում փոփոխւեց ի վր-
ուսա անպամեների մեծամասնութեան: Աթէնքի գերա-
կառութիւնն աւելի էր մեծանում: միւս քաղաքները
նեղում էին ամեն տարի կրկնուզ արշաւանքներից և
սկսեցին փող տարով ազատուել նրանցից: Աթէնացի-
ները յօժարութիւնով իրանց վրայ էին վերցնում պա-
տերազմի զործը, բայց դրա փոխարէն նրանք վարում
էին այդ զործն իրանց ուղածի պէս: Փողով ազա-
տած բաղաները նեռանում էին ժողովից և դաւ-
սակցի վիճակից ընկնում: Էին հարկատուի վիճակի
մէջ: Քիշքիչ ժողովը կորցրեց իր նշանակութիւնը, և
աթէնացիներն սկսեցին կամայական կարգադրութիւն-
ներ անել դաշնակցութեան մէջ: Գործն աւելի ևս
վատացաւ այն պատճառով, որ մի քանի համայնքներ
ուշի եկան՝ թէ և ուշ, և փորձեցին բաժանուել դաշ-
նակցութիւնից: Օրինակ՝ այդպիսի փորձ արեց Նաք-
սոս կղզին, յետոյ էլ Թասոսը: Աթէնացիները դիտում

էին այդ բաժանումն իբր ապստամբութիւն: Նրանց
համար գժւար չէր գործը վերջացնել առանձին-ա-
ռանձին քաղաքների հետ, որովհետեւ ապստամբութիւնը
ոտի էին կանգնում առանձին-առանձին: Ապստամբու-
թիւնը ճնշելուց յետոյ հետեւմ էին խիստ միջոցներ
և անհնագանդ համայնքն ընկնում էր հապատակների
շարքը: Վերջապէս արէնացիները դաւնակցութիւնը
դարձրին իրանց պետութիւնը: Քաղաքների հարկերը
նշանակում էին Աթէնքում և չափերն էլ բաւական
մէծ էին (Պերպոնէսեան պատերազմից առաջ 600
տապանդ): ամենանշանաւոր դատական գործերը տե-
ղափոխում էին աթէնական դատարանները: քաղաք-
ներում կանգնած էին աթէնական բերդապահ զօրքերը.
կառավարութեան վրայ հնկելու և երրեմն էլ կառա-
վարութիւնը փոխելու համար՝ աթէնացիներից պաշ-
տօնեաներ էին նշանակում: 454 թւին Դաշնակցու-
թեան մի պետութեան վերածւելու գործը լրացաւ նրա-
նով, որ Դաշնակցութեան դրամարկը Պերոսից Աթէնք
փոխազրեցին: Այսպիսով Յունա-Պարուկական պրա-
գամի զիսաւոր արդիւնին եղան արևնական մէծ պե-
տութեան կազմելը, որը դարձաւ ժրապետոյ յունա-
կան արեւելքում:

Գ 1. Ա Բ Խ Խ. VI.

Ա Թ Է Ն Ք Ը Վ Դ Ա Ր Ո Ւ Խ

Աթէնական ուժի արագ դարգացումը չէր կարող Աթէնիսու-
շազգել պետութեան ներքին գործերի վրայ: Ամեն կէսի ժա-
մանակը նից առաջ աթէնացիները դարձան դէպի ծովը—եղան
ծովագնաց, առեւրական ժողովուրդ Այդ պատճառով
էլ իրանց միաքը կորցրին դէմոկրատիայի վերջին
մացորդները, որ հիմնած էին հողատիրութեան վրայ:

Սոլոնի կազմակերպութեան որոշած չորրորդ դասակարգը՝ եթէ ոչ աւելի շատ, ոչ սպակաս գործ ահասաւ պետութեան վրկութեան համար, քան հոպլիաները (հետեակ) և առակեաները. Նա աղատեց հայրենիքը Սալամինոցի մօտ և շարունակում էր մշտապէս ծոռայել նրան Արիստոկէսի և կիմոնի արշաւանքներում. Այսպիսով թերեւն արժանի ելան հաւատաւերու միւս դասակարգերին եւ յիրակ' պաշօնների մուտքը բացւեց բայր դասակարգերի համար, Միհնոյն ժամանակ շատ պաշտօնների համար սկսեցին մարդ ընտրել վիճակով. Ենթադրում էր, որ բոլոր քաղաքցիները հաւասարապէս ընդունակ, արժանաւոր և նախապատրաստւած են պաշտօնների մեծ մասը վարելու համար. Ոչ որի չքիրաւորելու համար՝ ընտրութիւնը թուղնում էին վիճակին:

Արքոնտներին արդէն աւելի առաջ նշանակում էին վիճակով այն թեկնածուներից, որ ընտրում էին ֆիլաները, բայց սկզբում թեկնածուների թիւը մեծ չէր (40), այնպէս որ վիճակը մեծ նշանակութիւն չունէր. Վ գարում սկսեցին դնել 100 թեկնածու, որոնցից պէտք էր վերցնել 9 արքոնտ, վերջացաւ նրանով, որ նոյն իսկ թեկնածուներ նշանակում էին վիճակով. Այդպիսի պատահական ընտրութեան պատճառով պաշտօնը կորցրեց իր կարևորութիւնը.

Վլյոյ ժումանակ առանձնապէս բարձրացաւ սրատէցների պաշօնը, որոնք ուղղակի ժողովրդից էին ընտրում եւ վարում էին զինուրակուն, արտաքին եւ դաշնակցական գործերը. Այս բոլոր փոփոխութիւնները կատարուում էին աստիճանաբար, իբրի զօրութիւնով, առանց խիստ փոփոխութիւնների. Դրանց շատ նպաստեց Արիստոկէսը, որը կոյր պաշտպան չքնաց հոգատիրական կեմոլիրատիտցին, որը գոյութիւն ունէր Սոլոնի և կիսթենէսի ժամանակից, այլ յարմարւեց Աթէնքի նոր դրութեանը — ինչպէս ծովային մեծ պետութեան։ Նրանից էլ աւելի հեռու զնաց

թեմիստոկլէսը. Նրա անհանդիսատ ուղեղը նորից զրադւած էր անծանօթ ճանապարհներ որոնելով. Նա արդէն նախազգում էր Սպարտայի հետ ունկնալիք կոիւը և մեծ ծառայութիւն արեց իր մայրենի քաղաքին, յաջողեցնելով արագ կերպով նրան ամրութիւններով պատել, չընայելով սպարտացիների դժոնութեանը և հակածառութեանը. Յետոյ նա սկսեց խնամարկել մեթէքներին¹⁾ և յարաբերութիւններ սկսեց Պաւանիասի հետ, որը փորձում էր հելուաներին ոտի հանել սպարտացիների դէմ. Երկու հոչակաւոր զօրապետները զոհ գնացին իրանց փառասիրութեանը. սպարտացիները Պաւանիասին վակեցին տաճարում և սովորման արին, թեմիստոկլէսն աքսորւեց աստրակիզմով և փախաւ պարսից Արտաշէս թագաւորի մօտ. **Վ**

Այս ինչ Աթէնքում կրկին կազմւեցին երկու կուսակ-կիմոնը և Էցութիւններ. մէկը Կիմոնին գլուխ ունենալով՝ պահպանում Փեալոր. էր պարսկական պատերազմների աւանդները, պնդում էր թէ պէտք է յարմարել Սպարտայի հետ, որպէսզի յաջող կերպով պատերազմնն Ասիայում, իսկ ներքին գործերում զէմ էր պէտական կազմը փոխելուն, և ընտրութիւնների ժամանակ պաշտպանում էր աղնաւական ընտանիքների անդամներին. Միւսը, զէմոկըրատ կուսակցութիւնը, որ հետեւմ էր էփիալորին և Պերիկլէսին, բաց և արձակ պատրաստուում էր Սպարտայի դէմ կուի, ամեն տեսակ միջոցներով յարձակուում էր արիստոկրատների վրայ — կուի էր մղում նըրանց զէմ ընտրութիւնների ժամանակ, զատարաններում մեղազրանքներ էր յարուցանում նրանց զէմ. վերջապէս նա խորհում էր նորանոր փոփոխութիւններ մոցնել քաղաքային կարգերի մէջ զէմոկըրատիայի օգտին. Ժողովուրդը հաւատարիմ էր մնում իր սիրելի զօրապետին, չընայելով որ նարաւորութիւն էր բացւում արիստոկրատների հաշով նոր օգուաններ ձեռք բերելու, վերջապէս կիմոնի նրանակութիւնն ընկաւ. Սպարտայի վերաբերութեամբ նրա

¹⁾ Մեթէքներ — օտարերկրացիներ, որ գաղթել էին Ատմիկա.

բոնած քաղաքականութեան շնորհով: Նու փակում էր աչքերը լակեդիմոնացիների ակներև չարքեւամութեան առաջ և, թէ մեծ գժւարութիւնով, յաջողեցրեց, որ աթէնացիներն իրան ուղարկեն զօրքով Սպարտային օգնութեան, երբ այստեղ ուղիթեց հելոաների և մեսսենացիների սարսափելի ապլստամբութիւնը: Սպարտացիներն ի հարկէ շատ բաւական էին գործերի այդ կերպարանքն ընդունելուց, դա ցոյց էր տալիս ապստամբներին, որ Աթէնքից երբէք չըպէտք էր օգնութիւն սպասել: Բայց նրանք հետու էին ուղանում աթէնական զօրքաժինը գործունէութեան վայրից և հէնց առաջին հնարաւորութեան ժամանակ յետ ուղարկեցին նրան: Ամբողջ արշաւանքը մի մեծ քաղաքական սխալ էր. սպատացիները պատասխանեցին աթէնացիներին ոչ թէ երախտագիտութիւնով, այլ վերաւորանքով: Այդ սխալի տպաւորութեան տակ՝ աթէնացիներն աստրակիզմով աքսորեցին կիմոնին: Թէ և յետոյ նա վերքարձաւ. և նոյն իսկ բարատէկ եղաւ, բայց նրա քաղաքական աղքեցութիւնն ընկաւ:

Վ Բարենորոգութիւններն սկսւեցին էֆիալտի ձեռքով: Քերիկէսի բարենորոգութիւնները նա զրկեց արէոպագոսն իր իշխանութեան մեծ մասից: Նա միակ հիմնարկութիւնն էր, որ կախում չունէր ժողովրդից: Նրա անդամները նշանակում էին իր՝ արէոպագոսի կողմից մինչև մահ և այն էլ բացառապէս նախկին արքոնտներից: Արէոպագոսին էր պատկանում միւս բոլոր իշխանութիւնների վրայ հսկելու իրաւունքը և, իմիջի այլոց, հասարակական ժողովների վրայ հսկելու իրաւունքը: Պարսկական պատերազմների ժամանակ նա ձեռք բերեց և ցոյց տեսց մեծ ոյժ: Էֆիալտը վերջ զրեց այդ ուժին, խելով արէոպագոսից նաևտառումների եւ օրէնքների վերանկրութիւնը: Նրան թողնւեց մասամբ զատական իշխանութիւնը և բարքերի վերահսկողութիւնը (462-ին): Էֆիալտի բարենորոգութիւնն այնպիսի կատաղութիւն առաջ բերեց արիստոկրատների կուսակցութեան մէջ, որ սպանեցին բարենորոգին: Բայց Պերիկլէսը շարունակեց նրա գործը:

Արէոպագոսին 1 տար առականութիւնները պէտք էր յանձնել որի է մէն: Նրանք բաժին ընկան հելլէային, այսինք աթէնական երգւեալների այն մասնաժողովներին, որոնց ընտրում էին ամեն տարի: 6000 հոգուց կազմւած՝ արդարագատութեան գործը վարելու համար: Հէլլէան հիմնւել էր գեռ ևս Սոլոնի ժամանակ, բայց միայն այժմ նա մեծ նշանակութիւն ստացաւ պետութեան մէջ: Նրան յանձնւեց հասարակական ժողովի վերահսկողութիւնը, խլւելով արէոպագոսի ձեռքից: արգելուած էր նոր օրէնքը մտցնել՝ առանց նախապէս հերքելու հին օրէնքը երգւեալների մամնաժողովի առաջ: Այս կանոնը զանց առնողները ենթարկւում էին քրէական սպատասխանաւութեան օրինազանցութեան համար:

Միենոյն ժամանակ հելլէային յանձնւեց համարեան բոլոր զատական գործերը: Արքոնտները դարձան դատարանների հասարակ նախագահներ: Այսպիսով հելլէան բարձրացաւ Աթէնքի բոլոր հիմնարկութիւններից, նոյն իսկ հասարակական ժողովից: Այս լայն զատական և քաղաքական բարենորոգութիւնը մտցնելու համար միայն հրամանը քիչ էր. պէտք էր ժողովրդին հնարաւորութիւն տալ իսկապէս մասնակցելու դատարաններում: Անդամներն այնքան շատ էին, որանցից պահանջում էր այնքան ժամանակ և աշխատանք զործ դնել, որ չէր կարելի պահանջել այդ ծառայութիւնն, առանց ապահովելու այդ աշխատանքը որ եւ է վարձարութիւնով: Պերիկլէսը մտցրեց մի փոքրիկ գարձատրութիւն՝ օրական 2 օրով (մօտ 8 կօպէկ). այդ գումարով կարելի էր ճաշել, թէ շատ պարկեշտ կերպով: Եւ այդ գումարով բաւարար երեաց զրաւելու ժողովրդին զատական պարտաւորութիւններ կատարելու. աթէնացիները նախապատռում էին զատական քննութեան հետաքրքիր աշխատանքն

աւելի արդիւնատու առևտրական գործից: Արովհետեւ
դէմոկրատ կուսակցութիւնը նպաստակ էր զբել ժողովրդին տալու վարչական ազգեցութիւնը, այսինքն նրա աղքատ մեծամասնութեանը՝ պէտք էր մտածել թոշակ, վարձատրութիւն տալ պետական պարտականութիւնների համար: Հարուստ մարդիկ կարող են ծառայել տանց ոռնկի, այն պատւի և իշխանութեան համար, որ կարւած է պաշտօնի հետ: Աղքատ մարդիկ անկուրող են այդպէս զռնել իրանց ժամանակը և աշխատանքը: Թէկ ին քաղաքացիները, նոյն իսկ աղքատները, բացառիկ զրութեան մէջ էին, այնուամենայնիւնրանց համար էլ անհրաժեշտ էր գոնէ մի փոքրիկ վարձատրութիւն: Պերիկլէսի օրով դէմոկրատիայի ներմուծումն անհրաժեշտաբար առաջացնում է խորհրդի եւ հասարակական ժողովի այցելելու, նոյնպէս եւ նաև առողջի ծառայութեան համար բռակ նախակելլի: Բացի զրանից՝ պետութիւնը տալիս էր փող՝ թատրոնում տեղ գնելու համար, փողի այդ բաշխումն սկսեցին մեծացնել նրա համար, որ հնար տան տօնական օրերին կերակուր գնելու:

Ո՞րտեղից էին ճարում փողն այդ բոլոր բաշխումների և վճարումների համար: Անմիտ կը իմաստ ոռնկի ձևով քաղաքացիներին տալ այն փողը, որը նրանցից վերցնում էին հարկի ձևով: Եւ իսկապէս՝ Աթենքի քաղաքացին հարկեր չեր տալիս. պետորիւնը լցնուն էր իր զանարանն առեւտի առակաների մասներով, մերժելի տած հարկերով, իսկ զիսաւոր՝ դաւնակիցների տուրով: Այդ տուրքերը ծախսում էին ոչ միայն պարսից զէմ պատերազմներու համար, այլ և մայրաքարի բոլոր կարիքների վրայ: Նրա քաղաքացիներին վարձատրելու, տօնախմբութիւններ կատարելու, տաճարներ շինելու վրայ: Աթենացիներն իրանց արդարացնում էին նրանով, որ իրանք պաշտպանել էին

Յունաստանն արշաւանքի ժամանակ և որ կրկին իշրանք են շարունակում կը ել զաշնակցական վարչութեան և արշաւանքների բոլոր ծանրութիւնը:

Բայց ոռնկից և հասարակական շէնքեր: Շինելու համար ստացւող վարձատրութիւնից՝ ամենաաղքատ աթէնացիները կարող էին զաղթական զրուելու յոյս ունենալ, զաղթական՝ որոնց պետութիւնը տալիս էր բարբարոսներից կամ գտշնակիցներից խլած հողերը: Սյդ ձեռվ կիմոնի և Պերիկլէսի ժամանակ տեղաւորւեցին մի քանի տասնեւեկ հազար ընտանիքներ:

Սկզբում Պերիկլէսն առաջ էր քշում իր միջոցներն՝ անդադար կուր մզելով արիստոկրատիական կուսակցութեան մնացորդների հետ: Բայց 445 թւին ժողովուրդն աստրակիզմով աքսորեց նրա զիսաւոր հակառակորդին—Թուքիգիաէսին (Մելէսայի որդուն), և այդ ժամանակից Պերիկլէսն օգտուում էր անվիճելի իշխանութիւնով համարեան մինչև մահը: 15 տարի շարունակ նրան ընտրում էին սարատէզ, և թէկ նա այդ պաշտօնը բաժանում էր 9 ուրիշ առաջնորդների հետ, բայց միւս բոլորը հպատակւում էին նրան, որովհետեւ բոլոր ժողովուրդը նայում էր նրա վրայ իրեւ պետութեան մէջ զիսաւոր, առաջնորդով եւ պատսխանատ անձնաւորութեան վրայ: Այս բացառիկ զրութիւնն ստեղծւեց անհրաժեշտութեան ուժով: ոչ հասարակական ժողովը, ոչ նոյն իսկ խորհուրդը չէին կարողանում յաջող կերպով վարել զաշնակցական և օտարերկրեայ քաղաքականութեան բարդ և զժւարին գործերը: Նրանք իրանց էին վերապահում այդ գործերի ընդհանուր հսկողութիւնը, և զիսաւոր ձեռնարկութիւնների համար պէտք էր ստանալ խորհրդի և ժողովի հաւանութիւնը, բայց գործադրութեան մանրամասնութիւններն աւելի լաւ էր թողնել մի վատանելի անձի: Այդպիսի մի վատանելի անձ, աթէնական

դեմոկրատիայի կարծես զիսաւոր նախարարն էր Պերիկլէսը, և ժողովուրդը, նրան ցոյց տւած այդ նախապատութիւնով՝ արտայայտեց քաղաքական մեծ հասկացողութիւն։ Պերիկլէսը հաւատ էր ներշնչում ամենքին իր դէպի քաղաքն ունեցած հպատակութիւնովը, բնաւորութեան ազնւութիւնովը և դատողութեան զօրութիւնովը, իր էականը տեսնելու և լաւագոյնը ջոկելու ընդունակութիւնովը։ Շարժուն, աղմկոտ աթէնացիների մէջ այդ միշտ լուրջ, միշտ զրադւած, միշտ ինքն իրան զապող մարդը մի քիչ ճնշող տպաւորութիւն էր զործում։ Կատակի համար նրանք նրան անւանում էին «ամպրոպային», բայց բաւականաչափ խելք և ճաշակ ունենալով, գնահատում էին և նրա խելացի քաղաքականութիւնը, և նրա ծանրակշիռ, խորիմաստ խօսքը։

Պերիկլէսը միայն քաղաքական զործիչ և զօրավար չէր. Պիսիստրատի նման, բայց նրանից աւելի մեծ չափով, նա կարողացաւ իր շուրջը կենտրոնացնել այն ժամանակի Յունաստանի զրական և զեղարւեստական կեանքի մէջ եղած այն ամենը, ինչ լուէր։ Քաղաքը զարդարւեց մի ամբողջ շարք փառաւոր շէնքերով, որոնցից առանձնապէս նշանաւոր են՝ Աթէնք քաղաքի պաշտպան աստեածունու տաճարը (Պարթէնոն), Ակրոպոլիսի մուտքի մօտ եղած սինտպարդ սրահը (Պրոպլէտ) և Օգէսոն՝ թատրոնը, նւիրւած բանաստեղծական և նւագածուական մրցումների. Պերիկլէսի ամենամօտ բարեկամներն էին Անաքաղուաս փոփոխան և Ֆիդէաս զեղարեւեստագէտը, բոլոր ժամանակների ամենանշանաւոր քանդակագործներից մէկը։ Նոյն բարձր զարդացման հասած աթէնացիների մէջ գրում էր իր ողբերգութիւնները Յունաստանի ամենամեծ ողբերգակ Սոփոկլէսը։ Աթէնք տեղափոխւեց անորոշ ժամանակով Փոքր-Ասիացի

պատմաբան Հերոգոսը. Մի խօսքով՝ դա յունական զարգացման սոկէ դարն էր, և Պերիկլէսը լիակատար իւրառնիքով կարող էր առել, որ Արենիքը Յունատանի մայրումաղաքը եւ ուսուցիչն է։ Արագէս զի այդ ժամանակը և մեծ առաջնորդի նշանակութիւնը լիապէս զնահատուի, անհրաժեշտ է աչքի անցկացնել յոյների հոգեկան կեանքի այն պատմութիւնը, որ կատարւել է հոմերական զիւցազներգութիւնները գրելու ժամանակի և V դարի՝ նրա ամենաբարձր ծաղկման մէջ հզած շրջանի ընթացքում։

Գ 1. Ա Խ Խ ՎII.

ԾԱՂԿՄԸՆ ՃՐՃԱՆԻ ՅՈՒՆԱԿԱՆ ԶԱՐԴԱՑՈՒՄԸ (VIII—V ԴԱՐԵԲՈՒՄ)

Երբ յոյները քիչ ու շատ տեղաւորւեցին և լրացաւ ցեղական շարժումների հերոսական շրջանը՝ զիւցազներգական կումը։ Բնարանաստեղծութիւնը, որ ծնունդ էր առել այդ թափառում ընթացութիւնը ների և կափւների ազգեցութեան տակ, սկսեց վերանալ։ Կիլլիկ կաշւածները շարունակեցին մշակել տրովական պատերազմի շուրջը կազմւած հէքիաթների «շրջանը», բայց նրանց զիւցազներգութիւնները չէին զիմանում Աղփառականի և Եղիականի համեմատութեաննը։ Նրանց մէջ չըկային հոմերական երգերի սրամութիւննը, թարմութիւննը և պարզութիւննը։ Ակներեւ էր, որ անցել էր ժամանակը անհոգ բանաստեղծական պատմածքի, որը չէր ճնշում կրկնութիւններից, միջնադէպի, մասնաւոր կանգ էր առնում նկարագրութիւնների վրայ։ Բէղվատիական Հեղիոտէսը (VIII դ.) խորհրդածութիւններ է անում և սովորեցնում է. նրա «Թէոդոնիան» ներկայացնում է որոշ կարգ տառածների մասին եղած առասպեկները վերականգնելու, աստեածների մէջ սերունդներն ու յարաբերութիւնները որոշելու մի փորձ։ «Դործեր» և օրեր» զրութեան մէջ նա տալիս է օգտակար, բայց բաւական ձանձրալի խորհուրդներ մանք հողատէրերին,

որոնք դբագլած էին դաշտային աշխատանքներով։ Բնորոշ է միայն պատերազմական արկածներից խաղաղ գործունէութեան անցնելը, այլ և գասակարգային փոփոխութիւնը, եղիականն ու Աղիսականը պատկանում էն բոլորովին արխառիկառափական սարք ու կարգին։ Նրանց հերոսներն առաջնորդներն են, իսկ հասարակ ժողովուրդը երկրորդական տեղ է բռնում։ Հեղիոդէսը դառնում է քիչ կարողութեան տէր և կեանքում համեստ նպատակներ ունեցող մարդիկներին։

Փոփոխուած հանգանաքների երկրորդ նշանն էր Բնարեգուրեան—անձնական զգացմունքների բանատեղծութեան գարգացումը։ Դիւցաններգական պատմւածքը ենթադրում է համերաշխ կերպով ապրող մի հասարակութիւն, որի մէջ մարդիկ քիչ շատ իւրաքանչան են մտածում։ Բայց երբ բաղաքներում սկսեց կատաղի կոիւ ազնւականների և դեմոսի մէջ՝ դիւցազներգութեան խաղաղ անկողմնակալութիւնն այլիս անսեղի դարձաւ։ Բանաստեղծներն օգտւել սկսեցին իրանց երեակայութեան ուժով և խօսրի սրութիւնով, որպէսզի բարձրացնեն իրանց գործը և նետեր արձակեն հակառակորդի վրայ։ Օրինակ՝ Թէ չողուիզ Մեղաքացին զրում է ոտանաւորներ, որպէսզի արտայայտէ իր դառն զգացմունքները դիմոսի բանութեամբ արած զբաւումների մասին։ Մի անգամ արդէն այդ հանգամաքն ընկնելով՝ բանաստեղծութիւնը գրաւեց անձնական զգացմունքների բոլոր տեսակները, զինզարոսի փառանեզ ներբռողը արտայայտում էր հելլենական մրցումների մէջ յաղթողի հպարտութիւնը։ Սատու և Անաքրէօնը զանազան ձևերով սէրն էին երդում...

Դրամա (ող. բերդութիւն)։ Գրականութեան մէջ աթէնացիները առաջ քշեցին զբաման—զործողութեան բանատեղծութիւնը, Դրաման սկիզբն առաւ Դիմենիսի տօներին երգող խմբի երգերից։ Խմբի անդամները այծի մորթերով¹⁾, հագնւած ինչպէս աստուծու ուղեկիցներ - սատիրաներ՝ նկարազրում էին ամեն տեղ մասն եկած և բոլոր

¹⁾ Տրագոս տօֆրոս՝ այծ—երգիչ, այդ տեղից էլ առաջացել է տրագեդիա—ողբերդութիւն բառը։

ցեղերին յաղթած Դիմենիսի արկածները։ Ակսեցին երգերի համար վերցնել և ուրիշ նիւթեր, ընտրելով նըրանց զվարաւորապէս այն առասպելներից, որոնք ընդունակ էին յուղել լսողներին, ներշնչել նրանց երկիւղ կամ ցաւակցութիւն։ Սոլոնի ժամանակ այդպիսի երգեր կազմող Թեսալիսը մտածեց խմբից դուրս գալ և ներկայացնել այն զվարաւոր անձին, որի մասին խօսւում էր։ Այստեղից մինչև մի քանի դերակատարներ մտցնելը և ամբողջ գործողութիւններ կատարելը մի քալ էր։ Այս քայլն արեց Էսքիլէսի և Սոփոկլէսի վերջին ժամանակների աթէնական ողբերդութիւնը։ Այսպիսով պատմածքը դառնում էր կարծես թէ նոյն ինքը գործողութիւնը։ Ներկայ եղողները ոչ միայն լսում էին վաղուց պատահած գործերի մասին, այլ և աչքով դիտում էին ներոսներին և նրանց վիճակը։

Դրաման իր մէջ պարունակում էր և քնարերգութեան, և դիւցազներգութեան զծերը, աւելացնելով նրանց վրայ մի քիչ էլ իր սկիզբանը։ Դէպքերն ընտրւում էին ոչ թէ պատահարար և կամովին, ինչպէս զիւցազներգութեան մէջ, այլ լսողներին հնար եղածին չափ աւելի ուժեղ կերպով զրաւելու, նրանց զործողութեան մէջ քաշելու և այնպիսի զգացմունքներ ներշնչելու նպատակով, որոնք ողերուում էին զործող անձերին։ Ի հարկէ մանրաւանութիւնները տարրեր էին, բայց բոլոր թատրոնական զրւածքների մէջ մի զիմանը միտք էր հանգիպում։ Աւրդիկանց կեանքը դեկալաւում է նակատգրական բաղդի ձեռնով, որի վեխուների վրայ Երանեցուրին չունեն։ Բայց Երանեց ներքին աշխարհում, Երանեց խոնի մէջ կայ մի ոյժ, որը Երանեց դարձնում է ազատ, որը բարձրացնում է Երանեց կեանքի դժբաղութիւններից և թշւառութիւններից։ Եթէ հանդիսականը բաւականութիւն էր զգում երկիւղի և տանջանքի այդ նմանողութիւնից, որ թողուում էր նրա վրայ ողբերդութիւնը, պատճառն այն ազնւացնող զգացմունքի մէջն էր, որն առում է, թէ իսկապէս մարդուն պատճում է միայն խիզճը, իսկ անսեղութեան գիտակցութիւնը փրկում է նրան նոյն իսկ գժրազդութեան մէջ։ Աղբերդութիւնն ընտրում էր մարդկային փորձութիւններից

ամենածայրայի օրինակները, որովհետև դրանց ժամանակ աւելի ուժեղ կերպով էր արտայատում ներքին ճշմարտութեան ոյժը: Էսքիլէսի «Պարսիկներ»-ի մէջ երեսում էր յոյների արևելքի գէճ վարած մեծ կուի ազդեցութիւնը: Գրւածը ներշնչւած է այն ողբերգական սարսափով, որ թափում է հանդիսականի վրայ պարսից թագաւորի բաղդի փոփոխականութիւնը: Նա դուրս է զալիս աննման, անլուր ուժով և վերադառնում է փշրւած և ոչնչացած: Եւ հանդիսականներին բաւականացնում է այս ելքը, որորնեան նրանց խիզճը զատապարտում է Քսերքսէսի անյագ իշխանասիրութիւնը: Էսքիլէսի «Օրէստիա» տրիոլոգիայի¹⁾ մէջ վերցւած է մի այնպիսի դրութիւն, որի ժամանակ չէ կարելի մի անզամից առել, թէ ինչումն է ճշմարտութիւնը: Վրա համար ելքը երկար ժամանակ մութն է մնում: Օրէստն սպանում է իր Կիտէմիստրա մօրն իրը վրէժ, որովհետև նա սպանել էր Օրէստի հօրը: Նա կատարում է իր սարսափելի զործը պարտքի զգացմունքից դրգւած: Բայց և այնպէս նրան հարձում են եւմէնիզները—պատժող խղճի ժարմանցումը: Աթէնքը և արէոպագոսը զործը վճռում են նրա օգտին: Յայն հանդիսատեսների զգացմունքը պարտականութիւնների այս բնդհարման մէջ արդարացնում էր որդուն, որը վճռել էր վրէժ առնել իր սեփական ծնող-մօրից: «Ճղթայւած Պրոմեթէոս»-ի մէջ բախտի արտաքին զօրութեան և մարդու հոգեկան ազատութեան մէջ եղած կոփւն էր արտայտում Պրոմեթէոսի ցնցող կերպարանքում: Զիսն իշխանութիւն ունի, կարող է նրան շղթայել և տանջել, բայց ոյժ չունի նրա արդար լինելու ինքնազիտակցութեան և անհնազանդ կամքի վրայ բռնանալու: Սոփոկլէսի «Էղիպոսի» մէջ հերոսն աստածներից գատապարտուած է կատարել մի պատահական ոճիր: Նա՝ առանց գիտենալու՝ սպանել է հօրը և ամուսնացել է մօր հետ: Բաղդը նրան խճճել է սարսափելի վիճակի մէջ, բայց նա նրանից ելք է զանում, իր վրայ կամաւոր պատիժ նշանակելով: Նա կուրացնում է ինքն իրան, թողնում թագաւորութիւնը, զնում է թափառելու աշխարհից

¹⁾ Տրիոլոգիա կոչւում էին 3 վրամաներ, որ ներկայացւում էին մէկը միւսի հոտից և պատկերացնում էին իրար հետ կերպով կապւած գէպքեր:

աշխարհ, աղատութիւն և հանգստութիւն է գտնում մահւան մէջ: Առեն տեղ նրան հետեւում է իր դուստրը, ոչնչով չըմեղանչած՝ անմեղ Անտիգոնան, մասնակցում է նրա տանջանքներին և մահը յանձն է առնում, որպէսզի իր վերջին պարտքը կատարէ—թաղէ սպանուած հօրը: Բարութիւնը յաղթանակում, բայց ոչ պատահական արտաքին յաջողութեան մէջ, այլ հանդիսականների պարզ համակրութեան և բաւականութեան մէջ:

«Պլաստիքական»¹⁾ կոչւած արւեստները ևս հա-^{Պլաստիքա-}_{կան արւեստ} սան բարձր կատարելութեան: Ճարտարապետութիւնը ները: մէջ յոյները չէին աշխատում տպալորութիւն գործել չափերի մեծութիւնով կամ մանրամասութիւնների կուտակումով: Նրանց ընթերի զեղեցկորինը կախւած էր ամբողջութեան նաևակաւոր բաժանման մէջ: Նրանք սկսեցին աւելի օգտականիւներից, քան այդ անում էին արելելքում: Դորիական և յոնիական ցեղերն այստեղ էլ մշակեցին երկու տարբեր ձեեր: Դորիական պարզ սկսնը վերջաւորուում էր մի ոչ մեծ գաւաթով, յոնիական զեղաճաշակ սիւնը՝ խոյի եղջիւրներով: Աւելի ուշ կազմեց նոյնպէս կորնթական ձգձգւած սիւնը ակնթի աներենների ձեն ունեցող վերջաւորութիւնով: Առանձնապէս շատ բան արին յոյները քանդակագործութեան մէջ: Մէրը գէպքի մարմնական (ատլետական) վարժութիւնը և նրանց նշանակութիւնը կրթութեան մէջ՝ ուժեղ կերպով նպաստում էին դրան: Մարմնամարզութեան և զանազան տեսակ մըցումների համար հարաւի երկնքի տակ հանուում, մերկանում էին, որի շնորհով հնարաւոր էր լինում լաւ ուսումնասիրել մերկ մարմնի ձեերն ու շարժումները: Ամենահին քանդակագործութեան արդիւնքները դեռ

¹⁾ Այն արւեստները, որ ձեափոխում էին նիւթը (պլաստիկ) — ճարտարապետութիւնը և բանդակագործութիւնը, որովհետև նրանք բարից կազմում էին շէնքեր և արձաններ:

ևս վկայում՝ էին արհելեան վարպետների ազգեցութեան մասին։ Բայց շուտով յոյներն ընթացան սեփական ճանապարհով, ուսումնասիրելով ընութիւնը և աշխատելով, որքան կարելի է, ճշտօրէն վերարտադրել նրան։ Ասկայն նրանց գեղարւեսով չըդարձաւ բնութեան հասարակ ընդօրինակութիւն, ինչպէս և չըմնաց օտար վարպետներից վերցւած օրինակներից կախման մէջ։ Յունական խնդակազորժութիւնն սկզբում ծառայում էր առաւելապէս կրօնական նպատակների եւ նրա արտադրութիւններն սացան իդէալականցով¹⁾ բնաւորութիւն։ Գեղարւեսոտգէսները ձգտում են դարձնել իրանց արձաններն աստւածներին և հերոսներին արժանի պատկերներ։ Նրանք արտայայտում են աստւածայնութիւնն ու հերոսութիւնը ոչ թէ հակայական չափերով և ոչ էլ մարդկային ու անանական ձևերի միացումով, ինչպէս որ այդ անում էին արհելքում, այլ իդէալական գեղեցկութիւնով և վեհութիւնով։ Այս կրօնական քանդակագործութեան ամենաբարձր արտայայտութիւն կարող են համարել ֆիդիասի ստեղծագործութիւնները։ Նրա Զիսի արձանը Ալիմպոսում և Աթէնսու Պալլասին Աթէնքում՝ մարդկային կերպարանքը հասցնում էին մարդու համար մատչելի ամենաբարձր արժանաւորութեանը և կարողութեանը։ Բնական է, որ այդ ժամանակի խնդակազորժութեանը հնական է, որ այդ ժամանակի խնդակապարութիւններ։ Նրա աստւածներին և հերոսներին անփայի կը իմանէր զիմազծերն այլանդակող վրասկունքը։ Նրանք եղանիկ են եւ դրա համար ել ներդաշնակութիւնն—ոզու եղանիկ հաւասարակութիւն ունեն։

¹⁾ Իդէալ կոչում է մարդու «առենալաւի» մասին ունեցած գաղափարը—օրինակ՝ բարձրագոյն գեղեցկութեան, ոյժի, իմաստութեան մասին և այն, որին կարելի է հասնել որոշ չափով ու ձևով։

Մաղկման շրջանի յոյները զիտութեան համար այնքան Փիլիսոփա^{յութիւնը} և շատ բան չարին, որքան գեղարւեսուների բաժնում, թէ կատարած այստեղ էլ նրանց ծառայութիւններն ահազին են։ Յոնիական գաղութիւններում ծնունդ է ասնում ինքնուրոյն մի փիլիսոփայութիւն—«որոնումն իմաստութեան»։ Արհելեան ժողովրդների՝ Եգիպտացիների, հնդիկների, պարսիկների մէջ չէին պակասում իրորիմաստ զատողութիւններ աշխարհի և մարդկանց կեանքի նպատակի մասին, բայց այդ գատողութիւնները խառնում էին կրօնական առասպելների նետ։ Առաջինը յօնները եղան, որ զբալեցին փիլիսոփայութիւնով նոյն խիկ փիլիսոփայութեան նույնական իմաստունները, յետոյ էլ հարաւային իտալականները կանգնած չէին ասնում ամենամեծ դժւարութիւնների առաջ, փորձում էին բացատրել աշխարհում գոյութիւն ունեցող ամեն բան և քննում էին մարդկային մտածողութեան օրէնքները։ Նրանցից մէկը՝ Պիւթագորէսն սկսեց մտածել հանդերձալ կեանքի ինդրի մասին, որ այնքան մութ կերպով էր վճռւած յունական կրօնում, և կանգ առաւ այն ժամանքի վրայ, որ մահից յիշոյ հոգին մըտնում է մի ուրիշ մարմնի մէջ՝ աստիճանաբար կատարելագործելու, մեղքերից մաքրելու, և յանցանքների պատճառով պատճելու համար։ Բացի զբանից նա կրոտոնում կազմեց փիլիսոփաների մի զաշնացութիւն, որն ամեն միջոցով պիտի ազդէր իրական կեանքի վրայ, տարածէր իր վարչապետութիւնը և հնար եղածին չափ իր ձեռքը պէտք է առնէր յունական պետութիւնների վարչութիւնները, որովհետեւ պէտք է կառավարեն երկիրը փիլիսոփայութեան մէջ Դաստիարակւած լաւագոյն անձերը։

Այն նշանաւոր դէպքերը, որ կատարւել էին առանձին քաղաքներում,—առիացիների հետ ունեցած հերոսական կոփուր, յունական աշխարհի բաժան-բաժան մասերը միացնելու փորձերը—այս բորոքը չէին կարող հետաքրքրութիւն չըդարթեցնել գէպի պատմութեան ուսումնասիրութիւնը։ Եւ իսկապէս՝ Վ դարում առաջ է զալիս Հերոզոտր, որն արժանացել է «պատճառութեան հայր» տիտղոսին։ Նրա պատճութիւնը ներկայացնում է այն ժամանակի յայտնի աշխարհի բոլոր երկրների մասին մի շարք տեղեկութիւններ և վեր-

ջանում է պարսկական պատերազմների նկարագրութիւնով։ Իինելով Փոքր-Ասիայի Հայիկանաս քաղաքից՝ Հերոդոտը ճանապարհորդել էր այն երկրների մեծ մասը, որոնց մասին ինքը խօսում է, եղել էր Բարելոնում և Եղիպտոսում, յետոյ երկար ապրեց Աթէնքում և հարաւային Խտալիայում։ Այսպիսով նա ման էր եկել ամբողջ հելլենական աշխարհն արեելից արևմուտք և ծանօթ էր Յունաստանի հետ կրւի մտնող պետութիւնների կեանքի հետ։ Նա իր պատմութեան մէջ պէտք եղած յարգանքները տեև է օտարականներին, թէկ նա լիքն է դէպի Յունաստանը և դէպի նրա ազատ հիմնարկութիւնները տածած սիրով։ Նա ժամանակ և ախորժակ չունէր իր պատմութեան համար իննամքով հետազոտութիւններ անելու՝ այլ հոգ էր տանում գլխաւորապէս փաստերը հետաքրքրաշարժ ձևով հաղորդելու վրայ։ Ամբողջ պատմածքի մէջ կարմիր թելի նման երեսում է այն միտքը, որը երեսում է և Էսքիլէսի «Պարսիկներ»-ի մէջ առւածները ըստ կամ ուս պատմում են մարդկանց չափազանց յաւակնութիւնները և փորձելու։ Առանձին անհատների մեծութիւնը, յանդինութիւնը, նոյն իսկ անչափ յաջողութիւնները զինում են աստւածներին նրանց գէմ։ Այդպէս էլ պարսիկները խայտառակ կերպով ջարգեցին, որպէս դուրս եկան կարողութեան կամ ուժի հարաւոր սահմաններից և ուղեցին զրաւել ամրող աշխարհը։

Այս զաղափարի մէջ երեսում է յունական ժողովրդական ընաւորութեան հիմնական յատկութիւններից մէկը—չափի զգացմունքը։ Իրանք՝ յոյներն էլ լաւ էին հասկանում այդ բանում իրանց և շրջապատ զգերի մէջ եղած տարրերութիւնը։ Նրանք զգւում էին միակողմանիութիւնից և կոյր յափշտակութիւնից։ Բայց ամեն տեղ միակերպ չէին իրականացնում այս իդէալները։ Սպարտայի գօրանցային կեանքն այլակերպում էր մարդկանց, խլում էր նրանցից

հոգեվան բարձր ձգտումները, զարձնում էր նրանց պատերազմի արհեստաւորներ։ Յունական զարգացման համար ամենից շատ բան արեց Աթէնքը։ Նրա քաղաքացիները հոգ էին տանում իրանց ուժերի և ձգտումների բաղմակողմանի, գեղարեսատական զարգացման մասին։ Հանգամանքները նրանց համար այնպէս ձեռնտու կերպով գասաւորւեցին, որ նրանք լիսպէս բաւարարութիւն էին գտնում իրանց քաղաքի կենդանի, բաղմաղան կեանքի ուշից։ Արեն սկսն բնդունակութիւնների և ձգտումների ներդաշն ուկութեան մասին շատ նշանաւոր են Պերիկլէսի խօսքերը։ Շմենք սիրում ենք գեղեցկութիւնը, բայց չենք ընկնում ծոյլ փափկութեան մէջ։ Սիրում ենք իմաստութիւնը, բայց չենք տանչում կամքի թուլութիւնից։

Գ. 1. Ա Խ Խ Vll.

ՊԵԼՈՊՈՆԵՍԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Վեր գարի Յունաստանում՝ բոլոր փառահեղութանական թիւնների հետ միասին՝ կային մի քանի անձեռնտու պայմաններ, որ վտանգի էին ենթարկում ժողովրդի կեանքը։ Այստեղ ամեն բան կատարւում էր քաղաքային համայնքի՝ քաղաքացիների մի փոքր խմբակի համար։ Այդ պատճառով ամեն մի պետութեան մէջ յաջողութիւնն ու անկումը կախված էր շատ անշան թոյլ մարդիկների վարմունքից։ Ալպսիսի փոքրիկ խմբակներն արագ էին հասնում բարձրագոյն զարգման, բայց դժւար էր նրանց յես պանել բարյալապիս փչանալուց—եսականութիւնից և անբարյալանութիւնից։ Աթէնքում, որի շուրջը կազմւեց մի մեծ պետութիւն, բոլոր շահերը ենթարկւած էին ընդամենը 30,000 բնաւանիքի օգուաններին և ցանկութիւններին։ Միւս կողմից՝ խողախյիև ջոկ ջոկ համայնքներին անկարով էին ձուրել, մի ժողովրդական ամ-

բաղզութիւն կազմել: Զանազան միջոցներով (մասամբ բանի) յաջողւեց կազմել երկու մեծ դաշնակցութիւններ, բայց աւելի հեռաւոր միացման խանգարում էին ոչ միայն աթէնացիների և սպարտացիների շահերի, այլ և բնաւորութիւնների անհաջողակազմութիւնը: Մէկը կեանքի և հիմնարկութիւնների մէջ կայունութեան, անշարժութեաններկայացուցիչ էր, միւսն աչքի էր ընկնում իր շարժունութիւնովն ու ձեռներեցութիւնովը: Շուտ կամ ուշ պէտք է լնդհարում առաջանար, և աթէնական գէմուկրատների արժանիքը նրանումն է, որ նրանք այդ հասկանում էին և հար եղածին չափ պատրաստում էին պատերազմի: Հակառակորդների ուժերն իրար հաւասարակշռում էին: Սպարտան յենուում էր Պելոպոնէսի պետութիւնների և Բէովտիայի վրայ (բացի Պլատէայից), Աթէնքն ունէր իր տրամադրութեան տակ Եգեական, Սև և Մարմարա ծովերի քաղաքներն ու կղղիները: Սպարտան կարող էր դուրս բերել համարեան երկու անգամ աւելի նեանակներ, քան Աթէնքը. դրա փոխարէն վերջինս անպայման գերակշռում էր ծովի վրայ: Սպարտական պետութիւնն աւելի հաստատուն և աւելի դիմացկան էր. աթէնացիներն ունէին իրանց տրամադրութեան տակ խոշոր նիւթական (Փինասական) միջոցներ և մի բարդ ֆինանսական վարչութիւն:

Այս պայմանների համաձայն Պերիկլէսը կազմեց իր պատերազմական նախագիծը: Նա վճռեց ցամաքի վրայ գործել Սպարտայի գլխաւոր ուժերի գէմ պաշտպանութական կերպով, զոհել ատախական նահանգը և զիմադրել Աթէնքի պարիսպների ետևից: Այս նպատակով Աթէնքը և նրա մօտի նաւահանգիստը (Պիրէոն) շրջապատեցին ընդարձակ ամրութիւններով, որոնց գէմ անզօր էին բերդերի գէմ պատերազմելու անվարժ

սպարտացիները: Տիրապետելով ծովերին, Պերիկլէսն աչքի առաջ ունէր իր կողմից անհամագութելու Սպարտացին, յարձակւելով նրա նահանգի և դաշնակցութեան բոլոր թոյլ կէտերի վրայ: Նա յոյս չունէր արագ յաջողութեան վրայ, բայց յոյս ուներ վերջապէս յաղթիլ խոռոր դրամակուխը (Փօնդ) կամաց-կամաց հասցըել էին մինչև 6,000 տաղանդի (մօտ 10 միլիոն ուկի ուուրլի). այն ժամանակի համար դա մի ահագին գումար էր:

Պերիկլէսի վարչութեան օրով 3³ անգամ ուատերազմ ձագեց Սպարտացի հետ: Առաջին անգամ նա բաւական ձեռնուու կերպով ընթացաւ աթէնացիների համար, բայց նրանք ստիպւած եղան հնգամեայ խաղաղութիւն կէքել (451), որպէսետև ցրւեցին իրանց ուժերը, ոկսեցին օգնել եզիպտոսու պարսիկների գէմ ծագած ապստամբութեանը և անյաջողութիւն կրեցին այստեղ: Երկրորդ ընդհարումն ընդհակուակը սպարտացիների օգտին եղաւ. երեան եկաւ Աթէնքի համար մի չարագուշակ նշան—ոտքի ելան եւրէալի մէջ Աթէնքի դաշնակց քաղաքները, և սպարտացիները, դրա չնորովն խիստ նեղը լեցին աթէնացիներին: Սակայն 445 թէին յաջողւեց խաղաղութիւն կնքել 30 տարով: Պերիկլէսն օգտւեց այդ ընդհատումից՝ դաշնակցութեան մէջ գործերը կարգաւորելու համար: 440 թէին նա խեղդեց Սամոս կղզու ապստամբութիւնը: Երեսանական թէերին կրկն այնքան ըսնկիչ նիւթեր էին հաւաքւել, որ պատերազմը պէտք է բնակէր նախ քան խաղաղութեան 30 տարին լրանալը: Հակառակորդների շահերն ամեն տեղ իրար էին զարնուում: Միացնելով իր իշխանութեան տակ յունական արեւելքն, աթէնացիներն սկսել Սիկիլիայի և հարաւային հատակայի հետ, ուր մինչև այն ժամանակ գերակշռում էր զորիական ցեղը: Աթէնացիներն օգնում էին Սիցիլիայում աքէական և յոնիական քաղաքներին զորիական Սիրակուղայի գէմ: Մեծ-Յունաստանու նրանք հիմնեցին Թուրիա գաղութը, իսկ գլխաւորը—իրանց հօվանաւորութեան տակ առան ելլիբական ափի կուրնթական գաղութ Կորկիրան, որն արդէն վաղուց դէն էր

զցել մետրոպոլի իշխանութիւնը և երեսնական թւերի վերջում մտել էր նրա հետ բացարձակ պատերազմի մէջ: Միւս կողմից՝ կորնթացիներն ապատամբութիւն ծագեցրին աթէնացիների զաշնակից թրակիական Պոթիլէա քաղաքում: Պարանոցի վրայ Մեղարան երեմ Սպարտայի, երբմն էլ Աթէնը հետ էր միանում, իսկ Բէովտիայում պատերազմ սկսեց Աթէնքի կողմը բանող Պլատէայի և Սպարտայի կողմը բանող Թէրէի մէջ:

431

431 թւին պայթիւն առաջացաւ գլխաւոր պետութիւնների մէջ, սկսեց պեղոպոնէսեան կործանարար պատերազմը:

Պատերազմը՝ մինչ ներկան կամաց գործողութիւններն ընթանում կամաց իր էին Պերիլէսի ծրագրի համաձայն. սպարտացիներն ամեն տարի մտնում էին Սոտիկա, տերում էին երկիրն ու բնակիչներին քշում դէպի բաղադր: Աթէնացիներն էլ յաճախ զօրք էին հանում Պեղոպոնէսի ափերը: Սակայն այդ ծրագրի գործադրութիւնը շատ ծանր եղաւ աթէնացիների համար: Աթէնքում կուտակւած և մի կերպ տեղաւորւած ազգաբնակութեան մէջ ժանտախտ սկսեց, որը տանում էր հազարներով զոհեր: Քաղաքում թաղաւորում էր երկիւղը և յուսահատութեան անբարոյականութիւնը: Խուլ կերպով տրանչում էին, որ Պերիլէսն անօգուտ կերպով փրչացնում է բազմաթիւ մարդկանց, որոնք աւելի լաւ կը լինէր մեռնէին կուի դաշտում: Պերիլէսի թշնամիներն օգտուցին այդ անբաւականութիւնից: Նրան ատում էին ինչպէս արիստոկրատներն, այնպէս էլ դէմոկրատների կուսակցութեան մի քանի անդամները, որոնք նախանձում էին նրա ազգեցութեանը: Արդէն մի քանի անգամ նրա բարեկամների դէմ հանել էին մի քանի անմիտ մեղադրանքներ: Անարտագորաս փիլիսոփան փախաւ Աթէնքից, Ֆիդիան իրան սպանեց բանդում: Վերջապէս վճռեցին զուրս գալ իր՝ Պերիլէսի դէմ: Նրան մեղադրում էին պետական գանձա-

բանից փող գողանալու մէջ, և դատարանը մեծ տուգանքի դատապարտեց նրան: Այդ ամօթալի վճարից յետոյ ժողովուրդը շուտով խելքի եկաւ: Պերիլէսին նորից ստրատէգ ընտրեցին, բայց նրան այլ ևս վիճակւած չէր շարունակել սկսած գործը. 429 թւին ժանտախտը տարաւ նրան:

429

Դէմոկրատիայի առաջնորդութիւնն անցաւ պրեխաւրապէս կլէոնին—մի կոսիա և մշտապէս դէպի բռնաբարութիւն զրգող անձի: Փողովի եւ խորհրդի մէջ իր նառերով եւ առաջարկութիւններով նա զբարում էր, որ պատերազմը բաւական եռանդով չէ տարւում: Նրա ազգեցութեան տակ դաշնակիցների անդամավճարները կրկնապատկեցին, իրանց՝ քաղաքցիների վրայ հարկ գրւեց:

Շուտով կրկին նշաններ երկացին, որոնք ցոյց էին տալիս, որ դաշնակիցների վրայ վստահել չէ կարելի. ապստամբւեց կարենոր Լեսպոս կղզին: Երբ ապըստամբութիւնը զսպւեց, կլէոնը պահանջեց, որ սրի անցկացնեն բոլոր աղամարդկանց, և քիչ էր մնում իր նպաստակին հաներ, միայն հետեւեալ օրը չափաւոր կուսակցութիւնը կարողացաւ համոզել, որ զլսաւեն միայն 1000 մարդ:

425

Թւին աթէնացիներին յաջողութիւն բաժին ընկաւ: Նրանց ստրատէգներից մէկը՝ Դէմոսթէնէսը դաւակ Պիլսոր Մեսսենյացում, իսկ զրանից իսկոյն առաջան մեսսենացիների և հելոսների ապստամբութիւնները: Սպարտացիները գործն աւելի վստացըին, ուղարկելով մի զօրաբաժին Աֆակտերիա կղզին՝ պեղուակնեան ծոցի մուտքի մօտք: Աթէնացիները չարկեցին պեղոպոնէսեան նաւատարմը և կարեցին սպարտական զօրաբաժնի ճանապարհը. յետոյ՝ որովհեակ կլէոնը պնդում էր, թէ ստրատէգները գործը ձգձում

են, թէ արջապատւած սպարտացիների հետ վաղմաց են, թէ հաշիւը վերջացնել, ժողովուրդը հէնց նրկարելի էր հաշիւը վերջացնել, ժողովուրդը հէնց նրկարան ուղարկեց Սփակտերիա: Այդ ժամանակ սպարտացիներին հասցընել էին վերջին ծայրայեզրութեան, տացիներին հասցընել էին վերջին ծայրայեզրութեան, և նրանց մնացորդներն իսկապէս անձնատուր եղան կլէոնին: Ընդամենը 120 մարդ անձնատուր եղաւ, կլէոնին: Ընդամենը 120 մարդ անձնատուր եղաւ, բայց նրանք պատկանում էին սպարտական ամենատաղքայցիկ ընտանիքներին, իսկ աթէնացիները նրանց պատկեցիկ ընտանիքներին, իսկ աթէնացիները նրանց պատկան էին իրք պատանդ: Սպարտացիներն ստիլւած եղան արշաւանքները դադարեցնել Ստիլիայի վրայ և բաւականացան Բրասիդոս գօրավարին Թրակիա ուղարկելով: Բրասիդոսը հանդիսացաւ մի նշանաւոր գօրապետ: Բրասիդոսը ջարգեց աթէնական գօրգը, բայց կուռմ ընկան և ինքը, և կլէոնը: Բասպարտացիների սնյաջողութիւնը Սփակտերիայում մի կողմից, աթէնական իշխանութեան խորտակումը Թրակիայում միւս կողմից՝ երկու կողմին էլ թեքեցին դէպի հաշտութիւն: 421 թիին կիմիւց Նիկիտական խաղաղութիւնն այն սլայմանով, որ երկու կողմին էլ վերադառնան այն դրութեանը, որի մէջ գտնում էին մինչեւ պատերազմը:

⁴²¹ Աւելիքաղէսը Բայց այդ խաղաղութիւնը շատ անհաստատ էր, և Սինետական Հակառակորդների զրտւած բաղաքները վերադարձներու ժամանակ երկու կողմն էլ աշխատում էին իրար խարել: Յարաբերութիւններն առանձնապէս սրեցին, երբ կլէոնից յետոյ Աթէնքում ժողովրդի սիրելին դարձաւ Ալկիրիադէսը: Նա երիտասարդ էր, գեղեցիկ, արաւակարդ տաղանդի տէր, բայց չունէր ոչ մի համոզմունք և ամեն բանից բարձր էր դասում սեփական անձի օգուտն ու փառքը: Նա երազում էր փայլուն յաղթութիւններ և զրա համար էլ զրդում էր ժողովրդին վերանորոգել պատերազմը: Սկսելու համար նա Սպարտայի գէմ ոտքի հանեց նոյն իսկ

մէջ Արդուը և միքանի արկադիական ուղարկութիւնների: Սպարտացիները ջարդեցին ասպատամբ համայնքներ, բայց այդ սնյաջողութիւնն Ալկիրիադէսին ներին, բայց այդ սնյաջողութիւնների մէջ հետեւեալ ձեռնարկութիւններից: Ետք ըլպահեց իր հետեւեալ ձեռնարկութիւններից: Ետք ըլպահեց աթէնացիներին սկսել մի խիզախ արշանութիւնը Սիրակուղայի գէմ, զրանով յոյս ունենալով անը Սիրակուղայի գէմ, զրանով յոյս ունենալով ակսել արևմուտքի զբաւումը: Այդ փորձը բորբոքին հակասում էր Պերփիլէսի ծրագրին, որն զգուշացնում էր չափազաց նեռաւոր ձեռնարկութիւններից: Բայց այդ մտապրութիւնները չափազաց զբաւիչ էին աթէնացի մտապրութիւններ չափազաց զբաւիչ նաև զբոյշ նամար, որոնք չէին սիրում շատ զբոյշ և գանգաղ գործել: Նրանք մեծ զօրք և նատառում կազմեցին և առաջնորդ նշանակեցին Ալկիրիադէսին կազմեցին և առաջնորդ նշանակեցին Սիրակուղային (415): Զւելուց անմիջապէս առաջ մի գործ պատահեց, որը միանգամից սուսեցրեց նրանց պատերազմական ողերութիւնը: Անյայտ չարագործները մութմական սուսեցրութիւնը: Անյայտ չարագործները մութմական սուսեցրութիւնը էր արձանները, որ զբաւծ գիշերով ջարդեցին չերմէսի արձանները, որ զբաւծ էին փողոցների խաչաձև կտրւածքներում: Ժողովուրեն դը վրդովեց, այդպիսի սրբազնութիւնը թւում էր վատ նախագուշակութիւն և մերկացնում էր քաղաքացիների մէջ անօրէն և անհաւատ մարդկանց դոյլութիւնը: Սկսեց քննութիւն, և սկսեցսին, ի միջի այլոց, կասկածներ յայնել նոյն իսկ Ալկիրիադէսի մասին, որ յայտնի էր իր ազատամատութիւննով: Սակայն նրան բաց թողին իր արշաւախմբի հետ. բայց նրա չեւելուց յետոյ իր բազմաթիւ թշնամինները և նախանձորդները նրա գէմ գործը տարան այնպիսի ճարովիութիւննով, որ նրա ետեկից մի նոր նաւ ուղարկեցին, հրամայելով թողնել հրամանատարութիւնը և Աթէնք վերադառնալ դատուելու: Ալկիրիադէսն այդ հրամանին չը հնագանդեց և փախաւ զնաց Սպարտա: Նրա բացակայութեան ժամանակ Սիրակուղայի աղջաւանը վատ ընթացաւ: Սիրակուղայիութեան ովհմա-

պրութիւնը կազմակերպեց սպարտացի Հիլիպոսը:
Աթէնքի հետ յարաբերութիւնները դժւար էին: Երկրի
ներսում տեղական ազգարնակութիւնը համակրում էր
աթէնացիներին, բայց նրանք չը կարողացան՝ ինչպէս
պէտք էր օգտւել նրանց օժանդակութիւնից: Արշա-
ւանքին ակամայ մասնակցող զգուշաւոր Նիկէսս և
ձեռներէց Դեմոսթենէս ստրատէզների մէջ համաձայ-
նութիւն չըկար: Գործը վերջացաւ կատարեալ պարտու-
թիւնով: Սիրակուզացիներին յաջողւեց փակել աթէ-
նական հաւատորմի ելքը ծոցից գէպի ծով: Յամա-
քային զօրքը փորձ արեց նահանջել գէպի երկրի ներ-
որ, բայց շնորհիւ Նիկիասի մնուխապաշտութեան (նա
վախեցաւ լուսնի խաւարումից), նահանջը չափազանց
ուշ ձեռնարկեց, երբ սիրակուզացիներն արդէն զր-
րաւել էին ճանապարհի լեռային կիրճերը: Մի ամ-
բողջ շարք ուժասպառ անող ճակատամարտերից և
արագ ճամբրոգութիւններից յետոյ՝ աթէնական զօրքն
անձնատուր եղաւ Հիլիպոսին: Գերիների հետ վարե-
ցին չափաղանց գաման կերպով: մեծ մասն ուղար-
կւեց քարհանքները, ուր և ոչնչացաւ զրկանքնե-
րից և հիւանդութիւններից, իսկ մի քանիներին,
որոնց մէջ և զօրապետներին, զիստահեցին (413): Ա-
թէնացիներն այս դժբաղդ արշաւանքի մէջ կորցրին
10,000 միայն հոսպիտներ, չը հաշեելով թիթեագէն-
ներին և հաւատորիներին: Իսկ մի և նոյն ժամանակ
Սպարտան օգտում էր Սլիբիթագէսի խորհուրդնե-
րից և սկսում էր վճռական գործողութիւններ: Պե-
լոպոնէսիցիները զրաւեցին Դեկելէսն Ատտիկայում,
ամբացան այնտեղ և հանգիստ չէին առլիս ազգա-
րնակութեանը, որն ատիպւած էր ապահովութիւն ո-
րոնել Աթէնքի պատերի ետեւում: Յետոյ նրանի դաշ-
նակցութիւն կապեցին պարսիկների հետ, որպէսզի

նրանցից սահման այն, ինչ որ նրանց պակասում էր
մինչեւ այդ ժամանակ՝ փող և նաև:

Աթէնքում ժողովուրդը յուսահատուեց: Արիստո- Յեղացիութիւնը ներ Աթէն-
կրատ կուսակցութիւնը, որը բոլորովին ոչնչացած էր
երկում, զլուխը բարձրացրեց: Ամեն տեղ ասում էին,
որ գործերի վատ վարելու պատճառը դէմոկրատիան է.
Ժողովրդական ամբոխը բաւարար պատրաստութիւն
չունի պետութիւնը կառավարելու համար. նա են-
թարկում է շողոքորթ և անազնիւ դէմագոդների¹⁾
աղջեցութեան, որոնք զրդում են նրան զէպի շու-
տափոյթ վճիռներ: Աթէնացիների յուսահատութիւնն
այնքան մեծ էր, որ 411 թիւն, նաև առաջնական առանց
դիմադրութեան նիրարկեցին օլիգարխիական
դրագութեան: Հասարակական ժողովն ինքը հրա-
ժարւեց դէմոկրատիայից և իշխանութիւնը յանձնեց
այն մասնագովին, որը պէտք է նոր կազմ մը-
շակէր: 500-ի խորհուրդն արձակւեց, իսկ նրա
փոխարէն կազմւեց 400-ի խորհուրդը, որը կենտ-
րոնացրեց ըոլոր գործերն իր ձեռքում: Հասարակա-
կան ժողովին մասնակցելու իրաւունք ունեցող քաղա-
քացիների թիւը սահմանափակւեց 5,000 հոգի ամենա-
հարուստներով, և նրանց անդամ չէին հրաւիրում ժո-
ղովի: Ամեն բան կառավարում էին մի քանի օլիգորխ-
ներ (Պիսանդրոսը, Ֆրինիկոսը, Անտիֆոնէսը, Թերա-
մէնսոսը): Իրանց գուրք չեկազ մարդիկներին գլխատում
էին կամ ուղղակի սպանում:

Այդ տեսակ մի կարգ երկար ժամանակ կանգուն
մնալ չէր կարող: Արդէն մի քանի ամսից յետոյ Օլի-
գարքներին վայր զլուխը ցամքային զօրքը, իսկ նա-
և առաջնորդը, որ կանգնած էր Սամոս կղզու մօտ, սկզ-

¹⁾ Այդպէս էին կօչւում ժողովրդի առաջնորդները, Ալժմ
այդ բառը նշանակում է խառնակութիւն զցող:

թից հրաժարւեց նրանց հրամաններին հսաղանդւել-
ընտրեց սեփական ստրատէզներ և հրաւիրեց Ալկի-
բիտէսին: Վերջինիս վերադարձը հոչակւեց Պելոպո-
նէսեան նաւատորմի դէմ ո՞ւ քանի յաղթութիւններով:
Արդէն 410 թւին դէմոկրատիան լիովին վերականգնել
էր Աթէնքում, և Ալկիբիտէսին յաղթականի փառքով
ընդունեցին քաղաքում: Բայց արէնացիների տրամա-
դրութիւնը բոլորովին փչացնելու և նրանց խոնեմու-
թիւնից գրելու համար բաւական էր մի պատերազ-
մական անյաջողութիւն: Ալկիբիտէսի բացակայու-
թեան ժամանակ նրա փոխարէն զօրքը վարող առաջ-
նորդը պարտութիւն կրեց, աթէնացիները գայրացան
իր՝ Ալկիբիտէսի վրայ, և նա ստիպւած եղաւ երկ-
րորդ անգամ փախչել:

<sup>Պատերազմի
վերը:</sup> Դրանից յետոյ զործերն աւելի և աւելի վաս
ընթացան: Աթէնքի ձեռքից խիստ նեղւած դաշնակից-
ները մէկը միւսի ետևից բաժանւեցին. պելոպոնէսեան
նաւատորմը, որի զլուխն էր անցել հմուտ զօրավար
Լիսանդրը, խիստ կերպով նեղում էր աթէնական նա-
ւերին. փոքր-ասիսական սատրապ Փոքր կիւրոսը ե-
ռանգով օգնում էր սպարատացիներին, յուսալով այդ
միջոցով վերադարձնել պարսկական պատերազմներում
կորցրածը: Մի անգամ էլ բազով ժպտաց աթէնացի-
ներին, բայց նրանք շատ վատ կերպով օգտուեցին դը-
րանից: Պելոպոնէսցիների կողմից լեսրոսի մօտ փակ-
ւած զօրաբաժնին փրկելու համար ուղարկւեց վերջին
միջոցներով կազմւած մի նաւատորմ, որ ջարգեց
թշնամուն Արդինուղեան կղզիների մօտ տեղի ունե-
ցած ճակատամարտում (406): Թւում էր, թէ պէտք էր
ստրախանալ այս յաջողութիւնով: Բայց ստրատէզները
չը կարողացան սպանւածներին թաղել և վիրաւորնե-
րին հաւաքել ջարգւած նաւերի վրայ, որովհետեւ շտա-
պում էին դէպի լեսրոս, իսկ այդ նպատակով թողնւած

նաւերը յանձնարարութեւնը չը կատարեցին բարձրա-
ցած փոթորիկի պատճառով: Ժողովուրդը սաստիկ
զրգուած էր ստրատէզների գէմ: մեռելներին չը յար-
գել նրա աչքում աւելի ծանր յանցանք էր, քան գէ-
պի վիրաւորները եղած անուշագրութիւնը: Սպան-
ւածների աղգականները վրէժ էին պահանջում, որով-
հետեւ անթաղ մնացածների հողիները, այն ժամանակի
հայացքների համեմատ, պէտք է թափառէին ստո-
րերկեայ թագաւորութեան մօւտքի մօտերը: Կրօնա-
կան զայտորի ազդեցութեան տակ՝ ժողովուրդը ծայ-
րախող անսարդարութիւնով գործեց: Ստրատէզների
գործում բոլոր օրինական ձևերը ոսի տակ տրւեցին,
հասարակական ժողովի առանձին անդամների և, ի միջի
այլոց, նրա նախադան Սոկրատէսի հականառութիւն-
այլոց, նրա նախադան Սոկրատէսի հականառութիւն-
այլոց բոնի կերպով մերժւեցին, և ստրատէզները մահ-
ւան գատապարտեցին: Ժողովուրդը խելքի եկաւ, երբ
զօրապետներն արգէն սպանւած էին:

Արքելուզիան զործի վախճանը ցոյց տեց, որ
արէնական դիմոկրատիան բոլորովին խայխայել էր
ուժասպառ անող պատերազմական ներքին ժողովու-
թիւնը համար դժւար էր անձամբ զեկավարել պատերազ-
մական ձեռնարկութիւնները, այն ինչ նա չէր կարող և
չէր ուղում ոչ ոքի յանձնել զեկավարութիւնը: Այդպի-
սի պայմաններում ստրատէզները գործում էին դան-
ուաղ, առանց եռանդի և անհանաձայն կերպով: 405
թւին Լիսանդրը յանկարծակի բերեց աթէնացիներին
մէկէս-Պոնտոսի ամերում, Եգոս Պողամոս աւանի մօ-
տերը և կոր իպուխ ջարգեց նրանց, իսկ 404 թւին
նա քաղցով ստիպեց նոյն իսկ Աթէնքին անձնատուր
լինել: Խաղաղութեան պայմանները ծանր էին. գաշ-
լինել: Խաղաղութեան պայմանները յանդել, նաւատորմը
նակցութիւնը յըել, պարխստիները բանդել, նաւատորմը
յանձնել, բացի 16 հասարակ նաւերից: Պատերազմի
այս տեսակ վախճանը բացատրում է ոչ միայն սի-
այս տեսակ վախճանը բացատրում է ոչ

կիրական վոանգաւոր արշաւանքի անյաջողութիւնով, պարսիկների միջամտութիւնով, դէպի Աթէնքը վատ որամադրւած դաշնակիցների դաւաճանութիւնով, ըսպարտացիների պատերազմական դիմացկանութիւնով, այլ անվիճելի ազդեցութիւն ունեց նաև զինւորական գործողութիւններ զեկավարելու համար անպէտք դէմոկրական ժողովի մօսական միջամտութիւնը զուծերի մէջ և այն բարդական անկումը, որ արագ կերպով տեղի ունեցաւ քաղաքացիների ստկաւաթիւ դասակարգի մէջ մտաւոր և բարոյական անսովոր զարգացումից յետոյ:

Գ. 1. Ա Խ Խ. IX.

ՍՊԱՐՏԱՅԻ ԵՒ ԹԵԲԻ ԳԵՐԻՃԽՈՆՅՈՒԹԻՒՆԸ

Սպարտան և Պարսկաստանը: Գելուպոնէսեան պատերազմն ընդմիշտ ոչնչացրեց եթէ ոչ Աթէնքի կենսունակութիւնը, գոնէ նրա ուժը: Որքան նա առոր ընկաւ, այնքան աւելի առաջ անցաւ Սպարտան: Յունաստանում նա այլ ևս մըցակիցներ չունէր: Յունական ըրուր պետութիւնները ճանաչեցին նրա գերիշխանութիւնը (հեզեմնիա), և ամեն աեղ նա հիմնեց կամ ամրապնդեց օլիգարխիական կատարութիւն: Աթէնքում իշխանութիւնն ընկաւ, այսպէս կոչւած՝ երեսուն բոնապետների ձեռքը, որոնց գլուխն էին կրիտրոսը և թերամենոսը: աթէնական նախկին դաշնակցութեան գլխաւոր քաղաքներում հիմնեցին լիելարխիաներ՝ տասն անձերի կառավարութիւններ: Ամեն աեղ սկսեցին գլխաւոր քաղաքները, հաւաճներ, սոցւածքների զրաւումներ (կօնֆինկացիա): Սպարտական բերդապահները և հարմոսները կարգ էին պահպանում: Բայց ընդունակ էր արդեօք

Սպարտան դեկավարելու յունական աշխարհի գործերը: Նա բաւական ուժ ունեցաւ աթէնական պետութիւնը կործանելու համար, բայց նրան սպասում էր մի աւելի ծանր խնդիր՝ կազմել իր սեփական պետութիւնը: Այնինչ պատերազմը սաստիկ ուժապատ էր աւել այդ բաղադր: Լիազօր իրաւունքների աէք բաղաքացիների թիւը հասել էր ընդամենը 2,000 բնաւիքի, որոնք նախարձախնդիր կերպով պահպանում էին իրանց արտօնութիւնները և իրանց շարքերը լցնելու և հասարակութեան միւս զասակարգերի բարօրութիւնը բարձրացնելու համար ոչինչ չէին անումք Քաղաքների հետ ունեցած յարաբերութիւնների մէջ արտապատում էր միայն յանդուզն ոյմը: Սպարտացու խոսքն օրէնքն էր համարւում, եթէ նոյն խև նա լինէր մի մասնաւոր անձ, առանց որ և է պաշտօնի կամ յանձնարարութեան:

Աթէնքի ժառանգութիւնն ստանալով՝ Սպարտան ըստիպւած էր իր վրայ առնել և նրա արեկեան բաղաքականութեան շարունակութիւնը: Գելուպոնէսեան պատերազմի վերջը նրան մօտեցրեց փոքրասիական սատրապ փոքր կիւռսի հետ, առանց որի օգնութեան հազիւ թէ կարելի լինէր աթէնական նաւատորմի հետ զլուխ ենիր: Յենէկով սպարտացիների վրայ, Կիւրոսը հաւաքեց յունական վարձկաների մի խոշոր բանակ և վճուց մի համարձակ գործ առնել: Նա ապստամբւեց իր Արտաշէս եղրօր դէմ և շարժեց դէպի Ասխայի խորքերը, նրանից թագաւորութիւնը խլելու համար: Բարելոնից ոչ հեռու, Կունաքսի մօտերը տեղի ունեցաւ ճակատամարտ, որի մէջ Կիւրոսն սպանւեց, նրա զօրքը մի անգամից քայլայւեց և յոյները, որ իրանց թեփ կողմում յաղթել էին, մենակ մնացին: Իրը լրացումն վասնչի, պարսկական Տիսավերնէս զօրավարը՝ բանակցութիւնների զարւակով խարելով տարաւ յունական առաջնորդներին՝ թակարդի մէջ զցեց և կոտորեց նրանց: Այս յուսահատ դըրութեան մէջ յոյները մի անգամ էլ փայլուն կերպով ապացուցեցին իրանց գինւորական կազմի անհամեծատ առաւելութիւնն ասիականից: Ամրող Ասխայի միջով,

401

Բարելոնից մինչև Տրապիզոն՝ Ահ ծովի ափին՝ անցան սրանք, ձանապարհ բանալով իրանց ըիչ ծանօթ երկրների և թշնամական ցեղերի միջով և մշտապէս պաշտպանւելով իրանց վրայ յարձակւող պարսկական զօրքից (401 թ.): Նրանց առաջնորդներից մէկը՝ Աթէնսցի Քանոնքոնտը նըկարագրեց «տասը հաղարքի» այս քաջագործութիւնն իր Անարասիսի (նահանջի) մէջ:

Արտաշէսի յաղթութիւնը Կիւրոսի գէմ, յունական վարձկաններին հետապնդելը, պարսիկների յարձակումը փոքրասիսկան ափերի վրայ՝ պարսից թագաւորին Հանեցին երես երեսի սպարտացիների հետ: Վերջիններս Ասիա ուղարկեցին Ագեսիլա թագաւորին, և նա կիմոնին արժանաւոր յաջորդ հանգիսացաւ: Նա մի շարք յաղթութիւններ գործեց պարսիկների գէմ, վերականգնեց յունական տիրապետութիւնը ափի երկարութիւնով և պատրաստում էր արդէն դէպի երկրի ներսը շարժելու, բայց պարսիկները միջոց գտան նրան կանգնեցնելու: Նրա ետևում, նոյն իսկ Յունաստանում, նրանը կազմեցին Սպարտային թշնամի Քաղաքներից մի գաշնակցութիւն և ցոյց տւին նրանց եռանդուն օգնութիւն փողով և նաւատորուզ:

Պաղաքների Կելոպոնէսեան պատերազմը վերջանալուց յետոյ ինքնուրոյ յունական քաղաքներում խսկոյն սկսւեց սկզբում խուլ բականութեան վեցարձակ կոխ: Մինչեւ այժմ նրա կողմը բնուղ Թէրէն վախեցու: Իր անկախութեան համար և ապաստարան տեց Աթէնսքից փախած գէմուլբատներին: Աթէնս 403 թւին այս աքսորականները, Թրասիբուլոսի առաջնորդութիւնով ներս խուժեցին Ատտիկա, ուր 30 բանապետները խժգութիւններ էին անում մշտապէս աճող գաժանութիւնով: Որովհետեւ իրանց՝ օլիգարխների մէջ սկսւել էին երկպառակութիւններ և ծայրացեղ միջոցների կուսակից կրիսիսը ոչնչացրել էր աւելի շափաւորների առաջնորդ Թերամնոսին՝ Թրասիբուլոսը և իր ընկերներն առանց մեծ դժւարութեան՝ բննապետների հետ զործը վերջացրել է վերականգնեցին գէմուլբատիան Աթէնքում: Սպարտացիները

402

այս առաջնորդ Թերամնոսին առանց մեծ դժւարութեան՝ բննապետների հետ զործը վերջացրել է վերականգնեցին գէմուլբատիան Աթէնքում: Սպարտացիները

հարկա: որ չընամարեցին միջամտել, որովհետեւ ուզում էին խուսափել Յունաստանում նոր պատերազմ սկսելուց: բայց այս անսպասելի զիջողութիւնը միայն սկսու աւեց նրանց հակառակորդներին, և 395 թւին Պարսիկների հետ միասին նրանց գէմ դաշնակցութիւն կազմեցին Աթէնքը, Թէրէն, Սրգոսը և մինչև անգամ կորնթոսը: Սպարտան ազատուեց Ագեսիլայի ձեռքով, բայց նրա հարմոսաներին և բարեկամներին՝ օլիգարխներին ամեն տեղից դուրս քշեցին, նրա նաւատօրմը ջարդեցին պարսիկները, որոնց առաջնորդում էր Պելոպոնէսեան պատերազմի աթէնական ստրատէգներից մէկը՝ Կոնոնը, իսկ պարանոցում կորնթոսի մօտ՝ ձգձգւեց յոզնեցնող պատերազմը, որի մէջ յաջողութիւն էր ունենում երբեմն մի, երբեմն միւս կողմը: Սպարտացիներն իրանց երջանիկ համարեցին, երբ այդ պայմաններում նրանց յաջողւեց ձեռք ըերել Սնատակիդեան կոչւած խաղաղութիւնը (387). յոնական բոլոր բաղաբային համայնքներն ինքնուրոյն նրատարակեցին, յոնական ասիական գաղութերը տրեցին պարսից քաջաւորին. այս նոր կազզը դրւեց Սպարտայի պատասխութեան և մեծ արքայի նովանալորութեան տակ: Սպարտական 17 ամեայ իշխանութեան արդիւնքը եղաւ մի չըլսւած խայտառակութիւն: յոնական պատերազմներից յադրող դրւու եկան պարսիկները: Նրանք համարեաւ առանց կուի հասան այն բանին, որին չընասան Դարէն ու Քսերքսէսը լարելով բոլոր ուժերը, արևելեան զաղութեները կրկին դարձան պարսկական թագաւորութեան նահանգներ, իսկ Եւրօպական Յունաստանում ձանաշւեց պարսիկների եթէ ոչ տիրապետութիւնը, գոնէ նրանց գերակշռութիւնը:

Բայց և այնպէս Սպարտացիները այդ խաղաղութիւնը համարում էին ձեռնոտու, որովհետեւ նա ի-

395

387

բանց հնար էր տալիս խառնւելու քաղաքների գործերի մէջ որևէ մէկի ինքնուրոյնութիւնը պաշտպանելու պատրւակի տակ. 382-ին նրանք դաւաճանութիւնով խլեցին թէրէի կազմէա բերդը, քաղաքում հաստատեցին իրանց սիրած օլիգարքին և կարծում էին, որ յաջողւեց ազատւել այն վտանգաւոր հակառակորդից, որն իրանց խանգարեց օգտւելու պելովնէսեան պատերազմներից լիակատար չափով. բայց հէնց այդ նոր բռնաբարութիւնը դարձաւ նրանց նոր գժրադութիւնների ազրիւր:

Թէրէի բարձրականութեանը: Ինչպէս աթէնքը զբաւելուց յետոյ թէրէն ընդունեց թէրասիրուլուն և իր ընկերներին, այդուի էլ այժմ Աթէնքն ապաստան տւեց թէրէից աքսորւած ու փախած հայրենատէրներին: 379 թւին Պելոպիդէսը և մի քանի ուրիշ թէրէցի աքսորականներ մի կերպ տուն դարձան: Պարող կանանց հագուստով ծագուած, նրանք մտան այն տունը, ուր ինչոյք էին անում օլիգարքները և սպանեցին նրանց: Սպարտական բերդապահները յանձնեցին կատամէան այն պայմանով, որ իրանց ազատ բաց թողնեն Սպարտա գնալու: Աթէնացիներն օգտւեցին իրանց թշնամու անյաջողութիւնից և կագնեցին մի երկրորդ գաշնակցութիւն, որի հետ միացրին Եգիշեան ծովի ամենանշանաւոր կողիները: Բայց քանի զեռ սպարտացիները պահում էին իրանց առաջնութիւնը ցամաքի վրայ, նրանց գերիշմանութիւնը թօթափելու բոլոր փորձերը շատ անհաստատ հետևանքներ էին տալիս: Թէրէցիներին յաջողւեց խորակել սպարտական հոպլիտների անյաղթելի անունը: 371 թւին թէովտիայի Լիկարիա քաղաքի մօտ թէրէական զօրքը՝ էպամինոնդի՛ սուաջնորդութիւնով ջարդուփշուր արեց սպարտական բանկը, չը նոյնելով նրա թւական առաւելութեանը: Դա մի չափազանց նշանաւոր երեսյթ էր, Երևաց որ

սպարտական խայբարող եւ մեռնող խղաքային համայնքն այլ եւս հնար չունէր պահելու նախկին բարձրութեան վրայ իր մալանգների թիւը և դիրքը: Իսկ միւս յոյների նման քաջ և ուժեղ, բայց ուրիշ ոչնչով աչքի չընկնող թէրէցիներն ունէին էպամինոնդի նման մի զօրապետ, որը կարողացաւ կատարելագործել ֆալանգի պատերազմական կազմը: Նա զօրացրեց նրան յարձակողական հարւածների համար այն բանով, որ նրա սուաջատոր թել շարքերի թիւը շատացրեց, այն ինչ աւելի թոյլ թել մի բիչ յետ էր մնում:

Սպարտայի պարտութիւնը թէրէցիների գերիշխանութեան սկիզբն էր: Էպամինոնդը մի քանի անգամ արշաւանքներ արեց դէպի Պելոպոնէս և միայն Ագէսիլայոսի ու պազմագիտական արհեստը խանգարեց նրան առնել Սպարտան: 362 թւին տեղի ունեցաւ Արկադիայում, Մանտինէայի մօտ, թէրէցիների և սպարտացիների երկրորդ զիսաւոր ճակատամարտը: Կուի ժամանակ էպամինոնդը մահացու վերք ստացաւ, բայց սպարտացիները կրկին ջարգւեցին: Էպամինոնդի արշաւանքների արդիւնքը եղաւ Մեսսինայի ազատութիւնը, արկադիական խղաքների դաւականցութեան կազմելը եւ Սպարտայի ուժի վերջնական խորակումը: Բայց էպամինոնդի հետ միասին թէրէցիները կորցրին իրանց յաջողութիւնների զիսաւոր պայմանը: Նրանց յաջողութիւնների պատճառն էր ոգու ժամանակաւոր բարձրացումը և առաջնորդի պատահական տաղանդը: Յունատանին զեկավարելը նրանց ուժից աւելի բարձր էր, քան սպարտացիների ուժից:

ՄԱԿԵԴՈՆԱԿԱՆ ՄԻԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ

Փիլիպոս
Մակեդոնաց

Թէքէցիները բաւարար ուշագրութիւն չը դարձին ճիշտ հիւսիսային Յունաստանում կազմւող մի նորուժի վրայ, որն սպառնում էր ամբողջ թերակղզու ազատութեանը: Պէլրպոնէսեան պատերազմի ժամանակ մակեդոնական ժողովուրդը, որ խառնուրդ էր իլիրական ու թրակիական բարբարուների և յոյների, սկսեց դուրս դալ վայրենի վիճակից և խառնւել յունական գործերի մէջ: Մակեդոնական լեռներում տիրող խաշնարած դրութիւնն սկսեց կամաց կամաց տեղի առաջ երկրագործութեան: խոշոր կուլտուրական ազգեցութիւն էին գործում Մակեդոնական թէքակղզու քաղաքները: Մակեդոնիան կառավարում էին ժառանգական թագաւորներ յունական հարսառութիւնից, որն էր սկզբն առած էր համարում Արգոսի Հերակլիաններից: Բայց թագաւորների իշխանութիւնն աննշան էր. նրանք յաճախ պէտք է կռւէին առանձին նահանգների անհնագանգ առաջնորդների նետ, և նոյն իոկ թագաւորող տան մէջ միշտ խառնակռւթիւններ էին լինում: Մակեդոնիայի համար նոր գարագլուխ սկսեց 359 թիւն, երբ թագաւորեց Ամինտոս II-ի որդի Փիլիպոսը: Նա ստացաւ յունական լաւ կրթութիւն թէքում, ուր՝ ինչպէս աւանդութիւնն ասում է՝ ապրում էր Էպամինոնդի տանն իբրև պատան: Յունական քաղաքների մէջ եղած յարաբերութիւնները և նրանց թուլութիւնները նրան լույս յայտնի էին. նա ուշագրութեամբ հետեւում էր պատերազմական գործերում կատարող նոր գիւտերին և

կատարելագործութիւններին: Իսկ որ զլիաւորն է նա խորամանն էր և ունէր յարատե կամք, որը, չը նայելով անյաջողութիւններին ու յետաձգումներին, երբէք չէր շեղւում մի անգամ զրւած նպատակից:

Փիլիպոսը Մակեդոնիայում արտգ յաղթեց իր բոլոր հակառակորդներին և պինդ կերպով տմրացրեց իր իշխանութիւնը: Նա այս բան արեց ազգաբնակչութեան բացօրութիւնը և զարգացումը բարձրացնելու համար, բայց նրա զիստուր հոգոն էր տաճնակարգ բանակ պատրասելլի: Մակեդոնական թագաւորի ձեռքում յունական զինուորական կազմը չէր կարող մնալ առաջւայ ովէս քաղաքացիական կամաւորների գընդեկը. Փիլիպոսը մշտական զօրք հաստատեց, հաւաքելով կամաւորներ Մակեդոնիայի պատերազմասէր երիտասարդներից: Արդէն յունական վարձկանները ցոյց էին տւել, թէ մրցիսի ուազմական կատարելութեան կարող են համար մասնագէտ¹⁾ զինուորները: Փիլիպոսը առան աւելի ևս զարգացրեց էպամինոնդի միտքը և ձեւափոխեց ֆալանգը: որպէս զի այդ միտպաղաղ և ծանր զանգւածի ոյժը հասցնէ իր ամենաբարձր աստիճանին, նա դասաւորեց նրան եւկարածից բառանկիւսում ձեւով, որի մէջ իրար ետե կանգնած շարքերի թիւը հասնում էր երբեմն 25-ի. իսկ զինուորներին նա զինեց երկար սկզբներով (սարփառ) փոխանակ կարծ տէզերի, այնպէս որ ստացւում էր նիզակների մի խիս անտառ, որին ճակատից ջարդել անհնար էր: Ֆալանգի թորլ կողմերն էին կողքերը և թիկունքը. բացի զրանից նա զիւրաշարժ չէր և կարող էր շարժւել միայն հարթ տեղերով: Նրան օժանդակելու և զործակցելու համար Փիլիպոսը մէծ ուշա-

1) Մասնագէտ (սպեցիալիստ) — մի ձարգ, որն ամրացնողէն նուիրում է իրան մի որ և զործի:

դրութիւն դարձրեց հեծելաղօրի և թեթև հետևակի բարելաւման վրայ:

Յոյները նրան ժամանակ տւին իր թագաւորութիւնը և զօրքը կազմակերպելու: Աթէնացիները միւսներից առաջ զգացին հիւսիսում կատարւող փոփոխութիւնը: Նրանք ցոյց տւին իրանց կենսունակութիւնը, արագ կերպով ուղղելով պելոպոնէսեան պատերազմից յետոյ: IV դարի 50-ական թւերին նրանց եկամուտքը (ֆինանս) փայլուն վիճակի մէջ էր, չը նայելով որ Եգէական ծովի կղզիները հեռացել էին դաշնակցութիւնից: Բայց քաղաքում ժիրում էր մի փոքրոցի տրանադրութիւն, որ քիչ էր նմանում V դարի բաղաբացիական արիութեանը: Կազմել էր, ինչպէս Պերիկլէսի ժամանակ, մշտական պետական դրամագլուխ, բայց դա պատերազմական պէտքերի համար պահեստ չէր, այլ տօնախմբութիւնների ծախքերը ծածկելու համար և ժողովուրդը թշնամաբար էր վերաբերում այդ փողերի մի մասն ուրիշ նպատակների համար գործադրելու ամեն մի փորձին:

Օգտելով աթէնացիների ունեցած կուից կղզիների հետ, Փիլիպոսը գրաւեց նրա դաշնակից քաղաքների մեծ մասը Թրակիայի ափերում (Ածքիպոլիսը, Պոտիուսն և այլն): Յետոյ նրան առիթ ներկայացաւ միջամտելու Թէսալիայի և Միջին Յունաստանի գործերի մէջ: Ֆոկէացիները կողոպտեցին Դելֆիան տաճարը և նրա գանձերի շնորհով կազմեցին բաւական խոշոր պատերազմական ոյժ, որի հետ դրացիներից ոչ մէկը չէր կարող գլուխ ելնել: Երբ Ֆոկէացիները խուժեցին Թեսալիա, թեսալացիների մեծ մասն օգնութեան կանչեց Փիլիպոսին, որն սկզբներում գործեց նոյնպէս անյաջող կերպով, բայց վերջապէս իր նպատակին հասաւ և Փոկէական զօրքին վճռական ջարդ տւեց: Նա արդէն պատրաստում էր Թերմոպիլեան կրծով անցնել Ֆոկիդա, բայց այստեղ աթէնացիները նրան անսպասելի և վճռական զիմագրութիւն ցոյց տւին: Նրանք շտապով նաւատորմ ուղարկեցին, որը և խանգարեց թագաւորին Թերմոպիլէն

գրաւելու: Փիլիպոսը պատասխանեց, յարձակելով Թրակիայի աթէնական ազգեցութեան ամենամեծ պատնէշի—Ռմինթոսի վրայ: Նոյն աթէնացիները, որոնք այնքան եռանգով փակեցին Միջին Յունաստանի ճանապարհը, վատ կերպով պաշտպանեցին Ռլինթոսը: Յունաստանի ամենամեծ հուետոր Դէմոսթենէսն ամեն ջանք գործ դրեց, որ բացատրէ իր համարազաքացիներին, թէ ինչ սարսափելի գժրազգութիւն է սպառնում նրանց, թէ ինչպէս նրանք անհետնողականութիւնով, իրանց գործազութիւնների պատահականութիւնով զիջանում են մի զիջը միւսի ետեից խորամանկ թշնամուն, որը չէ ընում ոչ մի բոպէ և օգտուում է ամեն մի սխալից: Հասարակական ժողովը երբեմն լսում էր Դէմոսթենէսին, երբեմն էլ թեքում էր նրա հակառակորդների կողմը. հակառակորդներն էին տաղանդաւոր, բայց մակեդոնացիներից կաշառւած էսքինէսը և անպայման ազնիւ ֆոկոնը, որ համարում էր քաղաքն անընդունակ Փիլիպոսին գիմազրելու: Ռլինթոսին օգնեցին, բայց ոչ եռանգուն կերպով, և նա ընկաւ, քաջ զիմագրութիւնից յետոյ: Շուտով գրանից յետոյ Փիլիպոսին յաջողւեց աւելի ևս կարեոր մի քայլ անել: Աթէնացիներին հանգստացնելով նրանց հետ զաշն կապելով, նա զօրքը քաշեց և անցկացաւ Թերմոպիլէսի: Դրան իրը բարեձեկ պատրւակ ծառայեց Դելֆիսի համար վարւող սրբազն պատերազմին միջամտելը, որը զեռ և ձգձգւում էր թէրէցիների և Փոկէացիների մէջ: Տիրելով անցրին, նա կարող էր մտնել միջին Յունաստան, երբ նըրան պէտք լիներ կամ երբ բարեհաճէր: Մի քանի տարի անցկացաւ պատրաստութիւնների և զիւնապիտական յուրաբերութիւնների մէջ: Երբ Փիլիպոսն սկսեց նւաճելու փորձ անել Աթէնքի դաշնակցութեան մէջ եղած վերջին հիւսիսային քաղաքները և անյաջողութիւն կրեց՝ նա կրկին միջամտեց միջին յունական վէճերի մէջ և կրկին Դէլֆիսի պաշտպանութեան ըարեձեկ պատրւակով—այս անզամ լոկրիացիների գէմ:

Վերջապէս Դէմոսթենէսի եռանգի շնորհով յաջող—^{կախ} և համոզել աթէնացիներին և թէրէցիներին թշնամութիւնը մոռանալու և ընդհանուր թշնամու գէմ միանալու անհրաժեշտութեան մէջ: Բայց արդէն ուշ էր: Չը նայելով դաշնակիցների յուսահատ քաջութեանը,

338

նրանց քաղաքային կամաւորների զնդերը չը կարողացան դիմանալ Փիլիպպոսի յարատև պատերազմների մէջ եփւած զիւորների կռւին: Քերոնէայի մօտ, Բէովախյում, նա լիակատար յաղթութիւն տարաւ (338): Բայց նա նրանից օգտուեց շատ կակուզ ձեռվ: Փոխանակ պատճելու եւ ննիւթ, նա իր համար դրեց մի նոր ու մեծ նպատակ, որն արդէն նախազգւած էր յունական պատմութեան ձեռնով եւ որը պէտք է հաշեցնէր յոյներին իրանց անկախութիւնը կորցնելու հետ: Կորնթոսում տեղի ունեցած յունական քաղաքների պատգամաւորների ժողովում նա առջարկեց արշաւանք սկսել Պարսկաստանի դէմ: Քաղաքները համաձայն սկսեցին օգնական գօրաբաժիններ հանել և ընդհանուր գօրքի առաջնորդ ընտրեցին մակեդոնական թագաւորին: Սա եղաւ Փիլիպպոսի վերջին վարպետ բայլը: Բայց պարսկական արշաւանքի պատրաստութիւնների ժամանակ նրան սպանեց իր թիկնապահներից մէկն (336) անձնական վրէժի պատճառով:

336

Մակեդոնական արքային յաջողուեց այն զործը, որ չը կարողացան կատարել յոյներն իրանք, նա միացեց Էլլադան, միայն բռնի ուժով: Դրա համար էլ Յունատանում առաջաւոր գլուխներից շատերը հաշտուում էին բարբարոս թագաւորի առաջնորդեան հետ: Աթէնական հուսար իսոկրատը ողջունեց նրան ինչպէս մար խռովութիւններից տպատողի և բախտից ընտրւած առաջնորդի Պարսկաստանի հետ ունենալիք կռւի մէջ: Եւ այն հանգամանքը, որ Փիլիպպոսը մակեդոնական պետութեան զրոխն էր՝ ապագայի համար դա համարւում էր իրը մի կարևոր նշան: Մակեդոնիայի բարբարոս ազգաբակութիւնը ներշնչւեց յունական սովորութիւններով ու դաստիարկութիւննով, իր զինուրական հիմքերը փոխ առաւ Յունատանից, ճիշտ է՝ Մակեդոնիան չը դարձաւ լիազէս հելլենական նահանգ, բայց նա եղաւ

առաջին հիլէնիստական պետութիւնը, այսինքն մի բարբարոս երկիր, որ իր մէջ ընդունեց յունական կուլտուրան:

Փիլիպպոսի մահից յետոյ զահ բարձրացաւ նրա Ալեքսանդր քսանամեայ որդի Ալեքսանդրը: Նա ստացաւ յունական կրթութիւն Արիստոտէլ մեծ փիլիսոփայի առաջնորդութեամբ և շատ վաղ ցոյց տւեց արտակարգ ընդունակութիւններ: 18 տարեկան հասակում արդէն նա հրամայում էր մակեդոնական բանակի մի ամբողջ թերին Քերոնէայի մօտ և ամենից շատ օգնեց յաղթութիւնը առնելուն: Ալեքսանդրը ներշնչւած էր յունական անցեալի բոլոր լաւ ձգտումներով և խրամաներով: Նրա սիրելի հերոսն Աքիլլէսն էր, որին վիճակւեց վաղահաս վասք և վաղահաս մահ: Միւս կողմից նա իրան զգում էր իծնէ իշխող, անհնարին ոչինչ չէր մնալունում և վարժւեց վարկենարար իր կամքը կատարել: Այդ հուր ընաւորութեան համար խաղաղութիւնն անտանելի էր և վիասակար. նրա կեանքը կաղմում էին աննման արագութիւնը և զործողութեան վճռականութիւնը:

Ալեքսանդրի առաջին միջոցներն ուղղւած էին Բալկանեան թիրակղու վրայ կարգն ապահովելուն: Դանուրի կողմն արած կարծ արշաւանքը բաւական էր թրակիական բարբարոսներին խաղաղոցնելու համար: Փիլիպպոսի սպանութեան լուրը և Ալեքսանդրի մահան մասին տարածւած սուտ զրոյցն ալէկոծեցին յոյներին: Մակեդոնական նոր թագաւորը ցոյց տւեց նրանց, որ հօրից յետ չէ մնում: Նա յանկարծ երկած թէովախյում, ջարդեց ապատամբներին և սարսափեցնելու համար՝ կործանեց Թէրէն: Հոգ տանելով թիկունքի կողմում խաղաղութիւնը պահպանելու մասին, նա քաշեց մակեդոնական և յունական գօրքերն, ընդամենը 36,000 մարդ և չելլէս-Պանտոսով անցաւ Ասիա (334):

334

Կահւ Պար-
սիկների հետ. Արշաւանքի մի քանի պայմանները բարեյաջող էին, իսկ միւսները ոչ։ Ալխանիդրի տրամադրութեան տակ էր այն ժամանակի աշխարհի ամենալաւ բանակը եւ զնում էր մի բազուրութեան դեմ, որ կազմւած էր իրար հետ վաս կերպով միաւուած նահանգներից՝ բուլացած կառավարութիւնով։ Տաս հազարի նահանջը և Ագեսիլայոսի արշաւանքը ցոյց տւին, թէ ինչ կարող են անել այս փխրուն զանգւածի մէջ փոքրիկ յունական զօրաբաժիններն, առաջնորդւած ճարպիկ զօրավուխներով։ Բայց կային և դժւարութիւններ։ Դեռ չը հաշւած Ասիայի անծանօթ խորքերն արւող արշաւանքի վասնգը, պէտք էր հաշւի առնել պարսկական ծառայութեան մէջ եղած բաւական բազմաթիւ յունական քաջ և լաւ մարզւած զօրքը. այդ վարձկանները մօտ 30,000 էին և նրանց առաջնորդում էր փորձւած զօրավար Մեմնոնը, Վերջապէս Պելոպոնէսեան պատերազմի և վերջին դէպքերի շորհով՝ Պարսիկներն, այսինքն իսկապէս փիւնիկեցիները, կրկին տիրել էին ծովին։

Բայց էլի Ալեքսանդրը համարձակ գնաց Սարդայի վրայ, յուսալով հանդիպել Պարսից բանակի հետ բաց դաշտում։ Մեմնոնը խորհուրդ տւեց պարսիկներին խուսափել ճակատամարտից և մակեդոնացիներին քաշել երկրի ներսը. պարսիկները նրան չը լուցին և փորձեցին, պաշտպանել փոքր ու սրբնթաց Գրանիկոն դետի անցքը։ Յոյն վարձկանները լաւ դիմազրեցին, բայց մակեդոնական հեծելազօրի յարձակումը քանդեց ասիական զօրքի կարգը, և պարսիկները լիակատար պարտութիւն կրեցին։ Ալեքսանդրն անցաւ Փոքրասիական ափի երկարութիւնով և զրաւեց յունական գաղութները։ Միայն Հալիկարնասում նրան կատաղի զիմագրութիւն ցոյց տւին։ Չը վրավելով ասիական հաւատորմի զործողութիւններով, որ կտրում էր նրա

յարաբերութիւնները եւ բոպայի հետ՝ նա անցաւ թերակղզու ամրողջ հարաւային տվիր։ Կիլիկիայի և Ասորիքի անկիւնում, Ամանոս շղթայի լեռնային տեղում, իսսոսի մօտ նա հանգիպեց պարսկական զլխաւոր բանակին՝ նոյն իսկ մեծ արքայի՝ Դարէհ Գ-ի առաջնորդութեան տակ և ահազին, բազմացել ամբոխը փեռւրի եղանակում մակեդոնական մալանգների առաջ։ Յոյներն արագ նւաճեցին Ասորիքը և Փիւնիկիան։ Տիւրոսը պաշտպանուում էր յուսահատօրէն և Շամիս յետ պահեց յաղթողին։ Այստեղից Ալեքսանդրը շարժւեց դէպի Եգիպտոս, որը միշտ ատում էր պարսիկներին և իսկոյն հպատակւեց նրա թշնամիներին։ Ալեքսանդրը կարողացաւ դէպի ինքը արամադրել ազգաբնակութիւնը նրանով, որ յարգանքով վերաբերւեց դէպի Եգիպտական կրօնը։ Նա նոյն իսկ արշաւանք սկսեց անսապատի ներսը, որպէսպի այցելէ Ամօնայի հռչակաւոր տաճարին Սիփահեան օազիսի մէջ։ Քուրմերը նրան ընդունեցին հանգիսաւոր կերպով և յայտարարեցին նրան աստւած՝ արեի որդի։ Եգիպտոսից Ալեքսանդրը շարժւեց Ասորեստան։ Գաւգամելայի մօտ նրան կրկին հանդիպեց Դարէհի բանակը, որ կազմւած էր մարաց և պարսից ամենալաւ զօրքերից։ Այս անգամ կոիւր յամառ էր, և գործը վճռեց Ալեքսանդրն անձնապէս, ընկնելով պարսից վրայ՝ իր հեծելազօրի գլուխն անցած։ Դարէհն սպասնեց վախուստի ժամանակ իր սատրապներից մէկի ձեռքով, իսկ յաղթողն առանց արդելքի գրաւեց արեւելեան թագաւորների հին մայրագագագները—Բաբելոնը, Սուլան և Պէրսեպոլիսը։ Այդ վերջին բաղաքում նա զրաւեց Դարէհի անհամար զանձերը։

Այս դէպքերով վերջանում է (331) կոիւր պար- Ալեքսանդրի միապետութիւնը միկների հետ, և սկսում է մի նոր շրջան՝ Ալեքսան- թիւնը։ 331 դրի գործունէութեան մէջ։ Նա ինիը դարձաւ պար-

սից քազաւոր եւ Ամենամեծիրից իրը ժառանգութիւն ուսացաւ որու բաղաքական պարտականութիւններ եւ սովորութիւններ: Պարսկական թագաւորութիւնն ամբացնելու համար, նաև արշաւանքներ ձեռնարկեց դէպի այն ժամանակւայ լուսաւոր աշխարհի հիւսիսային և արևելեան սահմանների: Պատերազմասէր տեղացիների հետ մշտապէս ծանր կոխւ մղելով, նա հասաւ մինչև Թէքինեան օազիսին, Բուխարային և Թուրքեստանին: Այժմեան Խօջէնտի տեղում նա հիմնեց «Ճայրագոյն Ալէքսանդրիան»՝ ամենահեռաւոր յունական բնակավայրը միջին Ասիայում: Այստեղից նա դարձաւ դէպի հարաւ և, Դարէն Վշտասպեանի օրինակով, շարժւեց դէպի Հնդկաստան: Հնդկական իշխաններից մէկի դաշնակցութիւնով նա ջարդեց Փենջափի իշխաններից ամենազլիստորին՝ Պորսուին, և հասաւ Գանդէս և Ինդոս գետերի ջրարաշխ անապատին: Նրա նպատակն էր անցնել Գանդէսի հովիտը, բայց զօրքը հրաժարւեց նրան հպատակւելուց, մինչև անգամ այդ ամեն տեսակ ճակատամարտերի և պատահարների մէջ քարացած զինուորների համար անհնար էր թւում աւելի հեռու շարժւել դէպի արևելք: Զը նայելով թագաւորի ինդրան քներին, զինուորները պնդեցին վերադառնալ: Ալէքսանդրն ինքն էլ էր հասկանում, որ չէ կարող այդ նահանդները լիովին իրան հպատակեցնել, և թէ և հիմնեց Հնդկաստանում երկու սատրապութիւններ (կուսակտութիւններ), բայց իշխանութիւնը թողեց Փենջափի իշխաններին և բաւականացաւ իր ինամակալութիւնն ընդունել տալով: Վերադրձին Ալէքսանդրը վնեց մի մեծ նաւատորմիդ և նէարքոսի առաջնորդութեամբ ուղարկեց Պարսկական ծոցը, իսկ ինքը զնաց ցամաքով Գեղրսոդէայով (այժմ Բելուջիստան): Երկու ամիս զօրքը դնում էր անջրդի անապատներով և քիչ էր մնում ծարաւից

ոչնչանար: Հարաւային Պարսկաստան դուրս գալը և նէարքոսի էլ նաւատորմի համելը տօնւեց իրեւ ազատում՝ դժւարին արշաւանքի վտանգներից (325):
Ալէքսանդրը դարձաւ ասիական մեծ միապետութեան ներկայացուցիչ: Նրա զործունէութիւնը, ընականաբար, խիստ փոխւեց թէ իշխանութեան ձեի, թէ պեսական հարցերի և թէ նպատակների վերաբերմամբ: Նա առաջւայ պէս չէր կարող մնալ միայն զինուորներին մտերիմ մի զօրապետ, Մակեդոնիայի նահապետական գլխաւոր և յայների ընտրովի առաջնորդ: Նրա առաջ խոնարհում էր արեւելեան ժողովուրդների ամբողջ աշխարհը, որ սովորել էր նայել իր միապետների վրայ իրեւ աստածային ուժի մարմնացման վրայ: Ալէքսանդրը բաւականութիւն էր զարում այդ երկրապատճեան մէջ, նրա քաջազործութիւններն այնքան անհաւանական էին, նա իրան այնքան բարձր էր զգում միւս մարդիկներից, որ նրա իշխանութեան գնահատութիւնն արևելքիների կողմից նրան թւում էր բնական և կանոնաւոր: Հարկաւոր դէպերում նա սկսեց պարսկական զգեստ հազնել և կրել «մեծ արքայի» թանգագին քարերով ծածկած խոյրը (թիարա): Հրշապատեց իրան դրանիկների բազմաթիւ խմբով, սկսեց պահանջել, որ հանդիսաւոր դէպերում իրան մօտեցողները ծնկի գան: Հիւսիսային արշաւանքի ժամանակ նա ամուսնացաւ Բակորիայի իշխանի դստեր հետ և, բացի դըրանից, Հնդկաստանից վերագանակուց յետոյ՝ կնութեան առաւ և Դարէնի աղջկան: Այս բոլոր կարգերը խոր կերպով վրդովում էին մակեդոնացիներին և յոյներին, որոնք այդպիսի ոչ մի բան չէին տեսել իրանց հայրենիքում: Նրանք դիտում էին Ալէքսանդրի մեծութիւնն իրը իրանց ձեռքի զործը և ամենելին

տրամադիր չէին Փիլիպպոսի որդուն համարել աստ-
ւածային մարմնացում: Մակեդոնական ամենաարժա-
նաւոր զօրավար Պարմէնիոնի որդի Ֆիլոտասի շուրջը
դաւագրութիւն կազմւեց, որին Ալէքսանդրը խեղ-
դեց մեծ գաժանութիւնով: Դրա պատճառով Ֆիլո-
տասն ու Պարմէնիոնը կեանքերը տւին: Մակեդոնա-
կան միւս առաջնորդ Կիտուսը, որ Գրանիկոնի մօտ
փրկեց թագաւորի կեանքը, մի խնջոյքի ժամանակի իր
յանդուզն խօսքերով այնպէս զրգուեց Ալէքսանդրին,
որ սա իր սեփական ձեռքով սպանեց նրան: Բայց և
բացի այդպիսի առանձին ընդհարումներից՝ բոլոր բա-
նակում սկսեց երեալ մշտական արշաւանքներից յոդ-
նածութեան և անհաղանդութեան ողին: Գործը հա-
սաւ զինւորների բացարձակ ապստամբութեան, որից
յետոյ այդ վետերանների ¹⁾ մեծ մասն արձակւեց
տուն գնալու:

*Ալէքսանդրի
ներքին քա-
ղաքականու-
թիւնը:*

Թէհ կարելի էր Ալէքսանդրին յանդիմանել իր
զարդողութեան ձեմ ու կեանքը փրկելու համար, բայց
ոչ ոք նրան չէր կարող մեղադրել անդորդութեան
մէջ: Արշաւանքներից յետոյ էլ նա շարունակեց գոր-
ծել: լայն ծրագիրները մէկը միւսի ետևից ծագում
էին նրա երեակայութեան մէջ և նա անմիջապէս
ձեռք էր զարկում նրանց իրագործելու: Արեւմուտի իւ
արեւելի միացումը, պարսկական սեսուրեան մէջ
յունական կարգերն ու ողին մՏցնելլ կազմում էին
նրա մըսական հոգսերը: Պսակւելով սղարսից թագա-
ւորի աղջկայ հետ, այդ ասիթով նա կազմեց Եկրա-
տանում մի արտակարգ տօնախմբութիւն—իր 10,000
զինւորների պատկան ասիական աղջկների հետ: Արդէն
հնդկական արշաւանքներում նրան ուղեկցում էին
պարսկական զօրաբաժինները: Նրանից վերադառնու-

¹⁾ Վետերան—երկար ժամանակ ծառայած զինւոր:

լուց յետոյ նա վերակազմեց ամբողջ բանակը, մացը-
նելով նրա մէջ բազմաթիւ նորակոչներ ասիական ցե-
ղերից: Գետերի և նաւագնացութեան վրայ նա պա-
կաս ուշագրութիւն չը դարձրեց, քան բարելական
կամ եղիպտական թագաւորները: միայն նրա համար
գետն աւելի նշանակութիւն ունէր իրքն հաղորդակ-
ցութեան միջոց, քան ոռոգման ջրանցք: Նախկին
պարսկական թագաւորութեան զիսաւոր թուլութիւն-
ներից մէկն էլ նրա բաժան-բաժան լինելը, կենարու-
նի և մասերի մէջ յարաբերութիւնների դժւարու-
թիւնն էր: Ալէքսանդրը հոգ տարաւ ճանապարհներ
շնելու և աւագակային ցեղերը ոչնչացնելու վրայ,
որոնք վտանգաւոր էին զարձնում ճամբորդութիւնը:
Այս խսկալէս «մեծ» բացաւորի զիսաւոր ծառա-
յութիւնը կայանում էր մի ամբողջ շարժ (մօ 70)
հաղաբներ հիմնելում այն բոլոր զիսաւոր նաևա-
պարհների վրայ, ուժեղով նա անցնելում էր: Եւ նեղոսի,
և Սիր-Դարիայի, և Ինդոսի վրայ նա ցրում էր իր
«Ալէքսանդրիա»-ները: Նրանցից եղիպտական Ալէք-
սանդրիան համաշխարհային քաղաք դարձաւ, Եւրո-
պայի, Ասիայի և Աֆրիկայի կենարոն և, ինչպէս յայտնի
է, մինչև օրս էլ պահում է իր մեծ նշանակութիւնը:
Ալէքսանդրի գաղութներից շատերը ոչնչացան, բայց
մեծ մասն իր գործը կատարեց: Օտար ցեղի մէջ
թողնւած բերդապահ գունդը դառնում էր վաճառա-
կան ազկարնակութեան համար յենարան, իսկ սա իր
կարգին տարածում էր յունական լեզուն, արհեստնե-
րը, հաստատութիւնները, կրօնական գաղափարները:
Մի խօսքով՝ Ալէքսանդրը կարողացաւ սի նոր յունա-
արեւելեան կուլտուրայի հիմքը գնել: Բայց նրան վի-
ճակւած չէր տեսնել նրա աճելն ու տարածւելը. մահը-
տարաւ նրան Բարեկրնում՝ Արաբիայի չորս կողմը շր-
ջելու համար կազմող արշաւախմբի պատրաստու-

323 Թիւնների ամենատաք ժամանակները (323): Նո 32
տարեկան էր:

<sup>Ալեքսանդրի
միապատճեան բա-
ժեան բա-
ժանելը:</sup> Սլեքսանգրի մահից յետոց իշխանութեան համար
ծագում է մի երկար, արիւնալի և անպառղ կորու-
նրա զօրապետների (Դիագօք-յաջորդ) մէջ: Այս պա-
տերազմների լուրջ նեանակութիւնը նրանում է, որ
դրանք ցոյց էին տալիս այդ հոկայական պետքեան
միութիւնը պահպանելու անհնարինութիւնը: Իպսոսի
ճակատամարտից յետոց (301) նա վերջնականապէս
բաժանեց մի քանի անկախ պետութիւնների:

1. Մակեդոնիա, ուր հաստատեց Անտիոքուսի
սերունդը: Նրանց կախման մէջ էր և Յունաստանը,
որի ժողովրդները սակայն միշտ ալէկոծւում և փոր-
ձեր էին անում ինքնուրոյն լինելու: Անցեալի պատ-
մութիւնը սովորեցրել էր նրանց միաբան գործել և
դրա համար էլ Առ դարի քաղաքական շարժումների
մէջ դեր են խաղում ոչ թէ առանձին քաղաքներն,
այլ գաշնակցութիւնները, որոնցից մասնաւորապէս
տուաջ են անցնում էտոլիականը—միջին Յունաստա-
նում և արէականը՝ Պելոպոնէսում: Վերջինս ձգտում էր
դասնալ ընդհանուր Պելոպոնէսեան գաշնակցութիւն և
իր հետ միացրեց Կորնթոսն ու Սիկոնը, բայց Սպար-
տան թշնամական դիրք բռնեց և իր կամակորութիւ-
նով շատ օգնեց այն բանին, որ մակեդոնացիները կըր-
կին ձեռք բերին Յունաստանում զեկավարողի նշանա-
կութիւն: Նրանք այդ դիրքը պահեցին մինչև որ եր-
կիրը դրաւեցին հօօմայեցիները:

2. Ասիան սասցաւ Անտիւլոսը: Անտիւկեանների
ամենից առելի մօֆիկին պահում իրանց Ալեքսանդ-
րի խողաքանութիւն աւանդութիւններին: Նրանց
է պատկանում բազմաթիւ քաղաքների հիմնարկու-
թիւնը, որոնցից մի քանիսը՝ մասնաւորապէս Անտի-
ոքը՝ շատ մեծ նշանակութիւն ստացան: Դէպի այս

ասիական պետութիւնն էին ձգտում խմբերով զաղթա-
կաններ Յունաստանից և Մակեդոնիացից: Յատկապէս
այնտեղ էր տեղի ունենում բարբարոսների ամենա-
եռանգույն հելլենացումը, նրանց ենթարկւելլ յունա-
կան ազգեցութեանը: Բայց Սելեկեան միապետութիւնը
չափազանց մեծ էր, և նրա գանազան մասերն իրար
հետ քիչ կապ ունեին: Առ գարում բաժանեց պար-
թեական թագաւորութիւնը Եփրատից դէպի արևելք՝
մինչև Հնդկաստան: Նրա մէջ գերակշռում էին իրա-
նեան ցեղի հովիւ ժողովրդները, որոնք պարսկական
տիրապետութեան շրջանում առանձին նշանակութիւն
չունեին, իսկ այժմ վերականգնեցին իրանի անկա-
խութիւնը: Վերին Եփրատի ափերում կազմւեց
Հնյկական պետութիւնը: Փոքր-Ասիայում կազմւեցին՝
Պոնտոսի թագաւորութիւնը Աև ծովի ափերում, Պեր-
գամի և Բիւթանիայի պետութիւններն արևմուաքում:

3. Եզիփտունի ընկաւ Պտղուկոսի իշխանութեան
տակ: Հելլենիստական կուլտուրան այստեղ զարգացաւ
աւելի մեծ կէտերում, մասնաւորապէս Ալեքսանդրիա-
յում: Այս քաղաքում կուտակւեց կէս միլիոն ժողո-
վուրդ, որի մէջ մտնում էին այն ժամանակի յայտնի
աշխարհի համարեա բոլոր ցեղերից եկեղեններ: Պտղու-
մէանք եռանգով խնամակալում էին ոչ միայն վաճա-
ռականութիւնն, այլ և գեղարեւսանները և զիտու-
թիւնը: Նրանց ստեղծած ալէքսանդրեան թանգարանը
ներկայացնում էր և հաւաքածու նշանաւոր իրերի,
և ընալարան հոչակաւոր զիտնականների համար, և
դանիճներ, և պարտէզներ համալսարանական պա-
րապմունքների համար: Նրա մօտ գտնուում էր մի
աշնանան գրադարան 700,000 ձեռագրերով՝ հին աշ-
խարհի բոլոր լեզուներով: Ընդհանրապէս մտաւոր կող-
մից Ալեքսանդրիան գարձաւ հելլենականութեան մալ-
մից Ալեքսանդրիան գարձաւ հելլենականութեան մալ-

վրայ երբէք այնքան ուժեղ չեր Եզիստոսում, որտան Ասիայում. Պաղոմէանք պէտք չունէին քաղաքներ շինելու—նրանք օգտուում էին արդէն գոյութիւն ունեցողներից և ընդհանրապէս նրանք խոնարիւում էին եզիստական ժողովրդի կրօնական ի քաղաքական անցեալի առաջ. նրանք մի քանի քաներում խոստովանուում էին նրա առաւելութիւնը յունական կուտուրայից: Դրա համար էլ երկրի ազգաքնակութիւնը չէր միմիայն ենթարկուում յոյներին, այլ իր կարգին զօրեղ կերպով ազգում էր և նրանց վրայ:

Գ. Ա. Ռ. Խ. Խ.

ՅՈՒՆԱԿԱՆ ԿՐԹՈՒԹԻՒՆԸ: ԱՆԿՄԱՆ ՋՐՁԱՆ
(431—146 Թ.)

Յունատանական պետական կեանքի անկումն սկսւում անկումը: Յունատական պետական կեանքի անկումն սկսւում է պելոպոնէսեան պատերազմից, որի մէջ դեկավարող քաղաքները փոխադարձաբար իրար քայլայեցին: Մեծամեծ հետեւանքների համար մէջ աթէնացիները, թէ միւս յոյներն սկսեցին փչանալ յաջողութեան ազդեցութեան տակ: Եւ քաղաքային համայնքի մէջ փակւած պետութիւնը, և մարդակերպ աստածների երկրապատութեան վրայ հիմնած կրօնը քայլայեցին: Այդ ժամանակի մատածողները և արևեստագէաներն սկզբում քննադատաբար էին վերաբերում իրանց արջապատող հասարակութեանը, նշաւակում, ցոյց էին տալիս նրա թերութիւնները, իսկ յետոյ փորձեր էին անում նրան նոր ճանապարհի վրայ դնելու:

Պետական կեանքի առանձնայատկութիւնները շատ միրուն կերպով դուրս է բերել Թուկիդիտէսն իր պելոպոնէսեան պատերազմի պատմութեան մէջ: Նա ա-

թէնական ստրատէգ էր, բայց ստիպւած եղաւ մայրէնի քաղաքից վախչել Բրասիդէսի զէմ արած անյաջող արշաւանքից յետոյ և իր կեանքի մնացած տարիները նւիրեց պատերազմի ընթացքը դիտելուն և նրա նկարագրութեանը: Հակառակ Ներդոնի՝ նա ամենի բանից բարձր է դասում վերականգնիլ խկական, կրթերով եւ դիւրահաւանութիւնով չաղաւադած նօւնարտութիւնը: Նա ջանում է անկողմնակաղ կերպով վերաբերւել բոլոր կուսակցութիւններին և գործիչներին, ցոյց տալ շահերի և առեսակէտների տարբերութիւնները, բացատրել գործերի ընթացքն առանց գերբնական միջամտութեան: Նրա պատմւածքի մէջ բնորոշւում է ոչ միայն բարքերի ընդհանուր անկումը, այլ և երկում է դատապարտութիւն հին կազմի մեծամեծ ախտերի, ինչպէս օրինակ՝ զէպի յաղթւածները և թոյլերը գոյութիւն ունեցող դաժան տմարդութիւնը: Պատմւածքի եղանակը միշտ լուրջ է և տեղ-տեղ տիտուր:

Ուրիշ դիրք ունէր Աթէնքում եւրիպիդէսը, նրանց մէծ նւրիպիդէս ողբերգակներից վերջինը: Նա արդէն զրել էր սկսել մինչև պատերազմը, բայց նրա զիխաւոր գործունէութիւնը կապւած է աթէնական դէմոկրատիայի անկծան հետ պատերազմի ժամանակ: Եւրիպիդէսը Թուկիդիտէսի նման բնաւորութեան տեր մարդ չէր, որ դիմէր միշտ իր նպատակին, չնախարկէ, ելով հմայրներին ու հակասութիւններին: Նրա ոլուրգութիւններում արտայայտում են այն ժամանակի կեանքի բոլոր ատանումները եւ կանկածները եւ վնիր չեն գտնում: Էսթիլէսն ու Սոփոկլէսն ամեն բանից զերէին դասում ամրողջի տպաւորութիւնը, իսկ Եւրիպիդէսն իր մէծ տաղանդը գործ զրեց առանձին բնաւորութիւնների, դիրքերի և զգացմունքների փայլուն նկարագրութեան վրայ: Հէնց դրանով էլ սա նրանցից զանազանուում է: Ոչ ոք սարսափի և խղճաշարութեան այգպիսի զօրեղ տպաւորութիւններ չեն թողել հանգիստականների վրայ: Բայց Եւրիպիդէսը հանգիստականներին չէր տալիս այն զեղասիրական և բարոյական բաւուկանութիւնը, որոնցով վերջանում էին նրա նախորդների 9

դրամաները։ Նա առանձնապէս սիրում էր ներկայացնել իր հերոսների հոգու մէջ եղած զգացմունքների և զրդումների կուրը և երբեմն մէջ էր թերում երկար վիճարանութիւններ զանազան բաղարական կամ բարոյական հարցերի առիթով։ Յաճախ առանց վճար էին մնում հոգու մաշող կուրը, մտքի վլուխ տրաքեցնող հանհելուկները։ Դրա համար էլ եւրիպիդէն սկսեց զիմել արհեստական ելքի՝ որ և է ասածու միշամտութեան, որը հեռացնում էր զժւարութիւնը։ Ընդհանրապէս եւրիպիդէսի ողբերգութիւնները ծայրայեղ կերպով ոգերում, ցնցում էին հանդիսականներին, զրդում նրանց շահերը, յափշտակում էին բանաստեղծական արտայայտութեան արհեստով, բայց թողնում էին նրանց շփոփւած և զարմացած աստածների օրէնքների, բարոյականութեան և ճշմարդութեան վերաբերութեամբ։

Արիստոֆան: Մեր ձեռքն են հասել Պելոպոնէսիան պատերազմի մի ուրիշ ժամանակակցի՝ Արիստոփանի փայլուն կատակերգութիւնները։ Յունական կատակերգութիւնն սկզբում զարգացաւ դորիացիների մէջ, բայց իր ամենալաւ պառզիները կրկին Աթէնքում տեսց։ Այստեղ նա մշակւց, զարձաւ մեր ամենօրեայ կեանքի բարբերն ու տիպարներընկարագրող կենսական կատակերգութիւնից մի բոլորովին տարբեր բան։ Արիստոփանն օգտուում է շրջապատող հասարակութեան ախտերովն ու յիմարութիւններովը, բայց նրանցից ստուգում է երեակայտկան ծաղրանկարներ, կատակի համար, կանգ չառնելով ամենաանշաւանական, հնարովի պատկերների տուած անգամ, օրինակ՝ «Ասպետներ» կատակերգութեան մէջ խօսում է այս մասին, որ պարուն Դէմոսի ստրուկ կլէտնը խորում է միւս ստրուկներից տիրոջ ողորմածութիւնը շողորորթութիւնով և ստորութիւններով։ միւսները համազում են մի կալբաս (երշիկ) շինողի, որը և մրցութեան է մտնում կլէտնի հետ տիրոջ բարեհաճութիւնը գրաւելու համար և կլէտնից աւելի խորամանկ ու շողորորթ է դուրս զալիս։ Վերջ ի վերջոյ կալբաս շինողը տարօրինակ կերպով վերադարձնում է Դէմոսին իր նախկին երիտասարդութիւնը կտրճութիւնը, որոնցով նաև աշխի ընկաւ Մարաթոնի դաշտում, — այսինքն եփում է նրան մի կաթսայի մէջ։ «Եշամեղուներ» կատակերգութեան մէջ ծեր, կիսախելագար հելիաստը¹⁾ ձգտում է, ինչ էլ որ լինի՝ դա-

¹⁾ Հելիաստներ — գատառուներ, որ արևի հետ միասին հատում էին դատի և ցրւում էին նրա մայր մտնելու հետ։

տարանի նծտին գնալ, և նրա որդին, ցանկալով նրան տանը պահել, սարքում է մեղաւոր շան գատը։ Աթէնական դէմոկրատիային, նրա դիւրահաւատութեան, թիթեամտութեան, իր մասին մեծ կարծիք ունենալու վրայ շատ կծու կերպով է յարձակուում Արիստոփանը, թէև ինքը՝ բանաստեղծն աւելի լաւ կարգեր առաջարկելու անկարող է։

Գործերի վատ ընթանալու լուրջ նշանն էր՝ այս՝ ^{Սոփեսաները} պէս կոչւած՝ սովիեսաների, յատկապէս իմաստութիւն սովորեցնող ուսուցիչների երեալը, դրանք փողով յանձն էին առնում սովորեցնել աշխարհի ըմբռնումը և կեանքից օգտելու արհեստը։ Նրանց մէջ կային նշանաւոր մտածողներ, օրինակ՝ Պրոտագորասը, և նրանք փիլիսոփայութեան վրայ մեծ ազգեցութիւն ունեցան, զարձնելով նրան տիեզերքի մասին մտածողութիւններ անելուց դէպի մարդու ուսումնասիրութիւնը։ Սովիեստութեան հիմնական սկզբունքն էր՝ «մարդը բոլոր առարկաների չափն է»։ Նրա ընդհանուր աղդեցութիւնը կորստաբեր էր. սովիեսաներն սկսեցին ուսումնասիրել առանձին մարդիկների, որպէս զի ցոյց տան, որ մարդու համար համոգեցուցիչ են միայն իր սեփական զգացմունքների վկայութիւնները և պարտաւորեցուցիչ է միայն իր սեփական շահը. կը նշանակե՝ նրանից չին ընդունում ոչ մի ընդհանուր նշանաւորին, ոչ էլ մի ընդհանուր բարոյականութիւն։ Ուրիշների հետ ապրելու արհեստը դարձրել էին ուրիշներին խարելու կարողութիւն, ինչպէս օրինակ՝ թոյփն ուժեղ ներկայացնել։ Ալկիրիագէսը, կրիտիոսը դործագրում էին կեանքի մէջ սովիեստութեան դասերը; Նրա գէմ գուրս եկաւ Սովիրատէսը։ Հպատակւութիւնը ներքին «աստածային» ձայնին, նա բոլոր փուցների վրայ և ամեն դասակարգի ու զբաղմունքի տէր մարդիկների հետ ունեցած խօսակցութիւններում սկսեց տարածել մարդուն ուսումնասիրելու մի ուրիշ ձև։ Նա անխնայ կերպով քանդում էր այն ընդ-

հանուր խօսքերը, որ մարդիկ կը կնում են իրեն սովորութիւն, հաշիւ չը տալով իրանց, թէ ինչ են առում: Բայց նա եռանդուն կերպով պնդում էր, որ ննարաւոր է սոյզ եւ ամենի համար պարտադիր գիտորինը, եւ այդ գիտորինից դուքս էր բերում նա բարոյականութեան եւ իմաստորիան օրենքները: Ճիշտ այդպէս էլ Սոկրատէսը միշտ ցոյց էր տալիս, որ մարդու խկական բարիքը կայանում է, ոչ թէ իր պատահական ցանկութիւնների եւ կամապատութիւնների (կապրիզ) իրականացման մէջ, այլ նևմարտութեան համաձայն կեանքի մէջ: Այդպիսի կեանքը մարդուն դարձնում է ազատ, նա դադարում է իր ցանկութիւնների ստրուկը վնելուց, բարձրանում է հմայքներից և երկիւղից բարձր: Եւ Սոկրատէսը գործով ցոյց էր տալիս, որ իր վարդապետութիւնը կառավարում էր իր բոլոր վարմունքը. Նա չէր որոնում ոչ մի շահ, չէր վրդովում աղքատութիւնից և կիսախելազարի, տարօրինակ մարդու հոչակից: Նա իր քարոզութեան համար կեանքը տւեց: Նրան մեղադրեցին՝ իրը թէ նա քանդում է դէպի աստւածները եղած հաւտար: Մեղադրանքը սուտ էր, որովհետեւ Սոկրատէսը յարգում էր իր հայրենիքի աստւածներին: Բայց նա չը մտածեց անգամ ներողութիւն խնդրել հելլասաններից բոլոր հարցերի վերաբերութեամբ արած իր համարձակ հետազօտութեան համար. ընդհակառակը՝ նա նոյն խոկ նուէր (վարձ) պահանջեց նրա համար, որ զարթեցնում է քաղաքացիների մէջ միտքը և թոյլ չէ տալիս նրանց ընկնելու ծոյլ ինքնարաւականութեան դիրկը: Աթէնական երգւեալ դատաւորները վիրաւուել էին այդ տեսակ պաշտպանութեան տարօրինակ անարդանքներից և «մեծ արդարին» գատապարտեցին մահան (399): Պլատոնի կազմած «ապոլոպիան» (պաշտպանողական ճառը)

վկայում է Սոկրատէսի այն աղատ և ջինջ ողին, որի համար գոյութիւն չունեն երկիւղի կամ անձնասիրութեան մանր զրդումները, որն ամբողջովին նւիրւած է ճշմարտութեան և ընդհանուրի օգտին: Սոկրատէսի գործը շարունակեցին նութեան ամենամեծ փիլիսոփաները—Պլատոնը և Սոկրատէլը:

Պլատոն

Սոկրատէսն իր հայեացքներն արտայայտում էր խօսակցութիւններով և ոչ մի փորձ չարեց գրելու կամ հրատարակելու նրանց: Նրանցից փիլիսոփայական տեսութիւններ զուրս բերեց Պլատոնը: Իր ուսուցչի յիշատակի համար նա իր շարադրութիւնները կազմեց զեղարւեստական երկարութիւնների ձևով և իրը գլխաւոր խօսակից ամեն տեղ զուրս բերեց Սոկրատէսին: Հակառակ սովեստների, որոնք պատահական և մշտապէս փոփոխական էին համարում մարդկանց հայեացքները, իսկ ճշմարտութիւնն անըմբռնելի, Պլատոնը մարդկային մժի, երա օրենքների եւ երա գաղափարների մէջ տեսնում էր տիեզերի նմուներ կազմող յափտենական նևմարտութեան արտացոլումը: Նրա վարդապետութիւնը գարձաւ ծայրայեղ իզէալիզմ.¹⁾ Իրականութիւնը նրա մէջ բռնում է երկրորդական տեղ, առաջնութիւնը թողնելով գաղափարին: Պլատոնը քննեց փիլիսոփայութեան բոլոր հարցերը և, ի միջի այլոց, շօշափեց մարդկանց յարաբերութիւնների կազմութեան հարցը: Պետական կեանքի բոլոր հասրաւոր կարգերից ամենաանմիտը և վնասակարը թւում էր նրան գէմոկրատիական կազմը, որը նա համարում էր ագէտ և կամակոր ամբոխի տիրապետութիւն: Իրան յատուկ համարձակութիւնով նա մտածեց մի ուրիշ պետութիւն, որի մէջ պէտք է կառավարող լինէին փիլիսոփաները, զինւորականների ժառանգական կաստան²⁾ պէտք է պաշտպանէր կարգը ներքին և արտաքին թշնամիների դէմ, իսկ բոլոր միացած ազգաբնակութիւնը պէտք է իրան նւիրէր արդիւնարերական պարապմունքների՝ իրան և միւս երկու բարձր

¹⁾ Իզէալիզմ—զաղափարը բանից: Դա մի վարդապետութիւն է, որ ամեն ինչ առաջացած է համարում գերազոյն գաղափարից:

Ծ. թ.

²⁾ Դատուակարգ, որ իր անդամների թւի մէջ թոյլ չէ տալիս ուրիշ ծագումի մարդիկ մտնելու:

դասակարգերին կերակրելու համար: Փիլիսոփաների և զինուորականների մէջ ոչնչացւում է ընտանիքը և սեփականութիւնը—բոլորն ապրում են պետութեան համար և պետութեան մշտական ազդեցութեան տակ:

Արեսոտէլ Պլատոնի աշակերտը, բայց ոչ նրա հետեւով եղաւ հնութեան միւս մեծ փիլիսոփան՝ Արիստոտէլը: Համաձայն լինելով սոկրատական դպրոցի հայեացքների հետ գիտութեան նշանակութեան վերաբերութեամբ, նու այդ նաևկանում եր ոչ իբրև բանասէղծական ներենչումն, այլ իբր իրականութեան սոյզ ուսումնասիրաբեան եւ նետագօտուրեան արդիւնք, նա դարձաւ զիտական րեալիզմի¹⁾ նիմնադիրը, ինչպէս Պլատոնն իդէալիզմինը: Անդադրում կերպով նա աշխատում էր գիտութեան բոլոր ճիւղերի վերաբերութեամբ տեղեկութիւններ հաւաքելով—մարդկային հողու և բարոյականութեան ուսումնասիրութեան մասին, բնագիտութեան (Փիզիքա), օգերեսոյթաբանութեան, կենդանաբանութեան մասին և այլն: Փաստերը հաւաքում էր նա ոչ թէ դատարկ հետաքրքրութեան և յիշողութիւնը ծանրարեանելու համար, այլ նրա համար, որ նրանց ընդհանրացնէ և նրանց վրայ հիմնէ իր փիլիսոփայական սիստեմը (համակարգութիւնը): Պլատոնի նման նա էլ ուսումնասիրեց պետութիւնը: Նա ինամբով նկարագրեց 158 յունական համայնքների և բարբարոս ժողովրդների կազմը Նրա «քաղաքականութիւնը» («պօլիտիքա») հետու է Պլատոնի «հասարակաբետութեան» չափազանցութիւններից ու երեակայութիւններից: Արիստոտէլ զգոյց կերպով վերաբառագրում է պետական ձեւերի դաստիրութիւնը, այսինքն՝ պետական կազմութեան հնարաւոր տեսակները, ցոյց է տալիս, որ Յ հիմնական տեսակներից իրաբանչիւրը—սիստետութիւնը, օլիգարխիան, գէ-

¹⁾ Բէալիզմ—մի փիլիսոփայութիւն, որ ընդունում է իրական աշխարհի գոյութիւնն այնպէս, ինչպէս կայ և զագափարները գուրս է բերում իրական կեանքի աստիճանաբար ուսումնասիրութիւնից: Սա պնդում է, որ զաղափարները գուրս են զալիս իրական աշխարհի ուսումնասիրութիւնից և ընդհանրացութիւններից, իսկ իդէալիզմը պնդում է, որ իդէան արտացոլում, իրականանում և զառնում է երեացող իրականութիւնը:

ժոկրատիան—կարող է որոշ պայմաններում լինել ամենալաւ կարգը, և թէ ինչպէս, միւս կողմից, նրան ցից ամեն մէկը կարող է այլասեռուել և զառնութ չարագործութիւնների աղբիւրութիւնականութեան պատուքան վրայ եւ յարմատի մարդկային հասարակութիւնների պայմաններին եւ պահանջներին: Այսպիսով Արիստոտէլն արդէն դուրս է զարդիս իւր գիտողութիւնների մէջ քաղաքային հասարակապետութեան նեղ շրջանակից: Բայց նա հաւատարիմ է մնում չին հասկացողութեանը՝ հասարակական կեանքի կազմութեան մի այլ կարեսը հարցի առիթով: Նա զետ լիովին համոզւած է, որ սարկութիւնն անհրաժեշտ է, որովհետեւ՝ նրա կարծիքով՝ միայն սարկական աշխատանքը կարող է փոքրամասնութեանը տալ ազատ ժամանակ և միջոց, որոնք անհրաժեշտ են հոգեպէս և քաղաքականապէս կատարելազործւելու համար:

Իբր հետեանք մակեդոնական հնաձումների՝ յունական կուլտուրան տարածւում է իր սահմաններից գուրս, ինչպէս գետը, որ գուրս է զալիս իր ավելիքից և հեղեղում է շըջակայ դաշտերը: Նա թափանցում է Բալկանեան թերակղզու հիւսիսային մասը, արևմտեան Ասիան, Եղիպատուը: Այդ կուլտուրան իսկական հելլենական կրթութիւնից ջոկելու համար՝ կոչել են հելլենիստական: Շատ ծաւալւելով՝ յունական կուլտուրան շատ բանով փոփոխւում է և կորցնում է ինքնամփոփումը, ինքնուրոյնութիւնը և չափի զգացմունքը: Այդ փոփոխութիւնը խիստ կերպով արտափայլում է պլաստիքական (նիւթական) գեղարվեստների վրայ: Պրակսիտելէսը, որ ապրում էր IV դարի առաջին կիսում, զետ ևս կարող էր մրցել նոյն խոկ Ֆիդիասի հետ: Նա ջանում է պլիստորապէս պատկերացնել ֆիգիքական գեղեցկութիւնը: Նա վերջնականապէս մշակեց Աֆրոդիտէի տիպարն այդ աստուածունու կնիդիական արձանով: Նրան է պատկանում նոյնպէս և հրաշալի Հերմէսը, որ գտնւել է Ալիմափայում: Բայց նրա ստեղծագործութիւններում

զգայական կողմն արդէն սկսել է զերակըռել զաղափարականից, իսկ յետազայ արձանագործները (մանաւանդ Պերգամի գպրոցը) ձգտում են պատկերացնել ծիգ, շարժում, կրքոտ վրդովմունք։ Օրինակ՝ Լաօկօնի խումբը տպաւորութիւն է թողնում հոգեկան և ֆիզիքական տանջանքների նրբութիւնների բազմազանութիւնով։ Կամաց-կամաց մեծացնում են չափերը, որպէս զի ներգործեն հոկայականութիւնով (Թողոսի հոկան)։

Հելինիզմի դարաշրջանում զիտութիւնն այնպիսի տուաջաղիմութիւններ արեց, որոնց մասին մտածել անգամ չէին կարող աթէնական և դարի փիլիսոփաները։ Եւլիզէսը հիմք գրեց երկրաշափութեան։ Հիւպարքոսն առաջ քշեց աստղաբաշխութիւնը, Սիկիլիացի Արքիմեդէոր—մեքենայագիտութիւնը, Երատոսթենէսն՝ աշխարհագրութիւնը, Արխտարքոսը՝ լեզւաբանական քննադատութիւնը (Հոմերոսի դիւցազներգութիւնների բնազրի քննադատութիւնը)։ Զը նայելով այդ բոլորին՝ զգացւում էր ամբողջացման և կեանքի պակասութիւն։ մասնագէտները խորասուզում էին իրանց առանձին բաժիններում, իսկ նրանց ձեռք բերած զիտութիւնները չէին միանում, մի կենդանի տմբողջութիւն կազմում։ Մի խօսքով՝ կորել էին միութիւնն ու հաւասարակշուութիւնը, որոնցով աչքի էր ընկնում ծաղկման դարաշրջանի բազաբացու կեանքը։

Բայց էլի արդիւնքները շատ մեծ էին և ընդմիշտ հետքեր թողին։ Անդւեց արեւելի հելլինիստական նոր աւշաւանը, որի մէջ իրար հանդիպեցին և միախառնեցին մինչեւ այդ ժամանակ բաժան-բաժան ժողովրդական հոսանքները։ Ոչ մի բանում այդ ինքնուրոյն կուլտուրաների միախառնումն այնքան ուժեղ կերպով չերեաց, որքան կրօնի մէջ Յոյներն արգէն իրենց երկրում սկսել էին բարձրա-

նալ բազմաստուածութեան հայեացքներից։ Նըսէց լաւագոյն անձերն զգում և արտայատում էին, որ չէ կարելի աստուածութիւնը պատկերացնել մահկանացու և մեղանչական մարդու պատկերով և նմանութիւնով, որ երկոյթների բազմազանութեան միջից գուրս ցույցող աշխարհի միութիւնը ենթադրում է նրան կառավարող Ստեղծողի միութիւնը, որ մարդկային հոգու կեանքը նիւթական չէ, չէ միացած մարմնի հետ անբաժան կերպով և բոլորսկին տարբեր պայմանների մէջ հանգերձեալ կեանքը հնարաւոր է։ Պարսկական գուալիզմը (Երկուութիւն) արեի սեմիտական պաշտաման և հանդերձեալ աշխարհի եզիալտական հասկացողութեան հանգիպումն արտադրեց կամայական և այլանդակ միաւորումներ տարացեղ աստուածների։ Բայց զրանից յետոյ աւելի և աւելի ուժեղ կերպով սկսեց տարածւել այն համոզումը, որ առանձին անունների և նշանների տակ մարդկութիւնը պահում է միշտ միհեւոյն Աստուածութիւնը, որի ոյժն արտայայտում է բնութեան բոլոր եւեւոյթներում։ Այդ հողի վրայ արեւելեան աշխարհն արդէն կարող էր պատրաստուել քրիստոնէութիւնն ընդունելու։

Ե Ր Ը Ո Ւ Դ Մ Ա Ս

Հ ո ն մ

Գ և ո ւ ն ա ս .

Ի Տ Ա Լ Ի Ա Յ Ի Ա Ն Ա Վ Ա Գ Ր Ա Կ Ա Ն Ն Կ Ա Ր Ա Գ Ր Ո Ւ Խ Թ Ի Ւ Ն Բ

Երեսը Ապէնինեան թերակղղին, որի վրայ է գտնւում իտալիան, հիւսիսից սահմանափակեւում է բալկաններից աւելի դժւարանցանելի Ալպեան ողբայով։ Միայն հիւսիս-արևելքում և հիւսիս-արևմուտքում կարծես լիների մէջ բացւում են զաներ, որոնցով կարող են եկորները ներս թափանցել։ Ծովափերը յունական ափերի նման շատ չեն բաժանւած ու կտրտած ծոցերով։ Ամենայարմար ծոցեր նա կազմում է հարաւարեւուաքում։ իսկ արևելեան կողմը եղբափակեւում է ծանծաղուաներով և ձահճոտ տափարակներով։ Մակերեսի կազմութիւնը նոյնպէս աւելի նւազ բարեյածող է արևելքում, որովհետեւ Ապէնինեան շղթան, որ բաժանում է թերակղղին երկու մասի, աւելի է մօտենում արևելեան ափին և չէ թոյլ տալիս մեծեմծ գետեր և գաշտափայրեր կազմելու։ Ինչպէս Յունաստանում արևելքն էր պատմորեան զիստոր քեմք, այնպէս էլ իտալիայում՝ արևեմուտք։

Երկիրը բաժանուում է երեք զիստոր մասերի.

1) Վերին իտալիա՝ Ալպերից մինչև ցամաքի և թերակղղու միտուրելու տեղը (արևելքում սահ-

մանը կազմում է Ազրիատիական ծովը թափւող Ռուբրիկոն գետակը): Երկիրը մի հարթ շերտով ձրդւում է արևելքից արևմուտքը։ Նրա զիստոր մասը կազմում է Պօ գետի հովիտը։ Նրա հետ միաւորւում է Լիգուրիական ծովափն արևմուտքում, վենետիկեանն արևելքում։

2) Միջին իտալիան՝ Ապէնինեան շղթայով բաժանուում է երկու մասի. արևմուտքում բացւում են Արոն (Էտրուրիան կամ Տոսկանիան), Տիբեր (Լացիոն) և Վոլտուրն (Կամպանիա). գետերի հովիտները։ Արևելքում տարածւում են Ումբրիա, Պեցենիում և Սամնիում լեռնային գտւառները։

3) Հարաւային իտալիան՝ Բաժանուում է երկու թերակղիների. արևմտեանի վրայ ընկած են Լուկանիան և Բրուտափումբ, արևելեանի վրայ Ապուլիան և Կալարրիան։

Երկրի մակերեսոյթի կազմութիւնն իր լեռնաշղթաների առատութիւնովը յիշեցնում է Յունաստանը, բայց և այնպէս էլլադայի չափ դատապարտւած չէ բաժան-բաժան մնալու։ Բաւական մեծ զետերն ու հովիտները հնարառութիւն են տալիս արևեմուտքում ժողովրդներին շուտով միաւուրելու եւ կազմելու ընդդանի դաշնակցութիւններ եւ պետքիւններ։

Բարեյտջող ոռոգմանը համապատասխանում է լաւ կլիմայ և պաղաքեր հող։ Այս բոլոր հանգամանքներն իտալական ազգաբնակութեան մեծամասնութիւնը դարձրել էին դէպի Երկրագործութիւն, թէ և լեռնային տեղերում յամառութիւնով պահպանուում էր խաւարածութիւնը։ Ծովագնացութեան զարգացման համար յարժար պայմաններ ներկայացնում էր միայն հարաւային Իտալիան իր մօտ գտնւած Սիկիլիայով։

Թերակղղու սկզբնական ազգաբնակութիւնը պատկանում էր Լիգուրիական կարծահասակ, սկահեր ցե-

զին (Սպիտակ ցեղից): Նա ամենից լաւ պահպանուել է թերակղու հիւսիս արևմուտքում, այժմեան Սափոյայում և Պիէմօնտում, և աչքի էր ընկնում իր կայունութիւնով, աշխատասիրութիւնով, բայց ոչ ընդունակութիւններով: Յետոյ երևացին արխական գաղթականներ, յոյներին մօտ ազգակից: Նրանք բաժանեցին մի քամի ճիւղերի: Եսավիզները բռնեցին թերակղու հարաւային մասը և անցան Սիկիլիա. իտալական ցեղերից ամենաանինքնուրոյնը նրանք եղան և արագ կերպով ենթարկւեցին յոյներին: Սաբելական ումբրիացի, մարս, սաբինացի, սամնիացի ցեղերը բռնեցին թերակղու արեւելեան կէսի լեռնային տեղերը: Նրանց մէջ խիստ աչքի էին ընկնում լիոնականների բնաւորութեան գծերը՝ հայրենի երկրի սէրը, հնութեան հետ կապւած լինելը, որ համանում էր մինչև յետամնացութեան, բարքերի նահապետականութիւնը և խստութիւնը: Այսմտեան կիսում տեղաւորւցին լատինացիները, որ իտալական ցեղերից ամենադունակները և ամենաշուտ տալաւորողները դուրս եկան: Նրանց զիխաւոր քաղաքն էր Հռոմը՝ Տիբեր գետի վրայ:

Բացի այս ժողովրդներից, որոնք կազմում էին ազգարնակութեան մեծամասնութիւնը, այժմեան Տոսկանիայում հաստատեց առեղծւածային ժողովուրդ՝ Լեռուկիները, որ բոլորովին նման չէին ամեն կողմից երանց շրջապատող արիներին: Կարելի է կարծել, որ էտրուրացիներն սկզբնական լիգուրական ցեղի մնացորդ էին, որ հասել էին բարձրագոյն կուլտուրայի: Իւչպէս էլ որ եղած լինի, իտալական պատմութեան սկզբում նրանք հանդիսանում են թերակղու ամենից լուսաւոր ցեղը: Նրանք հասել էին ճարտարապետութեան և մետաղների մշակութեան բաւական խոշոր կատարելագործութեան: Եղիպատացիներին մասն նրանք մեծ ուշ էին

դարձնում մարզու վիճակի վրայ մահից յետոյ և զրահամար էլ առանձին խնամք էին տանում թաղման ծէսերի և արժանավայել գերեզման շինելու վրայ: Նրանց պաշտամունքն աչքի էր ընկնում իր մուայլ և դաման ընաւորութիւնով: Նրա մէջ նշանաւոր գեր էին կատարում մարդկային զոհերը:

Արգէն ասւած է այն հելլենական գաղթականութիւնների մասին, որոնք հարաւային իտալիայում արժանացան Միջ-Յունատան անւան: Բացի դրանից IV դարում Քր. առաջ հիւսիսային իտալիայում հաստատեցին կելտական աշխարհականները, որոնք բրոնզեցին Պօ գետի հովիտը:

Գ. 1. Ա Խ Խ Բ.

ԱՄԵՆԱՀԻՆ ՋՐՁԱՆԻ ՀՌՈՄԵԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՆ

Մենք շատ քիչ բան գիտենք իտալական ժողովրդների ամենահին կեանքի մասին, բացի հոռմայեցիներից—լատինական ժողովրդների զիխաւորից: Դրա համար ստիպւած ենք ակամայ սահմանափակել մեր ընորոշումը միայն հոռմայեցիներով, որոնց, ինչպէս երևում է, շատ նման պէտք է լինէին լատինական և սարելական ցեղի միւս ժողովրդները:

Հոռմեական կրօնը ներկայացնում է աստուածութիւններ, նման յունական աստուածութիւններին: Զեսին համապատասխանում է Իւպիտէրը, Զերային՝ իւնոնան, Պոսէյդոնին՝ Նեպուլոնը, Զադէսին՝ Պլուտոնը, Աթէնաս-Պալլասին՝ Միներվան, Զերմէսին՝ Մերկուրիուրը, Դէմետրային՝ Ցերերան, Արէսին՝ Մարսը, Աֆրոդիտէին՝ Վեներան: Միայն Ապոլոնը և Դիոնիսն իտալացիների մէջ աւելի ուշ երևան եկան, ուզգակի յայների ազգեցութեան տակ: Բայց շատ ինքնատիպ

էր սրանց յարաբերութիւնը գէպի աստուածները և համապատասխանում էր այն խոր տարրերութեանը, որը շատ շուտ առաջ եկաւ յոյների և հոռմայեցիների մէջ։ Ինչպէս նկարիչներ՝ յոյները երեւակայում էին աստուածներին իրեւ կենդանի լակներ, բոլոր որոշութիւնով եւ պարզութիւնով, նույնացիները մտածում էին աստուածների մասին։ Ամեն մի առարկայ և ամեն մի դործողութիւն նրանց մտքի մէջ միաւորւում էր որ և է աստուծու դործունէութեան հետ։ Օրինակ՝ յոյները յատկացնում էին փողոցների իրար կտրած տեղերը Հերմէսին, որև ուրիշ ժամ յատկութիւններ են ունեցիւ, իսկ հոռմայեցիներն ստեղծեցին սահմանների առանձին աստուած (Տերմինուս)։ Հերկն ու վարը, պարարտացումը, կտորներ գործելը դրւած էին առանձին աստուածների հովանաւորութեան տակ։ Որ և է դործի սկիզբը, մէջը և վերջը նւիրւում էին առանձին աստուածութիւնների։ Այն ինչ յոյների մէջ արեի աստուածը դարձաւ գուշակ և բանաստեղծ Ապոլլոնը, Հոռմում Եանուսը եղաւ սկզբնաւորութեան, գիւտի նշանակ (սէմբօլ)։ Այդպիսի վերացական աստուածները չէին կարող առաջացնել պատմութիւնները իրանց արկածների և յարաբերութիւնների մասին։ Հոռմայեցիներն սկզբներում մինչև անդամ չէին երևակայում նրանց իրար հետ աղջակցական ընտանեկան կապերով միացած։ Յետոյ՝ յոյների ազգեցութեան տակ՝ հոռմէսկան դիցաբանութիւնը մի քիչ աւելի կենդանի կերպարանք ստացաւ, և աստուածները դաստորւեցին ովհմպականների ձեռվ։ Հոռմայեցու նոյն իսկ աղօթքն ու երկրպագութիւնն ունէին մի առանձին ձեւ։ Առ կապւած էր աստուածների ներ որու պայմաններով և ամենայն մանրազներութիւնով կասում էր ծէսները, զնիւրքը,

ձեւերը, որպէսզի գրանով պարտաւորեցնէր աստուածներին իրան խնամակալութիւն անել։ Դործագրութեան մանրամասնութիւններին հետևում էին այն քաղաքացիները, որոնք քրմական (pontifices) պաշտօն էին ստանձնել։ Դէպէր եկած ժամանակը կարելի էր խարել աստուածներին, օգտւելով որ և է խոստումի ըերանացի մեկնութիւնով, սովորութեան զուտ ձեական կատարումով։ օրինակ՝ եթէ պահանջւում էր Տիբրը նետել մի քանի զլուխներ, որպէսզի հեղեղ տեղի չունենայ՝ կարիք չը կար անպատճառ մարդիկ նետել՝ խաշխաշի զլուխները համապատասխանում էին նոյն կոչմանը։ Մոտավապաշտ հռոմայեցիներն առանձին ուշադրութիւն էին դարձնում նախագուշակ նշաններին։ Երկնայինն երեսյներով զուշակութիւններ անելը (խաւարում, աստղերի ընկնելը, զիսաւոր աստղերը և այլն) Յունաստանում էլ մեծ յարդ ուներ, ինչպէս և կենդանիների վարժունքները զիտելը (մանաւանդ աստուածներին նւիրւած հաւերինը՝ կերակրելու ժամանակ). մեծ նշանակութիւն ունէր նոյնպէս թռչունների թռիչքը), բայց Հոռմում այդ նախագուշակ նշանների մեկնութիւնը դարձել էին մի ամեռող զիտութիւն, որով դրազւում էին զուակները (աւգուրէս)։ Չէր կարելի սկսել ոչ մի պետական գործ, առանց աստուածների կամքի մասին հանդիսաւոր կերպով տեղեկութիւններ առնելու—առւսպիցիա (auspicio)։ Էտրուսկների աղջեցութեան տակ դարգացաւ այդ զուշակութիւնների մի առանձին ձեր—զոհւելու կենդանիների փորստիքներով (հարուսպիցիա—haruspicia)։

Հոռմում ևս, ինչպէս Յունաստանում, պետու գետութիւնը սկզբներում ներկայացնում էր տոհմերի մի զաշնակցութիւն։

Եթէ չին Աթենքում ժողովուրդը բաժանւում էր 4 ֆի-

լաների, իւրաքանչիւր ֆիլան՝ Յքքատրիաների, իսկ իւրաքանչիւր ֆրատրիան՝ Յոհոմում էլ մենք տեսնում ենք դրա նման մի բաժանում. Յ արիբներ, որոնցից ամեն մէկը բաժանում է 10 կուրիաների (ծուխ), իսկ կուրիան 10 տոհմի. Ասել է Աթէնքում հաշում էին 360 տոհմ, իսկ Հոսմում՝ 300:

Բայց այս ժողովրդների մէջ կային իսոր տարրերութիւններ ևս: Բոլոր կենսական յարաբերութիւնները Հոսմում ստանում են խիստ որոշ ձևեր: Եթէ մի անդամ հաստատում է մի որոշ կանոն, ձգտում են Նրանից դուրս բերել բոլոր հետևանքները, եթէ նոյն խոկ նրանք լինեն ծայրայեղ և անյարմար: Այս նշմարում է արդէն հումկական ընտանիքի կարգերի մէջ. ընտանիքի հայր (pater familias) ուներ անսահման իշխանութիւն իր որդիների կեանիքի և զոյթի վրայ. կարող էր ծախել և սպանել նրանց: Նրա իշխանութիւնը վերջանում էր միայն նրա մահով, այն ինչ յոյների մէջ որդին շատ աւելի պակաս հպատակութեան մէջ էր և չափահաս դառնալով՝ դուրս էր գալիս հօր իշխանութիւնից: Այս ընտանեկան կարգերին համապատասխան ձևով կազմւեց և պետութիւնը: Այն ինչ յունական թագաւորը հաւասարների մէջ միայն տուածինն էր, հոոմէական բազուորն ուներ շատ մեծ իշխանութիւն: Նա pater familias էր իր ժողովի և ոչ ոչ իրաւունք չուներ սահմանափակելու նրա կամքը. Նա ժողովրդի գումար էր կանգնած իրը քուրմ, զինուրական առաջնորդ և դատաւոր: Սակայն դա չէր նշանակում, որ բացի թագաւորից՝ պետութեան մէջ չըկային ուրիշ ինքնուրոյն հաստատութիւններ. «Հայրերը»— այսինքն տոհմերի աւագները՝ կագմում էին ծերակոյքը (սենատ) 300 անդամներից, որոնց հետ թագաւորը խորհրդակցում էր գործերի մասին:

Գործսական կեանքում թագաւորի համար գժւար էր ծերակոյտի կամքին հակառակ զնալ. սովորաբար նրանք զոր-

ծում էին համերաշխարար: Թագաւորի մահից յիսոյ իշխանութիւնն անցնում էր ծերակոյտին, որն ընտրում էր իր անդամներից մէկին փոխանորդ (interrex), իսկ սա նշանակում էր նոր թագաւոր (rex):

Ամենակարևոր գործերում երբեմն դիմում էին քաղաքացիների ժողովին, որոնք ձայն էին տալիս ծուխերով (comitia curiata):

Պետութեան բնակիչները բաժանում էին երկու մասի՝ պատրիկիներ (տես Եւպատրիզներ) և պլեբէյներ (տես դէմոս): Առաջինների թւի մէջ մտան հոսմէական սկզբնական համայնքի քաղաքացիները. միւսները կազմւեցին զիխաւորապէս եկտորներից, որոնց Հոսմէր քաշում նրա կանուխ ծաղկած բարօրութիւնը, նոյնպէս և պատրիկների համայնքից նւաճւած զրացի նահանգների հողագործներից և զիւղացիներից: Պլեբէյները պետութեան մէջ բոլորովին երկրողական դիրք էին բռնում. Նըանք պէտք է որոնէին պատրիկ տոհմերի խնամակալութիւնը, կախումն ունէին նրանցից աստուածպաշտական և դատական գործերում, կրում էին ծանր և աւելի քիչ յարգւած զինւորական ծառայութիւնը, ոչ մի մասնակցութիւն չունէին ծխերի հասարակական ժողովների մէջ: Պլեբէյների տնտեսական գրութիւնը և անձեռնատու էր: Առանձին տնտեսութիւններ ստանում էին չափազանց մանր կտոր հողեր մշակելու՝ ընդամենը 2 իւգեր (իւգերը = 1/4 գեսիատինի) մարդ զլուխ: Հաց մշակելու և խաշնարածութեան համար, բացի զրանից, պէտք էր օգտել տոհմերի և պետութեան ընդհանուր տիրապետութեան տակ գտնուած հողերից: Իսկ այդ հողերը մշակելու կամ նրանց վրայ արածացնելու թոյլուութիւնն ամբողջովին կախւած էր պատրիկ տոհմերից:

Թէև մենք կարող ենք բաւական ճշշտ զաղափար Աւանդութիւնները կազմել իտալիայի հնագոյն շրջանի կուլտուրայի և

սպառութեան մասին, սակայն այդ ժամանակի գէպքերի մասին տեղեկութիւններ հասել են մեզ միայն սակաւթի աւանդութիւններով. սրանք նոյն խկ խիստ կերպով աղաւաղել են հոռմէական և յունական գրողներից, որոնք հաւաքել և հաղորդել են այդ ամենը: Յոյների տեղափոխութիւնների ժամանակ կազմած բանասելծական պատմածները նման ոչ մի բան չունեին հոռմայեցիները: Նրանց պատմւածքները չոր են և սովորաբար նրանց նպատակն է լինում պարզել կեանքի այս կամ այն գծի ծագումը: Նրանք կարծում էին, որ ձշութեամբ դիտեն, թէ լուչպէս և երբ է առաջացել իրանց քաղաքը:

Ցունական ազգեցութեան աակ առաջացած աւանդութիւնը համարում է այդ ժողովուրդը սերած տրոյացի ենէասից, որը փախել էր Տրոյայի կործանումից յետոյ և գուրս էր եկել Լացիումի տվիր: Նրա որդին հիմնեց Ալբա-Լօնդան: Ալբայի թագաւորներից մէկի աղջկանից և Մարս աստծուց ծնւեցին երկու որդիները—Հոռմուլոս և Հորիմոս, որոնք իրանց մօրեղոր հրամանով դուս նետեցին: Նրանց մնունդ տւեց մի էգ գայլ, դաստիարակեցին հովիւները, և նրանք մեծանալով՝ իրանց հասցրած անարդանքի վրէմն առան: Յետոյ նրանք նեռացան Ալբայից և 753 թւին Ք. առաջ հիմնեցին մի նոր քաղաք—Հոռմը: Հոռմուլոսն ապանեց եղօրը և գարձաւ Հոռմի առաջին թագաւորը:

Հոռմուլոսի Պալատինեան բլրի վրայ ունեցած սկզբնական լատինական ազգաբնակութեան հետ շուտապ միացաւ երկրորդ՝ սարինական ազգաբնակութիւնը Ք. վիրինայի վրայ: Հոռմուլոսի յաջորդը եղաւ սարբինացի Նումա-Պոմպիլիոսը, աստւածավախ և իմաստուն կառավարիչը, որից իրը թէ՝ հոռմայեցիներն առացան իրանց կրօնական սովորութիւնները և քըրմական ընկերութիւնները:

Հետեւալ թագաւորներին (Տուլլոս Հոստիլիոս, Անկոս Մարցիոս, Տարկուինիոս երեց). վերագրում են Ալբա-Լօնդայի կործանումը, Լացիումի մէջ նոր հողեր գրաւելու սկզբնաւորութիւնը, հոռմէական առաջին գաղութների (collatia) կազմելը, Ոստիայի՝ Տիբրիս գետի բերանում եղած նաւահանգստի հիմնարկութիւնը, քաղաքի առաջին խոշոր շինութիւնները—Թօրումը, Կապիտոլինան իւլյետերի տաճարը, Տիբրիսի կամուրջը, ծիարշաւների կըկէսը (ցիրկուս), աղտեղութիւնների կոյուղները:

Գ. 1. Օ Խ Խ Գ.

ՊԱՏՐԻԿՆԵՐԻ ԿՐԻՒԾ ՊԼԵԲԻՑԻՆԵՐԻ ՀԵՏ

Հոռմի պատմութեան առաջին հաստատուն դէպքն Տուլլոս Սերվիոս է այն բարենորոգութիւնը, որն՝ աւագութեանը նա- բնորոգու-
թիւնը յելով՝ կատարել է վեցերորդ թագաւոր Սերվիոս Տուլլոսը: Այդ բարենորոգիւնն անհրաժեշտ էր դարձել լիազօր իրաւունքների տէր պատրիկների և իրաւագուրկ պլեբէյների մէջ եղած թշնամական յարաբերութիւնների պատճառով: Նա համապատասխանում է Սոլոնի գեմոկրատիական կազմին: Բոլոր ժողովուրդը, պատրիկները և պլեբէյները, բաժանեց 5 դասակարգի: Այդ դասակարգերի կազմութեան նպատակն էր զինուրական ծառայութիւնը բաշխել այնպէս, որ հարուսների համար աւելի բերեւ: Առաջին դասակարգի¹⁾ մարդիկ գուրս էին զալիս պատերազմի լիապէս

1) Յետագայում դասակարգերի կարողութիւնն այսպէս էին հաշտում:

I դասակարգ	... 100,000 աս և աւելի.	100,000
II »	... 75,000 »	
III »	... 50,000 »	
IV »	... 25,000 »	
V »	... 11,000 »	

Հասարակապետութեան սկզբում ասը հաւասար էր մօտաւորպէս 15 կոպէկի:

զինւորւած, սաղաւարտով, վահանով, զանգապաններով, կրծկալով, նիզակով և սրով. Նրանցից էր առնւում և հեծելազօրը: Միւս դասակարգերին թոյլատրւած էր զէնքերն աստիճանաբար թեթևացնել: Ամենաաղքատ քաղաքացիները բոլորովին չէին հաշւում դասակարգերի մէջ և աղատ էին զինւորական ծառայութիւնից: Դասակարգերի բաժանումը ծառայում էր և հարկեր նշանակելուն: Ամեն 5 տարին մի անգամ ցենզ էր կատարւում, այսինքն՝ զիահաւում էին կարողութիւնները և հաւում բաղաքացիներին այս կամ այն դասակարգի մէջ:

Ինչպէս Սոլոնի օրէնքներում, այստեղ էլ նոյնպէս՝ աւելի ծանր պարտականութիւններին համապատասխանում էին աւելի մեծ իրաւունքներ, բայց խնդիրը պաշտօններ ստանալու մէջ չէր, այլ հասարակական ժողովին մասնակցելու իրաւունքի մէջ:

Պատրիկների ծխական ժողովների (comitia curiata) հետ միասին հիմնարկւեց հարիւրեակների մի ընդհանուր հասարակական ժողով (comitia centuriata), Թագաւորը և ծերակոյտը (senat) նրան հարցեր էին տալիս և նա պատասխանում էր «այս» կամ «ոչ», այսինքն՝ առաջարկւած որոշումները կամ ընդունում էր կամ մերժում. ժողովի վիճունները ուղարկուած էին նարիւրեակների և առաջարկուած էին նարիւրեակների մէջ. երբ պարզում էր, թէ հարիւրեակի անդամների մեծամասնութեան բնչ վճռի կողմն է, նրա ձայնը տրւում էր ժողովում մեծամասնութեան համապատասխան:

Ամենից շատ հարիւրեակներ ստացաւ. առաջին դասակարգը: Նա ունէր 98 հարիւրեակ, որոնցից 18-ը կազմւած էին ասպետներից: Երկրորդ, երրորդ և չորրորդ դասակարգերը հաշւում էին 20-ական հարիւրեակներ, հինգերորդը՝ 30: Չուներները կազմում էին մի հարիւրեակ, արհեստաւորները՝ 4, այնպէս որ բալոր հարիւրեակների թիւն էր 193: Այդպիսի պարա-

զայում առաջին դասակարգն ունէր մի ահազին առաւելութիւն միւս բոլորից. Նրա տրամադրութեան տակ կար 98 ձայն: Զայները հաշւելն սկսում էին նրանից, և նրա կողմն էր ապահովապէս ձայների բազմութիւնը, եթէ նա համերաշխ էր լինում¹⁾:

Այսպիսով թէև պետութեան մէջ զերակշռութիւնը թողնուած էր պատրիկներին, բայց և այնպէս Սերվիոս-Տուլլիոսի բարենորոգութիւնը մեծ յեղաշբճում էր. առաջին՝ բաղաբական ազգեցութիւնը նա կապում էր ոչ թէ պատրիկ տոհմից ծագած լինելու հետ, այլ կարողութեան հետ: Խոկ կարողութիւնը փոփոխական է. մի քանի պատրիկներ կարող էին աղքատանալ և կորցնել առաջին կարգի իրաւունքները, մի քանի պլեբէյներ՝ հարստանալ և այդ իրաւունքները ձեռք բերել: Երկրորդ եւ այս և նենց զիսաւերը—այդ բարենորոգութիւնն, այսպէս կամ այնպէս՝ բոլ եւ տալիս պլեբէյներին մտնել հասարակական ժողովը: Սրանով խոստովանեցին, որ՝ ինչպէս պատերազմողներ և հարկատուներ, նրանք նոյնպէս քաղաքացի են, ոչ թէ պատրիկներից կախում ունեցող մարդիկ (կլինենտներ):

Տիմոկրատիական (փողատիրական) այս բարենորոգումը պատրիկների մէջ անբաւականութիւն առաջական իշխացրեց, և, աւանդութեան ասելով, նրանք սպանեցին զրա բանալը. պատճառ եղող Սերվիոս Տուլլոս թագաւորին: Նրա յաջորդ Տարիւնիսոս Գոռողի հետ էլ պատրիկները չը կարողացան վարւել: Նա ծերակոյտին այլ ևս ժողովի չէր հրաւիրում: Զը նայելով նրա յաջող պատերազմներին զրացի ժողովրդների հետ, նա ատելի զարձաւ իր կամայականութեան և դաժանութեան պատճառով:

510 Բիին նրան ախորեցին եւ վնաւեցին այլ եւս բազաւոր չը նեանակել: Բայց որովհետեւ թագաւորը շատ հին ժամանակներից սկսած համայնքի ներկայացուցիչն է եղել աստւածների առաջ, զրա համար էլ

¹⁾ Ժողովում բազմութիւն կազմելու համար պէտք էր ժողովել 97 ձայն: Երբ այս թիւը հաւաքւում լրանում էր, մեացածներն այլ ևս չէին համարում:

Նրա անունը պահպանւեց, դրւելով քրմերից մէկի
վրայ (rex sacrificulus):

<sup>Հաստակա-
պետութեան
վարչութեան</sup> Թագաւորի մնացած իրաւունքները տրւեցին Եր-
կուութեան կու նիւպատուների (կոնսուլ): Բայց սրանք լիակատար
իրաւունքներ ստանում էին միայն պատերազմում: Քաղաքում և քաղաքի շուրջը հազար քայլի վրայ՝ նր-
բանք կորցնում էին քաղաքացիներին մահւան պատիժ
տալու կամ մարմական պատիժների ենթարկելու ի-
րաւունքը: Այն քաղաքացին, որին սպառնում էր մահ
կամ փայտի հարւածներ, դիմում էր ժողովրդի դա-
տաստանին հարիւրեակների ժողովներում (կօմիցիա
ցենտուրիատա): Հիւպատոսական իշխանութեան այդ-
պիսի սահմանափակութեան արտաքին նշան էր ծա-
ռայում այն հանգամանքը, որ քաղաքի սահմաններում
հիւպատոսի ծառայողները—լիկոտրները—կրում էին
միայն մի կազոց ձողեր (fasces) և միայն քաղաքի
սահմանագծից գուրս նրա մէջ մտցնում էին և կացին:
Հիւպատոսներին ընտրում էին նոյն հարիւրեակների
ժողովները, իսկ իշխանութեան մէջ հաստատում էին
ծխերը (կուրիա): Իշխանութիւն տրում էր միայն
մի տարով, որից յետոյ պաշտօնից գուրս եկածներին
կարող էին ենթարկել պատասխանատութեան իր
գործերի համար: Երկու հիւպատոսներն էլ ունէին
հաւասար իրաւունքներ, և մէկը կարող էր խանգարել
միւսին դործելու, կարող էր կտրել նրա ճանապարհը
(intercessio):

Պետութեան համար ծանր վտանգ եղած գէպ-
րում, երբ պահանջւում էր իշխանութեան եռանդում
կենարունացում մի մարդու ձեռքում, ծերակոյաց յանձ-
նում էր հիւպատոսներից մէկին նշանակել մի իշխա-
նապես (դիլտասօր): Այս վերջինս ստանում էր լիա-
զօր իրաւունքներ՝ նախկին թագաւորների նման, բայց
որոշ յանձնարարութեան համար և ոչ աւելի քան 5

ամիս ժամանակը: Նա ինքն էր ընտրում իր համար
օգնական—նեծելազօրի առաջնորդը (magister equi-
tum). բացի հիւպատոսներից՝ հիմնեց և երկու հա-
մարակալների (τίτουροι) պաշտօնը: Նրանց ձեռքում
էր ժողովում պետութեան գանձարանը, որ պահպան-
ում էր Սատուրնի տաճարում:

Իշխանութեան բաժան-բաժան և ժամանակաւոր
լինելուց ամենից շատ օգտեց ծերակոյացը: Նրա մէջ
էին մտնում այն մագիստրատները¹⁾ (բարձր պաշտօ-
նեաներ), որնք իրանց պաշտօնը պատւաւոր կերպով
կատարել վերջացրել էին: Նրա անդամներն իրանց
կոչումը պահպանում էին մինչև մահ, եթէ չէին կա-
տարում որ և է անւանարկող խայտառակ դործ: Բլ-
նիականարար այդպիսի մի մարտնի կարծիքներն ա-
նազին կը իւսնենային. Նրանք ուղղութիւն էին տա-
լիս պաշտօնեաների (մագիստրատ) գործունէութեանը
և զօրեղ կերպով ազգում էին ժողովրդի վրայ, որը միայն
ընտրելու և օրէնքները լոկ ընդունելու կամ մերժե-
լու (առանց քններու) իրաւունքն ունէր: Իսկ ինչ վե-
րաբերում է օտար պետութիւնների նետ յարաբերու-
թիւններ ունենալուն՝ այդ արտամին բաղախականու-
թիւնը, որ չումի օգործինը սարածեց ամբողյ աւ-
խարի վրայ, նասարակապետութեան գոյութեան բո-
լոր ժամանակում ծերակոյացն էր վարում:

Թագաւորական իշխանութիւնը տապակելուց յէ-Դաստիարակե-
տոյ՝ սկզբներում նոր հասարակապետութեան գործերն ընկած էին
անյաջող էին զնում: Էտրուսկները խլեցին նրանից
նրա բոլոր տիրապետութիւնները ծիրքիսի աջ ափին
և նոյն իսկ գրաւեցին Հոսմը: Կատաղի կուից յետոյ՝

¹⁾ Հոսմայեցիները մազիսւաս էին անւանում այն ան-
ձին, որն իշխանութիւն էր ստանում ժողովրդի ընտրութիւ-
նով: Հիւպատոսները, համարակաները մագիստրատներ էին:

լատինացիների հետ՝ ստիպւած եղան դաշն կապել լատինական քաղաքների անկախութեան և Հռոմի հետ հաւասար իրաւունքներ ունենալու պայմանով։ Գրլիաւորն այն էր, որ Երկրի մէջ սկսւեց դասակարգերի կատարի կամացի կրիւ։ Իշխանութեան թագաւորից պատրիկների ձեռքն անցնելովը պլեբէյներն ընկան աւելի մեծ կախման մէջ, քան առաջ։ Նրանց աւերում էին այն մշտական արշաւանքները, որոնց պատրիկներն՝ իրք աւելի ունեորներ, աւելի հեշտութեամբ էին դիմանում։ Այն ինչ պարտքերի վերաբերութեամբ եղած օրէնքը նոյնպէս դաժան էր, ինչպէս Աթէնքում՝ մինչև Սոլոնը. պարտքը չը վճարող պարտապահին պարտատէրը դարձնում էր իր նորու—կարող էր ըդրայել եւ փակել, որ նա չը փախչի։ Յուսահատութեան հասած պլեբէյները 494 թւին վճռեցին բոլորովին թողնել Հռոմը և մի նոր քաղաք հիմնել։ Նըրանք ամբողջ խմբով տեղափոխւեցին Սրբազն լեաոր, Անիո գետի միւս կողմում։

Այսպիսի վճռականութեան առաջ պատրիկներն ստիպւած էին լուրջ զիջումներ անել։ Նրանք համոզեցին Պլեբէյներին վերադառնալ և դրա փոխարէն նաևաչեցին խաղամի մէջ մի առանձին պլեբէյական հասարակութիւն, Այդ հասարակութեան զլուխը կանգնեցին ընտրովի պաշտօնեաներ—Տրիբուններ եւ Էդիլներ։ Տրիբունները, որ առաջ երկուս էին և շուտով դարձան 10, պէտք է պաշտպան կանզնէին պլեբէյներին, եթէ նրանց բռնութեան էին ենթարկում զօրաժողովի, պարտքերը հաւաքելու ժամանակ և այլն։ Տրիբունի անձնաւորութիւնն անձեռնմխելի էր (sacrosanctus). Նրա միջամտութիւնը քաղաքի քրջանում պէտք է ընդունէր նոյն խոկ հիւպատոսը։ Էդիլները նոյնպիս գանձապահներ էին քրես-ի (պլեբո=պլեբէյ) համար, ինչպէս համարականները (քւեստոր) պետութեան հա-

մար։ Նրանց յանձնուած գումարները կազմւում էին այն տուգանքներից, որ առնուում էին քրես-ի դէմ գործւած յանցանքների համար, և պահպանուում էին Յերերայի տաճարում։ Տրիբուններ և էդիլներ կարելի էր ընտրել միայն պլեբէյներից¹⁾։ Ընտրութիւնները կատարում էր պլեբսի մի առանձին ժողով, որի մէջ ձայնուութիւնը տեղի էր ունենում Տրիբունով, այսինքն՝ քաղաքային եւ գիւղական ըշանենով²⁾։ Նոյն շըրջաններով ժողովներ էր անում պլեբսը, երբ նրան ժողովի էին հրաւիրում տրիբուններն՝ իրան վերաբերող գործերի մասին խորհրդակցելու և վճիռներ կայացնելու համար (plebiscita), Յենւելով պլեբէյներին տրամադրաւունքների վրայ, տրիբուններն սկսեցին ընդարձակել իրանց միջամտութիւնը պետութեան կեանքի մէջ և շուտով իրաւունք ձեռք բերին կանզնեցնելու պաշտօնեաններին (մազիսարատ) իրանց բոլոր գործողութիւնների ժամանակ և խանգարելու ծերակոյտի ուրշումները։ Այդպիսի գէպքում նրանք ասում էին «veto»-արգելում եմ։ Տրիբունների (համայնքների) ժողովն իրան սեփականացրեց պլեբսի դէմ մեղանչող բոլոր քաղաքացիներին դատելու իրաւունքը։

Պլեբսի այս մէկուսանալը և մի փակ համայնք կազմելը հանդիսանում է Հռոմի պատմութեան մէջ իրք մի շատ կարևոր փաստ։ Այս քաղաքի զարգացումն այդ տեղից սկսում է հաշանաւոր չափով տարրերեւել Աթէնքի զարգացումից, որն սկզբու և այնքան նման էր Հռոմի զարգացմանը։ Աթէնքում, ինչպէս արդէն մեկ յայտնի է, գէմուը երբէք չառանձնացաւ, և դասակարգային կուրը չեղաւ երկու ինքնուրոյն և խիստ

1) Յետոյ սահմանւեցան նոյնպէս կուրուլական կոչւած էդիլներ, որոնք կարգադրում էին խաղերի և շինութիւնների գործերը։ Այդ պաշտօնը կարող էին սահմանակ և պատրիկները։

2) Այդ շըրջանների թիւը կամաց-կամաց շատանալով՝ հասաւ 85-ի։

կարդապահ կերպով կազմակերպւած հասարակութիւնների մէջ կանոնաւոր վէճի ձևով:

Նոր կազմակերպութիւնը չէր ապահովեցնում քաղաքի հանգստութիւնը, պատրիկ և պլեբէյ հասարակութիւնները կանգնած էին իրար դէմ և իրար հետ միանում էին միայն թշնամիների դէմ կուելու համար: Այդ կոփեն էլ վատ էր գնում ներքին խռովութիւնների պատճառով: Պատահում էր, որ պլեբէյները հրաժարում էին պատերազմ գնալ և պատրիկները պատերազմը մենակ էին մզում, սեփական ուժերով: Այդպիսի պատերազմներից մէկում ոչնչացաւ ֆարիսանների ամրող տոհմը, բացի մի մասուկից: Սահեահամարձակ պատրիկներից մէկը՝ Կայիսոս Մարկոս Կորիոլանն՝ տուաջարկեց իր զասակարգի ընկերներին խլել պլեբէյներից արիբունութիւնը: Դրա համար նա գատապարտեց տրիբուների ժողովից, փախաւ Հոռմի թշնամի Վալսկացիների մօտ և նրանց հետ միացած՝ բիչ մնաց քաղաքն առնէր: Մի ուրիշ պատրիկ՝ Սպուրիոս Կասսիոսը փորձեց, ընդհակառակը, խռովութիւններին վերջ գնել՝ պատրիկներին և պլեբէյներին պետական հողերից (ager publicus) հաւասարապէս օգտւելու իրաւունք տալով: Այդ տուաջարկութեան համար պատրիկները նրան մեղադրեցին միահեծանութեան ձգտելու մէջ և սպանեցին:

Տասնապետական ները և XII տախոսական գինւորական կազմակերպութեանը, գտնուում էր անորի օրէնքները:

Պիբէյ հասարակութիւնը, չը նայելով իր ամուր պատասխան կինւորական կազմակերպութեանը, գտնուում էր անորի գիրքի մէջ, որովհետեւ կրօնական ծիսակատարութիւնը և քաղաքային համայնքի մէջ իշխանութիւնը պատականում էր պատրիկներին: Բոլոր վէճերի և վիրաւորանքների գործերի համար գատում էին պատրիկ պաշտօնեաները, և գատում էին այն սովորութիւններով, որ բացատրում և գործադրում էին իրանք՝ սեփական բարեհայեցողութիւնով: Պիբէյներև սկսեցին պահանջել գրաւոր, նեգրիս եւ ամենին յայտնի օրէնքներ (նայել Դրակոնի բարենորոգութիւնը): Պատրիկներն այդ բանին մի անգամից չը համաձայնուեցին, բաց վերջապէս 451 թւին կազմւեց մի յանձնաժողով 10 անձերից (գեցեմմիր), որին յանձնեց զրի տոնել և փոփոխել օրէնքները: Որ-

պէսզի ոչ ոք չը կարողանայ խանգարել նրան իր յանձն առած պաշտօնը կատարել՝ բոլոր սովորական պաշտօնեաները՝ հիւպատոսները, տրիբունները ևայլն՝ հեռացուեցին, և կառավարելու իշխանութիւնը ամբողջապէս արւեց տասնապետներին: Մասնաժողովի լիազօրութիւնները վերանորոգւեցին 450 թւին էլ. և այս անգամ այդ ժողովի անդամ ընտրւեցան մի քանի պլեբէյներ: Օրէնքը բական աշխատանքը յաջող առաջ էր գնում: Տասնապետներն օգտւեցին ոչ միայն Հռոմի հին սովորութիւններով, այլ և տեղիկուրիններ հաւաքեցին յունական քաղաքների, մասնաւորապէս աթենական օրէնքների մասին: Նրանք փոխեցին իրանց օրացոյցն ատափիական օրացոյցի ձեռվ, փոխեցին զբամի ձեր, հաստատեցին ընտանեական, կալւածական և պատժական իրաւունքների հիմունքները, նոյնպէս հիմնարկեցին քաղաքի բարեշնութեան և դաշտերի, վարք ու բարքի վերահսկողութեան իրաւունքը: Կազմւած օրէնքները զրւեցին 12 բրօնզէ տախտակների վրայ և զրւեցին մեծ հրապարակի (ֆօրումի) վրայ: Նրանք դարձան || հոսմէական հին իրաւունքի հիմքերը: Բայց նրանց որոշումներն էտպէս չը փոփոխեցին պլեբէյների ստորվիճակը: օրինակ՝ ամուսնութիւնները պլեբէյների և պատրիկների մէջ առաջւայ պէս արգելւած էին. պարտքերին վերաբերող օրէնքները կը կին շատ խիստ մնացին. անձնական ստրկացումը չը վերացաւ: Պատրիկները նոյնպէս անբաւական էին տասնապետներից: Վերջիններին զլուխ կանդնեց Ապալիոս կլաւգիոսը, ձիրքերով հարուստ, փառասէր և կամակոր կլաւգեանների տան ներկայացուցիչը: Իշխանութիւն ստանալով, նա չէր մտածում այլ ևս բաց թողնել նրան իր ձեռքից և համոզեց ընկերներին չը յանձնել իրանց լիազօրութիւնը երկրորդ տարին վերջանալուց յետոյ: Ապօրինի իշխանութիւնից էլ նա օգտւում էր ապօղէնարար և

բոնութիւններ էր գործում քաղաքացիների վրայ: Նա մինչև այնտեղը հասաւ, որ ուզեց Վիրդինիոս անունով միքաղաքացուց աղջիկլիլիլել, պնդելով, թէ նա (աղջիկը) ծախւած է եղել իրան իբր ստրուկ: Հայրը, չը կամենալով իր աղջիկը տալ Ապավոսին, իր ձեռքով սպանեց աղջկան մեծ հրապարակի (Ֆօրումի) վրայ, և այս չը լսւած գործը դարձաւ ապստամբութեան ազդանշան: Պէրէյները կրկին հեռացան քաղաքից Սրբազնան լեռուր: Տասնապետներն ստիպւած եղան հպատակւել: Ապավիս Կլաւդիոսն իր կետնքը վերջացրեց անձնասպանութիւնով բանափեժ: Հիւպատոսութիւնը վերականգնւեց, և ընտրւած է. Վալերիոս և Մ. Հորացիոս հիւպատոսները նոր համաձայնութիւն կայացրին պլեբէյների հետ: Այդ հասածայնութեան էական պայմանն այն էր, որ տրիբներն իրաւունք ստացան բոլոր համայնքի համար պարագիր վճիռներ կայացնելու, այն ինչ առաջ այդ իրաւունքն ունէին միայն հարիւրակների ժողովները:¹⁾ Պատրիկներն ստիպւած եղան մտնելու տրիբների ժողովները, որպէսզի գնչէ որ և է աղջեցութիւն ունենան այդ կարեոր հիմնարկութեան վճիռների վրայ. այսպիսով՝ պլեբէյական Փողովից նա դարձաւ հասարակական ժողով և ստացաւ կօմիցիա կոչումը (comitia tributa): Այդ ժողովներում պլեբէյները, յինւելով իրանց թւական առաւելութեան վրայ, հնար ստացան առաջքշելու իրանց պահանջները: Այդ պատճառով համարեա իսկոյն վճիռ կայացւեց թոյլատրելու օրինական ամուսնութիւններ պլեբէյների և պատրիկների մէջ: Յետոյ հերթական հարց դարձաւ պլեբէյներին հիւպատոս ընտրելու լրմու-

¹⁾ Վերջիններին մնաց սակայն բացառիկ իրաւունք պաշտօնեաներ ընտրելու և քաղաքացիներին դատելու այն դէպքերում, երբ նրանց սպասնում էր մահւան պատիք:

դիրը: Պատրիկներն այս կէտի անմիջական զիջումը հեռացըրին միայն նրանով, որ յաջողեցըրին մի նոր պաշտօն հաստատել—զինուորական տրիբուններ նիւպատոսական իշխանութիւնով (նրանց թիւը վեց էր.) այս պաշտօնը կարող էին ստանձնել և պլեբէյները: Ծերակոյնին էր թողնուում վճառել, թէ Երբ ժողովուրդը պէտք է ընտրէ հիւպատոսներ և Երբ տրիբուններ՝ հիւպատոսական իշխանութիւնով: Այդ պարագայում հիւպատոսական իշխանութիւնից բաժանեցին ցենօրական (համարակալական) պարտաւորութիւնները—քաղաքների դասակարգերի և տրիբների ցուցակների կազմութիւնը, նոյնպէս և ծերակոյտի անդամների ցուցակի կազմութիւնը, մասնաւոր անձերի ստացւածքների գնհատութիւնը հարկերը վճարելու և դասակարգերի մէջ զրւելու տեսակետից, պետական կալւածների կառավարութիւնը, վարք ու բարքի վերահսկողութիւնը: Յենգօրներ ընտրում էին պատրիկներից երկու հոգի մէկ և կէս տարի ժամանակով: Այս պաշտօնն ստացաւ շատ մեծ նշանակութիւն, որովհետեւ ցենզօրից էր կախւած թոյլատրել մէկին մանել հոռմէտական բաղաքացիների շարքը, նրանից հեռանալ, ծերակոյուր լրացնել և այն:

Արտաքին դէպքերը մի քիչ ընդհատեցին այդկետերի արդասակարգային կոիւները: V դարի ընթացքում իւ շաւանիքը տալիս սկսեցին թափանցել կելտական ցեղերը, որ աստիճանաբար զրաւեցին Պօ գետի հովիտը և խիստ կերպով նեղեցին սարուկներին: Ակզրում կելտերի այս տարածւելը ձեռնտու էր հոռմայեցիներին, որովհետեւ թուլացնում էր էտրուսկներին: 396 թվին իշխանապետ (գիլտատոր) Մ. Թուլիոս Կամիլլիոսը՝ երկարատև պաշտօնութիւն յետոյ՝ զրաւեց էտրուսկների քաղաքներից ամենազօրաւորը—Վէյն, Բայց առաջ խաղացող կելտերը՝ ուշ կամ շուրջ պէտք է ընդհարւէին 396

390 հոռմայեցիների հետ: Դա պատահեց 390 թւին. Ալիս զետակի մօտ հսոմէական գօրքը ոտնատակ տրւեց կելտերի անզուսպ յարձակումբց: Դրանից յետոյ բարբարոսները գրաւեցին նոյն իսկ չոռմը, որ այդ ժամանակ այրւեց: Ստիպւած եղան նրանցից ազատւել ահազին քանաքութեամբ ոսկի տուլով:

<sup>շատկար-
չային կուի
գալունը</sup> Բարեբաղդաբար կելտերը չը կարողացան և չէին էլ մտածում վերջնականապէս նւաճել էտրուրիան և Լացիումը: Նրանք հեռացան իրանց աւարով և յետոյ էլ արշաւանքներ էին անում միայն աւարտութեան համար: Հոռմայեցիները շուտով վերակազմեցին, նորոգւեցին և նորից վերսկսեցին դասակարգային կոփւը:

376 թին Կ. Լիկինիս Ստոլոն եւ Լ. Սեբաստոս Լամերան տիբունները վնասական առաջարկութիւններ արին տիբունների ժողովներին, որոնց նպատակն էր բարեխաւել պլեբէյների և նետական և պետական դրորիւնը, 1) այսուհետեւ պէտք է ընտրւեն ոչ թէ զինւորական տրիբուններ, այլ հիւպատոսներ և նրանցից մէկն անպայման պլեբէյներից. 2) պարագերի համար վճարւած սուկունները համարւում են ոչ իրը տոկոս, այլ դրամակախց վճարւած. 3) ոչ ոք իրաւոնք չունի 500 իւգերից աւելի պետական հող գրաւել և պետական արօստատեղիների վրայ արածացնել 100-ից աւելի եղջերաւոր անսպուն կամ 500 ոչխար: Վերջին միջոցն ուղւած էր պատրիկների գէմ, որ յափշտակել էին պետական ահազին հողեր: Հասկանալի է, որ պատրիկները դիմագրում էին բոլոր ուժով, նշանակում էին իշխանապետներ, համոզում էին Լիկինիոսի և Սեբաստոսի ընկեր տրիբուններին, որ նրանց առաջարկութիւնները կանգնեցնեն իրանց վետո-ով: Բայց 10 տարի շարունակ ժողովուրդն ընորում էր Լիկինիոսին և Սեբաստոսին տրիբուն, և 10 տարի շարունակ նրանք առաջարկում էին կօմիցիաններին իրանց ծրագրները:

Վերջացաւ նրանով, որ 366 թւին պատրիկները դադարեցրին գիմագրութիւնը, յաջողեցնելով բաժանել հիւպատոսական իրաւունքներից դատական իշխանութիւնը, որը տրւեց մի պատրիկ պրեսօրի: Պլեբէյներից առաջին հիւպատոսը եղաւ Լ. Սեբաստոս Լամերանը:

Վերոյիշեալ առաջարկութիւններն ընդունւելուց յետոյ իսկապէս վերջացաւ դասակարգերի կոփւը. իզուր չէր, որ ծերունի կամիլլոսը 366 թւին բաց արեց «Համաձայնութեան» անունով շինւած տաճարը: Բայց կրկին պլեբէյներն ստիպւած էին կամաց-կամաց ձեռք բերել քրմական և այլ պաշտօններ ստանալու իրաւունքը: Միայն թագաւոր քուրմի (rex sacrificilis) և գլխաւոր աստւածների Յ քուրմերի (flamines) տեղերը մինչև վերջն էլ մնացին պատրիկների ձեռքը: Պատրիկների գասակարգային արտօնութիւններին վերջին հարւածներից մէկն էլ հասցրեց ցենզոր Ապակիս կլաւորիոսը, որը հաւասարութեան օգտին աշխատում էր այնպիսի եռանդով ու համարձակութիւնով, ինչ պիսի եռանդով նրա նախնիքներն աշխատում էին նրա դէմ: Նա խղաքացիների թի մէջ ընդունեց բազմաթիւ ազաւածների (ստրկութիւնից), իսկ ծերակրյի պակաս անդամների տեղը լրացրեց պլեբէյներով:

Դասակարգային կուի ընթացքն ու եւը հաւասարապէս խրատական են. Նրանում երեւացին հոռուայեցիներին յասուկ յարաւետքիւնը եւ կարգապահութեան ոգին: Պատրիկներն իրանց բոլոր ուժերը լարած պաշտպանում էին ամեն մի դիրքը, պլեբէյները կուով գրաւում էին այդ դիրքերը մէկը միւսի ետեից, չը գրգովելով յետաձգումներովն ու պարտութիւններովը: Զը նայելով ծանր նիւթական դրութեանը, պլեբէյներն այնքան թանգ են գնահատում իրանց քաղաքական իրաւունքները, այնքան են համոզւած, թէ նրանց միջոցով կարող են ամեն ինչի հասնել, որ չեն դիմում ապահամբութիւնների եւ չեն օգնում բոնապետութեան, որի այնիան մեծ դիր խաղաց Յունաստանում: Պատրիկները

կասկածեցին բռնապետութեան ձգտելու մէջ և ոչնչացրին մի քանի աչքի ընկնող գործիչների (Սպուրիոս Կասսիոսին, Մելիոսին, Մ. Մանլիոսին), բայց վերջիններից ոչ մէկը բաւարար օժանդակութիւն չէր ստանում ժողովրդից, որպէսզի հասարակապետութեան համար գտանգաւոր դառնար: Տրիունուրի նո այդպիսի դեպքում կարծես ծառալում եր իր տանրազել, որի մէջ պլերէներն ունէին իրանց շահերի օրինական ներկայացուցչութիւնը:

Պատրիկիների պարտութիւնը բացատրում է ոչ միայն այսպէս կամ այնպէս զօրք տւող ժողովրդի ամրողութեան հետ վարւելու անհրաժեշտութիւնով, բայց և շատ պատրիկ տոհմերի ոչնչանալով և շատ պլերէյ տոհմերի ուժեղանալով: Բայց դասակարգերի իրաւունքների հաւասարեցման նետեանքը երեք չեղաւ ժողովրդական ամբոխի (մասսայի) տրապետութիւնն, այլ նոր արիստոկրատիայի (ազնւականութիւնը) կազմեց ամենահարուստ ընտանիքների անդամներից—ինչպէս պատրիկ, այնպէս էլ պլերէյ, որոնք իրանց հարստութեան չնորհով հնարաւորութիւն ունեին պաշտօններ ստանձնելու անվարձ, միայն այն իշխանութեան և պատրի համար, որ կապւած էին այդ պաշտօնների հետ: Բարձր պաշտօններից անցնում էին և ծերակոյտ երբ մի անդամ արդէն կազմեց մի որոշ շրջան այդպիսի պաշտօնատար ընտանիքների, նրա անդամներն սկսեցին պաշտպանել իրար և կողմնակի մարդկանց հեռացնել: Բայց այդ նօրիիտեքը սահմանափակ, զուտ ժառանձական մի դասակարգ չէր. նա նիմ նւած եր միմիայն պատօններ վարելու համար, որոնց հասնում էին երբեմն ձեռներէց և արժանաւոր մարդիկ ստորին դասակարգերից (homines novi—ուոր մարդիկ): Բայց նրա զործնական նշանակութիւնը շատ անաղին էր. ժողովուրդն ուրախութեամբ հնագանդում էր նրա զեկագարութեանը, որովհետեւ լէզիսների ծառայութեան մէջ սովորել էր յայտնի անձերի և ընտանիքների առաջնորդութեանը և, բացի զբանից, կօմիցիաների չնորհով ինքն էլ մեծ աղղեցութիւն ունէր կառավարութեան վրայ, իսկ այդպիսի վարչ դասակարգի կազմելին անկատակած օգնեց նոռմեական հանրապետութեան առաքին զործերի նարտար, նետողական եւ եռանդուն կերպով կառավարելուն:

Դ. Ա. Ռ. Խ. IV.

Ի Տ Ա Լ Ի Ա Յ Ի Ն Ի Ա Ճ Ո Ւ Մ Ը

Երբ Ա Կ ա ր ի կ է ս ի ն վ ե ր ջ ա պ է ս կ ա յ ա ց ա ւ դ ա ս կ ա ր դ ե ր ի հ ա շ տ ո ւ թ ի ւ ն ը՝ հ ո ո մ է ս կ ա ն մ ժ ո վ ու ր դ ը վ ե ր ջ ն ա կ ա ն ա պ է ս կ ա զ մ ւ ե ց և հ ն ա ր ա ւ ո ր ու թ ի ւ ն ը բ ա տ ա ց ա ւ յ ա ր ձ ա կ ո ղ ա կ ա ն գ ո ր ծ ո ղ ու թ ի ւ ն ը ս կ ս ե լ ու դ ր ա ց ի ն ե ր ի դ է մ: Ա յ դ ժ ա մ ա ն ա կ ս ե ր ո ւ մ հ ա ս տ ա տ ե ց և ն ր ա զ ի ն ս ո ր ա կ ա ն կ ա զ մ ա կ ե ր պ ո ւ թ ի ւ ն ը: Հ ո ո մ է ս կ ա կ ա ն զ օ ր ե ր ի զ ի ս ա ւ ո ր ու մ ո յ ժ ը կ ա զ մ ո ւ մ է ր ե ս ե ւ ա կ ի լ է գ ի ո ւ ն ը, որ բ ա դ ի ա ն ո ւ մ է ր ե ս ե ւ զ ի ս ա ւ ո ր ա պ է ս կ ա յ ա ց ի ն ե ր ո ւ մ և ք ա ղ ա կ ա յ ա ց ի ն ե ր ո ւ մ մ ի ա ր ա կ ա ն ը զ ա ն ա ւ ո ր ու թ ի ւ ն ը ի ն դ ի ր ս ն ե ր ի հ ա մ ա ր: Ա յ ս գ ի ւ ղ ա կ ա ն զ օ ր ք ը չ է ր կ ա ր ո ղ մ ը ց ե լ յ ո ւ ն ա կ ա ն զ ի մ ն ա զ ի ն ս ե ր ի ս ա ն ս ե ր ի հ ե տ մ ա ր մ ն ա կ ա ն վ ա ր ժ ո ւ թ ի ւ ն ս ե ր ի պ ա տ ր ա ս տ ա կ ա ն ո ւ թ ի ւ ն ը մ է ջ, կ ա մ վ ա ր ձ կ ա ն զ օ ր ք ե ր ի հ ե տ, ո ր ոնք ե ր կ ա ց ի ն ա յ ն ժ ա մ ա ն ա կ Մ ի ջ ե ր կ ր ա կ ա ն ի ա փ ի ն՝ զ ի ն ս ո ր ա կ ա ն հ ա ր պ ի ու թ ի ւ ն ը և ք ա ղ ո ւ թ ե ա ն մ էջ. զ ր ա փ ո ւ թ ի ւ ն ը մ է ջ. զ ր ա փ ո ւ թ ի ւ ն ը ն ր ա ն ք ե ր մ ս ի բ ա լ ո վ զ է ր կ ի ս պ ի հ ա յ ը ե ն ի ք ը, ա ր տ ա կ ա ր զ կ ա յ ու ն ո ւ թ ի ւ ն ո վ ի ու զ ի մ ա զ կ ա ն ո ւ թ ի ւ ն ո վ ի ք ը, ե ր կ ա թ է կ ա ր գ ա պ ա հ ու թ ի ւ ն ո վ ի ու ա մ ե ն մ է կ ի ու ն ե ց ա ծ պ ա տ ր ա ս տ ա կ ա ն ո ւ թ ի ւ ն ո վ ի ք զ ո ն ե լ ու ի ր ա ն ը ն դ հ ա ն ո ւ թ ի ո ր ծ ի հ ա մ ա ր: Պ ա տ ե ա զ մ ա կ ա ն կ ա զ մ ը ն շ ա ն ա ւ ո ր կ ե ր պ ո վ տ ա ր ք ե ր ւ ե ց յ ո ւ ն ա կ ա ն ի ց, թ է և ս կ ս ե ց ն ո յ ն ֆ ա լ ա ն զ ի ց: Ա յ ն ի ն չ յ ո յ ն ս ե ր ը զ ա ր գ ա ց ն ո ւ մ է ի ն ա մ ե ն մ ի տ ե ս ա կ զ օ ր ք ի տ ա ս ա ն ձ ն ա յ ա տ կ ո ւ թ ի ւ ն ս ե ր ը, ծ ա ն ը հ ե տ ե ա կ ա խ ու մ ը ր ը զ ա ր ձ ն ո ւ մ է ի ն ա ւ ե լ ի և ա ւ ե լ ի ի ս ի տ ու խ ո ր, ի ս կ մ ի ւ ս ա կ ի ց կ ե ր պ ո վ կ ա յ ա ց ի ց ու զ է ս կ ա յ ա ց ի ց մ է ճ ու շ ա ղ ա ր ու մ:

թիւն դարձնել թեթևաղէն հետեակի և հեծելազօրքի կատարելագործութեան վրայ և նոյն խսկ փեր մըտցըրին զինւորական կազմի մէջ, — հոռմայեցիները բոլոր ջաները կենրոնացրին մի այնպիսի նետեակ սեղծելու վրայ, որ պիտանի լիներ ամեն տեսակ տեղեռում եւ ամեն հետաւոր համարմաններում: Պէտք էր այդ հետեակը դարձնել շարժական և ինքնուրոյն իր ամենամանր մասերում: Սյդ նպատակով նախ և առաջ նրան բաժանեցին վաշտերի (մանիպուլ), որոնց մէջ թողնուում էին բաց տարածութիւններ: Յետոյ բոլոր խումբը բաժանւած էր 3 շարքերի — առջնուում կանգնած էին հատակի, յետոյ՝ principes, վերջապէս՝ չոկովի հին զինւորները՝ triarii: Հոռմէտկան զօրավարները երկրորդ զինւոր կուի մէջ էին մտցնուում միայն այն ժամանակ, երբ առաջինն արդէն ուժասպառ էր լինուում, իսկ պահեստը գործի էին հանուում միայն ծայրայեղ անհրաժեշտութեան դէպրում: Ոյժերի այս խնայուական եւ աստիճանաբար ծախսելլ շատ էր նպաստում յաջողութեան: Ազգինները զինւած էին նետելու տէգերով (rīsum), որ նրանք նետուում էին թշնամու վրայ մօտիկ տարածութիւնից, որպէս զի յետոյ գործէին կարճ սրերով: Հոռմէտկան արշաւանքների մէջ շատ կարեւոր պայման էր բանակատելի կազմութիւնը (լադեր): Զօրքը տեղաւորուում էր և փորում իր զիրքերը ճիշտ որոշւած նախագծով: Ամեն մէկը զիտէր իր տեղը և պահպանուում էր նրան: Անյաջողութեան կամ թշնամու ուժերի զգալի գերակշռութեան դէպրում՝ այդպիսի բանակատեղը դառնուում էր մի բերդ:

Լատինացի-
ները և սոմ-
ճառները, պէտք է աչքի առաջնուածումների պատ-
ճառները, պէտք է աչքի առաջ ունենալ՝ բացի Հոռմէ-
ժողովրդի զինւորական յատկութիւններն ու կազմու-
թիւնը, նրա դրութիւնը լատինական նահանգում: Հոռմը
դարձաւ նրա պիտառը քաղաքը դերակշռութեան դէպ-

ժամանակ: Սպուրիոս կասսիոսը լատինացիների հետ դաշն կապեց, որի համաձայն երկու կողմերն էլ կուի դաշտ էին հանուում հաւասար թւով զինւորները. նւաճ-
դաշտ տեղերն էլ բաժանուում էին հաւասարապէս: Ա-
ռաջարկուում էր մինչև անգամ զօրապետները հերթով
նաշարկել — հոռմայեցիներից և լատինացիներից: Սա-
նչանակել — հոռմայեցիներից և լատինացիներից: Սա-
կայն տուով առաջնորդութիւնն անցաւ Հռոմին եւ
նա ընդհանրապէս իր ձեռքն առա ընդհանրուուր յետոյ՝ նա
կարուուկների և կելտերի հետ ընդհարւելուց յետոյ՝ նա
ստիպւեց հանդիպել սամնիոցիների հետ, որոնց համար
նեղ էին իրանց լեռները: Նրանց երիտասարդութիւնն
արդէն վաղուց սովորել էր զինւորական ծառայութեան
արդէն վաղուց սովորել էր զինւորական բաղաքները, Սիկիլիա
գնալ հարաբւային իտալական բաղաքները, Սիկիլիա
և նոյն իսկ կարթագէն. այդ վարձկաններին ամեն տեղ
գնահատում էին իրանց քաջութեան համար: IV դա-
րում սամնիական համայնքներն սկսեցին իրանք ըն-
դարձակել իրանց սահմանները դրացիների հաշւով և
ընդհարւեցին հոռմայեցիների հետ հարուստ և պաղա-
բեր կամպանիայում, ուր հոռմայեցիները նրանց դէմ
դուրս եկան՝ կապուա քաղաքին օգնութեան: Սամ-
նիացիները նոյնպէս հաստատեցին կամպանիայում:
Սամնից վատն այն էր, որ յամառ պատերազմը զըգուեց
լատինացիների մէջ Հռոմին հաւասարւելու ցանկու-
թիւնը: Նրանք պահանջեցին հիմնել մի ընդհանուր
կառավարութիւն, որի մէջ ծերակոյտի կէսը և հիւ-
պատուներից մէկը պէտք է ընտրւէին լատինացինե-
րից: Եթէ հոռմայեցիները համաձայնէին այս պահանջ-
ներին, այն ժամանակ բոլոր յետագայ պատութիւնը
խիստ կերպով փոփոխւած կը լինէր. մի խղախային
համայնք միւսների վրայ տիրապետութիւն ձեռք բեր-

լու փոխարէն՝ կըստացւէր մի քանի համայնքների ձուլում մի գուշակցական պետութեան մէջ. բայց հռոմայեցիներն արդէն սովորել էին իրանց առաջնութեանը և երբէք տրամադիր չէին բաժանել այդ դրութիւնն ուրիշների հետ։ Վեզուվի մօտ Տ. Մանիոս Տորկվատոս հիւպատոսը ջարդեց լատինացիներին և նրանց քաղաքները կրկին հպատակւեցին։

Այդ արագ հաշտութիւնը, իմիջի այլոց, բացատրում էր սամիխացիներին միասին դիմագրելու անհրաժեշտութիւնով, որոնք չէին դադարեցնում իրանց նւաճումները հարաւային իտալիայում։ Յունական քաղաքները և Լուկանիայի ու Ապուլիայի ժողովրդներն ըսկեցին դիմել հռոմայեցիներին և օգնութիւն խընդրել։

^{Երկրորդ} Երկրորդ պատերազմն սկսւեց մի խոշոր անպատճերազմին յաջողութիւնով։ Սամիխական զօրապետ Պունցիոնը խորամանկութիւնով քաշեց հոռմէական զօրքը կաւգինան նեղ կրծի մէջ և փակեց նրա առաջ բոլոր ելքերը (321)։ Պատուելով անցնելու վորձը ոչ մի արդիւնք չը տւեց, և հիւպատոսներն անձնատուր եղան այն պայմանով, որ զօրքը բաց կը թողնէի Հռոմ զնալու և խաղաղութիւն կը կապի։ Լեզինները զէնքերը վայր զրին և, իրք նշան հնազննութեան, անցկացան լծի տակով։ Բայց ծերակոյտը յայտարարեց, որ հիւպատոսներն այդպիսի դաշնագիր կնքելու իրաւունք չունէին. տւեց նրանց սամիխացիների ձեռքը, քանդեց բոլոր պայմանները և անմիջապէս նոր զօրք հանեց կուփ դաշտը. Զը նայելով, որ սամիխացիների հետ միացան և կտրուսկները, հռոմայեցիները յաջող կերպով զործեցին բաժանեած թշնամիների դէմ։ 305 թւին նրանք թափանցեցին Սամիխումի խորքերը և ստիպեցին սամիխացիներին ընդունել խաղաղութեան նոր պայմաններ։ Երկրորդ պատերազմը հռոմայեցի-

ների իշխանութեան տակ զցեց Կամպանիան։ Ապահոս կլաւդիոս ցենզօրն ամրապնդեց այս նւաճումը՝ Հռոմից մինչև Կապուա մի հիանալի ճանապարհ շինելով (via Appia), որը հնար էր տալիս պէտք եղած ժամանակ զօրքն արագութեամբ դէպի հարաւ շարժել։ Հասկանալի է, որ այս ճանապարհը դարձաւ մի կարևոր միջոց և վաճառականական յարաբերութիւնների համար։ Յս եղաւ չուոմի առաջին փորձն ամեն կրոմ նանապարհների մի ցանց անցկացնելու. այդ ցանցի հետքը մնում է մինչև այժմ, և նա քիչ չը նպաստեց հռոմէական տիրապետութեան և կուլտուրայի տարածմանը։

Շուտով պատերազմը նորից բորբոքւեց։ Խտալա-^{Երրորդ սամ-} կան ժողովրդներն սկսում էին հասկանալ, որ Հռոմը ^{սերազմ-} վտանգաւոր է բոլորի համար, և զրա համար էլ սամ-նիխացիներին յաջողւեց պատերազմ մղելու համար կազմել մի ընդարձակ դաշնակցութիւն (կօալիցիա), որի հետ միացան կտրուսկները, ումբրիական յեղերը և նոյն իսկ հիւսիսային իտալիայի կելտերը։ Հըռոմայեցիների կողմը բոնում էին լատինացիները և հարաւային իտալիայի բնակիչները, որոնք ամենից աւելի Սամիխացիներից էին վախենում։ Սեստինումի մօտ հռոմէական զօրքը յաղթեց, չը նայելով սամիխացիների և կելտերի յուսահատական քաջութեանը։ Յաղթութիւնը վերագրում էին հիւպատոսներից մէկին — Դեցիոս Մուսախն, որը խոստացաւ իրան գոհել ստորերկրեայ աստւածներին, որպէս զի դրանով ձեռք բերէ նրանց օգնութիւնն իր ժողովրդի համար։ Նրան սպանեցնի ճակատամարտի նոյն իսկ սկզբում, բայց զրա փոխարէն հռոմայեցիները յաղթեցին։ Այս պարտութիւնը ոչնչացրեց դաշնակցիների ընդհանուր ծըրագիրները, ամեն մէկը շարունակեց պաշտպանել իր երկրում, և հռոմայեցիները յաղթեցին նրանց ամեն

մէկին առանձին-առանձին։ Այստեղ էլ սամնիացիներն ամենավտանգաւոր հակառակորդը հանդիսացան և նոյն իսկ մի զգալի պարտութիւն հասցըին հոռմայեցիներին։ Բայց հոռմայեցիների անզրդւելի եռանգը և գործերի ճարտար զեկավարութիւնը ծերակոյտի ձեռքով՝ վերջապէս յաղթեցին։ Սամնիացիներին ամենից շատ պակասում էր ուժերի կենցունացում—նրանց բոլ կերպով միաւորւած նահանգները ննար չունիին կրուելու նումէալան խիս կերպով միաւորւած նամայնին դէմ։ Վերջապէս 290 թւին Մ. Կուրիսս Դենտատոսը, մի օրիակելի հոռմայեցի—պինդ, սառնասիրտ դէպէ կեանքի յարմարութիւնները, ամբողջովին պետութեանը նւիրւած՝ հպատակեցրեց Սամնիումը հոռմէական իշխանութեանը։

<sup>Պատերազմ
Գիւրուի գէմ</sup> Միջին համայնքից յետոյ հերթը հասաւ հարաւայինին։ Ինչպէս առաջ սամնիացիները, այնպէս էլ յետոյ հոռմայեցիներն սկսեցին խառնել հարաւային Բատալիայի ցեղերի և յունական քաղաքների իրար հետ ունեցած վէճերի մէջ։ Տարէնտոն հարուստ քաղաքը, թէրակզու հարաւային մասի զլիսաւոր առևտրական կենտրոնը, մտածեց կտրել նւաճողների առաջը՝ վարձելով եպիքոսի թագաւոր Պիւրոսին իրան օգնական։ Սա մի տաղանդաւոր և համարձակ բազգախնդիր էր։ Տարէնտացիների հրաւէրով նա եկաւ մեծ և հիանալի զորքով, որ վարժեցրած էր մակեդոնական զինուրական արհեստի բոլոր կանոններով։ Հոռմի զինւած զիւդականներն առաջին անդամն էին պատահում հերէնական արհեստի բանակի հանակի հետ, և առաջին ընդհարումը ցոյց տեսց, որ հոռմայեցիները զեռ շատ բան պէտք է սովորեին։ Պիւրոսի ֆալանգները և փոկերը վճռական յաղթութիւն տարան լեզինների դէմ (Հերակլէայի մօտ՝ 280 թւին)։

Պիւրոսը պատերազմը վերջացած համարեց և իր

մօտիկ բարեկամ կինէասին Հոռմ ուղարկեց, ուր նա գործ դրեց իր բոլոր ճարտարութիւնն ու ճարպկութիւնը, որպէս զի յաջողեցնէ խաղաղութեան դաշն կապել։ Ծերակոյտի վճռական ժողովին եկաւ զառամեալ, կոյր Ապափոս Կլաւդիոսը, 312 թւի ցենզորը, և որոտագին մի ճառով խորտակեց յոյնի բոլոր խորամանկութիւնները։ Պատերազմը վերսկաւեց և Պիւրոսը կրկին յաղթութիւն տարաւ, բայց այնպիսի գժւարութիւնով և կորուստներով, որ խոստվանւեց թէ «մի այդպիսի յաղթութիւն էլ—և ես այլ ևս զօրք չեմ ունենայ»։ Գլխաւորն այն է, որ նա ձանձրացաւ ժամանակ և ուժեր կորցնելով սկզբնական և աղքատ մի ժողովրդի հետ ապարդիւն և ծանր կոիւ մղելուց։ Յանկարծ նա ընկաւ Սիկիլիայի վրայ և այնակաղ Յ տարի անցկացրեց տեղացիների և յոյների հետ մշտառե պատերազմներով։ Երբ 275 թւին նա իտալիա վերադարձաւ նոսրացած զօրքերով՝ հոռմայեցիները նրան դիմաւորեցին արդէն պատրաստւած։ Ալրանց հետեւակը սովորեց Տէլ փոկերին եւ օգտել ժայռակի ծանրաւարծութիւնից, որի համար խիս դրժւար էր զործել անհարք տեղերում։ Բենեվենտի մօտ սամնիացիներին յաղթող Մ. Կուրիսս Դենտատոսը ջարդեց Պիւրոսին։ Նա անմիջապէս թողեց Բատալիան և ուղեկորւեց Պելոպոնէս վերջացնելու այնտեղ իր վութորկալից զործունէութիւնը։

Այսպիսով Հոռմի աստիճանարար տիրապետում Խաղալիք էր ամբողջ Իտալիային Մուրիկոնից դէպի հարաւայնակերպ Պատրայի և Սթէնքի նման նա շէր ձգտում անպայման հնագանգեցնելու տիրապետած հահանգները, Հոլատակների հետ վարւելու զործում ծերակոյտը շատ տարբեր քաղաքականութիւն էր բանեցնում։ Մի բանի տեղեր զառնում էին ուղղակի Հոռմի ժողովրդի սեփականութիւնը, այս հասարակական նողերը (ager

publicus) բաժանուում էին առանձին հոռմայեցիների մէջ՝ նրանցից ժամանակաւոր կերպով օգտւելու (նայել կիկիանոսի և Սեքստոսի օրէնքները) կամ առուրդով տրուում էին կապալով, որի կապալաղբամբ մտնում էր պետութեան գանձարանը։ Վերջապէս այդպիսի արքունիք գրաւած հողերի վրայ հիմնուում էին կոլոնիաներ, այսինքն հոռմէական քաղաքացիների գաղութներ, որոնք ստանում էին հողաքաժիններ և կազմում քաղաքային համայնքներ՝ բոլորովին նման Հոռմին։ Այդպիսի գաղթականներով բոնում էին զվարապէս գրաւած նահանգների զինորական կամ առևտրական տեսակէտից նշանաւոր կէտերը, և նրանց քաղաքացիները պահպանում էին հոռմէական կօմիցիանների մէջ ձայն տալու իրաւունքը։ Արա հետ միասին կային մունիցիպիաներ՝ քաղաքային համայնքներ, որ իրանք էին ընտրում իրանց պաշտօնատարներին, բայց որոնց թույլատրւած չէր հոռմէական քաղաքացու (cives romanum) լիակատար իրաւունքներն ունենալ։ Նրանց բնակիչները կօմիցիաներում ձայնի իրաւունք չունէին (cives sine suffragio) և առևտրի վերաբերութեամբ ենթարկւած էին մի քանի սահմանափակումների։ Լատինական քաղաքների և գաղութների մէծ մասն ունէր քաղաքային համայնքի (մունիցիպիայի) իրաւունքներ, վերջապէս վերջին գասը կազմում էին դաշնակիցները (socii), նրանց թւին էին պատկանում օրինակ՝ սամնիացիները։ Նրանք պահպանում էին իրանց նախակին կազմութիւնը, բայց ենթարկւում էին Հոռմին զանազան պայմաններով, նայելով նրանց հետ կապած դաշնազին։ Նրանք քաղաքներից աւելի էին նեղուած առևտրի վերաբերութեամբ և բոլորովին հեռացւած էին հոռմէական քաղաքացիութիւնից, որ այն ժամանակ համարուում էր մի ահազին առաւելութիւն։ Նկարագրւած կազմակերպութեան ընդհանուր

նպատակն էր Կտակիան բաժանել մասն մասերի եւ դրանով խանգարել Հոռմի համար վտանգաւոր նւանւած ժողովրդների ամեն մի դաշնակցութիւն։ Բոլոր նպատակւած քաղաքները և ժողովրդներն անպայման կերպով ենթարկւած էին Հոռմին օտարների հետ յարաբերութեան մտնելու գործում, և բոլորն էլ պարտաւոր էին օդնել նրան պատերազմի ժամանակ։

Գ. Ե. Ա. Խ. Խ. V.

ՄԻՖԵՐԿՐԱԿԸՆ ԾՈՎԻ ՆԽԱՅՈՒՄԸ

Հոռմայեցիներն իրանց պատմութեան ընթացքում կարթագէն մի քանի անգամ հանգիպեցին մի հզօր ու վաճառաշահ պետութեան հետ, որ հիմնել էին վիսնիկեցիները հիւսիսային Ս. Փրիկայում։ Կարթագէնն (Կարքեղոն) օգտւեց Տիւրոսի և Սիրոնի ընկնելուց և իր ձեռքի տակ հաւաքեց այդ քաղաքների գաղութներն արևմտեան ծովերում։ Այդ ժամանակի նա ստիպւած էղաւ կուել էտրուսքների և զվարապէս յոյների հետ։ Բայց առաջինների ոյժը վշշեցին կելուերն ու Հոռմը, իսկ երկրորդներն սկսեցին թուլանալ վարք հումքը, ընկնելու և կառավարութեան մէջ անկառու ըարքի ընկնելու պատճառով։ Դրա համար էլ նահութիւններ ծագելու պատճառով։ Դրա համար էր արգէն երբորդ դարի սկզբներում Կարթագէնն էր ամենազօրաւոր ծովային պետութիւնն այն ժամանակի մէնազօրաւոր ծովային պետութիւնն այն ժամանակի աշխարհում¹⁾։ Նրա մէջ ամեն ինչ զեկավարում էին աշխարհում²⁾։ Նրա մէջ ամեն ինչ զեկավարում էին աշխարհում³⁾։

¹⁾ Կարթագէնն իշխում էր Ս. Փրիկայի ամբողջ հիւսիսային ափին՝ եղիպատոսից դէպի արևմտագոր, Սարդինիայում՝ արևմտեան Ս. Սիրիկայում։ Բացի գրանից՝ նրանք գաղութներ ունէին և հսկանիայում։

կանների մի ցըան. գատական և ելեմտական գործերի մէջ զիխաւոր պաշտօնները գնուում էին փողով, հասարակական ժողովն ունէր երկրորդական նշանակութիւն: Ժողովրդի բոլոր ուժերն ուղղւած էին դէպիտառական ժողովրդը, զինւորական գործը յանձնւած էր վարձկան բանակների, որոնք կազմում էին արևմտեան Եւրոպայի զրեթէ բոլոր ցեղերից:

Առաջին Պատերազմի մէջ համարական նաւահանգը առաջին պատերազմի մէջ համարական նաւահանգը

Ների գրաւումը հոսմայեցիներին երես երեսի հանեց Կարթագէնի հետ: Մեսսինական բարակ նեղուցից այն կողմ տարածւում էր հացառատ, հարուստ Սիկիլիան, բռնւած կարթագենական կամ «ապօնիկեան» զաղութներով: Հոսմայեցիների նեղուցին տիրանալը դարձաւ պատերազմի պատրւակ (264թ.): Մկրտներում Հռոմեա ստիպւած չեղաւ էապէս փոփոխել իր գործելու եղանակը: Պատերազմը մղւում էր իրք շարունակութիւն նախկին իտալական արշաւանքների: Հռոմի կողմը բռնեցին իրանց վաղուցւայ թշնամի կարթագէնի դէմ ելան յունական բաղաքները՝ Սիրակուգան զուվս ունենալով: Սիկիլական ցեղերը նայնպէս օժանդակում էին երկրի ներսում, որովհետեւ Հռոմը վերջ դրեց վարձկան զօրքերի ասպատակութիւններին: Կարթագէնացիները կորցրին մի ամբողջ շարք զաղթավայրեր, ի միջի այլոց և Սիրապասր, հարաւային ափի վրայ իրանց գլխաւոր յենակէտր: Բայց չը նայելով հռոմէական այս բոլոր յաջողութիւններին, շուտով պարզւեց մի պայման, որը պահանջում էր ընկնել մի բոլորովին նոր ճանապարհի վրայ: Պունիկեցիները թագաւորում էին ծովի վրայ, մշտապէս անհանդատացնում էին իտալական ափերը և չափաղանց գժւարացնում էին սիկիլական բանակի յարաբերութիւնները Հռոմի հետ: Մի որ և է առատաքում այդ բանակը կարող էր բոլորովին կորւել իր

տալիայից և ոչնչանալ, ինչպէս աթէնական բանակը սիկիլական արշաւանքի ժամանակ:

Հռոմն սիրաւած էր սկսել իր համար բոլորովին անսովոր մի զործ—ցամաֆային պետորիւնից դառնալ ծովային: Նրա տրամադրութեան տակ էին արգէն յունական նաւահանգստների նաւատորմերը, բայց նրանք անբաւարար հանդիսացան: Զենարկեցին շենել մեծամեծ պատերազմական նաւեր, հինգ շարք թիավարներով (պենտերաներ): Ժամանակ չը կորցնելու համար՝ հռոմէական և լատինական գիւղացիներին թիավարել էին սովորեցնում ցամաքի վրայ, յատուկ զրա համար շինւած փայտէ շէնքերի վրայ: Հակառակ սպասածին՝ նոր նաւատորմին բաժին ընկաւյացնողութիւն. 260 թւին Դուլիլոս հիւլատոսը փըշը րեց կարթագենացիների զինւորական նաւատորմը: Սակայն իր յաղթութիւնը նա պարտական էր ոչ թէ ծովագնացների ճարպկութեան, այլ պունիկեցիների ծովագնացների ճարպկութեան, այլ պունիկեցիների համար արտասովոր մարտական ձեին. հռոմէական հաւերը կալչում էին պունիկեաններին, և կոխն ըստ էր տախտակամածների վրայ, որի ժամանակ կուռում էր տախտակամածների վրայ, որի ժամանակ կարելի էր օգտուել հռոմէական փորձւած հետևակազորից:

Հռոմայեցիները հասկանում էին, որ այդ յաղթութիւնը երբէք չէ ապահովեցնում իրանց գերակարգութիւնը ծովի վրայ: Որպէս զի պատերազմը վերկշուութիւնը ծովի վրայ: Որպէս զի պատերազմը վերկշացնեն, նրանք վճռեցին սկսել մի վտանգաւոր ձեռնախանը՝ Սիրիկա: Սյնալունարկութիւն—զօրք հանել նայն իսկ Սիրիկա: Սյնալունարկութիւնը միայն լեզուներին յանդի մի կերպ հասնել մինչեւ Կարբագէն, նրանց ջողի մի կերպ հասնել մինչեւ Կարբագէն, նրանց առաջ ոչ մի պունիկեան բանակ չէ կարող դիմանալ: Զինեցին 40,000 միայն հետեակ. արշաւախմբի առաջնորդութիւնը տեխն Ստիլլոս Հռոմուսին (256 թւին), Կարթագէնի նաւատորմը, որ փորձեց ափի դուրս

գալը խանգարել, ջարդւեց։ Աֆրիկայում առաջին գործողութիւնները նոյնպէս լիակատար կերպով յաշող ժնացին։ Կարթագէնի վաճառական օլիգարխիան բոլորովին անընդունակ հանդիսացաւ մղելու այդ արտասովոր պատերազմը. բայց միւս կողմից Հռովն էլ դեռ ևս պատրաստ չէր արդպիսի հեռաւոր և երկարատեսքի համար։ Մի անգամից Կարթագէնն առնել չէր կարելի։ Պէտք էր բանակն Ամբրիայում քողինել անորու ժամանակով, իսկ այդ անհնար էր անի՞ առած քայլայելու մասն զիւղական տնտեսութիւնը, որոնցից առնւած էին լեզիոնների զինուորները։ Ծերակոյան ստիպւած էր դարձնել զօրքի մեծ մասը և Հռեգուլոսին թողնել միայն 15,000-անոց մի զօրքաժին։ Այն ինչ պունիկեցիները հաւաքեցին վարձկանների մի նոր բանակ և նրա առաջնորդութիւնը յանձնեցին մի փորձառու յոյնի, մարտական գործերի մասնագէտ Քանանտիպասոսին։ Հռոմայեցիները ոչ միայն ջարդւեցին, այլ և թակարդի մէջ մնացին աֆրիկան ափում։ Յաջողւեց նաւերի վրայ հաւաքել և տուն տանել միայն խղճալի մնացորդները։

Հռեգուլոսի կորստից յետոյ հռոմայեցիներն ստիպւած եղան սանմանափակել իրանց զործունեւութեան շրջանը Սիկիլիայով։ Պատերազմը վերածւեց մի շարք մանր պաշարութեների և մանր յարձակութեների կղզու ափերում։ Բնդհանրապէս դա կատարւում էր հռոմայեցիների սդախն, թէև նրանց նաւատորմերը՝ ծովային գործում բոլորովին անփորձ հիւպատոսների և պրետօրների առաջնորդութեան տակ՝ կրում էին մի պարտութիւն միւսի յետեից։ Լուտացիոս Կատուլլոս հիւպատոսի ծովային յաղթութիւնն Եղտուիան կղզիների մօտ (241թ.) վերջ դրեց պատերազմին։ Երկու կողմն էլ ծայրայեղ կերպով ուժասպաս էին եղել. հռոմայեցիները ոչինչ չկիմ կարող ձեռնարկել Ամ-

րիկայում, պունիկեցիները յուսահատւեցին Սիկիլիան պատապանելու զործում։ Վճռեց, որ կղզին կանցնի Հռոմի ձեռքը և որ Կարթագէնը կը վճարէ մեծ պատերազմական տուգանք։

Թէ մէկ և թէ միւս հակառակորդը քիչ բան չունէին անելու իրանց սեփական երկրում։ Կարթագէնը հազիւ կարողացաւ ոչնչացնել վարձկան զօրքերի ապստամբութիւնը. Հռոմն ստիպւած էր կարգը վերահաստատել հիւսիսային իտալիայում, որտեղից մշտապէս սպառնում էին գալլերի անհանգիստ ցեղերը։ Կելտերի երկառակութիւններից օգտելով, նոռմայնիները նետութեամբ տիրեցին Պօ զետի ամբողջ նովինին։ Այս գրաւումն ունեցաւ անմիջական աղդեցութիւն պունիկեան պատերազմներով քար ու քանդ եղած մանր հողատերերի վրայ. Ֆլամիանոս արիբունի առաջարկութիւնով՝ աղքատացած գիւղացիներին հողեր բաժանեցին հիւսիսային իտալիայում։ Նոր գրաւած նահանգներն ապահովեցնելու համար՝ հիմնեցին զաղութներ և ուղմական ճանապարհ շինեց մինչև Պօ զետը (via Feaminiā). Միևնույն ժամանակ նոր կուր էր պատրաստում Հռոմի և Կարթագէնի մէջ։ Հռոմայեցիները գրաւեցին Սարգինիան և Կորսիկան և զրանով խիստ վնասեցին պունիկեան առևտորին Միջերկրականի արեմետեան ջրերում։ Դրա փոխարէն պունիկեցի Համիլիարը նւանեց նարաւալին Խոպանիայի ցեղերին և մի նոր քաջաւորութիւն ստեղծեց Կարթագէնի համար։ Այս յաջորդութիւնն առանձնապէս կարեւոր էր նրանով, որ Խոպանիայի իրերական ցեղերը տւին Համիլիկարին և նրա որդի Հաննիկարին հիանալի զինուորներ։ Հռոմի և Կարթագէնի մէջ ընդհարում առաջացաւ այն պատճառով, որ Հաննիկարը գրաւեց հռոմայեցիների դաշնակից յունական Սագունտոս գաղութը, իսկ Կարթագէնի ծերակոյտը պաշտպանեց իր զօրապետին։

ԺՈՂՈՎՐԴՅԱՆ Հոռմայեցիները մտածում էին դուրս գալ Աֆ-
տշիկեան պատրիկացին պահապահ արդէն բանակ էին ժողովել Սի-
կիլիայում: Բայց նրանք խոկոյն զգացին, որ այժմ արդէն գործ ունեն ոչ թէ կարթագէնի անշնորհք ծե-
րակոյտի, այլ մի հանձարեղ գօրապետի հետ: Փոխա-
նակ իսպանիայում և Աֆրիկայում յարձակման սպա-
սելու, Հաննիբալը վճռեց մի արտակարգ գործ կատա-
րել — նարաւային Խսպա նիայից ցամաքի նանապարհով
անցնել նիւսիսապին Խտալիա, ուր նա յոյս ունէր ոտ-
քի հանէլ հոռմայեցիներից նոր յաղթւած կելտերին: Դրա համար պէտք էր ճանապարհ բանալ իսպա-
նիայի և Գալլիայի վայրենի և պատերազմաէր ցեղերի
միջով, անցնել Պիրինեան լեռները, Ռէն գետը և վեր-
ջապէս՝ Ալպերը: Պունիկեան բանակը պէտք է կտրւէր
հարաւային իսպանիայի և Աֆրիկայ հետ բոլոր յարարե-
րութիւններից, մտնէր քիչ ծանօթ երկրներ՝ յատկա-
պէս հարաւի մարդոց համար դաժան կլիմայով, և
յոյսերը գնէր միմիայն իր անդրդւելի ուժի վրայ:
Հինգ ամիս տեսեց մինչև որ Հաննիբալն երրօյից մինչև
Տուրին հասաւ և այդ ժամանակում նա կորցրեց իր
զօրքի կէսը: Առանձնապէս սարսափելի եղաւ Ալպերն
անցնելը (հաւանօրէն փոքր Աէն-Բէրնարով). սեպ-
տեմբերին լեռներում արդէն ձիւն էր զալիս. փղերն
ու մարդիկն անդունդներն էին զլորւում, կորել տե-
ղացի վայրենիների հետ, որոնք բռնում էին կածան-
ները և բարձրից քարեր էին զլորում անցնող զին-
ւորների վրայ՝ աւելի արիւնալի դուրս եկաւ, քան
կանոնաւոր ճակատամարտերը: Հաննիբալը Պօյի հո-
վիտը հասցրեց 20,000 լիւրիական և իրերական հետևակ
և 6,000 նումիդիական¹⁾ հեծելազօր — ինչպէս ե-

¹⁾ Նումիդիան հիւսիսային Աֆրիկայի մի հանանգն է,
որ բնակւած է պատերազմաէր թափառական ցեղերով,

ընում է՝ մի չնչին ոյժ, համեմատելով Հոռմի զօրու-
թեան հետ, որի տրամադրութեան տակ էին բոլոր ի-
տալիայի միջոցները: Բայց նրա անհաւատալի արշա-
ւանքը միանդամից մեծ ծառայութիւն արեց նրան: Նա
բոլորովին շփոթեցրեց հոռմայեցիների հաշիւներն
ու ձեռնարկած միջոցները: Թշնամին նրեւաց թի-
կոնի կողմուն եւ, բացի դրանից, վաս կերպով
նւանած կելտական նահանգում: Պէտք եղաւ շտապով
դարձնել զօրքերը — հիւսատոսներից մէկի բանակը
Սիկիլիայից ուղարկել հիւսիս: Նոյն իսկ առաջին ընդ-
հարման ժամանակ աֆրիկական հեծելազօրը բոլորո-
վին փշրեց հոռմէականին և Պուրիոս Սկիպիոն հիւսի-
տոսն շտապով նահանջեց, որ միանայ Սիկիլիայից ե-
կող Տիրերիոս Սենապտոնիոս Լոնգի հետ: Կազմւեց հոռ-
մէական մի մեծ բանակ: Լոնգը վճռեց յարձակւել ա-
ռանց դանդաղելու: Հաննիբալը կանգնած էր Տիրեա
գետի միւս կողմը, այսպէս որ սաստիկ ցրտի ժամա-
նակ լեզիոններն ստիպւած եղան ջուրն անցնել: Հոռ-
մայեցիները բոլորովին ջարդւեցին: Տրեբիայի մօտ
կատարած յաղթութիւնն առաջացրեց կելտական
ցեղերի բաժանվելը Հոռմից: Հաննիբալը նրանց զօ-
րագնդերով լրացրեց իր փոքրիկ բանակի պակա-
սորդները: Այն ինչ նրա գէմ էր դուրս գալիս հոռ-
մէական երրորդ բանակը՝ ժողովրդի սիրելի Ֆլամի-
նիոսի առաջնորդութեամբ: Նոր հիւսատոսը ձեռ-
ներէց և նոյն իսկ ինքնավատան մարդ էր, բայց Տի-
կինոսի և Տրեբիայի մօտ տւած դասերը նրա վրայ էլ
մի քիչ ազդեցին: Նա մի ամուր դիրք էր գրաւել
կարթագենացիների զիմացը և գաշտը չէր դուրս
զալիս: Այն ինչ Հաննիբալի զրութիւնն այնպէս էր,
որ նա միւս նոր ու նոր յաղթութիւննից պիտի տանէր,
որ կարողանար կանգնուի մնալ. Նա օտար երկրում
էր և չէր կարող յոյս գնել փոփոխամիտ կելտերի

հաստատում օժանդակութեան վրայ։ Նա կրկին վճռեց մի այնպիսի գործ անել, որ ամեն մի ուրիշ մարդու համար անհարին կըթւար. Ֆլամիանոսի մօտովը՝ Տօսկանական ճահիճներովն անցկացաւ։ Չորս օր շարունակ նրա մարդիկը գնում էին մինչև կոկորդը ջրերի միջով, հազիւ անցնելով ճախճախոտ միջավայրով. ջրերի մէջ երեացին հիւանդութիւններ, ինքը հաննիքալը կորցրեց մի աչքը, բայց և այնպէս գործը գլուխ եղաւ։ Պունիկեցինները գուրս եկան հիւպատոսի թիւ կունքը՝ դէպի Հռոմ տանող բաց ու ազատ ճանապարհի վրայ։ Ֆլամինոսն ընկաւ նրանց ետևից և Տրագիմէնան լճի մօտ թակարդն ընկաւ։ Ինքն սպանւեց, իսկ զօրքը լիակատար պարտութիւն կրեց։

Կանայի հակառակութեան համարակար:
Հռումում յաղթեց այն կուսակցութիւնը, որը պնդում էր, թէ պատերազմը պէտք է վարել զգուշութիւնով։ Նրա ներկայացուցիչ ֆարիս Մաքսիմոսը նշանակւեց իշխանապետ (գիլտատօր) և իր կարգադրութիւնների համար արժանացաւ «Կունկտատօր» (Դանդաղկոտ) մականուանը։ Նա անշեղ կերպով հետեւմ էր մի ծրագրի՝ բաց դաշտի մէջ ճակատելուց խուսափել և պաշտպանել ամրացւած տեղերը։ Այդպիսի պատերազմն իսկապէս անցարձար էր Հաննիքալի համար, ուր հնաւ չունեց իր փորդիկ զօրքով զբաղւել նազաբներ պաշտելով։ Այժմ նրա զիմանը յոյսն էր Հռոմի հպատակ ժողովրդների ապատամբւելը։ Որպէս զի այդ ապատամբութիւնը բարձրացնէ, նա անցաւ Ալուլիա, 216 թւին հռոմայցինները նրան մի նոր առիթ են տւին՝ հռոմայցի զօրապետներից իր առաւելութիւնը ցոյց տալու։ Տերենտիոս Վարրոն և Էմիլիոս Պաւլոս հիւպատոսները շեղեցին Կունկտատօրի սպատակական զրութիւնից։ Նրանցից առաջինը մի մսավաճառի որդի, կուած էր իր հոչակաւոր ընկերի հետ և ցանկանում էր մի վճռական հարւածով

փառք ձեռք բերել։ Նա յոյս ունէր յաղթել, որովհետ հռոմայցինները թւով շատ աւելի էին, քան պուտանիկեցինները։ Կաննայի մօտ տեղի ունեցաւ ճակատամարտը։ Հաննիքալի կերտերը, որ կանգնած էին միամարտը, Հաննիքալի կերտերը, բայց թերեի կողմում ջավայրում՝ յետ նահանջեցին, բայց թերեի կողմում ջավայրում՝ յետ նահանջեցին, իսկ նուիրերացինները և Լիւբիացինները յաղթեցին, իսկ նուիրերացինները միական հեծելազունդը քշեց անցկացաւ լեզիոնների միզական հեծելազունդը քշեց անցկացաւ լեզիոնների թիկունքի կողմը։ Հռոմայցինները մի այնպիսի պարտութիւն կրեցին, որի նմանը՝ դալլական արշաւանքից յետոյ չէին տեսել. 80,000 հոգուց միայն մի երրորդն ազատւեց, թւում էր, թէ պունիկեցիններին մնում էր միայն զնալ Հռոմի վրայ և արիւնալի պատերազմին վերջ զնել՝ քաղաքն առնելով։ Բայց Հաննիքալը գիտեր, թէ ուժ հետ գործ ունի. Ծանր դժբադութիւնը միայն բարձրացրեց հռոմայցիների ոգին, ստիպեց նրանց մոռանալ բոլոր անձնական հաշիւներն ու վեճերը եւ կրծերն իրար մօտեցնել՝ նրանցով պակագմեն հայրենիքի պատշաճութեան համար. Ծերտկոյարը Վարրոնին շնորհակալութիւն արեց նրա համար, որ հաւաքեց զօրքի մնացորդները և յոյսը շըկտրեց հայրենիքի փրկութիւնից։ Բոլոր աղամարդ ազգարնակութիւնը՝ 17 տարեկանից սկսած, զէնքի կոչւեց։ Ստրուկներից ընտրեց 2 լեզիոն։ Սենատօրներն (ծերակոյտի անդամներն) իրանց հաշւով նաւատառում պատրաստեցին ու զինեցին։ Զօրքի գըլուին նշանակեցին ֆարիսս Դանդաղկոյտին և կելտական պատերազմի հերոսներից մէկին՝ կլաւդիոս Մարկուսուսին։

Հաննիքալը շատ լաւ գիտէր իր ուժերը, դրա համար էլ փորձ չարեց Հռոմի վրայ յարձակւելու հոգած հեղեղներից։ Ետական ցեղերին ապստամբեցնելու նրա յոյսը կարծէս սկսում էր իրականանալ. Հռոմից անջատւեցին Սիրակուզան, Կապուան և Սամիացինները։

Բայց այդ անջատումը մի առանձին տեսակ էր. ի հարկէ կարեոր էր այն, որ Հռոմն այլ ևս օգնութիւն չէր կարող ստանալ իր դէմ ապստամբւած նահանգներից և որ նա պէտք է մտածէր նրանց կրկին նւաճելու մասին. բայց Հաննիբալն անկարող էր Հռոմի դէմ զրգուել մի նոր սամիկական պատերազմ, չէր կարող նոյն իսկ իր սպանուող զինուրները փոխարինել այդ իտալացիներով։ Հռոմի դէմ յարձակողական գործողութիւնների համար նրա նոր դաշնակիցները, բայց կելտերից, քիչ ընդունակ երկացին, որովհետեւ ևեռ ևս չէին ուղղւել սամիկական պատերազմների հարւածներից և շատ թոյլ ձեռվ էին օգնում Պունիկեցիներին։ Պատերազմը ձգձգւեց և հռոմայեցիները կարողացան ուղղւել։ Հաննիբալի դէմ նրանք պաշտպանուում էին ամենայն զգուշութիւնով։ Բայց մէկ մէկ պատժում էին նրա դաշնակիցներին։ Արդէն 212-211 212 թւին Մարկելոսն առաւ Սիրակուզան, 211-ին զրաւեցին Կապուան։ Հաննիբալի համար ծագում էր կողմանակի օգնութիւն ստանալու ճակատագրական հարցը. ակներե էր, որ իր սեփական ուժերով նա չէր կարող յաղթել Հռոմին։ Կարբագենի ծերակոյտը բոլոր ժամանակ պատերազմին վերաբերում էր համարեա անսարքեր ձեւով, կարծես թէ, նա կարբագենի համար չէր մզւում։ Մի քիչ օժանդակութիւն ուղարկեցին միայն Իսպանիա։ Դրա փոխարէն Հաննիբալը յոյս էր զրել իր եղրօր՝ Հաստրուբալի վրայ, որը մի կամակոր կոխւ էր մզում հռոմէական զօրքերի դէմ Իսպանիայում։ Այստեղ գործող երիտասարդ զօրավար Պուբլիոս Կորնելիոս Սկիպիոնը յաղթեց Հաստրուբալին, բայց չը կարողացաւ խանգարել նրան Իտալիա զնալ նոյն ճանապարհով, որով առաջ անց էր կացել Հաննիբալը։

Գալիսայում Հաստրուբալը լրացրեց իր իրերա-

կան զօրքերը նոր զինուրներով և 207 թւին մտաւ Իտալիա։ Վասանգը ծայրայեղ էր, բայց հոսմայեցիները զեղեցիկ կերպով օգտաեցին նրանով, որ զըտնուում էին երկու եղբայրների մէջ տեղը և բաժանբաժան պահեցին նրանց։ Հաննիբալի դէմ հարաւային իտալիայում կանգնած կլաւդիոս ներոն հիւպատոսը բռնեց այն սուրհանդակականերին, որ ուղարկւել էին Հաննիբալին իմացներու, թէ օգնութիւնը հասել է։ Նա իսկոյն վճռեց մի համարձակ քայլ անել. գաղտնի կերպով հեռացաւ իր բանակատեղից իր ամենալաւ զօրքերով, խիստ արագ ընթացքով անցաւ ամբողջ իտալիայով և օգնութեան հասաւ իր ընկերին, որ կտրում էր Հաստրուբալի ճանապարհ։ Հասրուբալի զօրքերը ոչնչացան, և դրանով էլ վճռեց Հաննիբալի բաղդը։ Մի քանի տարի ևս նա զեռդիմացաւ Իտալիայում, բայց հռոմէական ուժերը նրա չորս կողմում աւելի և աւելի նեղ շրջան էին կազմում։ Ուր որ նա ինքը չէր երևում, այնտեղ յայտնուում էին հռոմայեցիները և ամրանում։ Վերջապէս պունիկեան զօրքը սեղմւեց վերջին անկիւնում՝ Բրուցիումի մէջ, թէ և հակառակորդները գեռ ևս չէին վատահանում ճակատել Հաննիբալի դէմ բաց դաշտում։

Հաննիբալին մահացու հարւած հասաւ կողմանակի Պատերազմի Առողիւմ, տեղից՝ այն Իսպանեայից, ուր նա կազմել էր իր բանակը։ Պուբլիոս Կորնելիոս Սկիպիոնն այնտեղ բուրովին կործանեց կարթագէնի իշխանութիւնը և թոյլաւութիւն խնդրեց ու ծերակոյտից իրաւունք ստացաւ զուրս զալ Աֆրիկա։ Երիտասարդ զօրավարի ժողովրդականութիւնն այնքան մեծ էր, որ ծերակոյտը նրան մի քիչ նախանձով վերաբերեց և նրա առամազքութեան տակ թողեց միայն սիցիլական բանակը, որի զինուոր մասը կազմում էին կաննայի

մօտ ջարդւած լեզիոնների մնացորդները: Բայց Սկիպիոնին օգնեցին կամաւորները և կամաւոր նւիրատւութիւններն, այն էլ ոչ միայն Հռոմից, այլ և դաղութներից և Հռոմին հաւատարիմ մնացած քաղաքյին համայնքներից (մունիցիպիա): Նրա Ամբիկա դուրս գալը Կարթագէնի ծերակոյտին յանկարծակի բերեց, ինչպէս Հռեզուլոսի ափ ելնելը: Կարթագէնացիները պաշտպանութեան ուրիշ ոչ մի միջոց չը գտան, բացի Հաննիբալին օգնութեան կանչելը: Միրտը դառնութիւնով լցւած՝ թողեց մեծ զօրավարն իտալական հողը, որը չափել-չափչփել էր ծայրից ծայր և այժմ կորցնում էր, ոչ մի պարտութիւն չըկրելով: Նրա փորձւած զինւորները մեծ մասով արդէն ընկել էին արշաւանքներում, և երբ Հաննիբալը երեաց Աֆրիկայում, արդէն չէր կարող յոյս դնել իր ուժերի վրայ: Մինչեանգամ նա փորձ արեց բանակցելու Սկիպիոնի հետ, բայց անյաջող դուրս եկաւ: Զամայի մօտ հանդիպեցին կաննայում ջարդւած լեզիոններն իրանց նախկին յաղթողների հետ: Հաննիբալի աֆրիկական և իբերական հին զինւորները պահպանեցին իրանց փառաւոր անունը և երկար ժամանակ դիմաղրեցին: Բայց նոր հաւաքուած զինւորները չէին կարող չափել հսումայեցիների հետ և միայն խանգարում էին իրանց մարդկանց: Գործը վերջացաւ Պունիկեցիների լիակատար պարտութիւնով: Կարթագէնն իսկոյն ընդունեց խաղաղութեան դաշնքը, թէև նրան խիստ ծանր պայմաններ էին զրել—մի ահազին պատերազմական տուղանք, նաւատարմը յանձնել հսումայեցիներին և ենթարկել Հռոմին՝ դաշնակից քաղաքի իրաւունքներով (202 թ.):

Երկրորդ Պունիկան պատերազմը շատ կողմերով իրաւական եղաւ: Նա պարզ կերպով ցոյց տվեց, որ մեծ պատերազմներում վնասական նեանուկուրիւն ունեն ոչ և յնքան առաջնորդի ձիւերը, որքան ժողովուրդների ոգին ու կազմուրիւնը:

Հաննիրալի հանճարը շատ ուժեղ կերպով արտայայտւեց նրանում, որ նա իսկապէս մենակ 16 տարի շարունակ պատերազմեց Հռոմի հետ: Բայց գրանով վերջնական ելքը չըփոխուեց: Կարթագէնն իր զիրքի բարձրութեան վրայ չէր, իսկ Հռոմն արտայայտեց հայրենասիրութեան և ամրութեան անհատնելի ոյժ: Խտալական ցեղերի վարմունքը ևս չափազանց բնորոշ և կարեռոր էր: Պատերազմն իտալիայի մէջ նրանց տրամադրութիւնն իմանալու մի ծանր փորձ էր: Կենդանի, գործունեայ ուժերը պաշտպանում էին Հռոմին. նրանից բաժանուող կելտերը, սամինիցիները, կամպանիացիները և հարաւային խտալացիներն արդէն այնքան թուլացած և բաժան-բաժան էին եղած հառմէական նւաճումով, որ իրանց ազատիչն նշանաւոր օգնութիւնը ցոյց չըտիին:

Կարթագէնին յաղթելով՝ հոռմէական հանրապետականութիւնը դարձաւ Միջերկրականի շրջակայքում առ կանոնագոր պետութիւնը: Թէ ինչ տպաւորութիւն էր գործում այդ ժամանակ Հռոմի ուժը, կարելի է տեսնել նրանից, որ դեռ մինչև Հաննիբալին վերջնականապէս յաղթելը՝ պունիկեան պատերազմի ամենատաք ժամանակը, եղիպատացիները ճանաչեցին Հռոմն իրը խնամակալ անչափահաս Պողոմէոս Եպիփանոսի վրայ, աչքի առաջ ունենալով Մակեդոնիայի թագաւոր Փիլիպոս III-ի և Անտիոքոս III Սկիպիոնի փորձերը տիրելու եղիպատոսին: Այսպիսով Հռոմը կոչվեց միջամտելու Ալեքսանդր Մեծի բազուրութիւնից առաջացած արեւելիան յունական միավետքիւնների մէջ: Փիլիպոսը և Անտիոքոսը միացան Հռոմի դէմ, բայց միաբան չէին գործում, այնպէս որ կարելի եղաւ կուել նրանց դէմ առանձին առանձին: 196 թւին Տիրոս Կւինկցիոս Թլամինիոսը կինոսքէֆալի մօտ յաղթեց Փիլիպոսին, և 190-ին Լուկիոս Սկիպիոնը, Զամայի յաղթականի եղբայրը, Զարդեց Անտիոքոսին Մազնէզիայի մօտ: Յաղթւած նահանգները չը միացւեցին Հռոմի հետ, այլ նրա հետ դաշնակցութեան մէջ դրւեցին, որի ժամանակ, ի հարկէ, պէտք է հետեւին

ծերակոյտի հրամաններին ամենակարևոր հարցերում՝
մանաւանդ արտաքին քաղաքականութեան վերաբե-
րութեամբ։ Սակայն նրանց էր թողնւած իրանց ներ-
քին գործերը կառավարելու իրաւունքը, և դրա հա-
մար ֆլամինինուր կարող էր Յունաստանն «ազատ»
հրամարակել։ Այդ ժամանակի բոլոր յաղբութիւնները
սարան Սկիպիոնների շրջանի մարդիկը (այդ շրջանին
էր պատկանում և ֆլամինինուր)։ Այդ շրջանի գործուր
կանգնած Պուբլիան ստածաւ «Աֆրիկացի» տիտղոսը,
նրա եղբայր Լուկիանոսն՝ Սախացի։ Բայց գերակշռու-
թիւնը բոլորովին առանց հակառակորդների չէր։ Կորնե-
լիոս Սկիպիոնների անչափ բարձրանալը երկիւղ և
նախանձ էր զրգում։ Հին բնաւորութեան տէր հառ-
մայեցիններին, պարզութեան, բարքերի խստութեան,
նեղ, եսակական հայրենասիրութեան կուսակիցներին
հաճելի չէր Սկիպիոնների բարեկամական յարաքերու-
թիւնը օտարների հետ, նրանց գլուխ խոնարհեցնելլը
յունական կրթութեան առաջ։ Նորմութութիւնների,
շուայլութեան և օտար ազգեցունների գէմ կուելու մէջ
առանձնապէս աշքի էր ընկնում Մարկոս Պողցիոս Կատո-
նը, Հռոմի ժողովրդի ամենախիստ ցենզօրներից մէկը։
Սկիպիոնների նշանակութիւնը մի առ ժամանակ այն-
քան խախտեց, որ հասարակական ժողովում Լուկի-
անոսին դատապարտեցին, մեղադրելով զանձարանից
դոդութիւն անելու մէջ։ Պուբլիոսն ինքը դժւարու-
թիւնով խուսափեց նոյն տեսակ դատավճռից և գոր-
ծերից բոլորովին քաշեց։

Բայց դժւար էր վերջնականապէս հեռացնել
Սկիպիոնների շրջանը. նրան էին պատկանում այն ժա-
մանակի Հռոմի ամենաընդունակ մարդիկը, և առանց
նրանց մասնակցութեանը գործերը, մանաւանդ ար-
տաքին, վատ էին գնում։ 168 թւին, մի ամրող շարք
անյաջողութիւններից յետոյ, հոռմայեցիններն

ստիպւած էին Մակեդոնիա ուղարկել Փիլիպոս Ա-ի
որդի Պերսէոսի գէմ այդ շրջանի աչքի ընկնող գոր-
ծիչներից մէկին—Եմիլիոս Պաւլոսին։ Նա արագ վեր-
ջացրեց պատերազմը՝ Պիդնայի մօտ յաղթելով հա-
կառակորդին։ Նրա որդուն որդեգրեց Սկիպիոն Աֆ-
րիկացին, յատկացնելով Սկիպիոն Էմիլիանոս անունը։
Նրան դիմեցին երրորդ Պունիկեան պատերազմի ժա-
մանակ, որ ծագեց հոռմայեցինների անտանելի բժա-
խնդրութիւնների և ձնշումների պատճառով. ծերա-
կոյտն օգնում էր Կարթագէնի գէմ Նումիդիական ա-
ռաջնորդներին, իսկ ծերունի Կատոնն ամեն յարմար
ու անյարմար գէսքում կրկնում էր, որ կարթագէնը
պէտք է կործանել։ Շայրայեղութեան հասցրած կար-
թագէնացինները պաշտպանում էին յուսահատական
քաջութիւնով, և պատերազմն սկզբում Հռոմի համար
անյաջող էր գնում։ Բայց Սկիպիոն Էմիլիանոսը երեք-
օրեայ կուից յետոյ՝ առաւ և կործանեց Կարթագէնը

146

Նոյն տարին հոռմայեցինները ձնշեցին
յոյների ապստամբութիւնը, և հոռմէական զօրա-
վար Մումմիոսն այրեց Կորնթոսը։
Այս յաղթութիւններով Հռոմը գարձաւ ամբողջ Գաւառները.
Միջերկրականի տէրը։ Ճշմարիտ է, կային ժողովրդ-
ներ, որ չէին հպատակում նրան—իսպանական և
գալիքական ժողովրդների մի մասը գեռ ևս պահում
էին իրանց անկախութիւնը—բայց այն ժամանակի
աշխարհի կեանքում նրանը մեծ նշանակութիւն չու-
նէին. Կային դաշնակից պետութիւններ, որ սպան-
ապանում էին իրանց ինքնավարութիւնը—Եգիպտոսը,
Պերգամը, Նումիդիան, բայց նրանց քաղաքականու-
թիւնը պէտք է ենթարկեր ծերակոյտի հրամաններին։
Իսկ մի շարք կարեւոր համանգներ անցան ողբակի
Հռոսի ժողովրդի տիրապետութեան տակ։ Սկիպիոն
եղաւ նրա առաջին գաւառն (Պրուինցը) իտալիայից

դուրս. յետոյ միացան Ցիսալպինեան Գալլիան (այսինքն՝ Ալպերից այս կողմի Գալլիան—այժմեան Լօմբարդիան և Պիէմոնտը), Սարդինիան (Կարթագէնի հողերը): Գաւառների բոլոր հողերը նաևաչում էին Հռոսի ժողովրդի սեփականութիւնը. հողերի մի մասն անցնում էր գանձարանին կամ բռնւում էր գաղթականութիւններով. մնացածների վրայ շարունակում էին բնակւել նախկին բնակիչները, բայց արդէն ոչ իբրև սեփականատէրեր, այլ իբր կապալառուներ, որ պէտք է Հռոմին տուրք (vectigal) վճարէին: Գաւառի կառավարութիւնն ամբողջովին պատկանում էր բարձր պաշտօնեաներին (մագիստրատ) կամ երբեմն այդպիսի պաշտօն վարածներին (փոխ հիւպատոս, փոխ-պրէտօրներ), որ այդտեղ էին ուղարկում ծերակոյտի կողմից¹⁾: Հռոմէական փոխարքան, քանի նա գտնում էր զաւառում, ամբողջ ազգաբնակութեան կեանքի և սացուածքի սէրն էր: Հռոմ վերադառնաւուց յետոյ կարելի էր գանգատուել նրա վրայ ծերակոյտին կամ նոյն իսկ դատի ենթարկել նրան բռնի կերպով փող կորզելու համար, բայց դաւառացիների համար հեշտ չէր արդարադատութիւն դանել ազդեցիկ հռոմայեցիների դէմ, և սովորաբար փոխարքաները շատ էին ի չարք գործ գնում իրանց իշխանութիւնը — կողոպտում էին ժողովրդին և ամեն տեսակ բռնութիւններ գործադրում: Ասելին անզամ աւելորդ է, որ դաւառների շատանալը զօրացրեց ծերակոյտին, որովհետեւ նրա անդամներից էին նշանակում փոխարքաները:

¹⁾ Պրօվինցի կառավարիչ նշանակում էին այն մարդիկ, որոնք երբ և իցէ արժանացել էին վարելու Հռոմում բարձր, ընտրովի պաշտօններ:

Բայց ծերակուտական ազնւականութեան վրայ Ասպետներ. գրւած էր մի շատ էական սահմանափակութիւն. կառավարչական պատօններ վարող անձերին արգելած էր մասնակցել առեւտական գործերում: Դրա համար էլ սենատօրները (ծերակոյտի անդամները) չէին կարող ոչ նաւեր շնորհել, ոչ պետական ընդարձակ հողաբաժններ կապալով վերցնել, ոչ էլ աճուրդով գնել զաւառներից հարկեր և տուրքեր հաւաքելու իրաւունքը: Այն ինչ Հռոմի արած նւաճումների շնորհով բացւում էին ահապին և չափազանց շահաւէտ ձեռնարկութիւններ: Միջերկրականի վրայ առեւտուրը կենդանացաւ, որովհետեւ հռոմէական տիրապետութիւնը վերջ դրեց ծովափնեայ պետութիւնների մէջ տիրող պատերազմներին: Գաւառների նւաճումով արագ աճուրմ էր պետական հռոմափրութիւնը, միշտ շատանում էին գաւառներից հաւաքւող հարկերն ու տուրքերը. հռոմէական ցենզօրներն աճուրդով ծախում էին պետական հողերի անտեսութիւնը, հարկերի և տուրքերի հաւաքումը, և ցենզօրների աճուրդատեղին դարձաւ մի հրապարակ, ուր գնահատում էին համարեա ամբողջ լուսաւոր աշխարհի բարեկեցութիւնը և բաշխում հարկերը: Այս փողային գործերում շատ արագ կարելի էր կազմել հսկայական հարստութիւն, և բնական է, որ դրան էին ձգտում քիչ ու շատ կարողութիւն ունեցող հռոմայեցիները: Որովհետեւ սենատօրները և ընդհանրապէս պաշտօնատար ազնւականութեան (նօրիիլտէտ) անդամները հեռացւած էին այդ գործերում ուղղակի մասնակցութիւն ունենալուց, դրա համար նրանք աշխատում էին մի կերպ զանց առնել օրէնքը, իրանց գրամագլուխները լանձնելով ազատ արձակած սորուկներին, որոնք պէտք է գործերը վարէին իրը թէ իրանց կողմից: Դրա շընորհով ազատ արձակածները մեծ նշանակութիւն

ստացան քաղաքում. Նրանք յաճախ շատ հարստանում էին: Բայց, բացի զրանից, կազմեց մի ամբողջ դաստակարգ, որն իրան նւիրում էր բացառապէս փողային ձեռնարկութիւնների և խոշոր առևտրի. բոլորովին ազատ գործելու համար՝ նրանքիս լսափում էին պետական պաշտօններից: Այսպիսով՝ պատօններն ու ծերակոյտը բոնող ազնականութեան կողմին երեւան եկա փողային արիստոկրատիան, որի ձեռքն էին ամբողջ աւելանի դրամագլուխութը: Յենգօրները գըրում էին այդ հարուստներին առաջին դասակարգի ասպետական հարիւրեակների մէջ (ցենտուրիա), և զրա համար էլ բոլոր դասը կոչւեց ասպետների դաս (equites):

Հասմիքացիոնականի գործութեան մէջ առաջա-կանի նւաճումը ծնեցըն Հոռոմի ժողովրդի կեանքում բառին- ուրիշ տիսուր փոփոխութիւններ ևս: Հոռոմի իր զէնի անուխու յաջողութիւններով պարտական էր զիսա- տրապէս ազատ գիւղացիների հարենասիրութեանը և տոկութեանը: Լեզունների աննման հետևակազօրը կազմում էր 7—10—15 իւզերանոց հողաբաժիններ ունեցող մանր հողատէրերից, որոնք սովորել էին ի- րանց դաշտում տոկուն աշխատանքի, բայց չէին ամա- չում իրանց աշխատանքից և պարկեշտ կարողութիւնից, այլ պարծանքով անւանում էին իրանց մեծ Հոռոմի ա- զատ քաղաքացիներ: Բայց երկրորդ պունիկեան պա- տերազմի նման պատերազմները կամ երկար ու ան- ընդհատ արշաւանքները ծովի միւս ափերը՝ Մակե- դոնիա, Ասորիք, Խսանիա՝ քայլայեցին հոռմէական զիւղացու ուժերն ու կեանքը: Բայլայւում, կործան- ում էր տիրոջ կողմից բարձիթողի արւած մանր տնտեսութիւնը. նողատէրն ինքը զիւղացուց դառնում էր զինուր. սովորում էր ապրուս որոնել ոչ թէ նո- ղագործութեան, այլ բռակի ու բարանի մէջ:

Ճշմարիտ է, ամեն մի նոր նւաճումից յետոյ աղքատ քաղաքացիների մի մասը հողաբաժիններ էր ստանում զաղթավալրերում, բայց զրա շնորհով հոռ- մայեցիները և լատինացիները գնում էին կամաց-կա- մաց բնակութեան նոր և հեռաւոր տեղեր, իսկ Հոռոմի նահանգը և Լացիումը դատարկւում էին: Ինքը՝ Հոռոմ քաղաքն իտալիայի բոլոր մասերից և գաւառներից գրաւում էր ահազին քանակութեամբ բնակիչներ, բայց նրա մէջ աւելի և աւելի աճող ամբոխն աչքի էր ըն- կուտ մեծ քաղաքի խուժանի բոլոր վատ յատկու- թիւններով: Այնուղ միւս աւելանում էր այն մար- դիկների թիւը, որոնք ներ վաստակ են որոնում պե- տութեան և հարուստների նաւով. ընարութիւնների ժամանակ իրանց ձայները ծախտող քաղաքացիներ, Յունաստանից և Արևելքից եկած բաղգախնդիրներ, դատարկապորտ մարդիկ, որ ապրում էին քաղաքից արւող ձրի բաժիններով և ծերակոյտի անդամների և ասպետների ողորմութիւններով,— ի հարկէ այս բոլոր խուժանը չէր կարող փոխարինել նախկին հասարակ և դիմացկան զիւղացիներին: Պատկերն ամբողջացնե- լու համար պէտք է մի փաստ էլ աւելացնել. նւաճում- ները յանկած ծայրակի կերպով աւելացրին սրուկ- ների թիւը, առանձնապէս շատ խուժեցին նրանք Ասիայից: Հարուս մարդիկ զնում էին նրանց անա- գին խմբերով եւ նրանց աշխատանիով կազմում էին մեծամեծ սնիեսութիւններ (latifundia): Սա լրացնում էր մանր զիւղացիների կարծանումը: Նրանք չէին կա- րողանում շուկայ ուղարկել այնպիսի լաւ անասուններ, որովիսին նրանց հարուստ դրացիներն էին ուղարկում, որոնց արամազրութեան տակ կային ընդարձակ արօ- տատեղիներ և բազմաթիւ հողիներ սարուկներից, աւելի ևս գժւար էր հաց մշակել այնպիսի չնչին գը- ներով, ինչպէս հացառատ Սիկիլիայում և Աֆրիկայում:

Դրա համար էլ մանր հողատէրերն սկսեցին ուրախութիւնով ծախել իրանց հողաբաժնները հարուստներին, թողնել տնտեսութիւնը և հաւաքւել քաղաքներում. այստեղ նրանց առաջ բացւում էր թշւառ պրօլետարիատի ¹⁾ վատ ապահովւած, բայց ուրախ ու անզործ կեանքը:

Այսպիսով՝ հոռմէական ժողովրդի յաղթութիւնները բոլորովին չը բարելաւեցին նրաններքին կեանքը. ընդհակառակը՝ նկատւում էր արագ անկում, որի դէմ յարմար միջոցներ գտնելը դժւար էր:

Գ. 1. Ա Խ Խ Խ VI.

ՔԱՂԱՔԸՑԻԱԿԱՆ ԽՐՈՎՈՒԹԻՒՆԵՐԻ ՃՐՁԱՆՅ

Հոռմի այլառեռութիւնն սկսեց երեալ ոչ միայն պատերազմութիւններն այն Տիբերիական կենցաղի և բարքերի փոփոխութեան, այլ և պատերազմական ոգու ընկերու մէջ: 9 տարի տես (149-ից միած) իսպանական ցեղերի հետ յոպնեցուցիչ պատերազմը, և հոռմայեցինները ոչ միայն անկարող էին նւաճել նրանց, այլ և անդադար խայտառակ պարտութիւններ էին կրում: Այս կուռում առանձնապէս աչքի էր ընկնում Լուզիտանացի Վիրիատը, որից յաջողւեց ազատել միայն ուղարկւած սպանիչների ձեռքով. բայց և նրա մահից յետոյ իրերացինների առութիւնը – Նումանացիան ցոյց էր ապիս անյաղթելի դիմադրութիւն: Նրա դէմ սկսած արշաւանքում Մանկինոս հիւպատոսի բանակն ընկաւ այն դրութեան մէջ, որպիսի զրութեան ընկաւ կաւտիննեան կրծում սամանիացիններին անձնատուր եղած զօրքը: Նրան ամեն կողմից շրջապատեցին լեռների մէջ, և նրա քւեսոր

¹⁾ Մի մարդ, որ չունի ապրուստի որոշ միջոցներ:

Տիբերիոս Գրակքոսը մեծ դժւարութիւնով կարողացաւ համոզել ազատ արձակելու բանակն այն պայմանով, որ դաշն կը կապեն և հոռմէական բանակի բոլոր ստածւածքը կը յանձնեն նումանցիացիններին:

Ծերակոյար վարւեց ճիշտ այնպէս, ինչպէս սամնիական պատերազմում - խաղաղութեան դաշնութը չը հաստատեց և Մանկիանոսին յանձնեց թշնամիններին: Իսպանիա ուղարկեցին Սկիփիոն Էմիլիանոսին, ինչպէս հանրապետութեան ամենալաւ զօրավարին. վերջապէս նրան յաջողւեց հոռմէական զօրքերի կարգապահութիւնը վերականգնել և գրաւել նումանցիան: Այդ նոյն ժամանակում ևս ճնշւեց Սկիփիայում սարուկների սարսափելի ապստամբութիւնը:

Բայց այս անցքերից աւելի կարևոր էին ներքին Տիբերիոս բարենորողութիւններն այն Տիբերիոս Գրակքոսի, որ այնքան կարևոր դեր խաղաց Մանկիանոսի զօրքում: Նա սերւում էր Պլերէյական յայտնի Սեմպրոնիան տոհմից: Նրա հիւպատոս և ցենզօր հայրն արժանացաւ ընդհանուր յարգանքի իր անքիծ, խիստ վարքովի, արդարութիւնովն ու մարդասիրութիւնովը: Նրա մայր Կորնելիան Զատայի յաղթողի զուտորն էր. նա հայրգեց իր որդիններին իր տան հպարտութիւնը և փարասիրութիւնը – մի աղնիւ ձգտում՝ ամենքի աշքում քարձրանալ դէպի հայրենիքն ունեցած սիրովն ու մատուցած ծառայութիւններովը: Տիբերիոսը խորին կերպով դիտակցում էր, որ իր ժամանակի հոռմայեցիններն անարժան են իրանց նախնիքներին և որ անհրաժեշտ է չարիքի դէմ մաքառել, քանի դեռ ուշ չէ:

Նրա բարենորողութեան ծրագիրը վերջնականապէս հասունացաւ այն ժամանակ, երբ իսպանիա գնալիս նա անցնում էր Էտրուրիայով և դիտում ամայացած զաշտերը և սարուկ ազգաբնակութիւնը,

որ բուն էր դրել այդ դաշտերում նախկին աղաս գիւղացիների փոխարէն։ Այդ ժամանակից նա իր զոյուրեան նպատակը դրեց վերականգնել գիւղական դասակարգը։ Հառմի յաջողութիւնների եւ մեծուրեան իսկական հիմունքը։

133

133 թւին Տիբերիոսին տրիբուն լնտրեցին։ Նա կօմիցիաներին առաջարկեց հողատիրական (ագրարական) օրէնքը, որը պէտք է ստեղծէր մանր հողատէրերի մի նոր դասակարգ։ Իտալիայում պետական հողերն արդէն յափշտակւած էին և, ըստ երեսութիւն նոր սեփականատէրերի համար ոչ մի տեղից հողեր չէր կարելի գտնել։ Բայց պետական հողերի (ager publicus) գրաւումը կատարել էր յափշտակութիւնների ազօրինի ճանապարհով, որոնց ժամանակ հարուստ քաղաքացիները իւրացրել էին ահազին հողաբաժիններ։ Գրակքոսը վերանորոգեց լիկիանոսի և Սերսոսի օրէնքների այն կանոնը, որի համաձայն ոչ չըպէտք է որոշ թւից աւելի իւզեր պետական հող ունենայ։ Գրակքոսն այդ թիւը որոշեց 1000 իւզեր։ Բոլոր աւելորդ նողերը պէտք է վերադարձէին և վերածէին մասն նողաբաժինների՝ խենի գիւղացիների նամար, ամեն մէկ բաժինը 30 իւզերից։ Այդ հողաբաժինները տրւում էին մի փոքրիկ տուրքով, և արգելւած էր ծախել այդ բաժինները, որպէս զի խանդարեն հարուստների հողաբաժիններ գնելը։ Պետական հողերի վերադարձնելու և բաշխելու բոլոր դորձերի կառավարութիւնը յանձնւեց եւեն հոգուց կազմած մի մասնածողովի, որ ընտրւում էր ժողովրդից ամենից շատ պէտք է վնասւած լինէին Գրակքոսի առաջարկութիւնից, որովհետեւնրանց ձեռքումն էր պետական հողերի մեծ մասը. զբա հետ միասին նրանք երեք չէին ցանկանում, որ ստորին դասակարգերը յանկարծ

ուժեղանային մանր, բայց անկախ սեփականատէրերի թւի շատամալու պատճառով։ Նրանք համոզեցին Գրակքոսի ընկեր միւս արիբունին-Օկտավիոսին՝ կանգնեցնել Գրակքոսի օրինագիծն իր արգելքներով (veto)։ Այս արգելքի օրինականութեան դէմ ոչինչ չէր կարելի ասել, և Տիբերիոսին մնում էր կամ հպատակւել և յետաձգել իր ծրագիրը, և կամ, ինչ էլ որ լինէր, հեռացնել իր հակառակորդին։ Նա նախապատւեց այս վերջնուր և արեց մի երկրորդ, չըլաւած առաջարկութիւն—այսինքն՝ հարց դրեց թէ արգեօք կարող է ժողովրդի ցանկութեան դէմ գործող տրիբունը պահպանել իր պաշտօնը։ Զայնտութեան օրն ամեն կողմից խիստ գրգռւած ժողովուրդը չոռմ խուժեց։ Տիբերիոսն սկսեց ձայնտութիւնը և, երբ 17 տրիբներ¹⁾ ասացին «ոչ» (այսինքն չէ կարող), կանգնեցրեց նա քւէարկութիւնը և դարձաւ Օկտավիոսին մի սրտառուչ յորդորով՝ չըստիպել իրան դիմելու ծալլայեղ միջոցների և տեղի տալ ժողովրդի կամքին։ Նա իր ասածին հաստատ մնաց, և Գրակքոսը շարունակեց ձայնտութիւնը մինչև վերջը։ Օկտավիոսին փոխեցին։ Նրա տեղը նշանակւած տրիբունը միացաւ Գրակքոսի հետ, և հողատիրութեան օրէնքն ընդունեց կօմիցիաներում։ Եռապետներ ընտրւեցին՝ Տիբերիոսը, նրա եղբայր Կայիոսը և վեսայ Ապալիոս Կլաւդիոսը։

Բայց բարենորոգութեան դժւարութիւններն աւելի զգալի էին լինում։ Եռապետները պէտք է քննէին հողաբաժիրական պայմաններն ամբողջ իտալիայում և յետ խլէին շատ հողեր, որ երկար տարիներ մասնաւոր անձերի ձեռքերում էին։ Մագեցին բազմաթիւ դանգատներ և անբաւականութիւններ։ Սկսած գործը շա-

¹⁾ Բոլոր տրիբների թիւը 35 էր, ասել է 18 տրիբ կազմում էին մեծամասնութիւնը։

բունակելու համար Տիրերիսովին անհրաժեշտ էր պահպանել իր ձեռքում տրիբունի հղոր զիրքը, այն ինչ այն ժամանակ երկրորդ տարւայ համար վերընտրւելն արգելւած էր օրէնքով: Տիրերիսը կրկին վճուց խախտել օրէնքը եւ թեկնածու հանդիսացաւ 132 րի ընտրութիւնների ժամանակի: Ծերակոյտի անդամները ծայրայեղ կերպով կատաղել էին: Ընտրութեան օրն տրիստոկրատները ներս խուժեցին մեծ հրապարակը (Փօրում), ցրւեցին ժողովրդին և սպանեցին Տիրերիսին ու նրա 300 կուսակիցներին: Բայց չը համարձակւեցին ոչնչացնել Գրակլոսի օրէնքը: Եռապետների մասնաժողովը շարունակում էր գործել և ազատ հողատէրի թիւն աւելացրին 80,000 մարդով: Սակայն այդ ժամանակ պարզւեց, որ հոռմայեցիներին արագ կերպով հողեր բաժանելը յաճախ ստիպում է հողեր խլել լատինացիներից և դաշնակիցներից, այն ինչ թէ սրանք և թէ միւսները հոռմայեցիներից պակաս չէին կրում զինւորական ծառայութեան ծանրութիւնը, և հենց նրանց մէջ աւելի շատ էին պահպանւել անկախ և պատերազմասէր զիւղացիներ:

Կայիսու Գը-
րակոս:
123

Այս հանգամանաքն աչքի առաջ ունեցաւ Տիրերիսի եղբայր Կայիսուը (123 թ): Կրոսեր Գրակլոսն իրան նւերեց այն գործի շարունակութեանը, որին ձեռնարկել էր մեծը: Նա եղբօրից աւելի վճռական և ձեռներէց էր: Տիրերիսի վիճակը նրան չըսարսափեցրեց, այլ ստիպեց մտացել ծերակրյտի դէմ դաշնակիցներ գտնել հատարակութեան զանազան մասերում: Այդ նպատակով են բացարւում նրա առաջին ձեռնարկած միջոցները: Նա ընդունել տես ամենառատ քաղաքացիներին էժան զնով պետական ամբարներից հաց ծախելու իր առաջարկութիւնը: սրանով նա իր կողմը զարձրեց քաղաքային պրօլետարներին: Գիւղական աղղաբնակութիւնն իր կողմը

գրաւեց նոր նախապարհներ շինելու օրէնքովը, որի պատճառով ինքը դարձաւ գլուխ ամբողջ հտալիայի հասարակական աշխատանքների: Թէ մէկ և թէ միւս դասակարգի համար ձեռնարկ էր նրա միւս առաջարկը նոր զաղրավայրեր հիմնելու մասին: Վերջապէս Գրակլոսը ծանր հարւած հասցրեց ծերակուտական ազնւականութեանը՝ խլելով նրա ձեռքից բռնի փող կորզելու գործերի դասերը: Այդ գատարանը յանձնւեց ասպետներին, որոնք այդպիսով վերահսկութեան իրաւունք ստացան գաւառապետների վրայ: Այսպիսով հասարակութեան բոլոր զասակարգերը շահագրգուած էին Կայիսու Գրակլոսին և նա բարենորոգութիւնները պաշտպանելու գործում: Նա ինքն՝ ինչպէս տրիբուն, ինչպէս եռապետ պետական հողեր բաժանելու գործում (համաձայն Տիրերիսի Գրակլոսի օրէնքի), ինչպէս նոր գաղթականութիւններ հիմնարկով և առաջնորդ ճանապարհների շինութեան գործերի՝ հասարակութեան մէջ դրաւեց մինչև այդ ժամանակ չը տեսնւած մի զիրք: Բայց նրան զրաւորն իշխանութիւնը չէր. նա նրան հարկաւոր էր այն մեծ ձեռնարկութեան համար, որը պէտք է բուրովին փոխէր հոռմէական ժողովրդի կազմը: Նա արդէս այլ ևս չը բաւականացաւ աղքատացած բազարացիներին հող տալով, այլ մտածեց հոռմէական հայլախացիութիւն էնորին դաշնակիցներին, որոնք վաղոց արդէն ծառայումէին Հռոմին և ներկայացնում էին առողջ ուժերի մի պաշար, որ զգալի կերպով պակասել էր Հռոմից: Սակայն դաշնակիցներին բաղաքացիութիւն շնորհելու օրէնքը քիչ համակրութիւն զբարաւ: հոռմէական կօմիցիաների անդամների մէջ, որոնք շատ թանգ էին գնահատում իտալացիների մէջ ունեցած իրանց արտօնեալ զրութիւնը: Ծերակուտական արիստոկրատիային Կայիսու Գրակլոսի բոլոր բա-

ըհնորոգութիւնները և նրա անսովոր դիրքը թւում
էին իբրև ոկտղը հանրապետութեան վախճանի: Եւ նա
դինւեց նրանց գէմ աւելի մեծ կատաղութիւնով, քան
Տիրերիոսի օրէնքների գէմ: Ծերակոյտի անդամները
դործում էին շատ ճարպիկ կերպով: Եթէ Կայիսոր
մի ամբողջ շարք միջոցներ դործ գրեց, որպէս զի
ձեռք բերէ հասարակութեան զանազան շերտերի հա-
մակրութիւնը, ծերակոյտն էլ իր կողմից հոդ տարաւ
նրա գէմ հանելու մի հակառակորդ, որը կարողանար
խլել նրա ձեռքից ժողովրդականութիւնը: Այդ նրաս-
տակով Գրակըսի ընկերներից մէկը՝ Լիվիոս Դրուսս
հիւպատոսն ասպարէզ եկաւ առաջարկելով հիմնել 12
դադթականութիւններ Խտալիայում և պետական հո-
ղարածիններ ստացողների վրայից վերացնել նշանակ-
ւած տուրքերը: Այս միջոցով յաջողւեց ժողովրդին
մի քիչ հեռացնել Կայիսոս Գրակըսից, իսկ նրա զրլ-
խաւոր օրէնքը դաշնակիցների մասին՝ բոլոր օրէնք-
ներից ամենակարենը՝ տուանց այն էլ կօմիցիաների
սրտով չէր: Կայիսոնին չը յաջողւեց նրան ընդունել
տալ իր արիբունութեան երկրորդ տարին, իսկ երբ
121 թւին նա երրորդ անդամ հանդիսացաւ իբր թեկ-
նածու միևնոյն պաշտօնի համար, ժողովուրդը նրան
չընտրեց: Սակայն Գրակըսը դեռ ևս մնում էր ե-
ռապետ՝ զադթականութիւններ հիմնելու համար այն
տեղում, ուր տուաջ կանգնած էր Կարթագէնը: Նրա
ընտրութիւնների ժամանակ կրած պարաւութիւնից
յետոյ ծերակոյտի անդամները, նար եղածին չափ,
սկսեցին այս դործի մէջ ևս նրան խանգարել: Տի-
րերիոսի նման Կայիսոն էլ չէր կանգ առնում ապօ-
րինի գործողութիւնների առաջ՝ իր բարենորոգու-
թիւնները պաշտպանելու համար: Նրա կուսակիցները
գէնքով գրաւեցին Աւենտինեան բլուրը Հակառակոր-
դին վերջնականապէս խորտակելու համար՝ ծերակոյտին

պակասում էր միայն մի այդպիսի պատրւակ: Օպիմիոս
հիւպատոսը յարձակումով առաւ Աւենտինեան բլուրը
(Աւենտիկումը), և Կայիսոս Գրակըսը ոչնչացաւ հե-
տապնդութեան ժամանակ:

Անկառիկած՝ Գրակըսանների ծրագիրները խոր քաղա-
քական իմաստ ունէին և նրանց լիակատար իրականացումը
երկար ժամանակի համար կը վերանորոգէր պետութեան
ուժերը: Բայց նոյն իսկ այն բանի համար, որ նրանց գննէ
մասամբ իրականացնեն կեանքի մէջ՝ պէտք եղաւ՝ գլխաւոր
միջոցների կողքից՝ ձեռք առնել ուրիշ միջոցներ ևս, որոնց
նպատակն էր ժողովրդին հաճելի դրունաւ, բայց որոնք
էակէս շատ կասկածելի միջոցներ էին: Յետոյ երեւաց, որ
ոչ մի հնար չըկար բարենորոգութիւններն ընդունել տարւ օրի-
նական եւ սովորական հանապտրեներով: Գրակըսանները
խախտեցին օրէնքները և դրա համար կեանքից զրկւեցին,
բայց նրանց ընդարձակ և հայրենասահրական մտածմունքների
անշաջողութեան զլխաւոր պատասխանաւուութիւնն ընկնուա
է՝ ի հարկէ՝ ինչպէս ծերակուտական ազնւականութեան
կարձատեսութեան և հսականութեան, այնպէս էլ ժողովրդի
վրայ, որ չը կարողացաւ հասկանալ և օգնել իր առաջնորդ-
ներին:

Յուղութայի

Գրակըսանների միջոցները, որքան որ նրանք իւղասերակմը-
քականացան, մի քիչ վերանորոգեցին հոռմէտական
քաղաքացիութիւնը: Բայց նրանք գետ շատ անբաւարար
էին նրա անկումը կանգնեցնելու համար: Կայիսոս
Գրակըսի սպանութիւնից համարեա անմիջապէս յետոյ՝
անկարգութիւններ սկսեցին դաշնակից նուժիդիական
թագաւորութեան մէջ, ուր իշխաններից մէկը՝ Յու-
ղութան՝ հաշիւը վերջացրեց իր բոլոր աւագ ազ-
գականների հետ՝ նրանց բոլորին կոտրեց՝ մէկը
միւսի ետևից՝ չը նայելով հոռմի պաշտպանութեանը:
Նենդամիտ նուժիդիացին այդպէս յաջող կերպով գոր-
ծելու հնար ունեցաւ այն պատճառով, որ Հոռմում
կաւառում էր ծերակոյտի ամենապղեցիկ անդամ-
ներին: Վերջապէս երբ նրա գէմ պատերազմ սկսեցին,

նա էլ իսպանական պատերազմից աւելի յաջող չը գնաց. զօրավարներն իրար էին յաջորդում առանց մի որևէ է արդիւնքի, իսկ երբեմն էլ Յուգութային յաջողուում էր շատ զգալի պարտութիւններ պատճառել հոռմայեցիներին: Գործը վտանգաւոր դարձաւ, երբ աֆրիկեան պատերազմի ամենատաք ժամանակը նոր ձեռք բերւած անդրալպեան Գալլիայում¹⁾ երկացին զերմանների առաջին գնդերը: Պէտք էր լարել բոլոր ուժերը, որպէս զի շուտով վերջանար Աֆրիկայի պատերազմը և բարրարոսներին դիմադրութիւն պատրաստւէր հիւսիսում: Յուգութայի դէմ վերջնական յաղթութիւն տարաւ Կայիսու Մարիու հիւսպատոսը, մի բոլորին անտոհմ, անուսում մարդ, որ առաջ էր գնացել բացառապէս իր պատերազմական ձիքերի շնորհով: Յուգութան գերի բոնւեց քւեստօր (հիւպատոսի օգնական) Մարիոս Լուկիոս Կորնելիոս Սիլվայի ձեռքով:

^{Կիւբաները և Տեսաները} Նումիդիական պատերազմի վերջանակն ազատեց Հոռմի ձեռքերը՝ հիւսիսում եռանդուն կերպով գործելու համար: Ամբողջ Գալլիան և Ալպեան նահանգները գտնուում էին ալէկոծութեան մէջ՝ արիական մի ցեղի—զերմանների ճնշումից, որոնք ձգտում էին մուտ գործել հարաւի օրնւած երկրները: Առաջից շարժուում էին կիմրեները և տեսոնները: Նրանք դադում էին ամբողջ ժողովրդներով, կանանցով և երեխաններով՝ անհամար սայլերի վրայ: Այս բարբարուների բարձր հասակը, կատաղի կերպարանքը և պատերազմափրութիւնը սարսափ ազդեցին մինչեւ իսկ կելտերին, որոնք համարեաւ միշտ քաջութիւնով աչքի էին ընկնում: Շատ կելտական ցեղեր միացան այդ շարժումին. զիմադրողներին եկտորները յաղթում էին: Հոռմայեցիներից նրանք պահանջում էին բնակու-

¹⁾ Գալլիա Տրանսալպինա-Ալպերից այն կողմ եղած գալլիան, այժմեան Պրովանսը (provincia).

թեան և ցանքսի հողեր և, իհարկէ, մերժում ստացան: Առաջին ընդհարութների մէջ բարբարոսները վճռական գերակշութիւն ունեցան. նրանք վատ էին դիմուած, բայց շատ բազմաթիւ էին և լեզիոնների վրայ յարձակուում էին այնպիսի կատաղութիւնով, որ Ալլիայի մօտ կելտերի արածի նման, ջարդում էին հոռմէական խիտ շարքերը: Հոռմէական երեք տարբեր բանակներ յաղթւեցին նրանցից զանազան ժամանակներում՝ նումիդիական պատերազմի ընթացքում: Զորքորդ անգամ, Ռօնի ափին, Օրանժի մօտ, նրանց դէմ դուրս բերին երկու ամբողջ բանակ, աւելի քան 100,000 մարդ: Բայց հոռմէական զօրավարներն անհամաձայն էին գործում, և նրանց բանակները համարեաւ ոչնչացան: Միակ փրկութիւնը նրանումն էր, որ բարբարոսները ամենեւին չէին կարողանում օգտել իրանց յաղրութիւններից: Օրանժի ճակատամարտից յետոյ նրանք՝ իտալիա խուժելու փոխարէն—յայնի չէ ինչու՝ դարձան դէպի հսպանիա և երկու տարի կողովտեցին այդ ժամանակից օգուտ քաղեցին, ուժերը ժողովեցին և նրանց արշաւանքի դէմ դուրս բերին իրանց ամենալաւ զօրավար Կայիսու Մարիոսին:

102 Թւին զերմանների և կելտերի ահազին գնդերը շարժւեցին դէպի հսպանիա երկու ճանապարհով. տեսոնները գնում էին Միջերկրականի ափով, Կիմբրները՝ հիւսիսից—Ալպերով իջան Պօ գետի հովալը: Մարիոսը կանգնեց Ռօնի ափերին, արևմտեան հոսանքի առաջ, իսկ արևելեանի առաջ դուրս եկաւ միւս հիւսպատոս՝ Լուտացիոս Կատուլոսը: Եթու (է) գետի մօտ Մարիոսը հանդիպեց տեսոններին: Նրան շարժուեց զիմանալ առաջին յարձակմանը, որով այն քան զարհուրելի էին բարբարոսները: Լեզիոնները

գանդաղ կերպով յետ էին քշում՝ տևառնների խմբեցին. թիկունքի կողմն ուղարկւած հռոմէական զօրաբաժնը լրացրեց հռոմէական յաղթանակը. Մի սարսափելի կոտորուծ անելուց յետոյ՝ Մարիոս գնաց օգնութեան իր ընկերին, որ դժւարութիւնով կարողանում էր զիմադրել կիմբրներին. Վեցելլայի մօտ Մարիոսի և Կատուլլոսի մնացած բանակները յաղթութիւն տարան մի կամակոր ու կատաղի ճակատամարտից յետոյ. Կիմբրների կանայք քշում էին յետ նահանջող տղամարդկանց կրկին զէպի կոիւ և իրանք էլ կատապութիւնով պաշտպանում էին բանակատեղը. Սակայն զարգացած ժողովրդի կարգապահութիւնը եւ կազմակերպութիւնը յաղթական անկանութիւնը անկանութիւն էր անկանութիւնը:

Մարիոսի Մարիոսի յաղթութիւնները նշանակութիւն ուղարենորունեցան ոչ միայն նրանով, որ չունի ազատուեց մի մեծ փորձանքից, այլ և նրանով, որ այդ յաղթութիւնները կատարւել էին տարրեր ձեռվ կազմած լեգիոններով քան չունի նախկին զօրքերն էին. Մինչև այժմ զինուորական ծառայութիւնն ընկնում էր հասարակութեան բացառապէս ունեոր գասակարդերի վրայ, իսկ սպօվետարներն աղատուած էին նրանից. Սակայն ազատ զիւղացիութեան թուրանալովն սկսում էր աւելի և աւելի դժւարանու ծանր և երկարատե արշաւանքների համար բաւարար թւով զինուորներ հաւաքելլ. Մարիոսն արմատական փոփոխութիւն մացրեց. նա պրօլետարներից սկսեց ժողովի իր զօրքելլ. Նրանք ուրախութիւնով էին ծառայութեան մտնում և լաւ զօրավարի ձեռքում զանում էին լաւ զինուորներ: Երկարատե արշաւանքների համար նրանք անպայման առաւելութիւններ ունեին հաղատէրերից, որովհետեւ նրանք պէտք չունեին մրտածելու տանը թողած անահութեան մասին: Բայց

և այնպէս զօրքի ովին զգալի կերպով փոխւեց գէպի վատր: Լեզիոնի անդամները կորցրին իրանց հայրենիքի քաղաքացիական կազմի հետ ունեցած կապը. նրանք ամենից առաջ իրանց զգում էին զինւոր և ոչ քաղաքացի. զօրքը նրանց համար բաղադրից աւելի բանից եւ կօմիցիաներից աւելի բարձր: Նրանք արհամարհանքով էին վերաբերում դէպի այն կառավարութիւնը, որը կարգադրութիւններ էր անում չունի խաղաղ պայմաններից, հեռու և ապահով վտանգից—կարգադրութիւններ՝ նրանց արեան և աշխատանքների մասին. ճակատամարտերի և արշաւանքների փոխարէն նրանք վարձատրութիւն էին պահանջում կողոպուտ, հարստութիւն: Երջանիկ դօրակետի իշխանասիրութեանը բաւականութիւն տալու համար աղպայիսի զօրքը մի սարսափելի գործիք էր, բայց այդ վետերանները զօրավարներին էլ հետեւմ էին միայն նրա համար, որ նա ծառայում էր նբանց քմահաճոյքներին ու շահերին:

Նոյն իսկ տռաջին նոր ձեռվ կազմած բանակը Աղոթութեանը վասպէս արտայայտեց այդ բնաւորութիւնը: Մարիոսի յաղթութիւնից անմիջապէս յետոյ Ապառուէսս Սատուրնին արիբունը կօմիցիաներին առաջարկութիւն արի համաձայն պէտք էր վարձատել նումիդիական եւ հիւսիսային պատերազմ ների վետերաններին՝ նրանց աշխատանքների եւ ծառայութիւնների համար: Նրանցից ամեն մէկը պէտք է ստանար 100-ական իւզեր հող: Բացի զբանից առաջարկւեց նոր զաղթականութիւններ հանել, իսկ բոլոր գործի զեկավարութիւնը յանձնեց Մարիոսին: Բայց մարիոսականները գործում էին այնքան կոսկոտ ու բռնի ձեռվ, որ չը նայելով վետերանների ազգած երկիւղին, ըուլոր քաղաքացին կուսակցութիւնները ծերակոյար, առ-

պետները, նոյն իսկ մանր սեփականատէրերը՝ միաբանուեցին նրանց դէմ: Սատուրնինն արտաքսեց այն արիրուններին, որ խանգարում էին իր առաջարկութիւններին. ընտրութիւններին նա կանչեց ծառայութիւնը վերջացրած զինւորներին, որոնք հակառակորդների հետ կռւի մտան. վերջապէս գրաւեց կապիտոլիսնը: Այս փորձը նրան ոչնչացրեց, ինչպէս Աւենտիկումի գրաւումը ոչնչացրեց Կայիսու Գրակրոսին: Սատուրնինն և նրա կողմնակիցներին շրջապատեցին և քարկոծ արին:

Այսպիսով՝ քաղաքին օրէնքներ տալու զինւորների արած առաջին փորձն անյաջող վերջացաւ: Բայց չարեքը չը վերացւեց—Մարիոսի վետերանները մնացին հասարակութեան մէջ իրը անհամնզիստ, անբաւական տարրեր, որոնք միշտ պատրաստ էին խառնակութիւններ հանելու կամ եղած խառնակութիւններից օգտըւելու:

Լիվոս
Դրուզոս

91

Մարիոսի և նրա զինւորների վարժունքն այնքան վախեցրեց ծերակոյտին, որ նրա լաւագոյն անդամներն սկսեցին խոստվանուել նոյն իսկ այն միջոցների անհրաժեշտութիւնը, որոնց համար զոհւեց Կայիսու Գրակրոսը: Ջինած պրօլետարիանութիւնից ազաւելու համար պէտք էր վերականգնել զիներ կրելու ընդունակ գիւղացիութիւնը, իսկ դրա համար նիւթ կարելի էր գտնել միայն դաշնակիցների մէջ: Այս հաշիւներն այնքան ակներկ դարձան, որ ծերակուտական ազնւականութեան կողմից առաջարկութիւն արւեց դաշնակիցներին քաղաքացիութեան իրաւունք շնորհելու: Լիվոս Դրուզոս հիւպատոսը, Կայիսու Գրակրոսի դէմ կռւող Դրուզոսի որդին՝ 91 թւին արեց մի շարք առաջարկութիւններ, որոնք մասամբ փոփոխում, մասամբ էլ լրացնում էին 123 թւի բարենորոգութիւնը: Մի կողմից առաջարկեց խլել դատարաններն ասպետների ձեռքից և յանձնել ծերակոյտի անդամներին, միւս կողմից՝ հոռմէտական քաղաքացիութեան իրաւունքը տարածել իտալական դաշնակիցների վրայ: Բացի դրանից՝ ենթադրում էր ծերակոյտը լրացնել առպետների դասից ընտրւած 300 անդամներով: Դրուզոսի

դէմ միաբանւեցին շատ տարրեր տարրեր—ծերակուտական ազնւականութեան մի մասը, որ վախենում էր ամեն տեսակ քարենորոգութիւց, ասպետները, որ չափազանց թանգ էին գնահատում իրանց տիրապետութիւնը դատարաններում, հոռմէտական ամբոխի նշանաւոր մասը: Մի առաւտ Դրուզոսին գտնան իր անկողնում սպանւած:

Այն ինչ դաշնակիցները, որ Կայիսու Գրակրոսի Դաշնակից-ժամանակից յոյս ունէին իրանց իրաւունքները լայ-նացած տեսնել, համբերութիւնը կորցրին և մի ընդգրծակ գաւադրութիւն կազմեցին, որի մէջ առանձնապէս գործունեայ մասնակցութիւն ունեցան Սամնիացիները և ուրիշ լեռնական ցեղեր: Հետաքրքական այն է, որ ապստամբները չէին ձգտում ուղղակի իրանց վերադարձնելու նախկին ինքնուրոյնութիւնը, այլ ուղում էին կազմել մի ընդհանուր իտալական պետութիւն թերակղզու բոլոր ազգաբնակութեան համար հաւասար իրաւունքներով և հոռմէտականին նման մի կառավարութիւնով: Նոր պետութեան մայրաքաղաք դարձին նրանք Կօրֆինիումն՝ իտալիկա անւան տակ, իսկ իշխանութիւնը յանձնեցին ծերակոյտին՝ 500 անդամից բաղկացած—բոլոր ցեղերից—և ընտրովի հիւպատոսների ու պրետօրների: Հոռմի երկարատև և փառաւոր տիրապետութիւնն այնպիսի զօրեղ տպաւորութիւն էր թողել նրա իշխանութեան տակ գտնւած ժողովրդների վրայ, որ մինչև իսկ ապստամբւելով նրա զէմ, նրանք աշխատում էին իւրացնել նրա կազմութիւնը: Սկսեց մի ծանր և արիւնահեղ կռիւ այն ժողովրդների մէջ, որոնք վարժւել էին բագմաթիւ արշաւանքներում միասին զործել: Հոռմայեցիների կողմն էր իրանց փորձւած կազմակերպութիւնը, այն ինչ իտալացիները պէտք է զեռևս նոր ստեղծէին իրանց կազմը: Բայց դաշնակիցներն այնքան ուժեղ էին, որ դժւար թէ Հոռմի կարողանար բաց դաշտում նրանց կռւով յադրել, եթէ

նրան չը յաջողուէր բաժանել իրարից հակառակորդներին. Այս բանին հասան ուղղակի զիջութեար անելով՝ Մկրտում քաղաքացիութեան իրաւունք արւեց այն բոլոր համայնքներին, որոնք գեռ չեն բաժանւել Հըսոմից: Յետոյ նոյնը խոստացան այն բոլորին, որոնք 2 ամսւաց ընթացքում զէնքերը վայր կը գնէին: Այս ճանապարհով հառմայեցիները կարողացան բաժանել դաշնակիցներից էարուրիան և նւմքրիան: Լացիունն սկզբից հաւատարիմ մնաց Հոռմին: Սակայն սամնիւացիները և մի քանի ուրիշ հարաւային ցեղեր կոխուց շարունակեցին, և նրանց յաղթելը պակաս ջանքեր չը պահանջեց (88 թ.): Ապստամբութիւնը զսպելու գրեխաւոր ծառայութիւնը բաժին ընկաւ լ. Կորնելիոս Միլլային, Մարիոսի նախկին քենսարին, որ յետոյ ծառայում էր Լուտացիոս Կատուլոսի զօրքում կիմբերների գէմ: Կրկն նրան զիմեց ծերակոյտը արելում բացւած նոր ու գժւարին պատերազմը մղելու համար:

Մարիոս և Սուլպիցիոս Թուփոս Սելեկեան պետութեան քայլայւերու ժամանակ Ասկայում, Աև ծովի ափերի վրայ կազմւեց Պոնտոսի թագաւորութիւնը, որը պահանանց իր ինքնուրոյնութիւնը, երբ Պերգամի թագաւորութիւնն արդէն դարձել էր հոռմէական նահանգ՝ Ասկոս անունով (Տիբերիոս Գրակլոսի օրով): Ասուաշին գարի սկզբում Պոնտոսի թագաւորն էր Միհրդատը, մի անխոնջ զինուր, որը մի որևէ այլ ժամանակում կըստեղծէր Ասորիստանի կամ Պարսկաստանի նման մի մեծ միտպետութիւն: Նոյն իսկ Հոռմի փորձւած ուժը նրան չէր վախցնում:

Օպաւելով Հոռմի գժւար զրութիւնից դաշնակիցների պատերազմի ժամանակ, նա խլեց ասիական գաւառները և անխոնյ կոտորեց ձեռքն ընկած հոռմէական զինուրներին ու քաղաքացիներին, Բոլորը միա-

սին ջայգւեց 80,000 մարդ: Ասիայից նա շարժւեց դէսզի Յունաստան, որը նրան հպատակւեց համարեան տուանց գիմադրութեան: Մնում էր միայն իտալիա գնալ, և Միհրդատն արդէն պատրաստուում էր այդ արշաւանքին: Ծերակոյտը հաւաքեց 6 լեզունից բաղկացած մի բանակ և նրա հրամանատարութիւնը յանձնեց Միլլային: Դա մի ծանր հարւած էր Մարիոսի համար, որը գեռ ևս Հոռմի ամենանշանաւոր պատերազմողն էր և յոյս ունէր՝ Միհրդատի դէմ կուելով՝ վերադարձնել իր կորցրած աղղեցութիւնը: Երկու զօրավարների մրցութիւնը մասնաւոր կացաւ նրանով, որ Մարիոսը երկար ծառայած մարդ էր (homo novus), իսկ Միլլան պատկանում էր մի հին պատրիկ տոհմի և չէր ծածկում իր արհամարհանքը դէպի ստոր դասակարգերը և նրանցից զուրս նկած զործիչները:

Մարիոսը ճարպիկ կերպով օկտուեց հասարակութեան անբաւական տարրերից—իր վետերանների նախանձից գէպի Միլլայի զինուրները, հաշուած գաշնակիցների յուսախարութիւնից, որոնց՝ ճշմարիտ է—ընդունեցին քաղաքացիների թւում, բայց գրեցին 8 նոր արիբների մէջ, որոնք ճայն էին տալիս 35 հին արիբներից յետոյ միայն և դրա համար էլ մեծ մասով մնում էին տանց ճայն տալու¹⁾: Սուլպիցիոս Ռուֆոս արիբուննը ընդունել տեհց այն վճիռը, որը նոր քաղաքացիներին և ազատ-արձակաւածներին թոյլ էր տալիս զրւելու այն արիբի մէջ, որի մէջ գրւողն է ցանկանում: Երա միւս տաշարկութիւնը, որի համաձայն ոչ մի ծերակոյտի անդամ իրաւունք չը պէտք է ունինար 2,000 դինարից աւելի պարար անել՝ ուղղւած էր փչացած և սնանկացած արիստոկրատների գէմ, որոնց մէջ առաջին տեղն էր բոնում Միլլան:

Մարիոսի կուսակից Մուլպիցիոս արիբունը յա-

¹⁾ Յիշենք, որ ձայնուութիւնը դադարում էր, հետո որ կօմիցիսների մէջ որոշում էր ձայների բաղմութիւնը:

ջողեցրեց հրաման ուղարկել տալ Սիլլային, որ թողնէ հրամանասարութիւնը, իսկ Միհրդատի դէմ ուղարկւած զօրքի առաջնորդ նշանակւեց Մարիոսը: Սիլլայի լեզվոնները չը համբերեցին այս վիրաւորանքին. նոր առաջնորդին սպասելու փոխարէն՝ նրանք շարժւեցին Հռոմի վրայ: Բոլոր զվասւոր սպաները թողին ապատամը բանակը, բայց Սիլլան, մի քէ տատանւելուց յետոյ, նրա զլուխն անցաւ: Փողոցներում կատաղի կոխւ մղելուց յետոյ՝ Մարիոսը փախաւ. Սուլպիցիոսին սպանեցին: Հռոմի պետոքեան մէջ առաջին անգամն էր, որ ապատամբած զինուրները տապալեցին բաղադի օրինական իշխանութիւնը:

<sup>Պատեր ազմ
Միհրդատի
դէմ</sup> Դրանից յետոյ Սիլլան ուղևորւեց Միհրդատի դէմ: Որպէս պատերազմի մարդ՝ նա մեծ էր իսկապէս— անվախ, սրամիտ և եռանգուն: Գործերը ծայրայեղ կերպով բարձի-թողի էին արւած, և Սիլլան շատ դժւարութիւն քաշեց Աթէնքում գիմանալու և Միհրդատի նոր նւաճումներն արգելելու համար: Վերջապէս Բէովսիայում նրան յաջողւեց երկու անգամ ջարդել հակառակորդին, չը նայելով նրա թւական ահազին առաւելութեանը: Այս յաղթութիւնների շընորհով նա մաքրեց Յունատանը, անյապաղ անցաւ Ասիա և վերջնականապէս դուրս քշեց Միհրդատին հռոմէական սահմաններից: Սակայն նա չը կարողացաւ ոչնչացնել արքայի օրութիւնը և շտապով նրա հետ դաշն կապեց, որովհետեւ իտալական գործերը կրկին պահանջում էին նրա ներկայութիւնը.

<sup>Մարիոսը և
իրնէասը
(Յիննան)</sup> Միհրդատի դէմ վարւած կուի բոլոր ժամանականներում կում Հռոմում տիրապետում էին մարիոսականները: Ինքը-ծերունի Մարիոսը՝ զանազան արկածներից յետոյ, աքսորից վերապարձաւ և կորնիլիա Կինէաս (Յիննա) հիւպատոսի հետ միասին խլեց Հռոմը ծերակոյտի տրամադրութեան տակ Սիլլայի թողաց մի

փոքրիկ զօրաբաժնի ձեռքից: Հռոմի այս երկրորդ զբաւումը նշանաւոր եղաւ սարսափելի կոտորածով: Մարիոսականները կողոպտում և սպանում էին առանց ընտրութեան: Կիմբրներին և Տետոններին յաղթողը հասաւ իր նպատակին—նրան եօթներորդ անգամ հիւպատոս ընտրեցին, բայց ընտրութիւնից մի քանի օր յետոյ մեռաւ: Քաղաքի միակ տէրը մնաց Կինէասը (Յիննան): Երա զիխաւոր նպատակն էր բաւարարութիւն տալ Մարիոսի վետեանների շահասիրութեանը եւ իր կողմը գրաւել դաշնակից նոր բաղադրիներին: Յամենայն գէպս Սիլլայի երկարատև բացակայութիւնը մարիոսականներին հնար տւեց բաւական հիմնաւոր կերպով հաստատել Հռոմում և իտալիայում, և երբ զինուուների նոր սիրելին վերադառնուի: Նսիպից իր յաղթական լեզվոններով, նրա առաջ բացւեց մի շատ ծանր խնդիր (82 թվին): Այս ժամանակ երբ Սիլլան աշխատում էր Պրենեստում պաշարել Մարիոսի որդուն, իսկ նրա կուսակից Կն. Պոմպէոսը գործում էր Ապենինեան շղթայի արևելիան կողմում՝ սամնիացիների և հարաւային իտալացիների զօրքը, որ րոնում էր Մարիոսի կողմը, անսպասելի կերպով մինչև Հռոմ անցաւ: Սիլլան նրանց վրայ հասաւ Կոլինեան զռների մօտ, յաջողեցրեց անցնել հակառակորդի և Հռոմի մէջտեղը և անյապաղ սկսեց յարձակում: Այս թեր, որին առաջնորդում էր Սիլլան, իտրատակւեց սամինացիներից և քշւեց գէպի Հռոմ: իսկ միւս թեր վրայ Լիկինոս Կրասոսը յաղթեց և վերջ տւեց ճակատամարտին Սիլլայի օգտին: Յաղթողը Հռոմ մտաւ պէտական կազմը փոխերու և իր թշնամիներին սպատելու ակնյայտնի նպատակով նա սկսեց վերջինից: Սկզբում կոտորում էին առանց զատարանի և կարգի, ինչպէս իր ժամանակին կոտորում էին մարիոսականները: Յետոյ սկսեցին պրու-

կրիպտօնական կախում էր հարիւրաւոր առողջության վեցակները, դրանցում յիշւած բոլոր անձերն անւանաբրկւած էին համարւում—ամեն մարդ կարող էր և պէտք է սպանէր նրանց, իսկ նրանց ստացւածքը գանձարանն էր դրաւում: Սփրող իտալիայում սկսւեց մարդկանց որսը, իսկ չորսում Սիլլան անվրդով սառնարիւնութեամբ նոր ու նոր առողջության վեցակների մէջ: Բայցի քաղաքական վրէժինդրութիւնից՝ այդուղի երեսում էր և հասարակ շահամոլութիւն, մարդկանց լրտեսութիւնով հալածում էին և մահացնում, որպէսզի խեն նրանց ստացւածքները: Սիլլան բոլոր ժողովրդի առաջ արքունիք գրաւելիքներն անւանեց «իր որսը», և ինքն էր նախագահում խւած կալւածների աճուրդով ծախելու գործին: Այս բոլոր թալանն անհրաժեշտ էր, որպէսզի վարձատրէին Սիլլայի վետերաններին, որնք Մարիոսի վետերանների նման՝ նայում էին հոռմէական հասարակութեան վրայ, իբր իրանց բաժին ընկած ուկէհանքի վրայ: 23 լիգունների համար կազմւեցին 100,000-ից աւելի նոր հողաբաժններ: Մարսափելի 82 թւականը վերջացաւ Սիլլային անորոշ ժամանակով զիկստոր (իշխանապետ) նշանակելով: Նրան դիկտատոր նշանակեցին հասարակապետութիւնը վերակազմելու համար:

Սիլլայի
բարենորու-
գութիւն-
ները:

Լ. Կորնելիոս Սիլլան կարող էր իրան համարել աշխարհի տէրը: Ոչ ոք նրան մըցակից չէր իշխանութեան համար չուում: Նա իր թշնամիններին ջնջեց աշխարհի երեսից, նրան անւանեցին երջանիկ (Felix), և նա հաստատապէս հաւասում էր իր աստղին: Բայց դեռ մնում էր ապացուցանել, որ ինքը միայն նշանաւոր դրավար և անխայ վրէժ հանող չէր: Պէտք էր վերակազմել պետութիւնը, մաքրել նրան այն մէծ չարիքներից, որ երեան էին եկել ազգամիջեան կր-

ոիւների ժամանակի: Դրա համար Սիլլային շատ բան էր պակասում: Նա խոր կերպով արհամարհում էր մարդիկներին և, չընայելով իր նուրբ զարգացմանը, ամենից բարձր էր գնահատում կոպիտ, զգայական զըւարձութիւնները: Ծագումով և կապերով նա արխատուկրատ էր, բայց նրա կեանքում գլխաւոր դեր խաղաց պրօկտարների բանակը, նոյնքան անհանգիստ և տգան, որքան և Մարիոսականները:

Առաջին հայացքից՝ նրա բարենորոգութիւնների զիստական էր իշխանութիւնը յանձնել ազնւական կօրպօրացիային *)—ծերակոյտին: Աչնչացաւ ցենզօրութիւնը, որ այնքան նշանաւոր ազդեցութիւն ունեցաւ կօրպօրացիանների կազմի վըրայ, համարեան ոչնչացւեց արիստունութիւնը—նրա ձեռքին մնաց միայն մասնաւոր քաղաքացիններին պաշտպաններու իրաւունքը: Նոյն իսկ կօմիցիանները դըրւեցին ծերակոյտից լիակատար կախման մէջ: Նրանք բոլոր առաջարկութիւնների համար առաջուց պէտք է ուսանացին ծերակոյտի հաւանութիւնը: Ասպետներից խլեց նախկին պատօնեաններին դատելու իրաւունքը և արւեց ծերակոյտի անդամներին: Մի խօսքով՝ ծերակոյտը զարձաւ պետութեան զիստակ հիմնարկութիւնը: Այն ինչ ներկ սկզբից բույացեց Սիլլան յարգանքը դէպի այդ հիմնարկութիւնը նըրաւով, որ բացեց նրա անդամների թիւը 300 նոր անդամներով, որոնց նաւաբել էր ամեն տեսակ մարդիկներից առանց որ եւ է ընտրութեան, մի քէչ էլ դիտմածք անպէտքներ և ծերակոյտ բերւած միայն

*) Կօրպօրացիա (ընկերութիւն, միաբանութիւն) կոչւում է այն հիմնարկութիւնը, որ կազմւած է բազմաթիւ անդամներից և որը կայացնում է իր վճիռներն այդ անդամների ձայնների մեծամասնութիւնով:

այն պատճառով, որ պատրաստ էին ծառայելու Սիլլային:

Սիլլայի օրով ամբողջ հասլիայում վերջնականապէս կանոնաւորւեց հոռմէական քաղաքացիութեան երեկի կազմակերպութիւնը, որն անհրաժեշտ էր դառել բազմարին իսալացի դաշնակիցներին բաղաբացիների թիվ մէջ ընդունելով։ Ամեն տեղ կազմւեցին համայնքներ (մունիցիպիո) ընտրովի բարձր պաշտօնեաներով (մագիստրատ)՝ երկուսը գատարանի համար և երկուսը շինութիւնների ու սոսիկանութիւնների վրայ հսկելու համար, ամենահարուստ քաղաքացիներից կազմւած ծերակոյտով և կօմիցիաներով։

Այս կազմութիւնն ունեցաւ բարերար ազդեցութիւն յատկապէս այն կողմից, որ դադարեցրեց գաղթականութիւնը դէպի Հռոմ և օժանդակեց տեղական բնքնորոշութեանը, բայց մի և որյն ժամանակ ամեն տեղ թափանցեց Իտալիայում ցրւած վետերանների բայխայտ ազդեցութիւնը։ Նրանք մոռացել էին անտեսութիւնով պարապելը, քիչ էին հատարբրւում տեղական գործերով և միշտ պատրաստ էին նորից մասնակցելու անկարգութիւններին՝ եթէ նրանք օգուտ խոստանային։ Վերջապէս Սիլլան ստիպեց մի ամբողջ նոր դասակարգ—կորնելիաններ կոչւած։ Սրանք ստրուկներ էին, որ պղատ էին արձակւած Սիլլայի կուսակիցների կամ իր սիփական ձեռքով։ Գլխաւորապէս արձակում էին այն ստրուկներին, որոնց տէրերը ենթարկւում էին պրոսկրիպցիաններին։ Այս կորնելիանները մեծ թուով ժաման համայնական պաշտօնների մէջ ընդհանրապէս տեղական վարչութիւնն աղաւագւեց նրանով, որ նրան իր ձեռքն առաւ Սիլլայի կուսակցութիւնն իր քաղաքական նպատակների համար։

Բարենորոգութիւնից յետոյ դիկտատորը (իշխանապետը) մի կողմ զրեց իր լիազօրութիւնները—նրան ձանձրացրեց քաղաքական գործունէութիւնը։ Նա իրան յագեցած զգաց և հեռացաւ հանգստութիւն-

վայելելու։ Սակայն այդ չէր խանգարում նրան սարսափի մէջ պահելու իր նշանակած կառավարութիւնը և առիթը պատահած ժամանակն սպանելու իրան անհաճելի որևէ մի գործչի։ Այդպիսի մի դատաստանից յետոյ մահն իրան էլ վրայ հասաւ (78 թւին)։

Սիլլայի բարենորոգութիւններով վերջանում է քաղաքացիութեան կազմի և իրաւունքի համար եղած խռովութիւնների յիստամեայ շրջանը։ Գրակիուների յանդուզն զաղավարներն ըստ երեւոյրին, իրականացան։ բազմաթիւ աղքատ քաղաքացիներ հողաբաժինների մեծամասնութիւնը քաղաքացիութիւն ստացաւ։ Բայց երկու բարենորոգութիւններն էլ ձեռք բլրւեցին այնպիսի պայմաններում, որոնք ստորացնում էին նրանց բարերար նշանակութիւնը։ Հողաբաժինները զիսաւորապէս բաժին ընկան փացած և աշխատանիցից խորացած զինուորներին դաշնակիցներին բաղաբացիութեան իրաւունքների արիւնահեղ պատերազմից յետոյ, որը ոչնչացրեց իտալական նոյն խոկամենաառողջ ցեղերին։ Իսկ որ դիմաւորն է՝ մշտական խռովութիւններն ամենավատ ազգեցութիւն աշխին բարոյականութեան և իրաւունքի վրայ։ օրէնքը, կառավարութիւնը, ժողովրդական աղաւութիւնը—հոռմէական կազմի բոլոր այս սրբազն հիմունքները ցեխի մէջ արորեցին։ Կեկալվարներից ամեն մէկը զանց էր առնում օրէնքը, տապարում էր կառավարութիւնը, ի չարե էր զործ զնուու ազատութիւնը։ Կոպիտ ոյժը, աւագակային աղանութիւնը և յանդուզն քաջութիւնը փոխարինեցին նախկին անձնազոհ հայրենասիրութեանը։ Եւ ահա, չնայելով Գրակլեանների ծրագրի արտաքին յաջողութեանը, քաղաքացիական խառնակութիւնները հասցրին ոչ թէ զիսացիութեան վերածնութեան, այլ օրէի տիրապետութեան։

Կ 1 ս Խ Խ Խ Խ

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՍՆԿՈՒՄԲ

Սրբացի Սիլված երկիւղը պահպանում էր նրա կազմով՝ հաստատած կարգ ու կանոնը, բայց հազիւ դիկտատորը (Եշանապետ) մեռաւ, իսկոյն զլուխ բարձրացրին նրանից յաղթւած բոլոր ուժերը, Ինականարար այդ ժամանակ հաստատած կարգի պահպանութիւնն անցկացաւ Սիլվածի զիտաւոր զինուրական օգնական Կնէոս Պամակոսին. Մարիուսականներին զլուխ կանգնեց Սերտորիոսը, Մարիոսի ամենալաւ սպաներից մէկը, մի արգարասէր և ազնիւ մարդ: Նա օգտուեց պատերազմառէր լուզիտանացիների մէջ ծագած խռովութիւններից՝ իսպանիայում մի տեսակ նոր Հռոմ հիմնելու համար: Նրա գէմ ուղարկւած բոլոր զօրավարները պարտութիւն կրեցին. Նոյն իսկ Պոմպէոսն էլ ոչինչ չը կարողացաւ անել լեռնային զժւար պատերազմում: Պոմպէոսի բազուից՝ Սերտորիոսի բանակում գտնւեց մի զաւաճան, որն սպանեց այդ հերոսին՝ նրա աեղը բռնելու համար: Սերտորիոսի մահից յետոյ լուզիտանական թագաւորութիւնն իսկոյն ընկաւ: Քանի որ Պոմպէոսն իսպանիայում զբաղւած էր, Խոտոլիայի հարաւում բռնկեց Ասրուկների ասրաւակինի ապատքութիւնը: Թրակիացի Սպարտակոսը փախաւ սուսերամարտների (գլավատօր) զօրանոցից, ուր պատրաստում էին կռւողներ ժողովրդի ներկայութեամբ կատարւող արիւնալի մըցութիւնների համար: Նրա ունեցած յաջողութիւնները հռոմէական զօրաբաժինների գէմ նրա շուրջը հաւաքեցին փախստական սորուկների ահազին խըմբեր, որոնց նա սովորեցնում էր զինուրական կարգ

ու կանոն: Նրա բանակը հասաւ մինչև 12,000 հոգու 3 տարի սարսափի մէջ էր պահում ամբողջ Խոտականականութեամբը (Եշանապետ) մեռաւ, իսկոյն զլուխ բարձրացրին նրա մասութիւնը վերջապէս ջարդեց այդ լիան: Մ. Լիկինիոս Կրնասոսը վերջապէս ջարդեց այդ լիանակը Լուկանիայում, իսկ նրա միացորդները ոչնչացրեց Խոպանիայից վերագարձող Պոմպէոսը: Թէ և այսպիսով յաջողուեց պահպանել հռոմէականութիւնն այն ձեռվ, ինչ ձեռ որ նրան կան հասարակութիւնն այն ձեռվ, ինչ ձեռ որ նրան տուել էր Սիլվան, բայց նոյն իսկ նրա պաշտպաններն զգում էին, որ չէ կարելի պաշտպանել նրա ստեղծած ազնւականութիւնը: 70 թիւն Պոմպէոսի առաջարկութիւնուն արքունիքին տրիբունուրիական ու ցենօրինուրին նրա նախկին ձեռով, իսկ ծերակոյնին հատասարական աստականակերը բոյլ տրիբունուրին ասպետները եւ սորուն զասակարգեցից ընտրածները: Այս զիջումները և մարտական յաջողութիւնները Պոմպէոսին դարձրին պետութեան մէջ ամենաժողովրդական մարդը:

Գարինոս տրիբունն օգտուեց վերականգնւած տրիբունութիւնից՝ կօմիցիաներին մի որոշում ընդունել տալու համար, որով Պոմպէոսը զարձաւ պետութեան մէջ եղած բոլոր զինուրական ուժերի կռուավարիչը: Գարինոսի օրէնքը Պոմպէոսին յանձնեց Խամանաւորութիւնը բոլոր Միջերկրականի վրայ և նրա ափերից էլ 10 մզոն ներս՝ ծովահէնների գէմ, որոնք բաղրացիւնական խառնակութիւնների ժամանակ իրանց ձեռքն էին առել Եշանութիւնը ջրերի վրայ, կազմել էին կանոնաւոր նաւասորմեր՝ շինել էին մի շարք բերդեր ափերի վրայ և կամայական կերպով վարւում էին վաճառականների նաւերի նետ: Պոմպէոսը զլուխ անցաւ 500 նաւերի և 120,000 զինուրների: Նա եռանդով ու արագ կատարեց իր վրայ դրած յանձնարարութիւնը, ընդամենը 3 ամսում ծովը մաքրեց աւագակներից, կործանեց նրանց դղեակները, իսկ իւ

բանց մի մասը կոտորեց, մի մասն էլ գաղթեցը եց: Երան յանձնած բացառիկ իշխանութիւնն իր ձեռքում պահելու փորձութեանը նա չենթարկեց, այլ վայր դրեց իշխանութիւնը և վերադարձաւ մասնաւոր կեանքին, սպասելով որևէ նոր ուազմական յանձնաւրարութեան: Իսկ այդ չուշացաւ: — կը կին նրան ասպարէզ կոչեցին Սիլլայի սկսած մի գործը լրացնելու համար: Միհրդատը յաղթւած էր, բայց հնագանդւած չէր և, երբ Բիւթանիան Պերգամի նման հոռմէական գաւառ դարձաւ, Միհրդատը կը կին պատերազմ սկսեց: Հոռմէական լ. Լուկուլոս զօրավարը՝ ճշմարիտ է, նրան և նրա փեսային: — հայոց Տիգրան թագաւորին մի քանի պարտութիւններ հասցը եց, բայց լեզինները հրաժարւեցին Հայաստանի խորքերը գնալ: Զինւորների կամայականութիւնն այնքան մեծ էր, որ Լուկուլոսն ստիպւած եղաւ յետ նահանջել, իսկ Միհրդատը նրան հետևեց մօտիկից և ոչնչացը հոռմէական բերդապահներին: Այն ժամանակ պատերազմ մղելը յանձնւեց Պոմպէոսին, որը կարողացաւ կարդապահութիւնը վերականգնել. ջարդեց Միհրդատին, Պոնտոսն ու Հայաստանը նւաճեց և Ասորիքը դարձրեց հոռմէական գաւառ: Առանձնատպէս կարեոր էր այն, որ Միհրդատի դէմ ապստամբւեց իր որդին, և նա յուսահատւած՝ անձնասպանութիւն գործեց: Վերջապէս հոռմէական ժողովուրդն ապաւեց այդ յամառ և վրտանգաւոր թշնամուց:

^{Կատելինան և} ^{Կիերոնը.} Երբ Պոմպէոսը պատերազմում էր Ասիայում և նրա կազմը կանոնաւորում, Հոռմում տեղի ունեցան նոր խառնակութիւններ: լ. Սերգիոս Կատիլինան, արտակարգ ընդունակութիւնների տէր մի անձ, որ հոչակւած էր իր անբարոյականութիւնով ու ոճրագործութիւններով, մի ընդարձակ դաւադրութիւն կազմեց սնանկացած երթասարդութեան մէջ: Ենթադրում էր

այրել Հռոմը, սպանել հիւպատոսներին և ծերակոյտի անդամների մեծ մասին, իրանց ձեռքը ցցել իշխանութիւնը, նրանից օգտել պարտքերը ոչնչացնելու և հարուստներին կողոպտելու համար: Կատիլինան արտակարգ յանդգնութեամբ իր պատրաստութիւնները տեսնում էր նոյն իսկ Հռոմի մէջ, կտուավարութեան աչքի առաջ: Էտրուրիայում նա արդէն հաւաքել էր մի ամբողջ բանակ և յարաբերութեան էր մտել կելտական Ալլօբրօգ ցեղի հետ, որպէս զի վերջինին Վրդէր յարձակւելու Բալլիայի վրայ: Նոյն իսկ ծերակոյտի մէջ կային նրան և՛ գաւակիցներ, և՛ այնպիսի մարդիկ, որոնք ոչ մի ուղղակի մասնակցութիւն չունենալով դաւադրութեան մէջ, յոյս ունէին նրանից օգտելու՝ առաջ գնալու համար: Վերջիններիս պատկանում էր ազգեցիկ և շատ ծառայութիւններ մատուցած կրասար և փառասէր, բայց դեռ երկրորդական տեղ բռնտղ կ. Յուլիոս Կեսարը: Հայրենիքի աշտութեան փառքն այդ ժամանակ պատկանում է 63 թւի հիւպատոս Մ. Տուլիոս Կիերոնին:

Մարիոսի նման Կիերոնն էլ (Ցիցերոն) սերւել էր մի մանր, համայնական (մունիցիպալ) ընտանիքից: Նա առաջ գնաց իր ճարտարախօսութեան շնորհով: Նա չունէր մարտական արժանիքներ ու տաղանդ, բայց և՛ գաւարաններում, և՛ գաւաններում նա իրանցոյց տեսք ոչ միայն իրը ճարտար փաստաբան և առաջնակարգ հոեաոր, բայց և՛ իրը ազնիւ քաղաքացի, որ ընդունակ է իրան վանդի ենթարկել ընդհանուրի օգտի և արդարութեան համար: Նոյն իսկ առաջին ճառով՝ օրինակ՝ նա դուրս եկաւ Սիլլայի սիրելիներից մէկի՝ մի սոսկալի լրաեսի դէմ: Իր դաւական գլխաւոր յանդգնութիւնը նա ձեռք բերեց ազգեցիկ պրետոր Վերբէսի դէմ ունեցած դաւավարութեան մէջ, այդ մարդը երկար ժամանակ առաջարկ կերպով նեղում էր Մի-

կիլիացիներին։ Կատիլինայի դէմ վարած կուռմնը ան-
յաջողւեց միացնել ծերակոյտի մէջ եղած կարգին
մարդկանց ոճրագործների և փառասէրների դէմ։
Կատիլինան ստիպւեց փախչել իր զօրքի մօտ, նրա
գրագրութիւնն ալլօրբօգների հետ բռնւեց, և կի-
կերոնը կատարել տւեց ծերակոյտին մի ասլօրինի,
բայց ինքնապաշտպանութեան համար բոլորովին ան-
հրաժեշտ գործողութիւն։ Կատիլինայի դաւակիցներին
մահւան պատժի ենթարկեցին, առանց կօմիցիաների
առաջ գործը քննութեան հանելու։ Այս վճռական
գործողութիւնը զրկեց դաւակիցներին իրանց զվարուր
վարիչներից, իսկ կատիլինան սպանւեց իր դէմ ու-
ղարկւած պետական զօրքերի հետ ունեցած ճակատա-
մարտում։ Կիկերոնին ողջունեցին իրք «Հայրենիքի
Հօր» (pater patriae). բայց այն ժամանակի կուսակ-
ցական կիկերի մէջ զիմանալու համար՝ պէտք էին
ուրիշ յատկութիւններ և ուժեր, քան այն որ ուներ
նա իր տրամադրութեան տակ։ Նա յաղթող չէր պա-
տերազմի դաշտում. նրա ետևից կանգնած չէին ա-
նարկու վետերաններ՝ դրա համար էլ նրա յաջողու-
թիւնը բռնկական եղաւ։ Կատիլինայի կենդանի մնա-
ցած պաշտպանները և դաւակիցներն առանց դժւա-
րութեան պատրւակ գտան կիկերոնին մեղադրելու. նա
մահւան պատժի էր ենթարկել Հոռմի քաղաքացիներին
առանց դատարանի։ Մեղադրանքն այնքան վտանգա-
ւոր էր, որ «Հայրենիքի Հայրն» ստիպւած էր, իր յաղ-
թանակից քիչ յետոյ՝ արսորականի նման փախչել։

^{Առաջին Ե-} Հարց էր ծագում, թէ արդեօք ինչպէս կօգտուի
^{ռապետու-}
<sup>(արիում-
միքատ)</sup> իր ուժից նա, որ այդ ժամանակ կանգնած էր զօրքի
գլուխը — Պոմպէոսը, որ Հռոմ էր վերադառնում։
Ասիան նւաճելուց յետոյ։ Այս դէպրում Պոմպէոսը մի
անդամ էլ ցոյց տւեց, որ չէ հասկանում ժամանակի
ողին և չէ կարողանում օգտուել իր ուժերից։ նո

այնիան բարեմիտ մարդ էր, որ բռնի կերպով իշխա-
նութիւնը չը յափէտակեց, թէեւ նոյն իշխանութիւնն
արդէն երկրորդ անգամն էր, որ ինքն իրան նուա
ձեռքն էր տրում։ Բայց գոնէ առաջ նա պէտք է յայտ-
նէր իր պահանջները և մի քիչ պնդէր, իսկ յետոյ
միայն դէսքը վայր դնէր, Դրա փոխարէն, ի զարմանս
ամենքի, նա իտալիա դուրս զալուն պէս՝ արձակեց
իր բանակը և իբր մի մասնաւոր մարդ, զիմեց ծերա-
կոյտին ու ժողովրդին, ինզրելով հաստատել իր ինք-
նակամ կարգագրութիւններն Ասիայում և վարձա-
տրել իր վետերաններին հողաբաժիններով։ Եւ այդ
բանում իր կարճատես միամտութեան համար նա մի
զգալի դաս առաւ։ Նրան թոյլատրեցին մի փառաւոր
յաղթական մուտքը (արիումֆ) ¹⁾, բայց նրա առա-
ջարկութեան բոլոր էական կէտերը մերժեցին։ Եւ
Ասիայի յաղթողն ստիպւած եղաւ գործադրել բոլորու-
վին մանր ու մաքուր միջոցներ, որպէս զի իր կար-
գագրութիւններն ու խոստումները քանդելու խայտա-
ռակ վիճակից ազատուի. ծերակոյտի զիմադրութիւնը
կուրելու համար, նա համաձայնութիւն կայացրեց լի-
կիւանոս կրասոսի հետ, ինչպէս հարուստների աս-
պետների ներկայացուցչի, և Յուլիոս կեսարի (Յեղար)
հետ, ինչպէս ժողովրդական կուսակցութեան ներկա-
յացուցչի։ Կուսակցութիւններին երկարացուցիչների այս
համաձայնութիւնն ստացաւ Ա. Եռապետութիւն (արի-
ումֆիրատ) անունը (60թ.)։

1) Տրիումֆ = յաղթող զօրավարի (imperatorի) հանդի-
սաւոր մուտքը Հռոմ։ Թափորը շարժուած էր յաղթական դոնե-
րից (porta triumphalis) զէպի իւպիկտերի տաճարը կազի-
տոլեան բլրի վրայ։ Յաղթողը գնում էր քառակի կառքի վրայ
նստած։ Նրա զլիխն զրւած էր լինում դափնէ պսակ և վրան
ծիրանի (տօզա)։ Առջնից տանում էին զերիններին և աւարը,
իսկ կառքի ետերից զնում էին զօրքերը։

Յուլիոս Կե-
սար Եռապետութեան շնորհով վերջնականապէս առաջ
դնաց այդ շրջանի ամենանշանաւոր պետական անձը
— Կայիսու Յուլիոս Կեսար (Յեղար): Նա սերւում էր
հին պատրիկ տոհմից, բայց ընտանեկան կապերով
պատկանում էր մարիոսական կուսակցութեան (Նրա
Յուլիա մօրաբոյրը Մարիոսի կինն էր. իր առաջին
կինն էլ Կինէասի կամ Յիննայի աղջկն էր): Սիլլայի
պրօսկրիպցիաների ժամանակ նրան խնայեցին երի-
տասարդութեան պատճառով, բայց նրա կապերը մա-
րիոսականների հետ երկար ժամանակ նրան խանգա-
րում էին կեանքի մէջ: Նա ստիպւած էր սահմանա-
փակւել երկրորդական զինւորական պաշտօններով,
յունական լեզուն և ճարտասանութիւնն ուսումնասի-
րելով, խնջոյքներ տալով, որոնք շուտով սնանկացրին
նրան և անվճարելի պարտքերի մէջ թաղեցին: Առաջին
անգամ նա ժողովրդականութիւնն ստացաւ իր էգիլ
եղած ժամանակը, որովհետեւ արտակարգ փառահեղ
խաղեր սարքեց ժողովրդի համար և կուի հանեց բազ-
մաթիւ սուսերամարտներ (զլաղիատօններ) հիանալի
կերպով վարժեցրած: Այդ ժամանակից նա դարձաւ
քաղաքային պրօլետարիատի վարիչներից մէկը և,
ինչպէս արդէն առւեց, շատ մօտ էր Կատիլինայի
դաւագրութեանը: Սակայն նա շատ խելացի լինելով,
չը կապւեց այդ կատաղի մարդու հետ. նա իրան
այնքան ճարպիկ կերպով պահեց Կիկերոնի և դաւա-
դիրների կուի ժամանակ, որ ոչ միայն չոչնչացաւ,
այլ և ընդհակառակը, պրետորի և յետոյ էլ խսպանա-
կան դաւաներից մէկի կառավարչի պաշտօն ըստա-
ցաւ: Այսուեղ նա առաջին անգամ արտայայտեց իր
պատերազմական ընդունակութիւնները: Բայց նրա
համար լայն պատմական գործունելութեան ասպարեզ
բացւեց Հռոմեական պատութիւնները, ո-
րոնց արդիւնքը եղաւ բոլոր գալիխական նահանգների
Դուուրժը՝ Միջերկրականից սկսած մինչև Հիւու-

է ասել, որ Կեսարը մեծանում էր իր առաջ գրւած
խնդիրների ընդարձակւելու հետ միասին: Կեսարն
ընտրւեց հիւպատոս 59 թւին մի ոմն Բիբուլոսի
հետ, որին նսեմացրեց մինչև այն աստիճան, որ Հոռո-
մում կատակի համար ասում էին, թէ հիւպատոսները
Յուլիոսը և Կեսարն են: Պայմանի համաձայն՝ նա
ընդունել աւեց Պոմպէոսի կարգադրութիւնների հաս-
տառումը և կամպանիայում քաղաքացիներին հողեր
բաժանելու օրէնքը, որով և ասիական բանակի վե-
տերանները վարձատրւած եղան:

Վերջապէս իր ժառայութիւնների փոխարէն՝ Դաւիթական
Կեսարին բաժին ընկաւ մի կարեոր մարտական ա-
ռաջնորդութիւն. Նա Գալլիա ուղերդուեց, որին
սպառնում էր մի նոր զերմանական արշաւանք, ոչ
նւազ սարսափելի, բան կիմբըների և տեսոնների
յարձակումները: Գերմանական ժողովրդների մի ամ-
բողջ խումբ, Սւեր կոչւած, շարժւում էին արեւելից
դէպի արևմուտք, քշելով և նւաճելով հանդիպող
ցեղերին, նրա առաջին խմբերն արդէն Հռենոսն ան-
ցել էին, ջարդել կելտերին և գալլիական հողի վրայ
կազմել մի նոր, միշտ աճող պետութիւն, որի գլուխն
էր կանգնել Արիովիստը: Անդրաբլգեան նահանգում
առաջին անդամ երեալուն պէս՝ Կեսարը պատահեց
կերպական Հելէտէնների ցեղին, որը փախչելով գեր-
մաններից, գաղթել էր ամբողջ կազմով Զւիցերիայից
և ուղերդուել Էգոյների նահանգը կենզրոնական գալ-
իայում: Բիբրակտէի (այժմ Աւտոն) մօտ տարած
յաղթութիւնով Կեսարն ստիպեց նրանց վերադառնալ
նախկին տեղերը: Յետոյ նա վճռական պարտութիւն
պատճառեց Արիովիստին այժմեան էլզասում: Դրանից
յետոյ սկսւեցին մի ամբողջ շարք պատերազմներ, ո-
րոնց արդիւնքը եղաւ բոլոր գալիխական նահանգների
Դուուրժը՝ Միջերկրականից սկսած մինչև Հիւու-

սային ծովը և Ատլանտեան ովկիանոսից սկսած մինչև Հուենոսը: Սկզբում յաղթեցին Բելգերը, և այդ ժամանակ առանձնապէս քաջ զիմաղբութիւն ցոյց տւող ներփերը համարեաւ բոլորովին ոչնչացան: յետոյ նւաճեց արևմտեան ափը: Կեսարն ինքը գործում էր վենեաների դէմ Բրիտանիայում, իսկ նրա օդնականները (լեգատները) գրաւեցին Աքւիտանիան Դարօննայից դէպի հարաւ: Գալլիային դրացի բարբարոսներին սարսափեցնեցու համար կեսարը նեղուցով անցաւ Մեծ-Բրիտանիա և երկու անդամ էլ Հուենոսի միւս կողմը: բայց թէ մէկ և թէ միւս դէպքում նա աչքի առաջ չունէր հաստատուն գրաւումներ, և խկոյն յետ էր վերադառնում: Գալլիական ծանր արշաւանքները կազմակերպեցին նրա համար քաջութիւնով, զիմացկանութիւնով և տոկունութիւնով օրինակելի մի բանակ, իսկ ինքն էլ նրանց ժամանակ արտայայտեց խկական հանճարեղութիւն: ամենամեծ վտանգների ժամանակ նա պահպանում էր իր սառնարիւնութիւնը և դէպքը պահանջած ժամանակը կեանքը վտանգի էր ենթարկում, որպէս մի հասարակ զինոր: ամենաբարդ դիրքերում նա խկոյն ըմբռնում էր զործի կուրիւնը, մի հայացքով և անսխալ ճշուաթիւնով որոշում էր հակառակորդի ուժեղ և թոյլ կողմերը, տեղի առանձնայատկութիւնները, զործողութիւնների նպատակները: իսկ երբ մի անգամ արգէն նպատակը նախագծւած էր՝ նա զիմում էր դէպի այն անպարտելի եռանգով *): Ի հարկէ նրան շատ օգնեցին կիշերի եւ նրանց պետութեան բերութիւնները, կելտերը բնաւորութիւնով ընդունակ:

*) Կեսարը թողել է իր պատերազմների նկարազբութիւնը: Քա «Կոմմենտարիաներ» կոչւած շարադրութիւնն է—մտքի և վերածութեան պարզութիւնով մի օրինակելի զործ: (Կայ և հայերէն զրաբար թարգմանութիւնը):

միտ էին: Ընդարձակ երկիրը չունէր մի ընդհանուր կազմակերպութիւն: Նա բաժանւած էր բազմաթիւ իրար թշնամի ցեղերի, իսկ ամեն մի ցեղի մէջ ժողովուրդը գտնուում էր ծանր կախման մէջ ցեղական ազնւականութիւնից, որի անդամները չէին կարողանուում ենթարկել պետական ուժեղ իշխանութեան: Քուրմերի կամ Կրուիլների գասակարգը՝ ճշմարիտ է, մեծ աղեցութիւն ունէր զործերի վրայ և յարաբերութիւններ էր պահպանում ամբողջ Գալլիայի և նոյն իսկ Լա-Մանշց այն կողմ—Մեծ-Բրիտանիայի հետ, բայց նա զինւորական գործողութիւններ զեկավարելու համար անպէտք էր և ընդհանրապէս բաւարար նիւթական ոյժ չունէր, որպէս զի կարողանար մի պետութիւն կազմել: Այս բոլոր պատճառներով կելտերը երկար ժամանակ կեսարին ցոյց տւին քաջ, բայց բաժան-բաժան զիմաղբութիւն: Օտարների հետ ունեցած կոփւը մինչեւ անգամ սովորեցրեց նրանց միութեան անհրաժեշտութիւնը, և իրանց անկախութիւնը պաշտպանելու վերջին փորձում նրանք միասին էին զործում խկական հերոսի՝ արւերնացի Վերցինքետորիքսի առաջնորդութեան տակ: 52 թւի ապստամբութիւնը քիչ էր մնացել որ հոռմայեցիներին ոչնչացնէր: Հերզովիայի մօտ կեսարն ունեցաւ իր առաջին անյաջողութիւնը: կելտական հեծելազորքը ոչնչացրեց հոռմէտականին, և միայն լեզվուների գիմացկանութիւնը և ամբացւած բանակատեղի օժանդակութիւնն ազատեցին զօրքերին լիակատար ոչնչացումից: Եւ նոյն իսկ այդ ժամանակ կատար ոչնչացումից: Եւ նոյն իսկ այդ ժամանակ զօրքաբարն ամենափայլուն կերպով արտայայտեց իր ընդունակութիւնը յարմարելու եղած պայմաններին և նրանց համեմատ պատերազմը մղելու եղանակները վորփիսելու, առաջւան պէս բաց գաշտում ճակատելու փոխարէն նա կելտերի դէմ զործազրեց հողաբլուրների և ամրացրած բանակատեղերի շինւածքները: Հոռմէտական զինւորները կատարելութիւնով էին ա-

նում հողային աշխատանկները, իսկ կելտերը՝ պատերազմական այդպիսի ձեր ժամանակ չէին կարողանում լիակատար կերպով օգտել առաջին յարձակումից, որ սրանք կատարում էին միշտ արտակարդ ոգերութիւնով։ Զգուշաւոր և ճարպիկ խաղերով կեսարին յաջողեց Վերցինգետորիքսին փակել Ալեգիսյում։ Հռոմայեցիներն իրանց շրջապատեցին պատնէշներով երկու կողմից էլ և յետ էին մզում ինչպէս պաշարւածների դուրս գալու փորձերը, այնպէս էլ այն ցեղերի յարձակումները, որ աշխատում էին դրսի կողմից պաշարման օղակը պատուել։ Վերցինգետորիքսն ստիպւած եղաւ անձնատուր լինել, և նրա գերութիւնով վերջացան զիմադրութեան բոլոր փորձերը։ Կեսարի ձեռքերն աղտաւեցին իտալիայում գործելու համար։

⁵³ Իր տասնամեայ բացակայութեան ժամանակ Հռոմում մի շատ լարւած գրութիւն էր առաջացել։ Եռավեսութիւնը քանդէլ էր կրասոսի մահով, որը զնացել էր պարթևների դէմ, անզգոյշ կերպով մտել էր անապատի խորքերը և ոչնչացել էր իր բանակի մեծ մասի հետ միասին (53 թ.) թշնամու ձեռքով։ Պոմպեոսը նախանձեց Կեսարի յաջողութիւններին և իր վրայ առնում էր ժամանակ առ ժամանակ բացարիկ լիազօրութիւններ։

⁵⁷ 57 թւին նրան յանձնեց բոլոր հոռմէտիկան աշխարհի հացի առևտրի կառավարութիւնը՝ գործերի կանգ առնելը և հացի թանգութիւնը վերացնելու համար։ 55 թւին նա իր վրայ վերցրեց հսպանիայի կառավարութիւնը, բայց գաւառ չըգնաց, այլ գործը յանձնեց իր օպնականներին (լեզատ¹⁾։ 52 թւին նրան ընտրեցին միակ հիւպատոս Իտալիան և մանաւանդ Հռոմը խաղաղեցնելու համար, ուր մի քանի տարի շարունակ գործում էին կազմակերպւած աւազակային

¹⁾ Լեզատոս էին կոչւում զօրավարի մօտ դաշտած օղնականները։

խմբեր։ Նրանց առաջնորդ կլօտիոսն ու Միլօնը կողոպտում էին մասնաւոր մարդիկների, վախեցնում էին Կօմիցիաներին ընտրութիւնների ժամանակ և իրար հետ կանոնաւոր ձակամարտեր էին տալիս։ Պոմպէսը զլուխ ելաւ աւազակների հետ և խիստ օրէնքներ ընդունել տեսց բռնութեան և ընտրութիւնների մէջ կաշուք գործածելու դէմ։

Ծերակոյալը, որ երկար ժամանակ հաւատ չէր ընծայում Պոմպէոսին, վերջապէս համոզվեց, որ նա շատ աւելի նւազ երկիւղալի է, քան կեսարը և նրա հետ սերտ համաձայնութեան մէջ մտաւ վերջինի դէմ։ Բնիդիակառակը՝ ժողովուրդը՝ այսինքն ստորին դասակարգերի ամբոխն, անող հիմացմունեով և վերաբերում դէպի զալիական յաղրականին։ Վերջնական պայթումը տեղի ունեցաւ այն ժամանակ, երբ ծերակոյալը պահանջեց կեսարից յանձնել գաւառները և լեզիոնները։ Դրան իբր պատասխան՝ կեսարից կաշաւած արիբուն կուրիոսը հարց գրեց Պոմպէոսի իսպանական գաւառները յանձնելու մասին։ Սակայն ծերակոյալը մերժեց այդ պահանջը և, չը նայելով երկու տրիբունների—կուրիոնի և Մ. Անտոնիոսի արգելիներին, կեսարին հրաման ուղարկեց Գալլիան յանձնելու։ Տրիբունները փախան վերջնիս մօտ և նըրան պատրւակ տւին հակառակորդներին մեղադրելու օրինազանցութեան մէջ։ Կեսարը բոլորովին տրամադրի չէր առանց զէնքի անձնատուր լինել թշնամիների իշխանութեանը. նրա լեզիոններն սպասում էին վարձարութեան։ 49 թւի սկզբին գալլիական բանակի առաջնապահ գունդն անցաւ Ռուբրիկոնը, Ցիսլակինեան (այսրալպեան) Գալլիայի սահմանը և գրանով իսկ սկսւեց երկրորդ ազգամիջեան պատերազմը։

Զը նայելով ընդհարման երկար պատրաստութիւն-Ազգամիջեան ներին, Պոմպէոսը դեռ եւս անպատճառ էր և իտալայում բաւարար ուժեր չունէր թէ և նրա տրամ-

դրութեան տակն էին հասարակապետութեան բոլոր
արեմտեան, արեերեան և հարաւային զինւորական
միջոցները։ Այսպիսի հանդամանքների մէջ գէպի հիւ-
սիս ուղարկել համեմատաբար մի փոքր զօրաբաժին՝
մի մեծ սխալ էր, որ սակայն արին. Կեսարն ստի-
պեց այդ զօրաբաժնին անձնատուր լինել և երկու
ամսում զրաւեց ամբողջ Խապլիան։ Դա ունէր ոչ
միայն մեծ բարոյական նշանակութիւն, այլ և առաջ-
նակարգ կարերութիւն զինւորական տեսակետից,
որովհետև կեսարն ընկաւ Պոմպէոսի բանակների մէջ
տեղը և հնարաւորութիւն ստացաւ բաժան-բաժան
պահել նրանց իրարից։ Պոմպէոսն ստիպւած էր ընտ-
րութիւն անել արենեքի և արեմուտքի մէջ, և վճռեց
դիմել արեելք։ Ծերակոյտի անդամների մեծ մասի
հետ նա անցաւ Յունաստան, իսկ կեսարն այդ միջո-
ցին դիմեց գէպի արեմուտք, շրջապատեց խսպանական
լեզիոնները և ստիպեց նրանց իր կողմն անցնել։ Զը
նայերով այս բոլոր սխաններին, կրկն Պոմպէոսի
կողմն էր թւական գերազանցութիւնը. Վերջապէս
նրա բանակը հաւաքւեց իլլիրական ափի վրայ, և ա-
ռանց ժամանակ կորցնելու այնտեղ դիմեց կեսարը ևս,
թէ և նա ստիպւած էր տանել իր զիւորներին հա-
մարեա առանց պաշարի և բեռի, որպէսզի հակառակ
ափի վրայ գործելու համար բաւարար թւով զօքք ժո-
ղովէ առանց ուշացնելու։ Նրան յաջողւեց խարել
ծովի վրայ տիրող Պոմպէոսի նաւատարմին և ափ ել-
նել այնտեղ, ուր հակառակորդները չէին սպասում։
Բայց և անպէս զրութիւնը ծայրայեղ կերպով վտան-
գաւոր էր. կեսարը պաշարեց Դերրաքիումը, իլլիրա-
կան ափի վրայ պիսաւոր նաւահանգիստը և հակառա-
կորդ բանակի պահեստատեղին։ Ստացւեց ուժերի
նոյն դասաւորութիւնը, ինչ որ էր Ալեգիայի մօտ։
Քաղաքի շուրջն ամրացրել էր իրան երկու կողմով կե-

սարի զօքք, իսկ նրա ետևի կողմից կանգնած էր
Պոմպէոսը. Բայց այժմ գործ պէտք էր ունենալ ոչ թէ
կելտերի, այլ հոռմէտական լեզիոնների հետ։ Պոմպէ-
ոսի հետ մի անյաջող ընդհարում ունենալուց յետոյ
Կեսարն ստիպւած եղաւ պաշարումը վերցնել։ Նա
գնաց գէպի արեելք, յուսալով ոչնչացնել պոմպէտական
այն բանակը, որ գալիս էր Մակեդոնիայից։ Պոմպէ-
ոսը հետեւեց հակառակորդին, Փարսաղիայի (Փարսալ)
մօտ՝ Թեսալիայում՝ տեղի ունեցաւ գիմաւոր ճակա-
ռամարտը (48 թ)։ Լեզիոնների հետեակազօրքը եր-
կու կողմից էլ կռւում էր մի և նոյն քաջութիւնով։
Պոմպէոսի հեծելազօրքը շատ աւելի բազմաթիւ էր, և
սկսեց անցնել կեսարի մարտական գծի թիկունքի
կողմը։ Բայց այդպիսի դիմուածի դէմ արդէն միջոցներ
էին ձեռնարկւած։ Պոմպէտականների վրայ յանկարծ
յարձակւեցին մի քանի ընտրովի կրիուրանիք¹⁾, որ կե-
սարը պահում էր իրը պահեստ։ Պարտութիւնը լրա-
ցրեց գերազանական հեծելազօրքը, որ ժողովել էր կե-
սարը Գալլիական արշաւանքների ժամանակ։ Փա-
խուստի առաջին նշանների ժամանակ Պոմպէոսը հե-
ռացաւ կռւի զաշտից։ Նա զնաց Եզիպտոս, բայց
այնտեղ նրան սպանեցին Պտղոմէոս թագաւորի հրամա-
նով, կեսարը մի աննշան զօրաբաժնով հետեւեց Պոմ-
պէոսին Եզիպտոս և քիչ էր մնացել, որ ինքն էլ ո-
չնահար։ Նա միջամտեց Պտղոմէոսի և նրա քրոջ՝
Կղէոպատրայի վէճին՝ այս վերջնիս օգտին։ Ալէքսան-
դրայում ազգաբնակութիւնը շրջապատեց նրան ամեն
կողմից, և նա 5 ամիս գժւարութիւնով պաշտպանւեց
թագաւորական գղիակում և թատրոնում, մինչև որ Փոքր-
Ասիայից նրան օգնական զօքք հասաւ։ Այս կռւի ժամա-
նակ այրւեց Ալէքսանդրիայի հոչակաւոր զրադարձը,

¹⁾ Կոհորտան մի զօրաբաժին էր 500 հոգուց կազմված։
Լեզիոնն ունէր 10 կոհորտա։

Եգիպտացիներին յաղթելուց յետոյ՝ մի քանի օրում վերջացաւ Միհրդասի որդի Փառնակէսի դէմ սկսած արշաւանքը. նա մտել էր հոռմէական զաւառները¹⁾: Յետոյ պէտք էր ոչնչացնել պոմպէականների բաւական խոշոր ուժերը, որ հաւաքւել էին Աֆրիկայում: Տապսի մօտ նրանք ջարդւեցին, և բոլոր առաջնորդներն ինքնասպանութիւն գործեցին, որոնց թւում և կատոն կրտսերը, հին հանրապետական ոգու վերջին ներկայացուցիչը: Մի անդամ էլ հաւաքւեցին պոմպէականներն իսպանիայում Պոմպէսի որդիների և կեսարի նախկին լիգատ Լարիէնոսի առաջնորդութեան տակ: Մունդայի մօտ Կեսարը տւեց իր վերջին ճակատամարտը, և յաղթութիւնը նրան այս անգամ աւելի գժւար յաջողւեց, քան երբ և է: Նա անձամբ առաջնորդում էր իր կոհորտաներին յարձակման ժամանակ և յաղթեց միայն նումիդիական

45

հեծելազօրի շնորհով (45 թւին):

Կեսարի բարձրորդութիւնները Հռոմ վերադանալուց յետոյ, Կեսարն զբաղեց ներքին խոռվութիւններից խախտած պետութեամ վերաշինութիւնով: Ծերակոյտը և ժողովուրդը նրան տվին աւելի բացառիկ իշխանութիւն, քան այն՝ որով օգտում էր Սիլլան: Նա նշանակւեց գելկտատոր և ցենզօր (համարակալ) մինչեւ մահ, հիւպատոս 10 տարով. Նրան արւեց «յաղթական առաջնորդ» — իմպերատոր տիտղոսն՝ ինչպէս յատուկ անուն և դրա հետ միասին՝ հանրապետութեան բոլոր զօրքերի առաջնորդութիւնը: Նրա անձին յատկացւեց արիրունի սրբազն անձեռնմխելիութիւնը (sacrosanctus), Նա իրաւունք ստացաւ մըշտապէս գափնէ պստկ և յաղթանակի ծի-

1) Այս պատերազմին է վերաբերում Կեսարի հոչակառը տեղեկագիրը ծերակոյտին. «Եկայ, տեսայ, յաղթեցի» (veni, vidi, vici).

քանի կրելու: Իր բազմատեսակ լիազօրութիւնների ընորդով՝ կեսարն իր վերանորդութիւնները կարող էր մզնել կեսանի բոլոր կողմերի մէջ և այդ բանում ևս պակաս եռանդ և հանճարեղ կորովամտութիւն չը ցոյց տւեց, քան իր արշաւանքներում:

Մարիոսի ջարդերի և Սիլլայի պրօսկրիացիաների սարսափելի օրինակներից յետոյ՝ Հոռմն ու Բտալիան գողդողալով սպասում էին կոտորածների և բանութիւնների: Յաղթողը ոչ միայն ցոյց տւեց մեծահոգութիւն, այլ և հրաժարւեց ամենատեսակ վրիժասութիւնից և աշխատում էր ամեն տեսակ միջոցներով գէպի իրան գլուխել Պոմպէականներին և հանրապետականներին. Այս կարողացաւ զավել զինուրներին — մի անհաւատալի սիրագործութիւն՝ աչքի առաջ ունենալով զօրքերի վայրենացած լինելը և կամացտկանութիւնը: Այդ գէպքում նա ստիպւած եղաւ մինչև անգամ կռւել իր վետերանների հետ: Ի միջի այլոց ապստամբւեց հոչակառը տասերորդ լեզիոնը, կեսարի զօրքի ամենալաւ մասը: Բայց իմպերատօրն իր ասածը պնդեց և ոչ մի չարագործութիւն անել թոյլ չը տւեց: Ի հարկէ նա վարձատրեց վետերաններին, բայց գլխաւոր վարձատրութիւնը — նող բաշխելը — կապւեց զարքականութիւնը խնդիրների հետ, որոնք վերաբերում էին ոչ միայն զօրքին: Այս գէպքում կեսարն ամենաընդարձակ չափերով շարունակեց այն քաղաքականութիւնը, որը երկում էր հանրապետութեան ամբողջ պամութեան մէջ, և որն առանձինապէս արտայայտում էր Տիբերիոս Գրակլոսի բարենորդութիւնն մէջ: 80,000-ի չափ աղքատ քաղաքացիներ ուղարկւեցին գաղթավայրեր: Այս գաղթումը մի կողմից հեռացրեց վասակար պրօետարիատի նշանաւոր մասը, իսկ միւս կողմից իրսատ օդուեց զաւառների ոսմանացմանը (հոռմէականացնելուն) — նրանց

մէջ հոռմէական զարգացումը և կարգերը մտցնելուն։ Կայիսու Գրակոսի զաղափարը՝ քաղաքացիութեան իրաւոններ ապ այն ժողովրդներին, որոնք ընդունելի էին հոռմէական կուլտուրան—աւելի մեծ ծաւալ ու զարգացում ստացաւ։ Պօից այս կողմի Գալլիան ըստացաւ լիակատար հաւասարութիւն հոռմայեցիների հետ, մնացած ցիսալպեան (այսրալպեան) Գալլիան ստացաւ «լատինական» կոչւուծ իրաւունքը, այսինքն միենոյն քաղաքացիութիւնը մի քանի սահմանափակութիւններով։ Այսպիսով երեւան էր զալիս հոռմէական իրաւոնն աստիճանաբար ամբողջ աշխարհի վրայ արածելու մեծ ծրագիրը, որ պէտք է կապւած լինի հոռմէական լուսաւորութեան աւրածման նիս։ Կեսարի մտաւոր հորիզոնը չափազանց լայն էր. նա չէր կարող աշխարհի շահերը ենթարկել մի քաղաքի կամ մի նահանգի եսականութեանը։ Նոյն իսկ հոռմէական լուսաւորութիւնը նա չէր հասկսնում իրը զուտ հոռմէական սկզբունքների տիրապետութիւն։ զիսութեան, գեղարեւստի, գրականութեան մէջ նա խոստվանւում էր հելլենականութեան առաւելութիւնը և նովաստում էր հոռմայեցիներին նրան իւրացնելու¹⁾։ Մինչև անգամ նա հոգ էր տանում վերականգնելու այն առեւտական եւ կուլտուրական կենսունիերը, որ կործանել էին նոռմէական գլուխեցից։ Աչքի առաջ ունէր վերականգնել կորնթոսն ու կարթագէնն իրանց նախկին վեհութիւնով։ Բայց և այնպէս կեսարը գնահատում էր հոռմէական հաստատութիւնների և իրաւունքի նշանակութիւնը։ Նրա քաղաքացին համայնքներին վերաբերող օրէնքը (lex Julia municipa-

¹⁾ Ի միջի այլոց՝ Ազէքսանդրիայի գիտականների օգնութիւնով կեսարն ուղղեց տօմարը։ Խնչպէս յայտնի է Յուլիան տօմարը մինչև այժմ գործ է տօւուժ Շուտաստանուուժ, Յունատանուուժ (նուի Հայերի մէջ) և այլն։

լիս) ներկայացնում էր քաղաքների կազմութեան մանրամասն վերաքննութիւնը և շատ նպաստեց բաղանային համայնքների զարգացմանը, իսկ այդ համայնքների տարածւելը և ազգեցութիւնը դարձաւ ամենազօրեղ միջոցը հոռմէական կուլտուրան գաւառները տեղափոխելու համար։ Գաւառների կառավարիչների կամայականութիւնը զսպելու համար խիստ օրէնքներ հրատարակւեցին ուժով փող կորզելու և բռնութեան գէմ։ Վերջապէս կեսարն ընդարձակ ծրագիրներ կազմեց զանազան գաւառների (մանաւանդ Իտալիայի) բարեկեցութիւնը բարձրացնելու համար։ Աչքի առաջ կար նոր ճանապարհներ և ջրանցքներ շինել, ճահճներ չորացնել և այլն։

Այս մեծ միջոցների և ձեռնարկութիւնների հետ համեմատելով՝ կեսարի գործունեութիւնը բուն Հռոմում եւերուղական է երեսում։ Հաց բաժանելը սահմանափակւեց, օրէնքներ հրատարակւեցին շապանութեան և բռնութեան գէմ։ Ծերակոյտը, որ արգէն շատ բան էր կորցրել ազգամիջեան կոիւների ժամանակ, բոլովովին կախման վիճակի մէջ զրւեց. Նրա անզաների թիւն աճեցրին միանգամից մինչև 900-ի. Նրան անդամ նշանակեցին պետական գործերի հետ անձանօթ շատ սպաներ և նոր քաղաքացիութիւն ստացած գաւառացիներ։ Ակներև էր, որ կեսարի նովաստակն էր խլել ծերակոյտից նախկին նշանակութիւնը և զարձնել նրան մի պետական խորհուրդ իւ մօս։ Կօմիցիաները պահպանւեցին, թէ և խոշոր պաշտօնեաների ընտրութիւնը և օրէնադրութիւնը կատարւում էին կեսարի ցուցմունքներով։ Եւ կօմիցիաների պահպանութիւնը, և նոյն իսկ յաղթողի իւրացը ած իշխանութեան բնաւորութիւնը, այսինքն այն՝ որ նա իրան էր իւրացը և մի քանի հասարակալպետական պաշտօններ—այս բոլորը ցայց էին տալիս չոռմի հանրապե-

տութեան դարեւոր հզօր ազգեցութիւնը։ Կեսարը և իշխանապես (դիկտատոր) էր, և ու հիւպատու, և ու ցեն-
գօր, և իմպերատոր, բայց բազաւոր չէր։ Նրա ար-
ձանը թագաւորների արձանների շարքում դրին, նրա
կուսակից Մ. Անտոնիոսը մեծ հրապարակում (ֆօրում)՝
նրան առաջարկեց թագաւորական թագ։ Բայց կեսարը
չը համարձակւեց թագն ընդունել ժողովրդի արտուն-
ջի պատճառով։ Սակայն այդ հրաժարումը միայն յե-
տաձումն էր, կեսարը կամաց-կամաց հող էր պատ-
րաստում թագաւորական իշխանութիւնը վերականգ-
նելու համար։ Նա պատրաստում էր արշաւելու
պարթեների վրայ և այդ առիթով տարածում էր մի
նախագուշակութիւն, որ իրք թէ «պարթեներին պէտք
է յաղթէ մի թագաւոր»։ Բայց հասարակապետու-
թիւնի արմատացած չէր միայն ժողովրդի տամադր-
ութեան մէջ։ Արանից հրաժարւելը դժւար էր առաջ-
նորդող ընտանիքների և այն մարդկանց համար, որոնք
սովորել էին կառավարել պետութիւնը և ոչ հնագանդ-
ւել մի թագաւորի։ Ծերակոյտի անդամների մէջ կազմւեց
մի գաւադրութիւն, որի մէջ մտան մօտ 60 հոգի,
ներում ստացած պոմպէականներ, որոնք յոյս ունէին
առաջ գնալ գիկտատօրի տնկումից յետոյ։ Գլուխ էին
կանգնել խորամանկ, նախանձոտ կասսիոսը և անապյ-
ման ազնիւ Մ. Յունիոս Բրուտոսը, որին կեսարը
մասնաւորապէս սիրել և իրան էր մօտեցրել վերջն
ժամանակներում։ Դաւադրութեան յաջողութեանը նր-
պասեց կեսարի արհամարհանքը դէպի զգուշութեան
ամեն տեսակ մտնիր միջոցները, Աւրիշ շատ մեծ մարդ-
կանց նման նա հաւատում էր իր պատմական կոչու-
մին, իսկ իր անհաւական կեանքի վերաբերութեամբ
նա ճակատագրական (Փատալիստ)¹⁾ էր։ Նա բարձր

¹⁾ Ֆատալիստ առում են այն մարդուն, որը հաւատում
է, թէ կեանքը կառավարում է ոչ թէ մարդկանց ծրագրե-

էր վրէժինդրութիւնից և կասկածներից։ Բայց որքան
էլ մարդ մեծ լինի, նրա մահկանացու անձնաւորու-
թիւնը ենթարկւում է մարդկային գոյութեան ամեն
տեսակ սովորական պատահարներին։ Կեսարին մահ
նախագուշակեցին «Մարտի իդոսի» ժամանակ։ մի
քանի անգամ նրան զգուշացրել էին, բայց նա նրանց
վրայ ուշադրութիւն չը դարձեց, և Մարտի իդոսին
(Մարտի 15-ին) 44 թւին գնաց ծերակոյտը ժողովի։ ⁴⁴
Դաւադրիները նրան խենջարներով սպանեցին։

Կեսարի մահն սկզբներում ընդհանուր շփոթու- ^{Երկրորդ ե-}
թիւն և լիակատար անկարգութիւն առաջ բերեց։ <sup>ապահովու-
թիւն</sup>
Նրա ստորացը բոլոր ուժերն ու երկրորդական
գործիչները գլուխ բարձրացրին իրանց յաւակնու-
թիւններով ու պահանջներով։ Բոլորը և իւրաքան-
չչւր անհատ հետեւմ էին իրանց սեփական քաղա-
քականութեան, կեսարին սպանողները, ծերակուտա-
կանների չափաւոր կուսակցութիւնը, Մարկոս ան-
տանիոսն, ինչպէս սպանւածի ամենամօտ զօրագլուխը,
19 տարեկան Օկտավիանոսը, ինչպէս կեսարի քրոջ
թռոր և որդեգիրը ²⁾—կռւում և իրար հետ համա-
ձայնութեան մէջ էին մտնում։ Բայց կամաց-կամաց
պարզեց մի զիսաւոր պայման։ Խիպերասօն սպան-
ուել էր, բայց նրա զօրքը մնում էր եւ պահանջու մ
էր այժմ նրա արած կարգագրութիւնների հաստատու-
թիւնը եւ մարդապանների պատճելը։ Այս հողի
վրայ կազմւեց երկրորդ եռապետութիւնը (43 թւին) ⁴⁵
Անտոնիոսի, Օկտավիանոսի և Մ. Լեպիդոսի իսպա-
նիայի և հարաւային Փալլիայի փոխ-հիւպատոսի (պրո-
կոնսուլ) մէջ։ Այս երկրորդ եռապետութիւնը զանա-

րովն ու միջոցներովն, այլ ոչ ոքից կախում չունեցող բաղդից
(Ճակատակրից) (Fatum)։

²⁾ Հարազատ քրոջ դստեր և Կ. Օկտավիանոսի որդին։

գանւում էր առաջնից նրանով, որ սա մի մասնաւոր համաձայնութիւն չէր, այլ ձանաշւած էր ժողովրդից, որը կօմիցիաներում լիազօրութիւն տւեց եռապետներին կարգի բերել պետութիւնը: Բայց կրկին զբուհաւոր ուժը զօրքի մէջն էր, և եթէ կեսարին յաջողւեց պահել իր բանակը հպատակութեան և կարգի մէջ, նոյնը չէին կարող անել եռապետները: Դրա հետ միասին նրանք հեռու չէին հասարակութեանը սարսափանար անելուց, որովհետեւ կեսարի մեծահոգութիւնը կորստարեր եղաւ: Դաշինի առաջին հետեւանից եղաւ պրուկրիացիաները, որոնք իրանց սարսափելի արիւնեղութիւններովն ու կողոպատումներովը յետ չէին մոռւմ Սիլլայի գատաստանից: Յետոյ դարձան կեսարին սպանողների դէմ: Յունաստանում Բրուտոսի և Կասսիոսի առաջնորդութեան տակ հաւաքած հանրապետական զօրքը ջարդւեց եռապետներից Ֆիլիպպէի մօտերը, և նրա երկու առաջնորդներն էլ վերջ դրին իրանց կեանքին (42 թ.): Այս յաղթութիւնից յետոյ մոռւմ էր միայն երկիրը բաժանել: Աննշան Լեպիդոսին շուտով մի կողմ շպրտեցին, Օկտավիանոսն առաջ արեմուաքն իտալիայի հետ միասին, Անտոնիոսն՝ Արեկլոր, Յունաստանի հետ միասին Առաջինը ոչնչացրեց պոմպէականների վերջին մնացորդները, յաղթելով եռապետի որդի Սիլլասոս Պոմպէոսին, որ ուզում էր հաստատել Սիլիլիայում և Սարդինիայում յետոյ նա հանգստացրեց արեկելեան Ալպերի և Դալմատիայի կիսավայրենի ցեղերին: Անտոնիոսն աւելի վատ կերպով օգտւեց իր իշխանութիւնից: Դա մի շնորհալի, բայց կոպիտ և զգայական մարդ էր: Նա այնպէս էր տարւել եղիպտական կլոսպատրա թագուհուն, որ նրա սիրու համար արհամարհում էր պետական ամենակարենը գործերը: Նա փորձեց նամակ պարթեներին, բայց չը կարողացաւ յաղ-

թել արշաւանքի դժւարութիւններին և յետ դարձաւ: Նրա յարաբերութիւններն Օկտավիանոսի հետ տարէց տարի աւելի լարւում էին: Եթէ նա սկսեց նիւթել հումկական նահանգներն իր կլէոպատրայից ունեցած ողիներին, յայտնի ընդհարում առաջացաւ: Անտոնիոսի տրամադրութեան աակ կային ահազին զօրք և ահազին նիւթական միջնորդներ, իսկ Օկտավիանոսը, բացի բանակից՝ իր կողմն ունէր և կեսարի անպարտելի անունը: Նրա փոխարէն պատերազմական գործողութիւնները զեկավարում էր շատ լաւ զօրավար Մ. Վիպսանիոս Ագրիպան, որին նա արգէն պարտական էր Մ. Պոմպէոսի յաղթութիւնը: Ծովային վճռական ձակատամարտում՝ Ալցիումի մօտ (31 թւին) Կլէոպատրան իր զալերներով (թեթև, երկկայմ, ցածր նաւեր), նոյն իսկ առաջին ընդհարումից յետոյ՝ փախաւ: Անտոնիոսը հետեւց նրան: Առանց առաջնորդի մնացած նաւատարմնն ի հարկէ ջարդւեց: Յամաքային զօրքը շօր սպասեց Անտոնիոսին, իսկ յետոյ անցաւ կեսար Օկտավիանոսի կողմը: Վերջինիս մնում էր միայն եղիպտառը նւաճելու հեշտ խնդիրը, իսկ անտոնիոսը և Կլէոպատրան անձնասպանութիւնով կեանքերին վերջ դրին: Այսորիան հոոմէական աշխարհի միութիւնը վերականգնեց և դրա հետ էլ միասին կեսարի միահեծան իշխանութիւնը:

Հանրապետութեան անկումը շառաջացաւ որևէ վատքական տարիքը: Անտոնիոսի անձի պատահական յաղթութիւնից: Նա չը կատարեց մի անգամից: Սիլլայի գիկտատօրութիւնը, Պոմպէոսի բացասիկ լիազօրութիւնները նախապատրաստեցին կեսարի և նրա որդեգրի կայսերական իշխանութիւնը: Ի հարկէ հանրապետութեան դէմ գլխաւոր գործիքը զօրքն էր, որն իր զօրավարին պետական հաստատութիւններից աւելի բարձր էր գասում: Բայց զօրքն այդ չէր անում միայն ու միայն կամ Միշահասիրական նպատակներից զրդւած: Գալլիական կամ Միշահատիքի դէմ եղած պատերազմի նման համաշխարհային

կորիւներ վարելու համար՝ իշխանութեան կենտրոնացումը
մի մարդու ձեռքում իսկապէս աւելի լաւ էր, բայ առաջ-
նորդների մշտական փոփոխութիւնները ծերակոյտի և կօ-
միցիաների անկայուն ազգեցութեան տակ ։ Նոյն իսկ «հոռ-
մեական բաղաքացի» հասկացութիւնը ըոլորովին նոր միտք
ստացաւ՝ գաղթավայրերի հիմնելու քաղաքականութեան և
գաշնակիցներին հսումչական հասարակութեան մէջ ընդունե-
լու շնորհով։ Քաղաքացիութեան իրաւունքի և կօմիցիանե-
րում մասնակցութիւն ունենալու մէջ եղած կապն անհրա-
ժեշտարար խզեց, որովհետև հսումայցիների ահազին մեծա-
մասութիւնը Հռոմից գուրս զնաց և իր ձայնը տալու հնա-
րաւորութիւնը կորցրեց։ Կօմիցիաներն՝ իրրի մայրաքաղաքի
անբարոյականացած ամրոխի ժողովներ, ծերակոյտն իրրի
մայրաքաղաքի սակաւաթիւ արխատոկրատիայի կամ որևէ
զօրավարի պատահական կերպով հաւաքած օժանդակիչ ան-
ձերի ժողով՝ ոչ մի բարոյական իրաւունք չունէին պետու-
թեան մէջ իշխելու։ Հանճարեղ Կեսարը լիապէս գոււակից
կատարող փոփոխութիւնը, երբ Հռոմ բաղադի շահերի հակա-
ռակ՝ առաջ տես հումանական աշխարհի օգուտն ու կարիքները։
Հանրապետութեան անկումը նշանակում էր մայրաքաղաքի
կառավարութեան անկում։ Մնում էր տեսնել, թէ զօրքից
դուրս եկած կայսերական իշխանութիւնն ինչ չափով կը յա-
ջողեցնէ աշխարհը կառավարել։

Գ 1. Ա Խ Խ Խ Խ Խ

Կ Ս Յ Ռ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Աւգուստոսի
իշխանու-
թիւնը

Ակցիումի յաղթութիւնն իշխանութիւնը տւեց
մի այնպիսի մարդու ձեռք, որը քիչ էր նման մեծ
կեսարին։ Օկտավիանոսն ամեններն հանճար չէր. չու-
նէր ոչ մտքի արագութիւն, ոչ սրամտութիւն, ոչ
փրփրացող եռանդ, Բայց և այնպէս նա մի խոշոր
և խելացի զործիչ էր, որն ամեն ինչ հասկանում էր
իր բնական առողջ խելքով, հաշւատեսութիւնով, իր
հաստատակամութիւնով և անխոնջ աշխատանքի
ուժով։ Պետութիւնը կարգաւորելու գործում նա հե-

տևում էր մի մշտական հիմնական ուղղութեան—նա
իր ձեռքում էր կենցրոնացնում միապիտի բոլոր էա-
կան իրաւունքները, բայց չը ոչնչացրեց նաևտապե-
տական ձեւերն, այլ պահպանեց մի քանի հանրապե-
տական հիմնարկութիւնների էական նշանակութիւնը,
ևնթարկելով նրանց իր ընդհանուր հսկողութեանը։
Օկտավիանոսի միապետութիւնն, ինչպէս և կեսարի
միահեծանութիւնն՝ առաջացաւ այն պատճառով, որ
իմպերատօրին արւեցին մի բանի բարձրագոյն պաշ-
տօններ և արտակարգ լիազօրութիւններ։

27 թւին նա ծերակոյտին և ժողովրդին վերագրածրեց ^{27 թ. Պ. Ի. ից} գեռ եռապետ եղած ժամանակն իրան տւած «պետութիւնը
կարգաւորելու» իշխանութիւնը։ Մերակոյան, իրը երախտա-
զիտութիւն այդ բանի համար, նրան տւեց Ազգուստու (Օ-
գոստոս ¹⁾ ականունը, որը պէտք է ցոյց տար նրա մեծու-
թիւնը, կամ ինչպէս այժմ հն ասում միապետներին զիմած
ժամանակ — «Մեծութիւնը ²⁾։ Ի հարկէ՝ նոր միապետը
պահպանեց հսումչական զօրքի գլխաւոր առաջնորդի, այս-
ինքն ինվերասօրի իրաւունքներն ու ժիշոսը։ Բոլոր եկե-
մտական վարչութիւնը, որքան այդ վերաբերում էր պետա-
կան գլխաւոր ծախքին՝ բանակի պահպանութեանը—նրա
ձեռքն անցաւ։ Բացի զրանից՝ նոյն զինւորական իշխանու-
թեան պատճառով նրա տրամադրութեան տակ էին պետա-
կան հողերը—վետերաններին հողեր բաշխելու և գաղթա-
կաններ ուղարկելու համար։ Քաղաքացիական փաշուրեան
մէջ միապետութեան մօտական նիմքը եղաւ տիրուելի իշխա-
նութիւնը, որ սովորական տրիբունութիւնից բարձր դաս-
եց։ Այդ պաշտօնի շնորհով Օգոստոսը կարող էր ծերակոյ-
տին և ժողովրդին ժողովի հրաւիրել, գաղաքացնել պաշ-
տօննեանների գործողութիւնները, նեղւածներին օգնել։
Երբ պահանջուում էր կատարել ժողովրդահամար, ծերակոյտի
լրացում, ստացւածքների գնհատութիւն՝ Օգոստոսն ընդու-

¹⁾ Ասցո—«բազմապատկում եմ» բառի արմատից։

²⁾ «Օգոստափառ» արտայայտութիւնը մինչև այժմ զործ
է ածւում կայսրի անձի և կայսերական ընտանիքի անդամ-
ների համար։

նում եր ցենօրի իշխանութիւն։ Հիւպատոսութիւնից նա սակաւ էր օգտուում։ Ինչպէս ամեն մի մեծ պաշտօնեայ, նա ունէր դուելու իրաւութ, բայց զործերի ընտրութեան ժամանակ ստիլւած չէր որոշ շրջանակներով սահմանափակել իրան, այլ կարող էր վերջնականապէս վճռել ամեն տեսակ քաղաքացիական¹⁾ ու քրէական²⁾ զործեր։ Կրկին ինչպէս ամեն մի բարձր պաշտօնեայ, նա կարող էր պարտապիր կարգադրութիւններ, և ոչ ոք իրաւունք չունէր փոխելու կամ սահմանափակելու այդ կարգադրութիւնները, որոնք գրա համար էլ ունէին օրէնքի նշանակութիւն, միայն այն զանազանութիւնով, որ նրանք զործադրուում էին միայն այն ժամանակամիջոցում, երբ նրանց հրատարակող իմպերատորը գեռ կառավարում էր։

Հանրապետական հիմնարկութիւնները Ի հարկէ այդպիսի իշխանութիւնն ահազին էր կասկած չէր կարող լինել, որ Օգոստոսը պետութեան գլուխն էր։ Բայց նրա կողմին ծերակրոյսը և կոմիտանիր պահպանում էին որու իրաւունքներ։ Ամենից առաջ՝ զաւաների կառավարութիւնը բաժանած էր իմպերատորի և ծերակրոյսի մէջ։ Առաջինն իր վրայ առաւ միայն այն զաւանները, որոնք գտնւում էին պաշտօնական վիճակի մէջ, օրինակ Գալլիան, որին սպառնում էին գերմանները, Ասորիք՝ պարթենների գէմ պաշտպանելու ծանր հոգուով, հիւսիսային Խստանիան, որի մէջ ասպատամբութիւններ էին բարձրացնում իրերական ցեղերը։ Բացի դրանից նա իրան սեփականացրեց զանազան թագաւորութիւններ, որոնք՝ ինչպէս օրինակ Եղիպատոսը, Հռոմը միացրել էր, բայց չէր դարձրել հոռմէական դաւառ, այլ թողել էր իրանց հին կարգերով։ Գաւառների մեծ մասը թողնեց ծերակրոյտի վարչութեանը, և իմպերատորը խառնուում էր նրանց զործերում միայն

¹⁾ Այսինքն՝ վէճեր իրաւունքի մասին։

²⁾ Այսինքն՝ զատավարութիւն վիրաւորանների և իրաւունքը խախտելու համար։

բացառիկ դէպքերում։ Յետոյ ծերակրոյաը ձեռք բերեց քրէական գատարանինշանակութիւն, որ չունէր հանրապետութեան ժամանակ։ Գործերի ընդհանուր դեկավարութեան մասին իմպերատօրը մշտապէս խորհրդակցում էր նրա կամ նրա անդամներից ընտրւած 15—20 հոգուց բաղկացած մասնաժողովի հետ։ Ինչ վերաբերում է հասարակական ժողովին՝ նրա իրաւունքներն առելի ուժ լիկ ձեւականութեան վերածւեցին։ Կօմիցիաներն առաջւայ նման իրաւունք ունէին պաշտօնեաններ ընտրելու և օրէնքներ հաստատելու, բայց ընտրութիւնները կատարուում էին իմպերատօրի յանձնաբարութիւնով, և նոյն խոկ օրէնսդրական խնդիրներում պէտք է հետեւին նրա ցուցմունքներին։

Այսպիսով Օգոստոսն իրան վերապահեց առիւծի բաժինը և պետութեան մէջ ոչ ոք չէր կարող մրցել նրա հետ, բայց և այնպէս նրա իշխանութիւնը ենթարկուում էր էական և ինքնօրինակ սահմանափակութիւնների. այնուամենայնին նա պահօնեայ էր, այսինքն Հռոմի ժողովրդից նեանակւած։ Արտաքուստն իր իշխանութիւնն ստացաւ ծերակրոյտից և կօմիցիաներից, խոկ էակէս՝ զօրքից, որն իրան դիտում էր իրեւ զինւած ժողովուրդ։ Կրա համար էլ այդ իշխանութիւնը բոլոր ժամանակը կրում էր մի անհատաց, բացառիկ բնաւորութիւն։

Այդ իշխանութիւնը վերահաստատում էին ժողովրդական նոր վճիռներով ամեն տասը տարին մի անդամ, և ժառանգականութեան մասին խօսք անգամ չեր կարող լինել։ Որպէսզի իշխանութիւնն իր տնից մէկի ձեռքն անցնելու ապահովեցնէր, Օգոստոսը պէտք է հոգ տանէր, որ այդ մէկին այդպիսի արտակարգ լիզորութիւններ տրւէին, քանի ուներ ինքը կենդանի էր։ Շատ նշանաւոր էր այն, որ նոր միապետութիւնը որոշ անոն չունէր, նոյն խոկ այն պատճառով, որ նա կազմւած էր մի քանի բարձր պաշտօններից։ «Իմպերատօր» բառը նշանակում էր նրա մի նշանաւոր մասը։ Ամենասովորական ա-

նունը դարձաւ princeps (պրինցեպս), որն իսկապէս ցոյց էր տալիս, թէ միապետը հռոմէական քաղաքացիներից առաջինն է¹⁾: Վերջապէս հանրապետութեան և միապետութեան այս տարօրինակ միախառնութեան պատճառով՝ պէտք իր տամադրութեան տակ չուներ իր համար անհրաժեշտ զործադիր ծառայողների բիւր: Պաշտօնների մեծ մասն առաջաւայ նման գրաւել էրն ծերակոյտի անդամները, իսկ այդ գասակարգը, չընայելով իր բոլոր պարտութիւններին և ստորացումներին, պահպաննել էր ինքնուրոյնութեան ահապին պաշար: Այդ ծերակուտականների պաշտօններին հակառակ՝ Օգոստոսն սկսում է առաջ քշել իրանից լիապէս կախում ունեցող աստիճանաւորների (չինովնիկ) գասակարգը, որոնց շարքերը լցուու էրն ասպետներից, պլեբէյներից և ազատ արձակւածներից, բայց այս բանում նա միայն սկիզբը դրեց: Ճիշտ այդէս էլ նրա օրով նշմարւում են մի ուրիշ նշանաւոր երեսիթի առաջին նշանները:

Իմպերատօրին սկսում են աստուածային պատիւներ մասուցանել, ինչպէս մի զերդնական ուժի, որից կախւած է հասարակական կարգն ու բարօրութիւնը: Դրանում միայն շողոքորթութիւն և կեղծաւորութիւն չէր արտայայտւում. հռոմէական բազմաստւածութեան տեսակէտից դա բնական էր, որովհետեւ բնութեան և մարդկային կեանքի բոլոր զլիաւոր երեսիթներին աստւածային ոյժ էր վերագրւում: Առաջ աստուածների շարքը դասեցին մեծ կեսարին, որին սկսեցին կոչել Յուլիոս Աստւած (Divus Julius): Իսկ յետոյ Հռոմում և մանաւանդ դրսի համայնքներում և գաւառներում, սկսեցին երկըրպագել Օգոստոսի «հանճարին», այսինքն Օգոստոսի պաշտպան աստուածութեանը: Այդտեղից հեշտ էր անցնել նոյն իսկ Օգոստոսի աստուածացներուն և դա կատարեց դեռ ևս նրա կենդանութեան ժամանակ:

¹⁾ Princeps civium Romanorum=Հռոմի քաղաքացիներից առաջինը, ինչպէս և princeps senatus=ծերակոյտի անդամներից առաջինը (առաջին սենատոր):

Օգոստոսն իր ահապին իշխանութիւնը գործ էր ներքին գործում հպատակների օգտի համար: Նա անդադրում աշխատում էր պետութեան օգտի համար և հետեւեալ կայսրների քաղաքականութեան հիմքերը դրեց: Նրա զլիաւոր օգնականներն էին՝ Ազրիպատոր—զինւորական գործերի և վարչութեան համար, Կիլիկոս Մելենասը՝ կուսակցութիւնները հաշտեցնելու և բարձրը հասարակութեան մի նոր շրջան կազմելու համար: Վերջինիս նշանակութիւնը շատ մեծ էր, թէև նա ոչ մի պաշտօնական զիրք չունէր և մինչեւ անգամ ծերակոյտ չը մտաւ, այլ մնաց ասպետ: Գլխաւորապէս նրա շնորհով Առուստասի տունը դարձաւ զրական կենտրոն, որին միացան տաղանդաւոր զրոդները, բանաստեղծները և պատմաբանները: Այս զարգացման վիալը շատ նպաստեց այն բանին, որ հասարակապետական ազնւականութեան մնացորդները հաշտեցին իրանց հպատակ զիրքի հետ և խառնեցին նոր պետի պալատական կեանքի մէջ: Շատ բան արւեց նոյնպէս կրօնին ամրապնիելու համար, որ անկման էր հասել խառնակ ժամանակներում: Բայց Կեսարի օրինակին հետեւելով՝ առանձին ուշադրութիւն դարձւեց բարօրութիւնը եւ արդինագործական ուժերը բարձրացնելու վրայ: Ներկայ զէպքում Միջերկրականի շուրջը կարգը և խաղաղութիւնը վերահաստատելու անշափ բարերարութիւն հանդիսացաւ. Հռոմէական խաղաղութիւնն (ραχ Romana) ապահովեցնում էր նահանգների մէջ արդինաւոր յարաբերութիւնները. զանազան ընդունակութիւնների, ոսկորութիւնների, արդինքների ու հարստութիւնների տէր զաւանների մէջ պահպանուում էր կենդանի յարաբերութիւն: Ծանր, ազգամիջեան պատերազմներից յետոյ հասաւ արդինագործող աշխատանքի և կենդանի փոխանակութեան շրջանը: Բացի հաս-

տատուն կարգը վերականգնելուց, Օգոստոսը շատ նպաստեց անտեսական ծաղկմանը՝ մի ամբողջ ցանց գեղեցիկ ճանապարհներ շինելով և արդիւնաբերութեան ու տուերի մի քանի կարեռագոյն ճիւղերի վրայ վերահսկողութիւն հաստատելով։ Պետութիւնը շատ էր հոգ տանում մասնաւորապէս հացի առետրի, ջրաբաշխութեան և հասարակական շէնքերի վրայ։ Իտալական ազգաբնակութեան կեանքի մէջ լողարանների (վաննա) մէծ նշանակութիւնը ծնեցրեց, ի միջի այլոց, մի ամբողջ շարք «տերմ»-երի (բաղանիսների) շինութիւնը, որոնց մէջ՝ բացի փոռաւոր բաղանիսներից, կային և պարտէզներ ու ծածկւած սիւնազարդ ճեմելիներ՝ զրօննելու համար։

*Արտաքին
գործունեու
թիւնը* տւում էր նրանով, որ խիստ հսկողութիւն կար նահանգապետների վրայ և բարբարոսների մէջ տարածում էին հոռմէական կարգերն ու հաստատութիւնները։ Այս տեսակէտով մասնաւորապէս շատ բան արեց Գալիխյի համար։ Այդ երկիրը կիսավայրինի վիճակից ըուտով դարձաւ բոլորին հոռմէական երկիր։ Ազրիապասը բաժանեց Գալիխյան 60 նահանգների, որոնց կենտրոնատէղերը մինչեւ անգամ այժմեան Ֆրանսիայում պահել են իրանց նշանակութիւնը։ Ծանր պարտականութիւնն էր պահպանել կուլուրական աշխարհը բարբարոսների հոսանքի դէմ։ Այդ նպատակին էր ծառայում 250,000 մարդուց կազմւած բանակը, որ տեղաւորւած էր պիտաւորապէս Հռենոսի, Դանուբի և Եֆրատի տվյալի երկարութիւնով։ Պաշտպանութեան համար այդ թիւը բաւական էր, բայց յարձակման և գրաւման համար նա շատ քիչ էր։ Դրա համար Օգոստոսը բաւականացաւ միայն Դանուբեան երկիները զրաւելով և իսպանիան վերջնականապէս խաղաղեցնելով։ Հռենո-

թիւաւոր թշնամիների—Պարթևների և Գերմանների դէմ նա պաշտպանողական գիրք ըսնելով միայն բաւականացաւ։ Գերմանների մէջ սարսափը պահելու համար՝ Օգոստոսի խորթ որդիները-Պրուսսոսը և Տիբերիոսը մի քանի անգամ յաջող արշաւանքներ կատարեցին գէպի Գերմանիայի խորքը։ Բայց Ք. Ծ. 9թ. Ք. Դ. 16թ.

9 տարի յետոյ Կլինտիլիոս Վարդոնի հոռմէական բանակը բոլորովին ջնջւեց Տետօրուրդեան անտառում գերմանների ձեռքով, որոնց առաջնորդում էր Խիրուսկացի Արմինիոսը։ Զը նայելով, որ Տիբերիոսը և արդէն վախճանւած Դրուսոսի որդի Գերմանիկոսն առան այդ պարտութեան դաժան վրէժը, սակայն Հռոմէական սահմանը վերջնականապէս յիս բերւեց կրկին Հռենոսի և Գանուրի ափերը *),

Վարչութեան մէջ կայսրի ունեցած մէծ նշանագութեան հետ միասին չափազանց կարևոր է հանդիպանում այն հարցը, թէ ում պէտք է անցնի նրա իշխանութիւնը։ Օգոստոսի ընտանեկան կեանքը զըժրադրութ էր։ Նա որդի չուներ, իսկ նրա թոռների Յուլիա և Մ. Վիպսանիոս Ազրիովպա աղջիկների որդիների մէջ մի կողմից՝ միւս կողմից էլ նրա երրորդ կողմից՝ Լիովիայի և սրա որդի Տիբերիոսի **) մէջ սկսւեցին խոսվութիւններ, որոնք վերջացան թոռների մասով, ինչպէս Հռոմում ասում էին թոյնից։ Օգոստոսը չէր սիրում Տիբերիոսին, բայց ստիպւած էր խոստովան-

*) Բացի Գերմանիայի հարաւարեւման անկիւնից (Բեզինսբուրգից մինչև Մայն), որը պաշտպանւած էր ամբողջիւններով և անտաներով։ Դրանք ացր decumates կոչուած Հռենու էին։

**) Լիովիան սկզբում ամուսնացած էր Տ. Կլուդիոս Ակրոնի հետ, և նրանից ունեցել էր Տիբերիոս և Պրուսսութիւնները, Վերջինս մնաւ գետ ևս Օգոստոսի կենդանութեան ժամանակի։

Նրա վարչական և գինուրական ընդունակութիւնները, և ծերութեան ժամանակ նրան իր յաջորդ նշանակեց, տալով նրան արիբունի (ժողովրդապետի) և հիւսատոսի (կոնսուլի) պաշտօն:

*Siberebrius, 14
p. R. 14. 14.* Քրիստոսի ծննդից 14 տարի յետոյ Օգոստոսը մեռաւ, և Տիբերիոսը՝ ծերակոյտի հրաւերով և մի փոքր կեղծ տատանումից յետոյ՝ նրա իրաւունքներին տէր դարձաւ: Այդ ժամանակ Հոենոսի և Դանուբի ափերի լեզուններն զգալ տւին, որ իրանք իրանց վրայ նայում են իրը պետութեան զիխաւոր հիմքի վրայ: Զինուրները պահանջեցին կրծանել իրանց ծառայութեան ժամանակը, աւելացնել թոշակը. իսկ հոենոսեան բանակը նոյն իսկ պատրաստում էր կայսր հրատարակել իր զօրավար Գերմանիկոսին: Այս վտանգաւոր շարժման ճնշումի համար Տիբերիոսը պարտական էր զլսաւորապէս իրան՝ Գերմանիկոսին: Պետական վարչութեան մէջ Տիբերիոսն արժանաւոր յաջորդ հանդիսացաւ Օգոստոսին—զգուշաւոր, խնայող, գաւառների կարիքներին ուշադիր և նրանց առանձնայատկութիւնների հետ լաւ ծանօթ: Էտպէս չը փոփոխելով վարչական իշխանութիւնը, նա հեռացրեց նոր միապետութեան և հանրապետութեան մի քանի հակասութիւնները. պատօնեաների ընտրութիւնը կօմիցիաներից խրեց եւ ՏԻԵց ծերակոյտին, օրենքութիւնը դարձաւ միայն ծերակոյտի որոշումներ եւ կայսրի նրամաններ. Կօմիցիաները բոլորովին կորցրին իրանց նշանակութիւնը, իսկ ծերակոյտն, ընդհակառակը, աւելի մեծ կարևորութիւն ստացաւ, քան Օգոստոսի օրով: Դժբաղդաբար Տիբերիոսն անմիջելի արժանաւորութիւնների հետ միասին ուներ և կասկածութիւն ու դաժանութիւն: Հազիւ նա կայսր դարձաւ, իսկոյն սկսւեցին ծերակոյտի մէջ բազմարիւ դաշեցնին Մեծութիւնը վիրաւորողների դէմ: Երկու, ե-

րեք դէպքեր եղան, երբ նշանաւոր ընտանիքների անդամներ, մանաւանդ կեսարների տան ազգակիցները, տարւում էին փառասէր նպատակներով և գաւադըրութիւններ էին կազմում Տիբերիոսի դէմ: Բայց դատերի մեծ մասը տեղի էր ունենում մի չը մտածւած վարմունքի կամ մի անզգոյշ խօսքի համար: Մի ասպետի մեղագրեցին նրա համար, որ ծախել էր իր կարւածի հետ միասին և Օգոստոսի արձանը. պատմաբան կրեմուցիս կողքոսին դատապարտեցին նրա համար, որ նա յարգանքով էր խօսել Բրուտոսի և Կասսիոսի մասին: Քաղաքական մեղագրանքներով զբաղւում էին լրտեսները, որոնք շահի համար պատրաստ էին ոչնչացնել ամեն մի անձի, որովհետև իրը լրտեսութեան վարձատրութիւն՝ նրանց բաժին էր ընկնում զոհերից արքունիք զրաւած ստացւածքի մի մասը: Այս արիւնոտ դատապարտութիւնների մէջ Տիբերիոսի զիխաւոր օդնականն էր պլետօրեան գնդի զնդապետ Սէյանոսը: Բայց սա էլ սկսեց մտածել ազգակից դառնալ կայսրի հետ և նրա ժառանգը դառնալու իրաւունք ձեռք բերել: Այն ժամանակ Տիբերիոսը հրաման ուղարկեց ծերակոյտին՝ նրան բանտարկել, և մի քիչ առաջ Սէյանոսի առաջ խոնարհող ծերակոյտի անդամները մեծ բաւականութիւնով հրամայեցին մահւան պատճի ենթարկել նրան: Տիբերիոսը վերջին տարիները չըսպանում չէր ապրում—նա տեղափոխւեց Նէտալի դէմ գտնւած Կապրիլիա գեղատեսիլ կղզին և այնտեղ մից ծերակոյտի հետ յարաբերութիւն էր պահպանում գործերի մասին: Մարգիլ նրան ատելի դարձան, և երբեմն ամբողջ ամիսներով տնից դուրս չէր դալիս: Տիբերիոսի ընտանեկան յարաբերութիւններն Օգոստոսի ընտանեկան պայմաններից աւելի լաւ չէին: Իր դրուսոս որդին մեռաւ, եղրօրորդի Գերմանիկոսը, որի զինուրական յաջողութիւնների և ժողովրդակա-

նութեան վրայ ինքն էլ էր նախանձուում՝ նոյնպէս յանկարծակի վախճանւեց եղիպտոսում. որա այրին—Ազրիպափնան, Օգոստոսի թոռը, ¹⁾ կասկածում էր որ Տիբերիոսն էր սպանել տւել իր ամուսնուն և դրա համար պարզ ատելութիւն էր ցոյց տալիս նրան: Տիբերիոսն աքսորեց նրան մի անսապատ կղզի, ուր նա ինքն իրան սովամահ արեց. նրա երեց որդիներին սպանեցին: Սակայն Գերմանիկոսի և Ազրիպափնայի երրորդ որդուն՝ Կայիսու Կալիգուլային Տիբերիոսն իրան մօտեցրեց և իր յաջորդ նշանակեց:

^{Կայիսու Կայիսու 37.} 37 թւին Տիբերիոսը մեռաւ. ծերակոյտն անմիջապէս կայսր հրատարակեց Կալիգուլային: Նոր պետը շուտով ցոյց տւեց, որ ինքն իր դրութիւնը հասկանում է իր նախորդից բոլորովին տարրեր կերպով: Նա հրաժարում էր աստուածային պատիւներից, իսկ Կալիգուլան ամենից աւելի նրանով էր պարծենում, որ ուղիղ գծով սերում է Կիսարից եւ Օգոստոսից, իրան նամարում էր ասւած և իր ասւած լինելը ցոյց էր տալիս նրանով, որ գէափ մարդիկն ու գործերը կամայականութիւններ և գժութիւններ էր անում: Մի առանձին բաւականութիւնով նա իրան անւանում էր «Հատինական իւլիաներ»: Հպատակների կեանքը և պատիւը նրա համար ոչ մի նշանակութիւն չունէին. մահւան պատիմները և սովանութիւններն աւելի շատացան, քան Տիբերիոսի օրով և կատարուում էին մի առանձին տեսակ յանդուազն ծաղրածութիւնով. օրինակ՝ մի անգամ Կալիգուլան հրամայեց գիխատել մի երիտասարդի, իսկ նրա հօրն իր մօտ ձաշի հրաւիրեց: Բայց այդ խելացնոր բոնական իշխեց միայն

¹⁾ Նրա ծնողներն էին Մ. Պիպսանիոս Ազրիպափու և Օգոստոսի գուստը Յուլիան:

4 տարի. նրա գէմ դաւադրութիւն կազմւեց և նրան սպանեցին:

Այս անգամ նոր կոյսը հրատարակեց ոչ թէ ծերակոյտն, այլ պրետօրեան գունդը: Զինւորներն ընտրեցին Կլաւդիոսին՝ Գերմանիկոսի եղբօրը, մի մանրազննին դիտնականի, որը մինչև այդ ժամանակ ինամքով հեռու էր պահում իրան պետական վտանգաւոր գործերից: Կայսր դառնալով, նա սկսեց կառավարութիւնով զբաղւել նոյնքան բարեխղճօրէն, որքան առաջ էր գրքերով: Արտաքին քաղաքականութեան մէջ նա միշտակ թողեց՝ հիմնելով մի հոսմէական գաւառ Մեծբիտակայում. ներքին վարչութեան մէջ նա իր օրով կատարելագործեց կայսերական դիւանը, որի բազմաթիւ գործերը կատարուում էին ազատ արձակած ծառայողների ձեռքով: Կրկին մեծ չարիք եղան Կայսրի ընտանիքի մէջ եղած դաւադրութիւնները և ոճրագործութիւնները: Նրա առաջին կին Մեսսալինան ժամանակն անց էր կացնում խայտառակ խընչոյցներում, որ չէր տեսնում միայն Կլաւդիոսը: Երա յանդուազնութիւնը մինչև այստեղ հասաւ, որ մինչև անդամ պատկեց մի հոսմայեցի ասպետի հետ: Վերջապէս ազատած ստրուկներն ամեն ինչ հաղորդեցին Կլաւդիոսին և նա հրամայեց մահւան պատժի ենթարկել կնոջը: Երկրորդ անգամ նա ամուսնացաւ իր եղբօր աղջկայ, Ազրիպափնա կրտսերի՝ Գերմանիկոսի և Ազրիպափնա երեցի գտներ հետ: Այստեղ կը կնւեց Լիվայի: պատմութիւնը: Ազրիպափնան հեռացրեց լիւազիոսից նրա առաջին ամուսնութիւնից ծնած որդուն և զրգեց նրան որդեզրել իր առաջին ամուսնուց ունեցած որդուն ¹⁾:

Կլաւդիոսի մտհից յետոյ պրետօրեանները կայսր

ներան

¹⁾ Ազրիպափնայի և Գոմիկիոս Ազրիպափի որդեն:

հրատարակեցին նրա այս որդեգրին՝ Ներոն անուշ-
նով։ Կալիգոռլայի ամարդի կամայականութիւնը նրա
մէջ միացած էր թեթևամիտ մնապարծութեան հետ։
Նա թունաւորեց Բրիտանիկոսին, սպանեց մօրը, կնո-
ջը, իր դաստիարակ Սենեկային, պրետօրեան գնդի
գնդապետին, որին պարտական էր իր բարձրու-
թիւնովը, և հազարաւոր ուրիշ աւելի նւազ յայտնի
անձների, որոնք շարժում էին նրա բարկութիւնը
կամ շահասիրութիւնը։ Երա ոնիթեները կատարում էին
ոչ միայն իր մօժիկների եւ հոռմայեցիների զլսին,
այլ եւ գուառներում։ Հոռմի մեծ մասը ոչնչացնող
մի հրդեհից յետոյ (իր գցած), նա վերաշինեց քա-
ղաքը շատ աւելի գեղեցիկ ձևով, բայց դրա համար
գաւառները ենթարկեց ամենատեսակ կեղեկումների։
Այս հրէշի ամենաբարձր փառասիրութիւնն էր յաղթա-
նակներ տանել կառարշաւների մրցութեան ժամանակ
և հոչակւել իրքն մեծ երգիչ։ Հաւատացնում էին, որ
Հոռմի հրդեհի ժամանակ՝ նա զւարճանում էր նրա
տեսարանով իր պարատի տանիքից և Տրոյայի աւե-
րումը երգում։ Հոռմէական կայսրը բացարձակ ա-
ռաւելութիւն էր տալիս յոյներին հոռմայեցիներից,
որովհետև յոյներն աւելի լաւ էին կարողանում գնա-
հատել նրա արտիստական տաղանդը։ Սկզբում
մայրաքաղաքի գաւագրութիւնները յաջողութիւն չու-
նեցան, բայց խսպանական և գալլիական լեզիոնների
ապստամբութիւնը պրետօրիաններին բաժանեց կայս-
րից, և այն ժամանակ ծերակոյտը Ներոնին հրա-
տարակեց հայրենիքի թշնամի։ Ներոնն խոկոյն փա-
խաւ և երբ նրա ետեից հասան՝ ինքն իրան սպա-
նեց, նրա հետ միասին վերջացաւ Յուլիան և կլա-
դիան կայսրների հարստութիւնը (դինաստիա) (68
թւին)։

Ֆիւիաններ։ Զը նայելով կայսրների ոնցազործութիւներին,

նոռովական աշխարհի բոլոր ազգաբնակութիւնը նա-
մակւած էր այն գիտակցութիւնով, որ կայսերական
իշխանութիւնն անհրաժեշտ է կարգ պահպանելու
համար։ Հարցը միայն նրանում էր, թէ ով կը խլէր
կառավարութեան սանձը։ Ծերակոյտը կայսր հրա-
տարակեց խսպանական փոխ-հիւպատոս Գալբային,
պրետօրեաններն առաջ քշեցին Ոթոնին, Գերմանա-
կան լեզիոնները՝ Վիաելլոսին, ասորական լեզիոն-
ները՝ Մ. Ֆլաւիանոս Վեսպասիանոսին. մի տարու-
չափ շարունակւող խառնակութիւնից յետոյ վերջինս
յաղթեց։ Երա միապետութիւնը (պլընցիպատ) հաս-
տատուեց ծերակոյտի և կօմիցիաների կողմից որոշ
օրէնքի ձևով, որով Վեսպասիանոսն ստացաւ կեսարի,
Օգոստոսի և Կլավիոսի իշխանութիւնը։ Կայիսոս Կա-
լիգոռլայի և Ներոնի մասին չէր յիշւած։ Նոր պետն
ընդունեց Կեսար և Օգոստոս անուններն, ինչպէս
իր արժանիքն ապահովեցնելու միջոց։ Նա աննշան
ծագումից էր և առաջ էր գնացել լեզիոնների մէջ
ծառայելով։ Ինչպէս կառավարիչ՝ նա մեծ օգուտ
տեղ, որովհետեւ կարգը վերականգնեց և ելեւմուտքը
կանոնաւորեց։ Տրանջում էին նրա փողային պահանջ-
ների գէմ, բայց դրանք անհրաժեշտ էին։ Նրա օ-
րով վերջացաւ հրէական յամառ պատերազմը։ Պա-
ղեսամինը Պոմպէոսի ժամանակից Հոռմից կախման
մէջ էր, բայց պահպանում էր իր սեփական վարչու-
թիւնը։ Զինորական իշխանութիւնը պատկանում էր
Հերովդէոնների հարստութեանը, բայց Երուսաղէմի
ու նրա տաճարն, իրքն ժողովրդական սրբատեղիներ՝
զանուում էին քահանայական դասի վարչութեան
տակ։ Երօնը հանդիսանում էր իրք ամենահզօր ուժը
ժողովրդի կեանքում և թէն գործնական հաշիւներից
զրդւած՝ հրէաներն ստիպւեցին հաշուել հոռմէական
կեսարների իշխանութեան հետ և հպատակւել հիւ-

պատոսներին և պրօկուրատօրներին¹⁾ , բայց նրանք ար-
համարնում էին կոսպաշտական բազմաստածութիւնը ,
և ժամանակ առ ժամանակ նրանց ատելութիւնը
գէպի օտար տիրապետութիւնն արտայայտում էր
աղստամբութիւններով : Ներսնի և ասորական փոք-
հիւղատոսների կեղեքութերն առաջացրին այդ ա-
պշտամբութիւններից ամենազօրեղը , որն սկզբում
հոչակւեց հոռմայեցիների պարտութիւնով : Բայց ի
հարկէ Յուղայի փոքրիկ երկիրը չը կարողացաւ յաջող
կերպով դիմագրել Հոռմի ուժին : Վեսպասիանոսը
նւաճեց իրկիրը և ժողովրդին քշեց երուսաղէմ , ուր
սա ամրացաւ : Երբ նա կայսր դարձաւ , պատերազմը
շարունակեց նրա որդի Տիտոսը , որ երուսաղէմն ա-
ռաւ կատապի դիմագրութիւնից յետոյ : Մինչև անդամ
հոռմայեցիների քաղաք մտնելուց յետոյ էլ հրէայ զին-
որները գեռ շարունակում էին պաշտպանել տա-
ճարում և Սիոնի ամրոցում : Նրանք ընդունեցին
հոռմայեցիներից ներում . վերջը մնացողներն իրանց
սպանում էին և ընկնում հոռմէական նիդակների
վրայ : Գրգռած յաղթողները կործանեցին տաճարը և
քաղաքը (70 թւին) :

Մի ուրիշ կարևոր յաջողութիւն էլ նա գտաւ աղստամբ-
ռած հոնուսեան գալիխայի և գերման ցեղերի գէմ : Այդ
շարժումն առաջացել էր կայսերական իշխանութեան համար
ծագած կոփեների անկարգութիւններից , երբ Վիտելլիսոսին
պաշտպանող հանուսեան լիգիոնները թողին սահմանը և
գնացին դէպի Խտալիա : Շարժման գլուխն էր Բատաւացի
Ցիվիլիսը , որ երկար ժամանակ հրամանատար էր հոռմէա-

¹⁾ Պրօկուրատօրներ կոչւում էին կայսրի կառավա-
րիչները . նրանց էր յանձնւած կայսրի եկամուտների հաւա-
քումը , և զրա հետ միասին կարող էին նրանց տրել զին-
որական և զատական լիազօրութիւններ : Պոնտացի Պիղա-
տոսը Տիրերիս կայսրի պրօկուրատօրն էր Յուղայի եր-
կրում և Գալիխում :

կան զօրքի մէջ եղած գերմանական զօրաբաժնին : Կելտե-
րին իրանց հետ միացնելու համար՝ ապստամբները հրատա-
րին «Գալիխայուն կայսրութիւն» : Վեսպասիանոսի Յե-
րէակեցին «Գալիխայուն կայսրութիւն» : Վելտերին և գերման-
ներին և զրանով ապահովացրեց իրարից կելտերին և գերման-
ներին և զրանով ապահովացրեց իր յաղթանակը :

Ֆլավիանների շրջանի երրորդ պատերազմը մղւեց
Բրիտանիայում և վերջացաւ միայն վեսպասիանոսի կրտսեր
որդու՝ Դոմիտրիանոսի օրով , որն իշխանութիւն ստացաւ
Տիտոսի¹⁾ կարձ տիրապետութիւնից յետոյ : Կլաւդիոսի
կղզու գրաւումը հաստատուն չէր և սահմանափակում էր կղզու
միայն հարաւային մասով : Ներսնի ժամանակ բրիտները
ջարդեցին հոռմէական գաղթականներին , և այդ օրւանից
ջարդեցին հոռմէական գաղթականներին լորավար Ազրիկուան
կուրը չէր գագարում : Ֆլավիանների լորավար իսկ՝ որ
վերջապէս վճռական յաջողութիւններ ունեցաւ , իսկ՝ որ
զլիսաւորն է , սկիզբ դրեց կղզու խօսնացումին²⁾ : Սակայն
Դոմիտրիանոսը թոյլ չը տեց նրան զլուխ հանելու իր օգ-
տակար գործը Նախանձելով Ազրիկուայի արած ծառայու-
թիւններին՝ յիտ կանչեց նրան Բրիտանիայից :

Դոմիտրիանոսի օրով վերանորոգւեցին այն դաժա-
նութիւններն ու բանութիւնները , որոնք կործանեցին
Յուլիանների և Կլաւդիանների հարստութիւնները :
Նա նման չէր պետութեան հաւատարիմ ծառայ իր
հօրը , և ոչ էլ եղբօրը , որն ասում էր , թէ կորսած է
համարում այն օրը , երբ մի որեէ բարի գործ չէ ա-
նում : Դոմիտրիանոսից փախչում էին , ինչպէս մի վայ-
րենի գաղանից : 96 թւին նա ընկաւ սպանչի ձեռքով :

Դոմիտրիանոսի փոխարէն ընտրւեց Ներւան , մի ներվան
ծեր ծերակուտական , որն իր գահ բարձրանալու ժամա-
նակ երգւեց մահւան չը գատապարտել ծերակոյտի ան-
դամներին կամայական կերպով , առանց դատարանի:
Բայց նա շուտով զգաց , որ չէ կարող կատարել կայսրի

¹⁾ Վերջնիս օրով տեղի ունեցաւ Վելուվի ժայթքումը ,
որից ոչնչացն Պոնտիա և Հերկուլանում քաղաքները :

²⁾ Խօսնացում նշակում է նւաճւած երկրում հոռմէա-
կան կուլտուրայի տարածումը :

դժւարին պարտականութիւնները և որդեզրեց այն ժամանակի ամենանշանաւոր զօրավար Ռւլպիանոս Տրայիանոսին: Վերջինիս բարձրանալը նշանաւոր էր նրանով, որ նա Հռոմի, նոյն խոկ Ետալիայի քնարիչ չէր, այլ ծնւել էր Եսպանիայում, հումկական գաղթականներից մէկի ընտանիքում, որ զաղթեցրել էին այնտեղ Սկիափիոն Երեցի օրով: Տրայիանոսը լիապէս արգարացրեց Ներքայի ընտրութիւնը: Կայսերութեան զինուրական ոյժը նա հասցրեց իր ամենամեծ չափին և ոչ պակաս յաջողութիւնով կառավարեց պետութեան ներքին գործերը: Նրա պատերազմական զինուրոր քաջագործութիւնը եղաւ դակերի թաղաւորութեան կործանումը, որը բռնում էր այժմեան Խումանիան, Բեսարաբիան և Տրանսիլվանիան: Նրա յաղթանակի առիթով Հռոմում կանգնեցրած սիւնի վրայ ներկայացւած էին այդ պատերազմի զանազան դէպքերը: Կայսը չը սահմանափակւեց յաղթութիւններով. նա բնակեցրեց Դանուբի ձախ ափը հոսմէական աշխարհի բոլոր մասերից բերւած գաղթականներով, և նրա հետքը մնացել է Եւրոպայում մինչեւ օրս—դա ուսմանական ժողովուրդն է, որ ստեղծւեց այդ ժամանակ և պահպանեց իր ուսմանական բնաւորութիւնը, լեզուն և անունը, չը նայելով պատմութեան բոլոր յեղաշըջումներին: Կայսրութեան ազգաբնակութեան համար ունեցած Տրայիանոսի անխոնջ ջանքերից առանձնապէս նշանաւոր է բարեգործութեան կազմակերպութիւնը. պետութիւնը վարկ բաց արեց կարիք ունեցող հոգատէրերի համար, իսկ փոխ տւած գրամագլուխների տոկոսներով դաստիարակում էր հազարաւոր ազքատ երեխաներ: Իր իշխանութեան վերջում Տրայիանոսը մի արշաւանք ձեռնարկեց՝ Ասիայում հոսմէական ուժը վերականգնելու համար, նա նւաճեց Հայաստանը,

գնաց պարթեների գէմ և մի քանի անգամ յաղթեց նրանց. բայց և այնպէս նրան չը յաջողւեց վերջնականապէս նւաճել նրանց: Նա ստիպւած եղաւ գէպի փոքր Ասիա նահանջել և այդ նահանջի ժամանակ մեռաւ. (117 թ.)

117

Ասորական լեզունները նրան յաջորդ նշանակեած առեւմուցին նոյնապէս իսպանական հռոմայեցի ելիաս (Եղիա) Աղրիանոսին: Նա անհնար համարեց շարունակել Տրայիանոսի պատերազմական ձեռնարկութիւնները, հաշուեց պարթեների հետ և աշխատում էր միայն նրա համար, որ պահպանէ նախկին սահմանները: Դրա փոխարէն նա աւելի մեծ եռանգով էր պարապում ներքին վարչութիւնով: Տրայիանոսի նման նա շատ լաւ յարաբերութիւն էր պահպանում ծերակոյտի հետ և թոյլ չեր տալիս, որ պալատական դաւերն ազգեցութիւն ունենան գործերի վրայ: Առանձնապէս շատ բան ար եց պատօնիայ (Ճինօվնիկ) գատակարզը զարգացնելու համար, որ ուղղակի կախած էր կայսրից և որ կամաց-կամաց գուրս էր քշում հին պաշտօնեաներին (մագիստրատ). հաստատեցին գործափարութեան կանոններ, ծառայութեան մէջ երեցութիւն, հիմնեցին բազմաթիւ նոր պաշտօններ: Աղրիանոսը համարեա բոլոր ժամանակն անց էր կացնում ձանապարհորդութիւնների մէջ. գնաց և Եղիպտոսու, և Դամուրի տփերը, և Բրիտանիա, և Միջազետք. սա նրան հնար էր տալիս ամեն տեղ ստուգելու իր վարչութեան գործունեութիւնը: Բայց բացի զրանից՝ կայսրին առաջնորդում էր և անյագ հետաքրքրութիւնը: Նա համակարգ էր իր նպատակների կույսուրական մեծ սիութեան գաղափարով, այն երկիրների, որոնք չը նայելով կլիմայի և բնութեան բոլոր տարբերութիւններին, չը նայելով սովորութիւնների և հաւատավիրների խոր հակասութիւններին՝ պատմական

հոսանքների դարեւոր կոփեների ժամանակ բոլորը
միացան Հոռմի կայսրութեան հետ, ինչպէս որ գետերը
թափւում, միանում են ծովի հետ:

Եթէ Տրայիանոսի անձով նորից վերականգնեց հին
հոռայեցի զօրավարի և օրէնսդիրի խիստ կերպարանքը,
Աղբիանոսը համոզւած կոսմոպօլիտ (համաշխարհաքաղա-
քացի) հանգիսացաւ. ի հարկէ նա առաջ էր քշում հոռմէա-
կան իրաւունքի և վարչութեան սկզբունքները, բայց մին-
ոյն ժամանակ ոգեսրւում էր յոյների խորիմաստ տեսու-
թիւններովն ու խօսքի ճարպիկութիւնովը, խոնարհում էր
արևելքի կրօնական աւանդութիւնների և նախապաշարում-
ների առաջ: Աղբիանոսի միաքը նմանում էր այն պարտէ-
զին, որ կայսրը շինել էր տեղ իր համար Հոռմի շրջակայ-
քում. հրաշագեղ ճեմմիլիքների մէջ կուտակւած էրն ամբողջ
աշխարհի գեղարւեստի գանձերը, որոնք դուրս էին հան-
ւած իրանց ընական շրջապատից և կարծես զարմանում
էին, որ իրար հանգիպել են:

<sup>Անտոնիոս
Պիոս, Մար-</sup> Աղբիանոսից յետոյ նոյն տեսակ եռանդով և ա-
^{կոս Աւրելիոս} մեծ բարեհոգութիւնով կառավարեցին Անտոնի-
ոս Պիոսը և Մարկոս Աւրելիոսը: Վերջինս իրանից
յետոյ յիշատակ թողեց ոչ միմիայն իրը կայսր. նա
Սաոյիկեան դպրոցի Փիլիսոփայ էր, ¹⁾ այն դպրոցից
որն ամենից բարձր էր զնահատում ինքնատիրապե-
տութիւնը և խելացի մտքով հասկացւած պարտա-
կանութեանը ծառայելլ: Եւ Մարկոս Աւրելիոսն ամեն
բանում հաւատարիմ էր իր Փիլիսոփայական իդէալին.
Կայսերական իշխանութեան մէջ նա տեսնում էր
ոչ թէ ինքնասիրութեան բաւականացում, ոչ թէ անձ-
նական ցանկութիւնները կատարելու միջոց, այլ մի
ծանր ու պատասխանառ պարտականութիւն: Նա
իրան համեմատում էր այն զինուորի հետ, որին կանգ-

¹⁾ Մեր ձեռքն է հասել նրա մի գործը՝ «Խոսակցու-
թիւն ինքն իր հետ»: Այդ խոսակցութիւնները նա գրել է
գերմանացիների գէմ պատերազմելու ժամանակ, ըանակի մէջ:

նեցրել են անփոփոխելի ողահապան—նրան միայն
մահը կազատէ: Շատ անգամ նա պարտաւորւեց
ստիպողական միջոցներ գործ զնել, բայց նրա զօրեղ
ցանկութիւնն էր առաջնորդել ազատ և հաւասարի-
րաւունք մարդիկների, որոնք վիտակցօրէն են ենթար-
կւում օրէնքին և ոչ բռնութիւնով: Այս թոյլ առողջու-
թեան տէր իդէալիստին, և պատերազմը չը սիրող
մարդուն բաժին ընկաւ ներքին և արտաքին թշնամի-
ների հետ մշտական կռիւ: Սկզբում պէտք եղաւ յետ
մղել պարթեներին, յետոյ պաշտպանւել գերմանների
նոր տեղափոխութեան դէմ, այդ երկուսի միջավայ-
րում՝ ճնշել ասորական զօրքի ապստամբութիւնը:
Մարկոս Աւրելիոսն այս բոլոր խնդիրները վերջացրեց,
բայց նրա առողջութիւնը քայլացւեց մշտական լար-
ւած վիճակից: Նա մեռաւ գործի մէջ—դանութեան
սահմանների վրայ յարձակող մարկօմանների գէմ
սկսած արշաւանքի ժամանակ (180):

Նրա մահով վերջանում է հոռմէական կայսրու-Սևերոսների
թեան ամենալաւ շրջանը: 80 տարի կառավարում էին ~~բարութանաւը~~
ձարտար և մեծագործ կայսրներ: Մարկոս Աւրելիոսի
որդին՝ կռմմողը, կրկին ընկաւ անբարոյականութեան
և դաժանութեան մէջ, որոնցով աչքի էին ընկնում
Կալիգուլան, Ներոնը, Դոմիկիանոսը:

Նրա օրով առանձնապէս տուժեց ծերակոյտը, որի հետ
այնքան մեծ համաձայնութեան մէջ էին կռմմողի նախորդ-
ները: Կայսրն իր ձեռվ էր փառքի ձգտում—նա իրան հա-
մարում էր նոր Հերկուլէս և մասնակցում էր կրկէսի (ցիր-
կի) մրցութերին, ինչպէս մի հասարակ սուսերամարտ
(Վլադիատօր): Կարճ ժամանակ կառավարելուց յետոյ նա
զուեց մի պալատական դաւադրութեան, բայց պետութեան
գրութիւնը դրանով չը լաւացաւ: Իշխանութեան կանոնա-
շուր յաջորդութիւնը խանգարել էր և նրա վերականգնութե-
առաջացրեց նոր ներքին խոսվութիւններ: Դաւադիրները
ներկայացրին շատ ծառայութիւններ մատուցած Պետինաքը
զօրավարին, բայց պրետօրիան գնդին նա շատ խիստ մարդ

երեաց: Զինւորները նրան սպանեցին և կայսերական պատիւը ծախսեցին հարուստ Դիդիոս Յուլիանոսին: Այս խայտառակ առևտուրը վրդովեցրեց նոյն իսկ հոռմէական ամբոխին: Նրան չը հնազանգւեցին և առհմանապահ լեզիոնները:

193

Դանուբի բանակը 193 թւին ներկայացրեց Սեպտիմիոս Սիվերին, որը և հաստատեց կայսր, բայց միայն արիւնահեղ պառերազմներից յետոյ՝ ասորական և բրիտանական զօրքերի թեկնածուների դէմ: Նոր կայսրը սերւում էր հոռմայեցիների աֆրիկեան գաղթականութիւնից, ինչպէս Տրայիանոսն ու Ադրիանոսն իսպանականից: Նա չէր կարող մըցել Ո դարի կայսրների հետ իր զարգացումովը կւմ պետուկան տաղանդովը, բայց էլի շատ բան արեց կարդը պահելու և պետութիւնը պաշտպանելու համար: Նա ինքն էր անձամբ առաջնորդում պարթեների և բրիտաների դէմ ծանր արշաւանքներին: Վերջինի ժամանակն էլ նա մեռաւ: Սեպտիմոս Սեվերիոսը ոչնչացրեց պրեսօրական գունդը, որ հաւաքւում էր Հռոմի և Իտալիայի բնիկներից, և նրա փոխարէն բոլոր լեզիոններից տոնուած զինւորներով մի նոր գունդ կազմեց: Ընդհանուրապէս բոլոր զօրքը պահպանեց հոռմէական կազմը և լատինական լեզուն, բայց լրացւում էր ոչ միայն հըսումայեցիներից, այլ քիչ ու շատ ոսմանացած զաւառացիներով: Այս վիճը, որ սկզբում բաժանում էր յաղթական քաղաքի քաղաքացիներին յաղթաւածներից, աւելի և աւելի հարթւում էր: Տարածւում էր հոռմէական քաղաքակրութիւնը, տարածւում էր և քաղաքացիութիւնը, իսկ Սեպտիմ Սեվերի որդի կարակալայի օրով կորաւ հոռմայեցիների և հոռմէական հիմնարկութիւններին հպատակւող զաւառացիների մէջ եղած վերջին պատւարը, կայսերական հրամանագրով նոռմէական հաղաքացիութիւն, որնի պատկանում էին որեւէ քաղաքային համայնքի, ի միջի ոյլոց և զիւ-

զական այն բնակիչներին, որոնք գրւած էին քաղաքների վրայ: Բացառութիւն էին կազմում միայն բարբարոսները, որ ապրում էին ցեղերով և չէին ընդունել հոռմէական քաղաքների կարգերը:

Այս հրովարտակը կազմում է Կարակալլայի մեծ կարակալլայի մեծ ծառայութիւնը: Իսկ ընդհանրապէս նա զործում էր Ալեքսանդր այն խորհրդին համաձայն, որ հայրը տւեց մահւան անկողնում նրան և եղօրը. «առատ եղիք դէպի զիւնորները, մնացածներին կարող էք արհամարնել»: Կարակալլան եղօրիցն ազատւեց, սպանելով նրան. հպատակներին խնայում էր Դոմիկիանոսից և Կօմմոզից ոչ աւելի. բայց զինւորների վրայ խիստ ուշը էր դարձնում և զօրքի համար հարկերը ծալրայեղ կերպով շատացրեց: Գերման ցեղերին մի կերպ խաղաղեցնելով, նա իր բոլոր ուշը զարձրեց արևելքի վրայ: Նա մտածում էր արշաւել Հնդկաստան և մինչև իսկ Զինաստան և զրա համար պարթեններին առաջարկեց դաշն կապել: Բայց նրանք սովոր չէին հոռմայեցիների հետ միասին զործել և յարձակումով պատասխանեցին: Կարակալլան նրանց դէմ կուռում էր յաջող կերպով, բայց երկաց, որ զօրքերին արած նրա զիջումները թուլացրել էին կարգապահութիւնը. կայսրին մորթեց մի սպայ, որին նա մերժել էր աստիճանը բարձրացնել: Մի քանի ամսով իշխանութիւնն անցաւ Պրետորիայի պետին, իրաւաբան Մակրինոսին: Բայց նա բանակին գուր չեկաւ և նրան զեկավարել չը կարողացաւ: Պարթենների դէմ վարւող կուռում անյաջողութիւններ սկսեցին և զինւորները մեծ սկսորութիւնով անցան Կարակալլայի քեսորդում՝ Հելիոգարալի կողմը: Վերջինիս բարձրանալը նշանաւոր է նրանով, որ նոր կա որը ոչ զօրապես, ոչ օրէնքէս, ոչ էլ մի ազդեցիկ հոռմայեցի էր. սա մի երիտասարդ էր, ծագումով Ասորիքից և Եփեսոսում Արեի տաճարի բըմագհար:

Քաջի Կարկալլայի նետ ունեցած ազգակցութիւնից, նրան առաջ քեց եւ քրմական պաշտօնը: Արևելեան պաշտամունքներն այդ ժամանակ խիստ տարածւել էին Միջերկրական ծովի աւազանում: Հոռմէական և յունական բազմաստւածութիւնը կորցրել էր իր ոյժը. ազգաբնակութիւնը որոնում էր աւելի խոր կրօնական զաղափարներ եւ դառնում էր դեպի արեւելք—դէպի եղիպտական իզիդային, պարսկական Միհրին, ասորական Բաաղին (*Վաալ*), Բայց Հելիօգաբալի Հոռմում երեւալը կրկին տարօրինակ էր և մեծամեծ անյարմարութիւններ առաջացրեց: Նա իր հետ բերեց Եփեսսեան սրբատեղի սրբազն քարը, որ՝ աւանդութեան համեմատ՝ ընկել էր երկնքից, ցանկութիւն յայտնեց պատակւելու մի վեստալեան կոյսի¹⁾ հետ, շրջապատեց իրան կանանցով և արեւելեան շողոքորթութիւններով, չէր արտայայտում գործերով զրադւելու ոչ մի ցանկութիւն և ժամանակն անց էր կացնում խնջոյքներով: Մրանով Հելիօգաբալը շուտով ոչնչացրեց հպատակների դէպի ինքն ունեցած լաւ տրամադրութիւնը—նրան սպանեցին, և նրա տեղը բռնեց իր մօրեղոր որդին՝ Ալէքսանդր Սեվերոսը, որ սրանից տարբերուում էր բոլորովին հակառակ յատկութիւններով: Առ մի փափուկ, բարեխիզմ և ազնիւ աշխատաւոր էր, որը հնարեղածին չափ վերականգնեց ծերակոյսի նշանակութիւնը և, բացի գրանից, կազմեց իր ամենամօտիկ պետական խորհուրդը: Նրա տառըական ծագումը երեսում էր միայն նրանով, որ նա մեծ յարգանքով էր վերաբերում ասիական կրօններին և, ի միջի այլոց, լիակատար համբերատարութիւնով էր նայում քրիս-

¹⁾ Օջախի Աստծու վեստայի քրմուհիներ, հոռմէական տմենալաւ ընտանիքների աղջիկներ: Մրանք երգուում էին միշտ կոյս մատակարարութիւնը: Եթէ մի վեստալիք խախտում էր այդ ուխտը, նրան սովամահ էին անում:

առնեաների վրայ: Սակայն նա շատ քիչ էր հասկանում քրիստոնէական վարդապետութիւնը և ենթագըրում էր, որ Քրիստոսին կարելի է գասել կոստացտական աստուածների շարքը: Բանակի համար Աղէքսանդրը չափազանց խոնարհ և անվճռական մարդ էր: Նրա օրով կատարւեց մի յեղափոխութիւն, որը պահնջում էր հենց զինւորական ուժերը լարել: պարսկական ազգաբնակութիւնը վայր դորեց պարթեական հարստութիւնը, որը յունական ողով էր համակաւած: Սասանեանների պարսկական նարսութիւնն, ընդիակառակը, վերականգնեց յոյներին բրենոմի Անէմեննեան հարստութեան աւանդութիւնները եւ կորուս էր ապառնում հելլենիստական կոլուրային եւ հոռմէական վարչութեանն Ասիայում: Աւելքանդր Սեվերը պարսկական նոր թագաւորի դէմձեռնարկեց մի մեծ արշաւանք: Բայց այդ արևելեան արշաւանքներն ընդհանրապէս չէին յաջողւում հոռմայեցիներին: Այս անզամ էլ յաջողութիւնները շատ անբաւարար էին, և կայսը միջոցներ ձեռնարկեց նոր գօրքեր դէպի Եփրատ տանելու համար: Այդ պատրաստութիւնների ժամանակնա սպանուեց իր զինւորներից (235 թւին):

235

Հոռմէական պետութիւնը շատ ներքին խոս- 3 դարի կառակու- վութիւնների էր դիմացել մինչեւ Ալէքսանդր Սե- թիւնները, վերոսի ժամանակ. շատ անզամ էր ընդհատւել իշ- խանութեան օրինական փոխանցումը, բայց ամենից առաջ յաջողւում էր բաւական կարճ ընդհատումներից յետոյ վերականգնել կառավարութիւնը: Ալէքսանդրի սպանուելն ակիզիրն էր երկարատև խառնակութիւնների, որոնք անկում էին սպանում պետութեանը: Բանը նրանումն է որ, ինչպէս Սեվերոսների ժամանակ դէպի երգը ցոյց տւին, դէպի չոռմը կազմական լինել էր: Թօմանացումը տարած-

ւել էր լայն կերպով, բայց երեսանց։ Միուրեան
գաղափարը բուլացել էր, խոկ զաւառական սուտնձ-
նայատիրիւները եւ ձգտումներն առաջ էին գնա-
ցել։ Իւրաքանչիւր բանակ և ամեն մի դաւառուկան
բանակ մի-մի կայսր էին հրատարակում։ Ընդհանուր
հետևանքն եղաւ մի սարսափելի խառնաշփոթութիւն,
որի ժամանակ թշնամիները—պարսիկները, գոթերը,
ալլըմանները—ներս էին խուժում կայսրութեան մէջ,
ջարդում էին հոռմէական բանակները, կողովառում
ներքին նահանգները, Յ5 տարւայ ընթացքում բազ-
մաթիւ իւրար յաջորդող, իւրար թշնամի և զինուրների
ձեռքով ընկնող «կայսրների» մէջ կային իսկական
բարբարուներ, օրինակ գերմանացի Մաքսիմինոսը,
արար Փիլիպպոսը, Պալմիրի թագաւոր Օդենատը։
260 թւին տեղի ունեցաւ մի չը լսւած դէպք. Շապուհ
Սասանեանը ջարդեց հոռմէական մեծ բանակը և
գերի բանեց Վալերիանոս կայսրին։ Սրանից յետոյ
կայսրութիւնը բոլորովին քայլայւեց, և համարեա
ամեն մի նահանգ գործում էր ինքն իր զիսին, ուշա-
դրութիւն չը դարձնելով զբացի նահանգների վրայ։
Այս խառը շրջանն անւանեցին Յ0 բռնապետների
ժամանակ, այսպէս կոչւած «կայսրների» թւի շա-
տութեան պատճառով։ որոնք երկան էին գալիս
Միջերկրականի ափերում ամեն տեղ։ Սակայն մի
անգամ էլ միութեան դաղափարը յաղթանակեց։ հոռ-
մէական աշխարհը մեծ ճիղ գործ գրեց իր զոյու-
թիւնը պահպանելու համար։ Կլաւդիոս կայսրին յա-
ջողւեց յաղթել գոթերին, որ քարուքանդ էին անում
Բարկանեան թերակղզին և Փոքր-Ասիան։ Աւրելիանոս
մեծ զօրապետը վերականգնեց մի եւ միացած կայսրու-
թիւնը, թշնամիների և հակառակորդների դէմ մի
շարք յաղթութիւններ անելուց յետոյ (270 թ.)։ Սա
հոռմէական սահմանագորքը տարաւ Դակիայից Դանու-

րի միւս կողմը, որպէսզի հեշտացնէ սահմանի պաշտ-
պանութիւնը, բայց գերմաններին էլ նորից դգա-
ցրեց հոռմէական զէնքի ամբողջ ուժը, մաքրեց եր-
կիրն ինքնակոչներից և Պալմիրայի՝ այսինքն Ասորի-
քի և Միջազետքի մէջ տեղ գտնւած անապատի մի-
ջի երկիրը զբաւելով, գործողութիւն սկսեց արևե-
լեան թշնամիների դէմ։ Յարձակութիւնների և խառնա-
կութիւնների պատճառով նա Հոռմը պատեց մի
պարսպով, որը կարող էր գիմանալ երկար պաշար-
ման։ Բայց զինուրների ինքնակամութիւնը չը խնա-
յեց նոյն խոկ այս օրինակելի զօրավարին—նրան
սպանեցին պարսիկների դէմ արշաւանքի պատրաստ-
ւած ժամանակը (275 թւին)։ Մի քանի միջամտու-
թիւններից յետոյ կայսր եղաւ Պրոբոսը, որը ներքին
վարչութիւնը թողեց ծերակոյախն, խոկ ինքը բաւա-
կանացաւ զօրքերի առաջնորդութիւնով։ Նա առաջնը
գործազրեց սահմանների վրայ այն միջոցը, որ մեծ
ազգեցութիւն ունեցաւ կայսրութեան ապագայ վի-
ճակի վրայ—այսինքն՝ սկսեց նորմեական նորիցի
վրայ բնակեցնել զերմանական ամբողջ ցեղեր, պար-
տաւորեցնելով նրանց պաշտպանել սահմանի վրայի
նահանգներն ուրիշ բարբարունների յարձակութիւններից։
Այդ միջոցը վտանգաւոր էր, բայց անհրաժեշտ, որով-
հետեւ կայսրութեան ուժերը բաւական չէին աւելի և
աւելի՝ ուժեղ կերպով ճնշող թշնամիների դէմ կը ու-
ժելու համար։ Այսպիսով Հոռմի իշխանութիւնն աւելի
և բնդարձակեց և տարածեց գերմանների մի
մասի վրայ ևս. բայց միաժամանակ նորմեական
կոլյուրան աւելի և աւելի ցածրանում, ընկնում
էր, նորմեական բաղամացիութիւնը եւ զօրին աւելի
և աւելի համակրում էին օսար սարրերով։ Բանակի
մէջ այդ պարզ արտայայտում էր նրա կազմը փոխ-
ւելով. սկզբում գերակշռութիւն ստացան զաւառ-

ցիներն, իսկ յետոյ կայսրներն սկսեցին նրա շաբքերի
մէջ հրաւիրել բարբարոսներին:

Բարենորո-
դութեան կո-
րեը:

Ամեն տեղ զգացւում էր լայն բարենորոգութեան կա-
րիքը: Առանձին անհատներ, մինչև անգամ Աւրելիանոսի
նմանները՝ չը կարողացան հասնել հաստատուն բարելաւու-
թեան: Ամենից աւելի պարզ էր կառավարութեան իշխանու-
թիւնն անրապես անհրաժեշտութիւնը: Հանրապետու-
թեան խառնակութիւնների միջից արդ իշխանութիւնը դուրս
եկաւ զօրաւոր, բայց խախում միահեծանութեան ձեռվ:
Պրինցիպատի գաղափարը—ժողովրդի ներկայացուցչութիւնը
միայն մի անձին կայսրի մէջ, գործնականում հասցեց
այն բանին, որ զինուրները խաղում էին բարձրագոյն
իշխանութեան հետ: Բայց կային և ուրիշ գժւարութիւններ՝
աւելի քիչ նշմարելի, բայց ոչ պակաս վտանգաւոր: Դեռ
կայսրութեան լաւ ժամանակում զարգացած մորդիանց միջ
սկսեց նեմարել քաղաքական ոգու անկում, մի տեսակ յոզ-
նածութիւն և զգանք դէսի պետական կեանքը: Պիտանի
զինուրներ ստանալու համար պէտք էր դիմել ոչ թէ իտա-
լիայի և Յունաստանի արժատական ընակիչներին, այլ կի-
սավայրենի ցեղերին: Այն հետաքրքրութիւնը և եռանդը,
որով քաղաքացիները մասնակցում էին իրանց քաղաքի
գործերին՝ կորչում էին. կառավարութիւնն ստիպւած էր
լինում ամեն բանի մէջ խոռնել, ամենը ին զեկավարել,
ամենը ին հրամայել: Կառավարութեան ծառայողները, բազ-
մաթիւ աստիճանաւորները և օրէնսդէտներն իրանց զոր-
ծով պարապում էին եռանդու և բանիմաց կերպով, բայց
աւելի եւ աւելի յանախ եին լուսում զանգաներ, որ նրանք
օսարանում են ազգաբնակութիւնից եւ նրա կեանքից, նե-
ղում են նրան եւ իրանց իշխանութիւնն ի չարը զործ
դնում: Բարօրութեան այն արագ բարձրանալը, որ առա-
ջացաւ Միջերկրական ծովը խաղաղեցնելով, դադարեց, երբ
խառնակութիւններն սկսեցին և բարբարոսների առող
ճնշումն զգացւեց: Հին աշխարհը ենթարկում էր մի սրի-
շեական յեղափոխութեան: Նորանոր տիրապետութիւններ
այլ եւ չըկային. դրա հետ միասին դադարեց եւ նոր սրբու-
ների ներմուծութիւնը: Կայսրութեան սարուկ ազգաբնակու-
թիւնը մեռնում, սերնաւում էր կամ անցնում էր ազատ
արձակւածների դասակարգը: Ինը կառավարութիւնն սկսեց

տարբեր կերպով նայել ստրուկների վրայ, և Աղրիանոսն
առաջին փորձն արեց պատպանելու նրանց տէրերի կա-
մայականութիւններից. նա արգելեց նրանց սպանել առանց
զատաստանի: Դրա հետ միասին խոչոր հողատէրերն ստիպ-
ւած էին թողնել իրանց դաշտերը ստրուկների մեծամեծ
խմբերով մշակելու ձեր և անցնել մի այլ ձեր—մանր-մանր
հողարաժիններ կապալով տալ մշակութեան: Սրբուկի Տեղը
բնուու եր հօղովարձ (կապալադրամ) Տւող զիսդացին (նոր):

Հողեկան կեանքում ոչ պակաս խոր փոփոխութիւններ-
թիւն էր տեղի ունենում: Կորել էր միամիտ հաւատը ծանքներ:
դէպի տեղական աստուածները, հոռմէտական օջախի,
հոռմէտական հաւատարմութեան և յաջողութեան պաշտ-
պանները: Սկզբում մարդիկ փրկութիւն էին որոնում
եղիպատական, բարելական, ասորական հաւատալիքների
մէջ, բայց նրանք բաւարարութիւն գտան միայն քր-
իստանէութեան մէջ:

Մտաւոր հորիզոնի տարածւելը Հոսոմից ամբողջ աշ-
խարհի վրայ և զանազան ցեղերի կրօնների բազմատեսակ
ձերի հետ ծանօթանալը խախտել էին հոռմէտական կուա-
պաշտութիւնը: Անդիմաղբելի պահանջ էր առաջացել աւելի
լայն և աւելի բացարձակ կերպով երկրպագելու աստուա-
ծութեան, և ամենքի հայեացքները զանում էին դէպի
արեկելք, որտեղ աստուածապաշտութիւնը վաղուց ի վեր
ունէր զրաւիչ, վեն բնաւորութիւն: Արևելքի ըոլոր աստ-
ւածներին փորձեցին արևմուտքում—և ասորական Մեծ-
Մօրը կամ եղիպատական իդիպային, ինչպէս յաւիտեան երի-
տասարդ սննդատու ընութեանը, որը տեսնում է բոլոր
էակների մահը և երբէք չէ դադարում նոր էակներ արտա-
դրելուց, և՛ սեմական Բաաղին (Վաալ)-տիեզերքի անեղ
հրամայողին, և՛ իրանեան Միհրին, Որմզդի ուղեկցին ճշշ-
մարտութեան համար մղւող կուի մէջ: Վերջապէս Փայլեց
Քրիստոսի լոյսը վաստակեալներին և ծանրաբեռնեալներին, և
նոր կոծն առանց աղմուկի տարածւեց ամբողջ աշխարհում,
սկսելով Երուսաղէմից, հրէական ցրւումով (գիասազօրա)
հելլենական արեկելը և ոօմանացած արևմուտքը և մինչեւ
բարբարոսները, որ պաշարել էին կայսրութիւնը: Քրիստու-
նուրիւնը վերջնականապէս կարծանում եր նին պետութիւնը,

որովհետեւ խլում էր նրանից կուպառաւական նիմունքը—ոչբնշացնում էր կրօնական եւ բաղախական ն ումայնի նոյնութիւնը:

Բայց Հոռմէական կառավարութիւնը պէտք է զինւէր քրիստոնէութեան դէմ, որովհետեւ նա բարգում էր հապատակւել իշխանութիւններին, բայց կայսրինը չէր համարում Ասծունը. Այն ինչ պետութեան, նրա ներկայացուցչի—կայսրի և նրա պաշտօնական պաշտապանների—աստուածների երկրպագութիւնը Հոռմում քաղաքացիական և կրօնական հանրակցութեան հաւատալիքն էր: Հոռմէական համոգւած հայրենասէրների տեսակէտից քրիստոնեանները, որ մերժում էին այդպիսի երկրպագութիւն, Հոռմի թըշնամիններն էին, ուրեմն և մարդկային ցեղի թշնամինները: Սրանում է թափնամած քրիստոնեաններին հալածելու պատճառը: Սրդէն Ներսնը տանջում էր նրանց Հոռմի հրդեհից յետոյ: Դոմիկիանոսի օրով սկսւեց կանոնաւոր հալածանքը: Մարկոս Աւրելիոսի օրով նահանդապեանները և կուպաշտ ազգաբնակութիւնը քիչ հաւատացեալների չը կոտորեցին, և ինքը՝—կատորը խրախուսում էր այդ հալածանքը. նա պաշտապանում էր կուպաշտ Հոռմը բոլոր յարձակումներից - ինչպէս բարբարոսների ուժից, այնպէս էլ քրիստոնեանների քարոզութիւնից: Աղէքսանդր Սեվերը և Փիլիպաս Սրաբացին առաջինները եղան, որ փորձեցին համբերատար քաղաքականութիւն: Բայց պետութիւնը խառնակութիւններից աղատելու փորձ անող կայսրների¹⁾ օրերով շատ անդամ հալածանքը մեծ ուժով վերըսկսում էր. քրիստոնեաններին նետում էին կրկէսում վայրի գաղանների առաջ պատառակելու համար և ենթարկում էին ուրիշ տեսակ մահների: Բայց այս բոլոր յարձակումները չը կարողացան ոչնչացնել

¹⁾ Մասսուանդ Դեկիոսի և Վալերիանոսի օրերով:

պաղարեր հողի մէջ նետուած սերմը. քաղաքների կողքին ծնունդ էին առնում նոր հաւատի ստորերկրեայ ապաստանները՝ կատակօմբները, որոնց մէջ թաղում էին նահատակներին, կատարում էին աստւածապաշտութիւնը, հաւաքւում էին քարոզների և աղօթելու համար: Կայսրութեան կողքին ծնունդ էր եկեղեցին, որն ապստամբութիւն, չէր առաջացնում և չէր սովորեցնում գիմաղրութիւն, բայց կամաց-կամաց դէպի իրան էր գրաւում հասարակութեան կենդանի ուժերը, տալիս էր նրանց հաւատ և իգէալներ, այն ինչ կայսրութեան ձեռքում մնում էր բռնութիւնը և զինւորական ոյժը:

Գ. 1. Ռ Խ Խ Խ

ԿԱՅՍՐՈՒԹԵԱՆ ԱՆԿՈՒՄԸ

Կայսրութեան համար անհրաժեշտ քարենորողութիւններն սկսւեցին Պրօրոսի յաջորդներից մէկի՝ Դիոկետիանոսի ձեռքով: Նա իլլիրիայից էր և քարձրացաւ ամենաշնչին վիճակից՝ աղատ արձակւածներից: 284 թւին նա կայսր դարձաւ և իսկոյն միջոցներ ձեռք առաւ պետական իշխանութիւնն ամբասինդելու համար: Զինորների և ծերակոյաի աղգեցութիւնից աղատ մնալու համար՝ նա աշխատում էր արմատացնել այն համոզումը, թէ կայսրութիւնը մի պատօն (մագիստրատուրա) է. նա աշխատում էր տալ նրան միահեծանութեան բնաւորութիւն, և զնել նրան արելեան միապետութիւնների անհասանելի քարձրութեան վրայ: Նա ըրջապատեց իրան ասիական պալատական ծէսերով և ձեւականութիւններով. սկսեց թագ կրել, պահանջում էր, որ իր առաջ ծունկ չոգէին: Ծերակոյան իր նշանակութիւնը վերջնականապէս կորցրեց: Բայց և միևնույն ժամանակ Դիո-

կղետիանոսն զգում էր, որ մի մարդու համար իսկապէս դժւար է ամրող պետութեան սահմաններում պաշտպանել այդ ահագին իշխանութիւնը, նահանգների մէջ տարածայնութիւններից, բանակների մէջ ներքին կոփեներից, զիխաւոր գօրավարների ապստամբութիւններից խուսափելու համար՝ նա երածարւեց իշխանութեան միութիւնից եւ կայսրութիւնը բաժանեց չորս կառավարիչների մէջ. իր համար ընկեր ընտրելով ժամանակի գօրավարներից Յ ամենաարժանաւորներին: Իր համար վերցրեց նա Ազրիատիական ծովից արենելք եղած զաւառն՝ Աւգուստոս ախտղոսով, իսկ իր բարեկամ Մաքսիմիանոսին տւեց արևմուտքը՝ միենոյն տիտղոսով: Արենելքում Դիոկղետիանոսի զիխաւորութեան տակ՝ Գալերիանոսը, կեսար տիտղոսով՝ ստացաւ Իլլիրիայի և յետոյ էլ Աստիայի վարչութիւնը. միւս կեսարը՝ Կոստանդ Բլորոսն ստացաւ արևմուտքում Գալլիան, Բլիտանիան և Խովանիան: Այս բաժանման շնորհով կառավարիչներից ամեն մէկը հնարաւորութիւն ստացաւ իր ամենամօտ խնդիրներով զբաղւելու, թէն բոլոր չորսն էլ իրար օժանդակելուց հրաժարւում էին, բայց ընդհանուր կարգադրութիւնների վերաբերութեամբ միայն իրար հետ համաձայնում էին: Այս բաւական բարդ կարգը 20 տարի գործադրւեց յաջող կերպով: Յաջողւեց կայսրութիւնը խաղաղեցնել զիուխ ենել Գալլիայի, Եղիպատոսի և ամբողիեան զաւառի ապրատամբութիւնների հետ, ջարդել ալլըմաններին և նորից նւաճել Բլիտանիան, վերջապէս՝ զգալի պարտութիւն պատճառել պարսիկներին:

Աւելի գժւար էր հասարակական կեանքի պակասութիւններն ուղղել: Դիօկղետիանոսը, նրա լիներներն ու յաջորդներն ուրիշ ոչ մի միջոց չը գտան, բացի ամենին խիստ սիխողականութեան եւ մի տեսակ գինուրական կարգապահութեան ենթարկելը,

Անյետաձգելի պատերազմական կարիքների պատճառով, հարկերը հասցրին ծայրայեղ չափերի, և կառավարութիւնը միշտ հետեւում էր, որ բոլոր ստացւածքների վրայ հարկ գրւած լինի, որ հարկից փախուստ տալ կամ թագնեւել չը լինի: Մարդկանց մասնաւոր կեանքը և նրանց զրադունքները ենթարկւած էին խիստ հսկողութեան: Վաճառականներն առևտուր էին անում տատիճանաւորների հրաժանով և հսկողութեան տակ և իրաւունք չունեին փակել առևտուրը կամ փոփոխել առանց անանձին թոյլուութեան. ունենոր անատէրերը և հողատէրերը՝ կուրիալ (ծխական) անունով՝ կապւեցին քաղաքների հետ (առանց տեղափոխութեան իրաւունքի), որպէսզի, ինչպէս ձրի պարտականութիւն, կտարեն քաղաքյին վարչութեան և հարկանանութեան գործերը. հողագործ մանր կապալառուները և սորուկները կապւեցին այն հողաբաժինների հետ, որոնց վրայ ապրում և որոնց մշակում էին:

Կալեածատէրերն ապահովւեցին՝ այնունետե մշտական ըանուրներ ունեին, բայց՝ միւս կողմից, վերջիններս զրբկեցին իրանց հողերի վրայ տնտեսութեան ձեւ փոխելու և հողագործ ստրուկներից՝ ինչպէս հասարակ գործիքներից օգտելու իրաւունքից: Այսպիսով առաջացաւ նորերի (կօլոն) զասակարգը, որոնք հարկ էին վճարում և ձրի աշխատանքներ էին կատարում հողատէրերի համար, բայց անձեռնմխելի կերպով օգտում էին իրանց հողաբաժիններից: Հասարակութեան վրայ հսկողութիւնը շատացաւ, զրա հետ էլ աստղանաւորների թիւն աճեց և նրանց իշխանութիւնն ընդաւագի ձակւեց: Բացի զրանից՝ ոստիկանական պարտականութիւնների մի մասը տրւեց խոշոր հողատէրերին: Միւնցն ժամանակ զինուրական հրամանատարութիւնը ջոկ էր բաղաքացիական վարչութիւնից և զատարանից: Ազգաբնակութիւնը կուրցեց իւ նետքրութիւնն ու համակրութիւնը դեպի պետական կեանքը եւ սկսեց նայել երա վրայ իւր բրոնմի ուժի վրայ, որ հարկ և առնում եւ կեղեխում, քեւ

սուրվեների դասակարգն անկասկած օգտեց պետական միջամտությանից:

Կայուրութեալութեանը և անդամների առաջնորդութեանը Ամենից աւելի անյաշող էր Դիոկետիանոսի քաղաքականութիւնը քրիստոնէութեան վերաբերութեամբ: Նա նայում էր քրիստոնեաների վրայ, իր այլակրօնների, որ հրաժարում էին երկրպագել պետական աստւածներին: Քաղաքական անյաշողութիւններն ու վտանգները բացարում էին քուրմերը հասարակութեան մէջ տիրող կրօնին թշնամի տարրերի ներկայութիւնով, մանաւանդ մասնանիշ էին անում այն բանի վրայ, որ քրիստոնեաները չէին միանում կայսրի հանճարի (numen imperatoris) երկրպագութեանը: Դիոկետիանոսը և նրա վարչակիցները հրաման հանեցին, որ բոլոր քրիստոնէական եկեղեցիները, որոնք արդէն բաւական շատացել էին, քանդւն, եպիսկոպոսներն ու քահանաներն արսորեն, իսկ բոլոր քրիստոնէութեան մէջ կասկածող անձերին առաջարկելի աստւածների սեղանի վրայ զոհ մատուցնել: Մերժելու դէպրում ամենքին սպառնում էր բանդ և արսոր: Հրամանը զործադրելու ժամանակ՝ հալածողները շատ աւելի տուած զնացին և հաւատացեալներին ենթարկեցին տամաշանքների ու մահւան սպատժի. առանձնապէս եռանդով էր զործում Գալէրիանոսը: Ընդհակառակը՝ Կոստանդին Քլորոսը խուսափեց հրամանը խստօրէն զոծադրելուց: Դիոկետիանոսի հարածանութեանը նախընթաց նախանձները, ինչպէս եւ նախընթաց նախանձները, մի հետևանի ունեցաւ — քիստոնէական համայնքը մարտեց անպէտ խառնուրդներից: Խախուտ համոզմունքների և թոյլ բնաւորութեան տէր մարզիկ կեղծաւորում էին և յետ մնում: Խսկական հաւատացեալները յիշում էին Ռւսուցի շարչարանքները և աւելի մտերիմ ձևով էին ժողովուու խաչանշանի շուրջը, որի դէմ էր դարձել կոավաշտ աշ-

խարհի կատաղութիւնը: Հաւատացեալների հոգեկան երջանկութիւնն անարդանքների և չարչարանքների մէջ՝ գրաւում էր կոավաշտներից ամենալաւ մարդկանց, որոնք իրանց կողմն էին զգում իշխանութիւնը, յարգանքը, բաւականութիւնը — ամեն բան՝ բացի ներքին բաւականութիւնից: Քրիստոնէական իդէալի հետ կուի մէջ մտնելով՝ կայսրութիւնը դրանով միայն իր տակն էր փորում: Ուղէսզի նրա բարենորդութիւնները ուեւէ նպատակի հասնէին, անհրաժեշ էր հաւատել քիստոնէութեան նետ և յինել նրա վրայ: Այդ բանն արեց Կոստանդ Քլորոսի որդին՝ Կոստանդիանոսը, որն իր մեծագործութիւնով արժանացաւ Մեծ անւանը և աշխարհի բազրի վրայ Ալէքսանդր Մակեդոնացուց ու Կեսարից պակաս ազդեցութիւն չը գործեց:

Դիոկետիանոսը հրաժարւեց կայսրութիւնից կոստանդիանութիւն (305 թ.), որովհետեւ, չը նայելով արտաքին փայլուն առ Մէծ յաջողութիւններին, իրան զգում էր յոզնած ու անբաւական: Նրա հետ միասին հրաժարւեց և Մաքսիմիանոսը:

Շուտով մեռաւ և Կոստանդիոս Քլորոսը: Արելքում կառավարիչներ մնացին Գալէրիոսը և Լիկինոսը. իսկ արեւածուածում Մաքսիմիանոսի որդի Մաքսէնտիոսը և Կոստանդի որդի Կոստանդիանոսը: Մերունի Մաքսիմիանոսը, ձըշմարիտ է, աշխատաց նորից խլել իշխանութիւնը, բայց անյաջողութիւն կրեց և չոսմում, և Գալէրիում ձիշտայդպէս էլ անյաջող եղաւ չոսմի վրայ Գալէրիոսի արած յարձակումը. սա ուզում էր իր իշխանութիւնը տարածել և արեւածուածը վրայ: Խտակիայից յիտ նահանջելուց քիչ յետոյ նա մեռաւ: Բայց մնացած կառավարիչների մէջ էլ համաձայնութիւն չը կար, և Դիոկետիանոսի մացրած կաղակերպութեան անյարմարութիւնները ոլարզ կերպով երկան եկան: Չորս թագաւորների մէջ համաձայնութիւն յաջողութեան էր կայացնել միայն իրրե բացառութիւն, իսկ սովորաբար ամեն մէկն իր շահն էր որոնում և ձգուում էր իրան ենթարկել ընկերոջը:

Կոստանդիանոսի և միւս կայսրների մէջ պատերազմ բռնկւեց, որի մէջ նա նրանց դէմ մի բոլորովին նոր զէնք զործազրեց—քիստոնելութիւնը։ Մինչև այդ ժամանակ քրիստոնեաները պետութեան մէջ թէ և մեծ ոյժ էին ներկայացնում, բայց բաղաքականութեան մէջ չէին խառնուում և չէին փորձում բարեւաւել իրանց վիճակը դաւադրութիւններով կամ ազգամիջեան կուռիվ։ Կոստանդիանոսի իր հօրից ու մօրից ժամանգել էր համակրութիւն դէպի քրիստոնէական վարդապետութիւնը։ Բայց նա կայսրներից առաջինը եղաւ, որ համարձակութիւն ունեցաւ կարել իր կապը կոստութիւնից և թոյլատրել քրիստոնեայ զինուորներին Քրիստոսի անւան սկզբնատառերը ձևակերպել իրանց վահանների վրայ. վերջապէս նա ինքն էլ իր զրօշակի վրայ խաչ նկարեց։ Սա մի վճռական քայլ էր, որ չափազանց կարենու նետեանքներ արտադրեց։ Կոստանդիանոսի բանակը դարձաւ նոր վարդապետութեան կենտրոնատեղին և նրա զինուորական ոյժն աճեց կրօնական ովհորութեան պատճառով։

312

Պատերազմը վերջացաւ Հոռմի առումով. ժամանակակիցներն այդ յաջողութեան մէջ տեսնում էին Քրիստոսի յաղթանակը Կապիտոլիան Խւալաերի վրայ։ 312 թւին կոստանդիանոսը և Լիկինիոսը միասին հրատարակեցին Միանի հրովարտակը (Եղիկէ), որով կայսրութեան մէջ ամեն մարդու թոյլ էր տրում հետեւու իր կրօնական համոզունքին։ Քրիստոնակաների վրայից վերացւեցին ըոլոր բռնութիւններն ու պատիճները, որոնց նրանք ենթարկուում էին մինչև այդ ժամանակ։ Քրիստոնէութիւնը գեռ ևս պետական կրօն չէր հրատարակւած, բայց իրաւունքներով զոնէ հաւասարւած էր կոստութիւնը։ Այս յիշափոխութեան գէմ դուրս եկաւ Թալերիսի քաղաքականութեան շարունակողը, Ասիայի կիսարը՝ Մաքսիմինոս Դազան։ Նրա դէմ ճակատող Լիկինիոսի զօրքերը կուրից առաջ աղօթում էին միակ Աստծուն. տիեզերքի կառավարչն Այդ աղօթքին կարող էին միանալ քրիստոնեաները և լուսաւուած կառավարները, որոնք կորցրել էին իրանց հաւաքը գէպի Ալիմպոսի և Կապիտոլիոնի մարդանման աստւածները։

Վերջիններիս էր պատկանում և Մաքսիմինիոսին յաղթող Լիկինիոսը։ Նա մնաց արեւելքի թագաւոր, այն ինչ Կոստանդիանոսը դարձաւ արեւուաքի տէրը։ Նրանք վորդեցին իրար մէջ համաձայնութիւն կայացնել, և դրա համար Լիկինիոսն ամուսնացաւ Կոստանդիանոսի ըրոջ հետ։ Բայց նրանց մէջ զանազանութիւնը չափազանց մեծ էր. մէկն աւելի ու աւելի բեկում էր դեպի երիտօնութեան բացուիկ նախապատութիւնը, միւսը մնաց չեզոյութեան և աւտրեւութեան տեսակիցի վրայ։

Մաքսիմին
Դարձել կուր
թիւնը.

Կոստանդիանոսի և արեւելքան կայսրի մէջ եղած կոիւը վճռեց սուրբ. յաղթութիւնը մնաց Կոստանդիանոսին։ Դրա հետ միասին վերականգնեց Դիոկղետիանոսի փոփոխած միանեծանութիւնը. կարծես Կոստանդիանոսն ստեղծւած էր զրա համար։ Հասարակյարմարւող և ողորմած ինչպէս մարդ նա անողոք էր այն զործերի մէջ, որոնք վերաբերուում էին նրա արքայական արժանաւորութեանը։ Ոչ միայն մահւան պատճի ենթարկեց իր Մաքսիմինոս աներոջը կամ Մաքսինտիոս աներոջուն, որովհետև այդ էր պահանջում քաղաքականութիւնը, այլ և հրամայեց սպանել իր որդի Կրիստոսին, որովհետև սա փորձ էր արել իշխանութիւնը խլելու։ Կոստանդիանոսն իր վճիռները պատրաստում էր հեռուից և գործադրում էր, չը շրջիթւելով հակասութիւններից։ Պատմութիւնը ցոյց տեղ, որ նա խոր կերպով հասկանում էր համաշխարհային յարաբերութիւնները։ Լիկինիոսին յաղթելուց յետոյ նա արևմուտք չը վերագարձաւ, թէկ նա այնտեղ շատ ուժել էր հաւաքել իր յաջողութիւնների համար։ Նա Հառմից ճեռանալու անհրաժեշտութիւն էր զգում երկու պատճառով. Հոռմում հանրապետութեան և պրինցիպատի աւանդութիւնները չափազանց ուժեղ էին—չէր կարելի այնտեղ հաստատել՝ ինչպէս պէտք էր՝ մի նոր, ինքնիշխան կայսրութիւն։ Այդ պատճառով արդէն Դիոկղետիանոսը ճեռացել էր Հոռմից և

բնակւում էր գլխաւորապէս Սերմիումում (Իլիրիայում) և Նիկոմիդիայում (Փոքր-Ասիայում): Կոստանդիանոսի համար դրան միանում էր և մի երկրորդ պատճառ: Նա չափազանց խիս կերպով էր իր հաշիները վերջացրել Կապիտոլեան առտածների հետ էր կարող իրան լաւ զգալ Կապիտոլիոնի մօսերը: Նա իր մայրաքաղաքը դարձեց Բիւզանդիոնը, որը Բոսֆորի վրայ տիրելուն համար, վաղուց արգեն համարւում էր մի կարևոր քաղաք: Բիւզանդիայում Կոստանդիանոսը գՏնւում էր սփիման մէջ յունական զարգանան, ասիական հարուստ աշխարհի, Իլիրիայի և Թրակիայի հետ, խիկ այս վերջիններս կայսրութեան տակու էին ամենալաւ զինուրեները: Հիւսիսային Եւրոպայում բարբարոսների շարժումներին հետևելու համար էլ այս կէտը յարմար էր, և Կոստանդիանոսն անձամբ սարսափելի պարտութիւններ պատճառեց Գոթերին և Սարմատներին: 330 թւին հանդիսաւոր կերպով օրհնեց նոր մայրաքաղաքը՝ կ. Պոլիսը:

<sup>Եկեղեցական
բարենորո-
գութիւններ:</sup> անուը շարունակեց Դիոկղետիանոսի քաղաքականութիւնը, բայց նրա ըրիստոնեաների կողմն անցնելու պատճառով՝ առաջացել էր մի կարևոր խնդիր՝ կարդաւորել պետութեան յարաբերութիւնը գէպի եկեղեցին: Կոստանդիանոսը չէր կարող մասն կրապատքի ներկայի արմատախիլ անհելու մասին, բայց նա բացառակ նախապատրիսն էր տալիս Տրիտոնիաներին պաշտօնեաներ նշանակելու ժամանակ և արգելում էր կռապաշտ աստիճանաւորներին պետութեան անունից զոհաբերութիւններ անել աստածներին: Այն պաշտամունքները, որոնց հետ կապւած էին գինարութիւններ (օրգիա) և անսուակութիւն, արգելեցին և նրանց նվիրւած տաճարները փակւեցին: Քրիստոնեաներից խլւած կալւածները յետ դարձեցին,

և պետութիւնն սկսեց հոգ տանել եկեղեցիներ շինելու և նրանց զարդարելու մասին: Աւելորդ է ասեն անգամ, որ եպիսկոպոսների և քահանաների պաշտօնէութեան կարգը (հիէրարխիան), նրանց ընտրութիւնն, արգեն ընդունւած ստվորութիւնները, նրանց իշխանութիւնը եկեղեցական գործերում՝ ճանաչւեցին պետութեան կողմից: Դրանով եկեղեցու միութիւնն ըստացաւ արտաքին հաստատրիւմ: Կայսրութիւնն անտարրեր կերպով չէր վերաբերում՝ նաև եկեղեցու մէջ ծագած վէճերին, Կոստանդիանոսը ընդունում էր միակ մի ընկերակցութիւն, սի եկեղեցի եւ աշխատում էր նրա մէջ պահպանել սեր համաձայնութիւնն: Նա չէր խառնուում աստուածաբանական վէճերի մանրամանութիւնների: մէջ, բայց այդ միութիւն քարոզող քաղաքականութեամբ զօրեղապէս ազգեց դաւանանքի հաստատապէս կազմւելու վրայ: Ծանր պարագաներում նա ժողովի էր հաւաքում եկեղեցու եպիսկոպոսներին և ուսուցիչներին: Այսպէս՝ 325 թւին կազմւեց առաջին տիեղերական ժողովը Նիկիայում, որ դատապարտեց Սրիսի¹⁾ աղանդը: Կայսրն անձամբ բաց արեց ժողովը մի ճառով և ամեն կերպ համազում էր ժողովականներին համաձայնութիւն կայցնել և ամրող եկեղեցու համար պարտադիր մի վճիռ դնել: Ինչպէս եկեղեցու պաշտպան և նրա սիութեան վերահասու, Կոստանդիանոսը սիրում էր իրան կոչել «ընդհանրական եպիսկոպոս»: Եկեղեցու դատապարտած հերետիկոնների գէմ նա զործ է զնում աշխարհական իշխանութիւն. արքունիք էր գրաւում նրանց ստացւածքները աքսոր էր ուղարկում նրանց:

¹⁾ Այս հերձւածը դէմ էր Երրորդութեան դաւանութեանը, որովհետեւ Սրիսի չէր ընդունում, որ Յիսուս Քրիստոսը Հօր հետ միւնոյն էութիւնն ունէր:

Կոստանդ 337 թւին կոստանդիանոսը մեռաւ, թողնելով եւ-
Յուլիանոս
337 րեք որդի, որնք կառավարում էին կայսրութիւնը
ոչ առանց կախութիւնի. Միջնակը՝ կոստանդն ապրեց
միուսներից աւելի. Նա հօրից աւելի եռանդով էր գոր-
ծում կռապաշտների դէմ, բայց զրա փռխարէն եկե-
ղեցին շատ վ նաև եց նրա կրօնական վէճերի մէջ
միջամտելոց. Նա բռնեց Արքոսի կողմը, գաման կեր-
պով հաջածում էր ուղղափառներին և մանաւանդ նի-
կիական հանդանակի գլխաւոր պաշտպան Աթանաս
Աղէքսանդրացուն. Նրանից յետոյ գաճը բարձրացաւ
հօրեղբօր որդին՝ Յուլիանոսը, որի օրով եկեղեցին
ստիպւած եղաւ ենթարկել աւելի ծանր փորձութեան.
Յուլիանոսն առաջ գնաց գեռ կոստանդի օրով իր յաղ-
թութիւններովն ալլըմանների դէմ, որնք խուժել էին
Գալլիա. Նա հայրենասէր և կրթւած մարդ էր, իր
համակրութիւններովն աւելի յոյն, քան հոռմայեցի,
Փիլիսոփայութեան և ճարտասանութեան մշտական
պարապմունքները ներշնչել էին նրա մէջ խոր յար-
գանք դէպի հին կուլտուրանու Քրիստոնէութեան վրայ
Նա նայում էր իբրև մի օտար ուժի վրայ, որի տի-
րապետութիւնը դէպի կործանում էր տանում հին
աշխարհը. Իր կարճօրեայ թագաւորութեան ժամանակ
(ընդամենը $1\frac{1}{2}$ տարի) Յուլիանոսն ամեն քան արեց,
ինչ որ իրանից էր կախւած, որպէսզի կործանէ կոս-
տանդիանոսի գործը. Նա վերադարձեց կռապաշտու-
թեան իր պաշտօնական նշանակութիւնը, վերականգ-
նեց աստուածների տաճարները, աշխատում էր գուրս
քշել քրիստոնեաներին պաշտօններից և դաստու-
թիւնից¹⁾:

¹⁾ Կռապաշտութիւնը վերականգնեցնելու և քրիստո-
նէութիւնը հալածելու պատճառով եկեղեցին նրան անւանել
է «Յուլիանոս ուրացող» կամ Զար Յուլիանոս. Ծ. Թ.

Բայց Յուլիանոսը խստովանւում էր, որ չէ կարելի
առանց փոփոխութիւնների ուղղակի վերադառնալ Դիո-
կութիւնոսի շրջանի կարգերին. քրիստոնէութեան ազգե-
ցութիւնը երեսում էր նոյն իսկ այդ նոր կրօնի հակառա-
կարդի գործողութիւնների վրայ. Այդ ազգեցներին երեւաց
նրանում, որ փորձ արին կուպաւութիւնից անել մի շարք
այնպիսի պահանջներ, որ առաջ չկին անում. Քրիստոնէական
աստւածաբանութեան դէմ հանւեց կուպաւութիւնի դաւանա-
բանութիւնը, որ կազմել էր Նոր-Պատոնական կոչւած փի-
լիստիայութեան օգնութեամբ: Այս փիլիստիայութեան մէջ
աշխարհի ստեղծողն էր հանդիսանում մի զերագոյն աստւած,
իսկ մնացած բոլոր աստուածութիւնները համարւում էին
նրանից առաջացած և նրանից կախում ունեցող ոգիներ.
Քրիստոնէաների բարոյական խիստ պահանջների դիմաց՝
մշակւեց կուպաւութիւնի բարոյ օկան վարդապետութիւնը,
որ նոյն պէս պահանջում էր յաղթել զգայականութեանը:
Վերջապէս Յուլիանոսը փորձ արեց կազմելու բնական
պահանջների նիւթարիսան (աստիճանական կարգը), գասաւորել
նրանց աստիճաններով, ենթարկել մէկը սիւսին Եպիսկոպոս-
ների և քահանաների ձևով: Բայց ինչ էլ որ լինէր, արդէն
ուշ էր այդ տեսակ բարենորոգութիւններ մտցնելու համար,
չըխօսելով զեռ այն մասին, որ ամեն մարդ էլ զգում էր
նրանց արհեստական լինելը, հրամանի ազգեցնեութեան տակ
եղած կազմութիւնը:

Յուլիանոսը ոչնչացաւ Տիգրիսի ափերում՝ պար-^{Վաղէնտի-}
սիկների դէմ ոկասծ մի անյաջող արշաւանքի մէջ
(363 թ.), և նրա կուպաշտութիւնը վերականգնելու
բոլոր քաղաքականութիւնը կործանւեց: Յուլիանոսով
ընդհատւեց Կոստանդիոս Քլորոսի տունը: Զօրքերն
ընտրեցին Վաղէնտիանոս Ա.ին: Նոր կոյսրի առաջին
գործն եղաւ իրան մի ընկեր նշանակել կռապաշ-
տելու համար: Նա կանգ առաւ իր եղբայր Վաղէ-
սի վրայ և նրան յանձնեց արեելեան նահանգները:
Այսպիսով կայսրութիւնը բաժանելու գաղափարը նո-
րից իրականացաւ, և այս անգամ այնպիսի ձևով, որը
համապատասխան էր կայսերութեան երկու կէսերի

հիմնական յատկութիւններին. Միջեւերականի բուրջը Տեղաւորւած եւ նոռմէական կայսրութեան ձեռքով իրար նետ միացւած նահանգների խումբը բնական կերպով բաժանում էր երկու կեների. արեւմուտը ուօմանացած էր - նրա մէջ տիրապետում էին լատինական լեզուն ու կուլտուրան, որ անցել էին Հռոմից. արեւելքը մնում էր նելլենիստական. Թէև նունթարկւած էր հոռմէական կառավարութեանը, բայց Արէքսանդր Մակեդոնացու օրերից վերածնւած յունական լեզուն և զարգացումը կազմում էին այնուեղ կրկին գլխաւոր կուլտուրական ոյժը: Դրա համար էլ կայսրութեան Արեւմտեան և Արեւելան մասերի բաժանւիլը հիմնւած էր ոչ թէ պատահական կամայականութեան, այլ խոր պատմական տարրերութեան վրայ:

<sup>Հոգները և
Թոթերը</sup>

375

Կայսրների գլխաւոր ուշադրութիւնը դարձած էր բարբարուների գէմ կոփւ մղելու վրայ, որն օրից օր աւելի էր ծանրանում: Արեւելում գլխաւոր թշնամիները գոթերն էին: Վաղէսը պաշտպանեց նրանց վէմ դանութեան սահմանը մինչև 375 թիւը: Այդ տարին նա սահպւած եղաւ հոռմէական սահմանի մէջ ընդունել վեստոթ կոչւած մի ամբողջ ցեղ, որ գուրս էր քըշւել իր ընակավայրից ժողովրդների մեծ տեղափոխութիւնով: Թիւրքական Հռնն ցեղը շարժւում էր Ասիայից՝ հարաւային ուռւական դաշտերով, յաղթահարելով բոլոր հանդիպած ժողովրդներին: Կամաց-կամաց նրանց հետ միացան իրանցիներին ցեղակից ալանների, սարմատացների, գոթերի անապին խմբեր: Վեստ գոթերն այս արշաւանքից փախան և ընկան հոռմէական տիրապետութիւնների վրայ: Վաղէսն ընդունեց նրանց, հետևելով այն քաղաքականութեան, որ ամենաընդարձակ չափերով գործազրում էին կայսրները Պլորսի օրերից, երբ ոչ միայն բանակի համար

պատերազմակը բարբարոսներից զինուորներ էին ժողովում, այլ և նրանց ամբողջ ցեղերով բնակեցնում էին սահմանների երկարութիւնով: Այս անգամ զորքերին ընդունելը մեծ դժբաղդութիւն նասցրեց. հռոմէական աստիճանաւորների անարդարութիւններից գրգռւած՝ բարբարոսները ուաքի ելան և Աղբիանուակում մօտ (378 թւին) կոսորեցին հռոմէական զօրքը կայսրի հետ միասին: Բալկանեան թերակղզին ենթարկւեց սարսափելի կողովուատի, բայց զոթերը կ. Պոլիսը չը կարողացան առնել և Վալէնտիանոսի կողմից օգնութեան հասած թէոգոս զօրավարը բաժանեց և խաղաղեցրեց նրանց: Նա դարձաւ արեւելեան կայսր:

Թէոգոսի եռանդի և ճարպկութեան շնորհով IV դարի վերջին մի քանի տասնեակ տարիներում կայսրութիւնը յաջող կերպով դիմացաւ բարբարոսների գէմ-պէտք է աւելացնել, որ դիմացաւ նոյն իսկ իրանց օգնութիւնով, որովհետեւ առանց ֆրանկներ, գոթերու վանդակներ հոռմէական ծառայութեան մէջ տռնելու անկարելի էր վարւել:

Թէոգոսը հալածում էր կոսապաշտներին ¹⁾ և հե-թէոգոս Մեծ թեատիկոսներին, վճռականապէս անցաւ Նիկիական հանգանակի կողմը և ամեն կերպ նպաստում էր ուղղափառ հիերարխիան հաստատելուն: Արեւելում և մա-

1) Կոսապաշտութիւնն առանձնապէս ուժեղ էր Հռոմում: Բայց զես թէոգոսի կոսապահակից Գրացիանոսի հրամանով յաղթութեան արձանը դուրս էր բերւած ծերակոյտի խորհրդի գահնեցից: Այս բանը խոր կերպով վրդովեց կոսապաշտներին: Նրանք դրա մէջ տեսնում էին Հռոմի կործանման նախանըշնը և ատեն կերպ աշխատում էին յիտ վերադարձնել արձանը: Ինքնակոչ Եւգենիոսը, յիրաւի, հրամայեց զնել արձանն իր տեղը և վերականգնեցնել կոսապաշտական պաշտամունքները, բայց նրանք միայն Յ ամիս դիմացան և կրկին թէոգոսի ձեռքով տապալւեցին:

նառանդ Պօլում արիստականները գերակշռող էին: Թէոդոսը չը խնայեց նրանց դէմ բռնի միջոցները — եպիսկոպոսներին աքսոր, ստացւածքի արքունիք զրբաւում, քաղաքացիական իրաւունքներից զրկել և այն՝ նշանաւոր գեր էին խաղում: Բայց ներեսիկուութեան անկումն առաջանում էր և ուղղափառութեան նոգեկան յաղբութիւնից: Նրա զվարակում էր Միլանի եպիսկոպոս Ամբրոսիոսը, որը եկեղեցու նշանակութիւնն ամեն բանից բարձր էր դասում և դէպք եղած ժամանակն աներկիւդ պաշտպանում էր նոյն իսկ աշխարհական իշխանութեան դէմ: Թէոդոսն անգամ խոստովանեց նրա հոգւական հեղինակութիւնը: Դա պատահեց Սալոնիքի զարհուրելի կոտորածից յետոյ. Թէոդոսը ժողովեց ազգաբնակութիւնը եկեղեցու մէջ և զինուրներին հրամայեց կոտորել՝ առանց գտաստանի ու քննութեան: Այս արիւնու կամայականութիւնից յետոյ Ամբրոսիոսը մերժեց հաղորդութիւն տալ Թէոդոսին և կայսրը զդշաց իր ոճիրը:

Զբայելով Դիօկղեսիանոսի և նրա բազուդների բարենպարական րոգուրիւններին, կայսրութեան քաղաքացիական կազմն աւելի գերը. և աւելի անբաւար և դառնում: Աստիճանաւորների գասակարգի թիւն ու ազգեցութիւնն աճում էին, բայց նա աւելի և աւելի էր հետանուու ժողովրդից և իր առանձնացած վիճակի մէջ, պարտութիւնների և խառնակութիւնների ժամանակ, կորցնում էր իր ծառայութեան գաղափարական ըմբռնումը, ընկնում էր նեղ ձևականութեան, զանձարանից գողութիւն անելու, կաշառակերութեան և հաղատակներին ճշշելու մէջ: Վերջիններիս աչքին պետութիւնը երեւում էր իրրե մի սարսափելի մեքենայ ժողովրդի արիւն ու դրամը ծծելու համար: Կուլտուրական աշխարհի ազգաբնակութիւնն սկսում էր փախչել իր կատարելազորւած պետութիւնից բարբառուների մօտ: Արդէն Վաղէնտիանոս Ա. և Վաղէսը հիմնեցին «պատապանների» (defensor) ընտրովի պաշտօնը: Արանք պէտք է պաշտպանէին զաւացիներին կայսերական պաշտօնեաների կեղեցումներից: Բայց բաւա-

կան չէր մի պաշտօն ստեղծել թղթի վրայ — պէտք էր նրան բրական ոյժ տալ:

Միակ ուժը, որ կարող էր սանձամարել ննուղներին, պատապանների բոյերին, բարոյական պահանջներով եւ բարձր իդէալներով դուրս գալ փչացած եւ սափրութեան դէմ՝ եկեղեցին էր: Եւ նա բարոի ամենալայն մտքով՝ օգտւեց իր զօրութիւնից հանրութեան օգտի համար: Դատաւորների խստասրտութեան և կողմնապահութեան պատճառով՝ նա սկսեց պաշտպանել կամայական ձերբակալութիւնից նրանց, որոնք փախչում, մտնում էին տաճարը, իսկ դատարաններին ներկայանալուց յետոյ՝ դիմում էր իշխանութիւններին, խնդրելով՝ ողորմած և զիջող լինել: բարեգործութիւնը — աղքատներին, հիւանդներին, տնանկներին, օգնելը՝ համարեա ամբողջապէս նրա ձեռքն անցաւ, սորուկների և կիսապատճերի վերաբերութեամբ նա հետեւզական կերպով քարոզում էր այն միտքը, որ նրանք էլ նոյնպիսի մարդիկ են, ինչպէս և միւսները, և զրա համար պէտք է օգտւեն օրէնքների պաշտպանութիւնից: Եկեղեցուն պատկանող կալւածներում բանւոր մարդկանց գրութիւնն աւելի տանելի և ապահով էր, քան մասնաւոր մարդկանց հողերի վրայ: Վերջապէս՝ եպիսկոպոսները դարձան քաղաքյին համայնքներում զլիսաւոր գործիչները, որովհետեւ միայն նրանք կարող էին կարուեաններին պաշտպանութիւն ցոյց տալ: Այսպիսով՝ կայսերական վարչութեան կողքին առաջացաւ եկեղեցական վարչութիւնը, որ բորբովին չէր սահմանափակում միայն նոգեւոր գործերով, այլ իր գործունեութիւնը տարածում էր դատավարութեան եւ կատարելազորւած պետութիւնից բարբառուների մօտ: Արդէն Վաղէնտիանոս Ա. և Վաղէսը հիմնեցին «պատապանների» (defensor) ընտրովի պաշտօնը: Արանք պէտք է պաշտպանէին զաւացիներին կայսերական պաշտօնեաններից: Բայց բաւա-

մէջ, մտնում էր նրա կարիքների մէջ և արտայայտում էր նրա ձգտումները:

Արևմտական հնագույն պատմութեանի կեանքի վերջին երկու տարիներում կը կին իր անկումը. իշխանութեան տակ միացրեց ամբողջ կայսրութիւնը:

395 Բայց նրա մահից՝ 395 բարկանից յետոյ վերականգնեց արեւմտեան եւ արեւելեան կէսերի բաժանումը: Արևելքն ստացաւ Թէոդոսի երէց որդին՝ Արկադիոսը, արևմուտքը՝ կրտսերը՝ Հռոմութիւնը: Նըրանց թագաւորութեան օրերից սկսւում է բարբարոսների յարձակումների երկար շարքը, որ շարունակում է ամբողջ V դարի ընթացքում և վերջանում է արեմտեան կայսրութեան անկումով: Ամենանշանաւոր յարձակումներն են՝ վեստովթերի առաջնորդ Աւարիքինը, որ 410 թւին առաւ և կողոպտեց Հռոմը, և վանդալների թագաւոր Գենզերիկոսինը, որ նոյնպէս կողոպտեց «յաւիտենական քաղաքը» 455 թւին: Յիսունական թւերի սկզբին հոններն՝ Ատտիլայի առաջնորդութեամբ այսպէս աւերեցին Դալմատիան և Իտալիան, որ գերամնների նախկին յարձակումներն սկսեցին չնչին երեալ: Իսկ Ատտիլան արժանացաւ «Աստվածային խարազան» մականւանը: Վաղէնտիանոս III կայսրի Այէցիոս զօրավարին յաջողւեց 451 թւին ջարդել հոններին Կատալառունեան դաշտերում (այժմեան Շալօն քաղաքի մօտերը, Մարն գետի վրայ): Բայց դա չը խանգարեց Ատտիլային Իտալիա խուժել և դրաել Աքլիկան, թերակղզու հիւսիսարևելքում հոռմէական զիսաւոր ապաստանը: Նա Հռոմի վրայ էլ գնաց, բայց՝ աւանդութեան համաձայն, հրաժարւեց իր մտադրութիւնից Հռոմի եպիսկոպոս Լեոն Մեծի խնդրանքների պատճառով: Արևելեան կայսրութիւնն աւելի քիչ տուժեց արշաւանքներից, թէև նա ստիպւած եղաւ իր սահմանների մէջ ընդունել օստղոթերի

ցեղը: Իսկ Արեւմուսքը բոլորովին հայբայեց. կայսր տիտղոսը դեռ մի քիչ ժամանակ էլ պահպանւեց, բայց նա գտնուում էր գերման զօրքերի առաջնորդների տրամադրութեան տակ, որ կազմում էին՝ այսպէս կոչւած՝ հռոմէական ամենալաւ մասերը: Հերուների առաջնորդ Օդօակը Հռավեննայում գահնակեց արեց առանց իշխանութեան, լոկ անունը կրող վերջին կայսրին՝ Հռոմուլոս Աւգուստուլոսին, այդ գէպը համարեան հազիւ նշանարւեց Իտալիայում. ոչ ոք սրախն մօս չը ընդունեց: 476 թիւը, երբ Օդօակը ընդունեց իտալիայի թագաւոր տիտղոսը՝ պէտք է հաշւել արևմտեան կայսրութեան գոյութիւնը դադարելու թւականը: Կայսրութեան ամբողջ կէսը դեռ ևս դիմանում էր, բայց Իտալիան և Արևմուտքը, որտեղից գուրս էր Եկել հռոմէական զօրութիւնը և որի հետ կապւած էր ուօմանական կուլտուրան, գերմանների ներս խուժելով՝ ստացաւ բոլորովին նոր կերպարանք: Այդ նոր հոսանքը պատկանում է արդէն միջին դարի պատմութեանը: Վերջացնելով հին աշխարհի պատմութիւնը, պէտք է նկատել, որ արեւմտեան հոռմէական կայսրութեան անկումն առաջացաւ նոյնիքան ներփին այլասեռումից, որին եւ դրսի ննուուփից: Ճշմարիտ է, հասարակութեան լաւագոյն ուժերը պահպանւեցին Եկեղեցու մէջ, բայց Եկեղեցին չէր կարողանում պահպանել քայլայւող, լուծւող պետութիւնը և պէտք է մտածէր իր ամբողջութիւնը և իր ազդեցութիւնը բարբարոսների վրայ պահպանելու մասին: Արշաւանքներից աւելի քիչ վատուած արևելեան կայսրութիւնը կանգուն մնաց, բայց այն տեղ էլ զառամեալ պետութեանը կեանք տալու համար անհրաժեշտ էին խոր փոփոխութիւններ:

ՀՈՌՄԵԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՆ

Երկու դասական ազգերի՝ յոյների և հոռմայեցիները և Յոյների մէջ խոր տարբերութիւն կար հոգեկանի վերաբերութեան. հոռմայեցիները չունեին այն հնարագիտութեան, հարուս երեւակայութեան նետն անգամ, որով աչքի էին ընկնում յոյները. Երանի յադրում էին մտքի հետեւողականութեամբ, զործնականութիւնով եւ բնաւորութեան տնկունութիւնով. Պատերազմական ողին և արհամարհանքը դէպի այն ամենը, ինչ որ չունի անմիջական նպատակ և օգուտ՝ մի քիչ մօտեցնում էին հոռմայեցիներին դաժան, խօսքերով ժլատ գորիացիներին, բայց երկրագործական զրադմունքները և ընտանեկան սկզբունքի ուժեղ զարգացումը տալիս էին հոռմէական կեանքին նահապետական պարզութեան և ընտանեկան փակւածութեան մի առանձին կրիք, որից զուրկ էր Սպարտայի զօրանոցային կեանքը. Իսկական հոռմայեցին միշտ որոշ արհամարհանքով էր վերաբերում յոյներին՝ նրանց շարժունութեան, թեթևառիկութեան, նենդամութեան և շատախօսութեան պատճառով. բայց դեռ այս վաղ ժամանակներից առանց յոյների չէր կարող կառավարել Հռոմը եւ իր զարգացման գործում բոլորովին ենթարկվեց Երանից ազդեցութեանը. Արդէն թագաւորների ժամանակ և հանրապետութեան սկզբում այդ աղդեցութիւնը երեսում է նրանում, որ հոռմայեցիները վերցըին յոյների պաշտամունքները և տուապեիները (աստւածները և նրանց մասին եղած պատմութիւնները): Հոռմայեցիներն, ինչպէս արդէն տեսանը, իրանց աստւածներին ունին վերացական բնաւորութիւն և նրանց կենդանացնելու

համար ստիպւած եղան դիմելու իրանց դրացի հարաւային իտալական յոյների օգնութեանը. Օրինակ՝ Յերերայի տաճարում, ուր պղերէյական էղիները պահում էին իրանց դիւանն ու գանձարանը, յունական քրմերն էին կատարում աստւածպաշտութիւնը: Իսկ կենդանի կուլտուրական շարժումն սկսեց հոռմայեցիների մէջ Մեծ Յունաստանի նւաճումից յետոյ, և մանաւանդ մակեդոնական պատերազմներից և Բալկանեան թերակղզին նւաճելուց յետոյ:

Այդ ժամանակ տեղի ունեցած մերձեցումը Յունական յոյների և ասխացիների հետ երկու տեսակ աղդեցութիւն ունեցաւ հոռմայեցիների վրայ: Արդէն ակնարկած քաղաքական կեանքի պայմանների հետ միասին նա նպաստեց նին կազմի լուծելուն, կեանքի ձևի միամիտ պարզութեան, անգրգուելի կրօնասիրութեան, անկաշառ հայրենասիրութեան և բարոյական դիմացկանութեան խորտակւելուն: 186 թւին ծերակոյտն անհրաժեշտ համարեց խիստ հալածանք հանել ցոփ գինարբութեան կամ վարիանալիայի դէմ, որ Հռոմ էր բերւել յոյների ձեռքով, որովհետեւ այդ աօները գարձել էին անսանձ, այլանդակ խնջոյքներ—կամ օրդինաներ: Բայց ոչ այդ սստիկանական միջոցները, ոչ ցենզօր կատանի նման հնութեան նախանձախնդիր մարգկանց ջանքերը չէին կարող կանդնեցնել սկսած շարժումը: Մնում էր քաղել նրանից լաւ պտուղներ, վատերին հակակշռելու համար, իսկ Երան լաւ կողմն էր գեղարվեսների եւ զիսուրիների ասրածութեան մը: Դրա համար էին գննատում Յունաստանն Սկիպիոն երէցի և Կրտսերի, Ֆլամինիոսի, Էմիլիոս Պաւլոսի նման մարդիկ: Ամենից առաջ հոռմայեցիների մէջ արմատ բոնեց կատակերգութիւնը: Պաւլոսիոսը և Տերենտիոսը զրում էին աստիկական աւելի ուշ ժամանակի կատակերգութեան աղդեցութեան տակ—նրանց

գրւածքները հետաքրքիր են իրքե բարքերի և նիստու կացի պատկերներ։ Նրանց մէջ ամենակենդանի աձնաւորութիւնները հանգիսանում են ստրուկներն իրանց ստրկական խոնարհութիւնով, խորամանկութիւնով ու տէրերի վրայ ունեցած ազդեցութիւնով։ Նրանք ունեին միջազգային նշանակութիւն—միատեսակ կարևոր դեր էին խաղում ինչպէս հռոմէական, այնպէս էլ յունական հասարակութեան մէջ։ Հռոմէական հասարակութեան մէջ նրանց նշանակութիւնը մինչեւ անդամ աւելի դօրացաւ, որովետեւ նրանք հանգիսանում էին իրքե երիտասարդ սերնդի դաստիորակներ, հռոմէական կոպիտ պայմաններում իրքե մտաւոր մշակութեան ներկայացուցիչներ։

Պատմագրութիւն: Գրականութեան միւս տեսակը, որ նոյնպէս այդ ժամանակ ծնւեց, էր պատմութիւնը։ Թէև հռոմայեցիներն աւելի շուտ կատարում էին մեծ գործեր, քան նրանց մասին պատմում, սակայն փառքի սէրը և քաջազործութիւնների առատութիւնը պէտք է՝ շուտ թէ ուշ՝ առաջացնէին պատմագրութիւնը։ Ազգում գործը սահմանափակում էր նշանաւոր գերգաստանների նախնիքներին զովարանելով, նրանց պաշտօններն, արշաւանքներն ու յաղթանակները հաշվելով։ Բացի զրանից շուտով երեան եկան չոր տարեգրութիւններ ամեն տեսակ ուշագրաւ գործերի մասին։ Յոյների հետ մօտենան առաջացրեց կապակցւած պատմութեան առաջին փորձերը։ Ֆարփոս Պիկտորը, ցենզօր Կատոնը թողել են այդ տեսակի ընդարձակ շարադրութիւններ։ Ներկայ զէպքում չէ կարելի լուսութեան տալ և Պոլիբիոսի յունական աշխատութիւնը, որ նկարագրում է Պոյնիկեան պատերազմների շըրջանը, որովհետ ևնա առաջացել է Հռոմի Յունաստանի վրայ ունեցած հակազդեցութիւնից։ Պոլիբիոսը մօտ ծանօթ էր հռոմէական կարգերի հետ—նա աքիտական դաշնակցութեան երկրորդ մակեդոնական պատերազմի ժամանակ լիազօր էր հռոմէական զօրքերի մօտ և նրանից յետոյ մասնակցում էր յունական յարաբերութիւնները կարգաւորելու գործին։ Նրանշանաւոր շարադրութիւնը ներկայանում է իր առաջին փորձի մակարդակութիւնը և առաջարդար բարեկարգութիւնը։

ուակ լոկ ազգային պատմութիւններին։ Երա համար Հռոմի յաղթութիւնը միացնում է իր մէջ Իտալիայի, Յունաստանի, Ասիայի եւ Աֆրիկայի—լուսաւոր աշխատի այս զիսաւոր մասերի պատմութիւնը։

Քաղաքացիական պատերազմների սարսափելի խառն ձարտասանակութիւնները բնականարար յետաձգեցին Հռոմի կոլտուրական զարգացումը։ Յունական լուսաւորութիւնն աւելի և աւելի խոր էր թափանցում հռոմէական հասարակութեան մէջ, բայց ընդունակ մարդիկ բոլորովին կրանւել էին կուռզ և չէին կարողանում իրանց ժամանակը նւիրել գրականութեան և նրա մէջ որ և է նշանաւոր բան արտադրել։ Միակ ճիւղը, որ այդ ժամանակ խոշոր յառաջադիմութիւն արեց, հաւրասանութիւնն էր, որը վաղ հասաւ փայլուն հետևանքների այդ բանում ազդեցութիւն ունեցաւ հռոմայեցիների կեանքի մէջ քաղաքական ժողովների և զատական նիստերի աշքի ընկնող նշանակութիւնը։ Դրակբոսները, Լիկինիոս կրասսոս Երէցը, Հորտենսիոսը, մանաւանդ Կիկերոնը հասան այնպիսի բարձրութեան, որ կարող էին մրցել մինչև անգամ յունական հռչակաւոր ճարտասանների հետ։ Բնական ձիրքերը, մանրազնին նախապատրաստութիւնը, մշտական գործածութիւնը, շրջապատող հասարակութեան հետաքրքրութիւնը և ճաշակը—ամեն բան նպաստում էր նշանաւոր հուետորների զարգանալուն։

Կրթութիւնն առենածաղկած վիճակի հասաւ կայսրութեան ժամանակ, խաղաղութիւնը հաստատելուց յետոյ։ Իր հսկայական պատմական աշխատութեան¹⁾ մէջ Տիտոս Լիլիոսն ուշարձաններ կանգնեցրեց նախրապետութեան փառաւոր յիշատակների համար։ Մեծամեծ պատերազմական սիրազործութիւնները, կուսակցութիւնների յամառ կոիւը, քաղաքացիական վեհանձնութեան, պարզութեան և բարքերի խստութեան ուրւազերը նա հաղորդել է հայրենասիրական ողերութիւնով և ճարտասանութիւնով, որ լիքն է արժանիքով ու փայլով։ Նոյնպիսի հայրենասիրական նպատակ ունի և Վիրգիլիոսն իր Ենէականի մէջ։ Նա փորձեց հռոմայեցիների համար ստեղծել մի այնպիսի դիւցազներգութիւն, որպիսին ունէին յոյները հռոմերական պօէմներում։ Ողիսա-

1) 142 զիրք, որոնցից մեզ հասել են 1—10 և 21—45-իրորդ զիրքերը միայն։

կանը ծառայում էր նրան իր օրինակ ենէսախ թափառումները՝ Տրոյայի կործանումից յետոյ՝ Նկարագրելու համար, իսկ եղիականն՝ իր օրինակ ենէսախ իտալական ափը դուրս գալուց յետոյ՝ լատինների հետ ունեցած պատերազմները նկարագրելու ժամանակ: Այս արհեստական, դիտամբը հնարևած դիցազներգութիւնը (էպոս) չէ կարող համեմատւել հոմիերականի հետ իր զգացմունքների անմիջական անկիղծութիւնով, պատկերաւորութիւնով և դիտելու ընդունակութիւնով: Բայց հետաքրքիր է Վիրպիլիոսի ընդհանուր հայեցակէտը. Երա ներսի գլխաւոր յատկութիւններն են՝ կրօնափրուրինը, յարգանք դեպի կրօնը եւ բարոյականութիւնը (Rius Aeneas): Դիցազներգութեան նպատակն է նոյն տեսակի զգացմունքներ զարթեցնել ապօրինութեան և վչացածութեան վարժւած հոռմէական հասարակութեան մէջ, իսկ զլխաւոր միջոցն է՝ կրօնական աւանդութեան և Հոռմի զօրութեան մէջ եղած կապը ըոյց տալը. Ենէսասը փախցնում է Տրոյայից իր տան հին աստածներին, և այդ աստածներին յագելու սովորութիւնն իր յետնորդներին հաղորդելը ծառայում է իր գրաւական Հոռմի կեանքի մէջ բոլոր յաջողութիւններին:

Օգոստոսի ժամանակի միւս մեծ բանաստեղծը՝ Հորացիոսը սակաւ է դիմում այդպիսի լուրջ պատճառարանութիւնների: Նրա օգանները (գովարանական երգեր), էստօդանները, երգիծարանութիւնները, ուղերձներն արտայայտում էին ժամանակի մի ուրիշ պահանջը: Նա մասնակցում էր վերջին բաղաքացիական պատերազմին և այն էլ՝ հանրապետականների կողմից: Բայց այն օրից, երբ նա նետեց իր վահանը Ֆիլիպպէի մօտ եղած կուռում, նա բողեց եւ խղախական ասպարեզը: Պրօսկրիպցիանների երկիւղը, հնարաւոր նոր խառնակութիւնների ահը, Սարինիայում ունեցած իր փոքրիկ կաւածքի հետ կապւած լինելը, այն կաւածքի, որ նեփել էր Մեկնասը, Եղիանութեան առաջ խոնարհները՝ այն իշխանութեան, որ ապահովեցնում է խաղաղութիւնը և կարգը՝ ահա թէ ինչի են համում Հորացիոսի բաղաքացիական պատճառարանութիւնը: Այս պատճառարանը նկարագրութիւնը նկարագրութիւնը: Այդ շարագրութիւններից ոչ մէկն աչքի չէ ընկնում իր անկողմնակալութիւնով: Տակիտոսը գրում է սրտի կակիծով և չարութեամբ. Երա մէջ դեռ եւս կենդանի և ազնւական հանրապետականի անկախ ողին, քենա խոստվանում և միապետութեան անհնարինութիւնը: Բայց նա անկարող է հաշտել ներոնի անմիտ կատալութեան, Տիրերիոսի կեղծաւոր դաժանութեան, ծերակոյտի փոքրութեանը, զօրքի ինքնակամութեան, ամրող հասարակութեան սանձարձակու-

հոգսերն ու մտածմունքներն առաջին տեղն են բոնում, ինչպէս և Օգոստոսի ժամանակի ուրիշ բնարերգու բանաստեղծների համար:

Մակայն չէ կարելի ասել, որ կայսրութեան ժամանեցիձարանակի զրականութեան միջից չքացել էր հետաքրքրութիւնը նութիւն, դէսի հասարակական հարցերը: Դիւրաբորոք Կատուլոսը իրստ կերպով խօսեց երեց Կեսարի դէմ: Ներոնի օրով Պետրոնիուսը (Styricon գրւածքում) ծաղրեց զաւառական կեանքն իր հարստացած ազատ-արձակւածներով, իր պորտարոյծներով (պարազիտ), որ կապկութիւններ էին անում հարուստներին գւարացնելու համար, իր կոշտ ու կոպիտ փորձերով՝ ընդօրինակելու Հոռմի ճոխութիւնն ու վայելչութիւնը: Իւլիուսի երգիծաբանութիւնները Դոմիկիանոսի օրով շատ աւելի լայն են: Զայրոյթով նկարագրում է նա ամրող հասարակութեան անբարոյականութիւնը—տգիտութիւնը, նախապաշարումը, փչացած, այլասեռած ճաշակները, ամեն հասրաւոր տեսակի ախտերը: Նրա մաղձոտ երգիծաբանութիւնը չէ ինայում ոչ որի. նա դիպչում է նոյն իսկ կայսրին և նրա պալատականներին, միայն արդէն Դոմիկիանոսի մահից յետոյ:

Կայսրների կամայականութիւնից և հասարակութեան Տակիտոսը բարոյական անկումից առաջացած գժգոհութիւնն ամենատաղնդաւոր արտայայտութիւն գտաւ Կորնելիոս Տակիտոսի պատմական գրւածքներում, որ գրում էր Տրայիանոսի ժամանակ, բայց որը փորձել էր Դոմիկիանոսի վարչութեան բոլոր ծանրութիւնը: Մեզ հասել են նրա տարեգրութիւնից և պատմութիւնից մի քանի գրեեր, որ նւիրւած են Տիրերիոսի ժամանակին, Կլաւդիոսի վերջին տարիներին, Ներոնին և նրա մահից յետոյ առաջացած խառնակութիւններին: Բայց դրանցից, մնացել են՝ հոետորական արեստի մասին մի խօսակցութիւն, Ազրիկոլայի—Տակիտոսի անհրոջ կենսագրութիւնը և գերմանների բարքերի և հիմնարկութիւնների նկարագրութիւնը: Այդ շարագրութիւններից ոչ մէկն աչքի չէ ընկնում իր անկողմնակալութիւնով: Տակիտոսը գրում է սրտի կակիծով և չարութեամբ. Երա մէջ դեռ եւս կենդանի և ազնւական հանրապետականի անկախ ողին, քենա խոստվանում և միապետութեան անհնարինութիւնը: Բայց նա անկարող է հաշտել ներոնի անմիտ կատալութեան, Տիրերիոսի կեղծաւոր դաժանութեան, ծերակոյտի փոքրութեանը, զօրքի ինքնակամութեան, ամրող հասարակութեան սանձարձակու-

թեան հետ: Իրը դաս իր հայրենակիցներին, նա իրար մօտ է դնում նրանց թուլամորթութիւնն ու ախտերը և գերման բարբարոսների անքիծ և առողջ բնաւորութիւնը: Կասկած չըկայ, որ Տակիտոսի պատկերն ազատ չէ չափազանցութիւններից և միակողմանիութիւններից, որ նա չափազանց կենարոնացըրել է իր ուշադրութիւնը Հոռմի բարձր դասակարգերի կեանքի վրայ և արհամարհել է քիչ աչքի ընկնող դաւառները: Նա չունի թուկիդիտէսի ընդունակութիւնը՝ ցոյց տալ մասնաւոր երեսյթների վրայ ըդհանուր պայմանների ազդեցութիւնը. Նրան մասնաւորապէս հետաքրքրում է բնաւորութիւնների, կըքերի ուսումնասիրութիւնը և, ինչպէս հոգերան, նա դժւար թէ իրան հաւասար մէկն ունենայ պատմական դրողների մէջ:

**Պլաստիքա-
դան արևետ-
ները**

Զը վերադառնալով այս նիւթական յառաջադիմութիւններին, որոնց մասին արդէն խօսւեց, հաշւենք կայսերական շրջանի խոշոր ծառայութիւնների ամբողջ շարքը: Հոռմէական տիրապետութիւնը նպաստեց՝ առաջին՝ հելլենիստական կրթութեան տարածւելուն Միջերկրականի շուրջը եղած բոլոր երկրներում: Եթէ Արևմուտքը ուօմանացած էր լեզով, եթէ նոյն խակ Արևելքում հաստատել էին հոռմէական հիմնարկութիւնները, կրկին զիտուքիւնը եւ զեղարւեսն ամեն տեղ հելլենիստական բնաւորութիւն ունին: Ինչպէս այս մասում իրանը՝ հոռմայեցիները սովորում էին յոյներից, այնպէս էլ նրանցից սկսեցին սովորել իսպանացիները, դալլերը, բրիտները, աֆրիկացիները: Այդ ժամանակ արևմուտքում պլաստիքական արւեստները հասել էին բարձր ծաղկման, սակայն հոռմայեցիներին աւելի յաջողւում էր ճարտարապետութիւնը, քան քանդակագործութիւնը: Վերջինս կորցրեց յունական օրինակների իդէալական բովանդակութիւնը և գեղեցկութիւնը և սկսեց դառնալ դէպի իրականութեան նըգրիս պատկերացումը՝ դէպի պատկերային արձանը և կենսական տեսարաններն (օրինակ՝ Տրայանոսի սիւնի և Տիտոսի յաղ-

թական կամարի վրայի ուռուցիկ քանդակները): Ճարտարապետութիւնը չը մշակեց մի բոլորովին նոր ոճ. Նա օգտւեց էտրուսկների շինութեան վրայ գըմբէթ բարձրացնելու սովորութիւնից և նրա հետ միացրեց յունական սիւնազարդ շէնքերի ձեւը: Այս միացման նշանաւոր օրինակն է Պանթէոնը, որ շինել է տւել Ագրիպալասը:

Զւարճանալու մեծ պահանջը ծնեցրեց բազմաթիւ թատրոնների ու կրկէսների (ցիրկուս) կառուցումը: Թէ մէկ և թէ միւս տեսակի շէնքերը տեղաւորում էին բաց երկնքի տակ, ամֆիթատրոնի ձևով իրար վրայ բարձրացող նստարաններով, բեմն էլ մէջ տեղը: Հոռմի Մեծ-կրկէսը (Circus maximus) շինուած էր 260,000 մարդու համար: Ֆլաւիանոսի ամֆիթատրոնն իր մեծութեան պատճառով կորսակա (հոկայ) անունն էր ստացել, և նրա աւերակներն այսօր էլ կարող են զաղափար տալ այդ շէնքերի չափի, ամրութեան և վառահեղութեան մասին: Պէտք է աւելացնել, որ Հոռմի և գաւառների յուշարձանները պարզ կերպով ցոյց են տալիս ոչ միայն I և II դարերի ծաղկեալ վիճակն, այլ և III դարից սկսած լուսաւորութեան անկումը. օրինակ Սեպտիմ Սեպերի և Կոստանդիանոսի յաղթական կամարներն իրանց զարդարանքներովը և ուռուցիկ քանդակներովն արտայալում են աւելի և աւելի աճող վայրենացումը. մանրամասնութիւններն իրար վրայ են կուտակւում տունց ներքին կապի, կորչում է ուղիղ կերպով դիտելու և իրականութիւնը ճաշակաւոր կերպով արտայալու ընդունակութիւնը:

Հելլենականութեան կնիքը գիտութեան մէջ պակասդիտութիւնը՝ նշանակելի չէ քան գեղարւեսների մէջ: Տեղեկութիւններ հաւաքելը, հետաքրքրութիւնը դէպի բնապատմական գիտելիքները շարունակւում են, թէ և կայսերական շրջանը շարտագրեց այնպիսի մեծ թիւ առաջնակարգ գիտական-

ների, ինչպէս աղեքսանդրեան կրթութիւնը Ա և ԱԱ դարերում թ. ից առաջ. Պլինիոս երեցը, Ներոնի և վեսպասիանոսի օրով իր տրնական պատմութեան» մէջ հաւաքել է ահազին քանակութեամբ հետաքրքիր գիտողութիւններ հանրաբանութեան, բուսաբանութեան, կենդանաբանութեան գիւղատնտեսութեան վերաբերեալ, թէև նրա նկատողութիւնները չեն վերածւած լաւ մտածւած մի ամբողջութեան. Դաէնը դարձաւ գիտական բժշկութեան հիմնադիրը, որով հետև առաջին անգամ մարդու բժշկութեան եղանակը կապեց նրա ընախօսութեան (ֆիզիոլոգիայի) հետ. Ամենախոր աղգեցութիւն ունեցան ալէքսանդրեան զիտական կլաւդիոս Պաղոմէսոսի (աղրում էր Անտոնիոսի ժամանակ) գործերը, որ կազմեցին մոլորակների մասին եղած գիտութեան հիմքերը և մաթեմաթիքական աշխարհագրութիւնը, որ ընդունում և պահպանում էին գիտականները նրանից դեռ հազար տարուց աւելի յետոյ էլ և միջի այլոց նա համոզւեց, որ երկրի մակերևոյթը հարթ չէ, այլ կըր, և քանդեց այն հասկացողութիւնը, որն առում էր, թէ ովկիանոսն ամէն կողմից շրջապատում է մարդարնակ ցածրաբ:

Մի ուղղութեամբ, իրաւունքի մասում, հոգմայեցիները բաց արին մի անպայման նոր ճանապարհ և մի այնպիսի գործ կատարեցին, որը մինչև անգամ մեր օրերում վճռական աղգեցութիւն է գործում: Յունական պիտութիւնները՝ ծանօթացան մարդկանց մէջ եղած բոլոր բազմատեսակ յարաբերութիւնների հետ և նրանց կարգաւորելու համար մշակեցին իրաւաբանական շատ նշանաւոր ձևեր: Բայց յոյները չափազանց բաժան-բաժան և փոփոխական էին, դրա համար էլ չէին կարող կազմել մի ընդարձակ և մտածւած իրաւագիտական կարգ (սիստեմա). դրա հետ միասին՝ իրաւագիտութեամբ զրադւելը նրանց մէջ ընկաւ այնպիսի մարդկանց ձեռք, որոնք շատ էլ յարգւած չէին հասարակութիւնից—սովետուների և արհեստով ճարտասանների ձեռքը, որոնք աշխատում էին միայն հարստանալ և առաջ գնալ այդ գործով: Հոգմէական ժողովուրդը կարծես սեղծւած էր իրաւագիտութիւնը

մշակելու համար: Առաջին անգամ պատմութեան մէջ երկալով, նա աչքի ընկաւ իր մտածողութեան հետևողականութիւնովն ու արամաբանութիւնովը: Դասղականութիւնովն ու արամաբանութիւնովը ամենաչնչին կարգային յամառ կուրը գարժեցրեց ամենատեղ իրաւամարդիկներին անգամ հասկանալ և գնահատել իրաւամարդիկները: Իտալիայի և գաւառների հատական հոգմայեցիներին գարձրեց ամբողջ աշխարհի գատական վէճճորդը: Ավելերի վճիռների գործի մէջ գլխաւոր միջնորդը: Ամենահին իրաւաբանական սովորութիւնները կրօնի հետ մենահին կապակցութեան մէջ էին գտնուում և պահանջական կապակցութեան մէջ էին գտնուում էին քրմերի ձեռքով: Մազգիստրական (ընտրովի պահանում էին քրմերի ձեռքով): Մազգիստրական (ընտրովի պահանում էին այնպիսի դեր էր խաղում, ինչպէս և զինուուվարութիւնն այնպիսի դեր էր խաղում, ինչպէս և զինուուվարական հրամանատարութիւնը, և փոփոխուում էր նրա հետ: Վերջապէս տիրող (պատրոնի) յարաբերութիւնը նրա հոգմանուրութիւնը ինզրող ստորագրէպի նրա հոգմանաւորութիւնը յարաբերալը (կլիէնտը)՝ ազնւական հոգմայեցու յարաբերութիւնը գէպի նրա օգնութեանը դիմող օտարերկրութիւնը գէպի նրա օգնութեանը քաւում էին գէպի փառցիները և զաւառացիները—քաշում էլ պատում էր ամփոփում էին չափազանց չնչին թւով վիճելի գէպի քեր: Հանրապետութեան ժամանակ պաշտօնի գլուխ անցնող Պիտուրը (գլխաւոր դատաւորը) մի նրավորտակով (Լոլիկ) յայտարարում էր, թէ ինչ սկզբունքերի պէտք է հետեւի զատագիտիներ անելու ժամանակ, բայց որովհետեւ հրօվարտակով էլ չէր կարելի նախատեսել բոլոր վիճելի գիպւածները և դրա հետ միասին պաշտօնեան կարող էր իրաւաբանութիւնից շատ բան հասկացող մարդ չը լինել՝ դրա համար նա իրաւագիտութեան էր կանչում խորհրդականներ—լաւ իրաւագիտութեան մէջ յայտնի հեղինակութիւնների:

Դատաւորները բոլորովին չէին սահմանափակուում ժողովրդի հաստատած օրէնքների կամ ծերակոյտի վճիռների տութեան (senatus consulta) գործադրութիւնով, որովհետեւ թէ մէկը և ուրագումը էր չափազանց չնչին թւով վիճելի գէպի քեր: Հանրապետութեան ժամանակ պաշտօնի գլուխ անցնող Պիտուրը (գլխաւոր դատաւորը) մի նրավորտակով (Լոլիկ) յայտարարում էր, թէ ինչ սկզբունքերի պէտք է հետեւի զատագիտիներ անելու ժամանակ, բայց որովհետեւ հրօվարտակով էլ չէր կարելի նախատեսել բոլոր վիճելի գիպւածները և դրա հետ միասին պաշտօնեան կարող էր իրաւաբանութիւնից շատ բան հասկացող մարդ լինել՝ դրա համար նա իրաւագիտութեան էր կանչում խորհրդականներ—լաւ իրաւագիտութեան մէջ յայտնի հեղինակութիւնների:

252

Որքան աւելի բարդանում էին քաղաքացիական յարաբերութիւնները և կուտակում օրէնքները, սովորութիւնները, հրովարտակները, վճիռները, հոչակառոր իրաւարանների պատասխաններն՝ այնքան աւելի անհրաժեշտ կերպով զգացում էր այդ ահապին կոյտի մէջ մի որոշ ճանապարհ գտնելու, հիմնական սկզբունքները որոշելու, մասնաւոր դէպրերն այդ սկզբունքներից կախման մէջ դնելու կարիքը: Այդ տեսակ գիտական աշխատութեան առաջին նշանաւոր ներկայացուցիչը եղաւ առաջին պլեբէյը, որը հասաւ բարձրագոյն քուրմի պաշտօնին: — Տիրերիոս Կորունկանիոս (Pontifex maximus, 252 թ. Ք. առաջ): Նա վերածեց այն իշտաբանական սովորութիւնները, որոնց պատասխաններն եին բաները: Աւելի լայն էր Մուկիոս Սկեվոլայի մտաւոր հորիզոնը, այն մարդու, որ ոչչացաւ Մարիոսի Հռոմի առածամանակը: Նա արդէն ուշազրութեան է առել իր աշխատութեան մէջ իր ժամանակի իրաւունքի բոլոր բազմատեսակ ազրիւնները:

Կայսրութեան հաստատելուց յետոյ իրաւունքն սկսեց զարգանալ աւելի նա միծ յաջողութիւնով, ըան հանրապետութեան ժամանակ, Կայսրութեան պարծանքը նբանումն էր, որ նա կարդ ու խաղաղութիւն էր պահպանում կուլտուրական աշխարհի տարացեղ ազգարնակութեան մէջ: Նիւթական բարօրութեան աճումը, առաջարի կենտրոնացումը, ժառայութիւնների բազմատեսակ փոխանակութիւնը, բազմաթիւ գործառնութիւնները և պարտականութիւնները — այս բոլորը պահանջում էին իրաւարանների եռանդունութիւնը, որոնք կարող լինէին նուրբ կերպով որոշել յարաբերութիւնները, որոշել և իրարից դուրս բերել հասկացողութիւնները, եղբակացութիւններ հանել, սահմանել երկու կողմերի իրաւունքները, կենսական դիմումները օրէնքի և գիտութեան ընդհանուր սկզբունքների տակ դասաւորել: Յետոյ՝ հանրապետութեան հետ հասեմատելով ստացաւ այն էական փոփոխութիւնը, որ կայսրութիւնն սկսեց իրաւունքի ծայրացեղ բաժանմանը դէմ դնալ և միացնող՝ կենտրոնացող բաղարականութիւն բանեցնել: Արդէն Օգոստոսը մի բայլ արեց այդ ուղղութեամբ, — նա արգելեց խորհուրդ հարցնելու ամեն մի իրաւարանից: «Պատասխաններ» տալու բոլոր փոքրաթիւ անձերի: Աղրիանոսի յանձնաբարութիւնով՝ Մարմիանոս Յու-

լիանոս զանական պրետորական (գլխաւոր գատաւոր) հրութիւնակները վախարինեց մի «մշտական» կոչւած հրովարտակով. Նրա մէջ մտցւած էին նախընթաց հրովարտակների հիմնական սկզբունքները և դէն զցւած բոլոր աւելորդ և հակասական կէտերը: Մարկոս Աւրելիոսի ժամանակ Դայոսը կազմեց «ինսիրուցիաներ», մի համառոտ գասագիւրք, որ վերածում էր իրաւագիտութեան վիխաւոր սկզբունքները: Այդ բանում նա աչքի առաջ ունէր ոչ թէ հոռմէական ժողովրդի առանձնայատկութիւնը կազմող սկզբունքներն, այլ այն ընդհանուր կանոնները, որոնք թւում էին բոլոր մարդկանց յատուկ բանականութիւնից և արդարութեան սկզբունքից բըղիսած և դրա համար էլ բոլոր ժողովրդների համար հաւասարապէս գործադրելի էին: Այս բանական իրաւունքը կոչւում էր համաժողովրդական (ius gentium): Որքան որ հոռմէական քաղաքացիութիւնը տարածւում էր կայսրութեան բոլոր ժողովրդների վրայ, այնքան էլ համաժողովրդական իրաւունք (ius civile):

Իրաւագիտութեան գործադրութեան մեծ նշանակութիւնը, նրա առաջնակարգ գերը կայսրութեան մէջ արտայայտեց վերջապէս նրանով, որ զիխաւոր դատարանի անդամներ՝ նետեւաբար եւ կայսրների ամենամօսաւոր օգնականներ սկսեցին նշանակել նոշակաւոր իրաւաբաններին: Այդպիսի դիրք էր գրաւել Սեպտիմոս Սեվերի ժամանակը Պապինիանոսը, Կարակալլայի և Հելիոգարալի ժամանակ՝ Ցուլիփոս Պաւլոսը, Ալէքսանդր Սեվերի ժամանակ — Ռւլպիանոսը, այս երեքն էլ հոռմէական իրաւունքի աչքի ընկնող աստղերն են, որոնց պատասխանները մեծ թւով պահպանած են հոռմէական իրաւարանների արած բաղւածքների ժողովածուների մէջ, որ յայտնի է Ցուլստինիանոսի Դիզես անունով:

III Պարի վերջում, կայսրութեան վերականգումից յետոյ, հոռմէական իրաւունքի պատութեան մէջ սկսում է մի նոր շրջան: Արդէն առանձին գիտական իրաւարաններ չեն որոշում իրաւունքն իրանց կարծիքներով. սուազնորդ դերն անցնում է ուղղակի կայսրին եւ նրա դիմանելին: IV և V Դարերի օրէնքների, հրովարտակների, կանոնների մեծ մասը հաւանաբար, կազմել են լաւ իրաւագէտների մասնակցութիւնով, բայց այդ մասնակցութիւնով մնում է ան-

նշմարելի: Դիոկղետիանոսը, Կոստանդիանոսը, Թէոդոսն, Արկադիոսը և Հոնորիոսը խօսում են իրանց անունից և տալիս են ոչ թէ կարծիքներ կամ վարդապետութիւններ, այլ հրամաններ: Կայսրութեան ուշ ժամանակի այս աշխատութիւնն իր իրաւաբանական արժեքովն ու տաղանդաւորութիւնովը չէ կարող համեմատել Ա և ԱՅ դարերի դասկան¹⁾ իրաւաբանների գործունէութեան հետ: Բայց և այս շրջանին պատկանում է մի անկողոպտելի փառք. ԱՅ դարի կայսրների որոշումները բոլորովին փոխեցին բաղաքացիների դասակարգութիւն վիճակը և շատ նպաստեցին հին կոլտուրայի խայտառակ հիմքի՝ ստրկութեան կործանմանը:

Բասկան ի-
բաւունքը:

Մարդկային պատմութեան մէջ հառմայեցիների գրւ-
իաւոր ծառայութիւնն է հառմէական բաղաքացիական իրա-
ւունքը: Նրա նշանակութիւնն ամենից լաւ պարզում է այն
հանգամանքով, որ կայսրութեան իրաւաբանների վարդապե-
տութիւնը չէ մեռել մինչեւ այսօր—ոչ միայն չէ մեռել, այլ
ձանաչում է իրեւ ամենալաւ նախապատրաստութիւն այժ-
մեան իրաւաբանի համար և իրեւ գլխաւոր հիմք և ըրովա-
կան երկրներում գործող իրաւական դրութիւնների: Այդ-
պիսի արտակարգ կենսունակութեան—ԱՅ դարի հասկացու-
ղութիւնը ՀՀ դար տեղափոխելու պատճանները բացա-
տրելու համար բաւական չէ մատնանիշ անել միայն հառ-
մայեցիների աչքի ընկնող ընդունակութիւնն իրաւաբանա-
կան մտածողութեան մէջ և այն յարարերութիւնների ա-
ռատութիւնը, որ ներկայացնում էր կայսրութիւնն իրաւա-
բանական մշակութեան համար: 17 դար իզուր չէ անցել,
և կեանքի բոլոր ճիւղերում առաջացել են մի շարք փոփո-
խութիւններ՝ երբեմն շատ խոր. եթէ այնուամենայնի հոռ-
մէական իրաւունքը պահպանել է իր կենսական ուժը, նա
այդ բանը պարտական է այն բարձր հայեցակէտին, որ
մտցնում էին նրա մէջ դասական իրաւաբանները. նրանք
աշխատում էին ստեղծել բոլոր ժողովրդների համար մի
ընդհանուր իրաւունք և դրա համար յենուում էին ոչ թէ
հառմայեցիների, աթէնացիների, ասորիների պատահական
վճիռների վրայ, այլ ընդհանրապես մարդու բնորիան վրայ,

¹⁾ Դասական (կլասիք) բառը յաձախ գործ է ածւում
համարեա «օրինակելի» բանի մաքով:

այն բանի վրայ, ինչ որ մարդկային յարաբերութիւնների մէջ
բնական, բանական եւ արդարացի է: Այդ դէպքում թէն
ազգային ու դասակարգային բարդութիւնները չէին ոչն-
չանում, բայց բնում էին երկրորդական տեղ: հսումայեցին
և յոյնը, բաղաքացին, աշատ-արձակւածը և ստրուկն ամե-
նից առաջ զիտուում էին իրեւ մարդ: Դրանից է, որ մասամբ
հսարաւոր եղաւ որոշ չափով այդ վաղուց մեռած ստրո-
բաժանումների փոխարէն դնել նոր հասարակական համա-
խմբութիւններ և կոչումներ — ֆրանսիացի, դերմանացի,
լիակատար իրաւատէր և կիսափրաւատէր,— և այնուամե-
նայնիւ՝ պահպանել գլխաւորն՝ այսինքն մարդկանց բնական
իրաւունքը մարդու բանական բնութեան վրայ հիմնե-
լու փորձը:

Փիսէ է աւելացնել, որ իբր ելակէս ծառայում էին առան-
ձին անհատի ժամենեն ու կամքը: Այս բանում դասական իրա-
ւաբանների իրաւունքը խիստ կերպով զանազանում է
ինչպէս հանրապետութեան ժամանակի հայացներից, այն-
պէս էլ կայսրութեան վերջերում տարածւած գաղտփարնե-
րից: Հանրապետական շրջանում մարդը գիտուում էր գլխա-
ւորապէս իրեւ բաղաքացի: արտօնեալ փոքրամասնութեան,
այսինքն բաղաքացիների ամեն մի ներկայացուցիչն ամենից
առաջ բաղաքացին համայնքի՝ — բարձրագոյն ամրողջութեան
մի մասն է: Աւելի շատ այդ համայնքի շահը և նրա մասերի
կապակցութիւնն աչքի առաջ ունէին, քան առանձին անհա-
տի շահն ու կամքը. և որքան աւելի հին ժամանակ ենք
մենք վերջնում, այսրան աւելի ուժեղ է բաղաքի, տոնմի,
ընտանիքի ազգեցութիւնը: Միւս կողմից ԱՎ և Վ դարերում
կայսրութիւնը խիստ կերպով իր խնամակալութեանն է են-
թարկում տառանձին անհատների շահը և իրաւունքը. իսկ
նրա կողքին առաջանում է եկեղեցին, որը նոյնպէս որո-
նում է ոչ միայն առանձին անհատների վերկութիւնը, այլ
նրանց սերտ միացումը մի եկեղեցական ամրողջութեան
մէջ, որը Թրիստոնի մարմինն է: Այդ երկու շրջանների
միջավայրում կանգնած է առաջին երեք դարերի կայսրու-
թիւնը, որն, ինարկէ, շատ բան էր պահանջում իր հպա-
տակներից, բայց այնուամենայնի գիտում էր պետութիւնն
իրեւ հասարակութիւնից բարձր կանգնած է, նշանակում է,
հասարակութիւնից գուրս մի պահպան ոյժ. իսկ հասա-
րակութիւնն ինքն՝ իրեւ առանձին անհատների մէջ մշտա-

պէս տուջացող և բայքայրող յարարերութիւնների մէշարքը՝ Ընտանիքը, տոնմը, խմբակցութիւնը (համբարութիւնը), դասակարգերը, քաղաքը, կրօնական համակեցութիւնն—այս բոլոր խմբակցութիւնները ճանաչուած էին միայն իրեւ առանձին անհատների ժամանակաւոր և պետութիւնով պայմանաւորեած միաւորութիւնների Այդ միւութիւններից որևէ մէկի խիստ զարգացումը համարւում էր նոյնքան վտանգաւոր ամենազօր պետութեան համար, որքան և առանձին անհատի ազատութեան բոնարարութեան համար: Կայսրները նրա համար էին այնպէս հալածուած ըրխստոնէական եկեղեցին, որովհետեւ նա գուրս եկաւ ընդհանուր հնազանդութեան շրջանակից և հաստատեց բոլորովին անկախ սկզբունքների վրայ, Դասական շրջանի հոռմէական իրաւունքը գործադրում է անհատականութեան սկզբունքը—հասարակութիւնն իրար հետ թոյլ կերպով կապակցւած առանձին առանձին անհատների բաժանման սկզբունքը:

Բարոյագիտութիւն: Հոռմէական իրաւունքների մէջ թափանցած ընդհանուր գաղափարները մշակւեցին ոչ միայն նրանց համար բարեյաջող պետական կարգերի և իրաւաբանական գիտութեան յաջողութիւնների պատճառով. Նրանց զօրեղ կերպով նպաստեց և փիլիսոփայական շարժումը, որը, ինչպէս և Հոռմի ամբողջ հոգեկան կուլտուրան, սկսւեց Յունաստանում, իսկ յետոյ տարածւեց և արևմուտքում: Հոռմայեցիներն առաւելապէս գործնական ժողովուրդ էին: Դրա համար նրանց աւելի քիչ էին հետաքրքրում վերացական հարցերը, քան յոյներին: Նրանք առանձին ու շարդութիւն դարձին փիլիսոփայութեան այն մասի վրայ, որն անմիջական նշանակութիւն ունի կետանի մէջ—բարոյագիտութեան կամ էտիկայի վրայ: Ի՞նչո՞վ պէտք է մարդու առաջնորդութիւնը իր վարմունքի մէջ: Ի՞նչ է երջանկութիւնը, որին ամենքը ձգտում են: Առաւելապէս այս խնդիրներով էին զբաղւում հոռմէական կայսրութեան շրջանի փիլիսոփաները: Գլխաւորապէս երկու վճիռ

էր Ենթագրուում: Էպիկուրէոս յոյնի օրերից ոմանք այն հայացքին էին, որ երջանկութեան կարելի է հասնել եթէ ոչ բոլոր, գոնէ շատ դէպէրում՝ կեանքի մէջ գւարձութեան (բաւականութեան) արհեստական ընտրութիւնով և անախորժութիւնը հեռացնելով: Հորացիոսի ոտանաւորներից երկում է հենց այդպիսի նուրբ զարգացմամբ մի էապիկուրէական: Թէև հոռմէական բարձր հասարակութեան մէջ կային շատ մարդիկ, որ կեանքն այդպէս հասկանալու միտւած էին, բայց ժողովրդի բնաւորութիւնն ուրիշ տեսակ էր: Հոռմը բարձրացաւ ոչ թէ փոքրովի բաւականութեան որոնումով, այլ պարտականութեան անձնազոհ գործադրութիւնով, ամեն մի քաղաքացու պատրաստականութիւնով հանրութեան բարիքի համար ամեն տեսակ նեղութիւններ և վտանգներ կը ելու: Եւ մինչև անգամ երբ քաղաքցիների մեծամասնութիւնը կորցրեց իր բարոյական օրէնքը՝ լաւագոյն անձերը թեքւում էին գլխաւորաբար դէպի ստոյիկեան փիլիսոփայութիւնը, որը խոր տարրերութիւն էր զնում երջանկութեան և ցանկութիւններին բաւականացում տալու մէջ. ճոխութիւնն ու ամեն տեսակ բաւականութիւնները մարդուն չեն տալիս հանգստութիւն. Նրանց գուրեկանութիւնն արագ բթանում է և թողնում մի տեսակ զառն տականք. ընդհակառակը՝ հիւանդ, աղքատ, բոլոր արտաքին գւարձութիւններից զրկւած մարդը կարող է երջանիկ լինել—երջանիկ այն զիտակցութիւնով, որ առգրում է իր պարտականութիւնները կատարելով և ձշմարտութիւնով. անտարերութիւն դէպի արտաքին բարիքները, անյողդողդ վերաբերմունք դէպի կեանի պատահաները, խելացի սպառականութեան կատարում դարձան ստոյիկեան փիլիսոփայութեան պատշիանելու: Այս տեսակ հայացքները ունեցողի համար արտաքին գորութիւնը կորցնում է իր արժէքը: Նե-

րոնի ուսուցիչ Սենեկան աշխատում է ներկայացնել երկիրն այնպէս, ինչպէս որ նա պէտք է երեար այն մարդուն, որ շատ վեր բարձրացած կը լինէր. մեծ մասը ծածկւած է ջրերով, մի քանի նահանգներն ընկած են կեզիչ տաքութեան մէջ, միւսները սառուցով ծածկւած... Արժէ արգեօք մշտապէս պատերազմել այդ պատճառով: Արքան չնշին կերևան նրա մակերեսովի վրայ շարժւող գնդերն իրանց դրօշակներով, հեծեալ զօրաբաժնները, որ անցնում են գետերով... Միւս կողմից կորցնում է իր նշանակութիւնը հարսափ և աղքատի, ազնւականի և ստրուկի մէջ եղած զանազանութիւնը: Ստոյիկեան փիլիսոփաններից ամենասպացիկն էր մի հասարակ ստրուկ՝ իպիկտետր: Բանականութիւնը եւ պարտականութիւնը ծառայելի են ազատ դարձնում մարդուն, ոչ թէ դրսից նրա վրայ դրւած պատահեանները: Ի՞նչ օգուտ, որ մարդ հիւպատոս է և սերւում է հիւպատոսից: Նա կարող է ստրուկ լինել իր կրքերին: Եւ ընդհակառակը՝ ոչ մի արտաքին բռնութիւն չէ կարող կասպարի տակ զնել հոգին, որովհետեւ մարդու հոգին աստւածային է, և ոչ մի իշխանութիւն ոյժ չունի աստւածութեան վրայ: Այսպիսով ստոյիկեանների վարդապետութեան մէջ երեսում է իր ամբողջ ուժով հոսմէական իրաւունքին ուղղութիւն աւող գաղափարը, որի համաձայն մարդկանց մէջ յարաբերութեան հիմքերը պէտք է լինի մարդու բանական բնութիւնը: Եւ Էպիկտետրի, և Մարկոս Աւրելիոսի մէջ նկատելի է մի ուրիշ գիծ էլքաղաքացին պարտաւոր է ծառայել պետութեան՝ ուժերը ներածին չափ, բայց իշխանութիւնը, պատիւր, յաջողութիւնը չը պէտք է զրաւեն նրան: Այդ բոլորը պէտք է երկրորդական համարել, որպէսզի հեարաւոր լինի անվրդութիւնը պարզով վերաբերել գեսի պարտութիւնը, ըստորացումը, անվրդով վերաբերել գեսի պարտութիւնը, ըստորացումը, անյաջողութիւնը: Կեանքի բոլոր պատա-

հականութիւններից ստոյիկ մարդը քաշում է ինքն իր մէջ—ներանձնանում է և աշխատում ամենից առաջ հասնել իր սեփական ոգու անվրդովութեանը:

Այդ տեսակ պահանջները ծանր էին մարդկանց ^{Կրօնական} _{շարժումը} մեծ ամասնութեան համար: Մարդկութիւնը կարիք էր զգում հսմովելու, որ ամբողջ աշխարհի կեանքը ներկայացնում է մի ներդաշնակ կարգ ու վերին օրինութիւն, որ երջանկութիւն ասելը չէ նշանակում հրաժարում ամեն տեսակ՝ ուրախափիք եւ ժիրաւոր գրգռումներից: Այդ տեսակ համոզում կամ հաստատութիւն կարող էր առաջ միայն կրօնը: Եւ մենք արդէն տեսանք, թէ որպիսի կամակորութեամբ որոշում էր հոսմէական աշխարհը մի նոր կրօն, թէ ինչպէս փորձեցին ամեն տեսակ կրօններ և նրանց միախառնութիւնները, որոնք ասանձին առանձին տկար երեացին, տեսանք թէ ինչպէս արևմտեան՝ խելքի մօտ ու արթուն աստուծապաշտութիւնից կամաց-կամաց անցան արեելեան հզօր պաշտամունքներին: Այս շարժման հետ միասին միշտ փիլիսոփայութեան մէջ տեղի էին ունենում յեղափոխութիւններ: Տարածում է մահաւանդ III զարում, Նեօ-պլատոնական կոչւած զըստը (Նոր-պլատոնական): Նա Աստծուն ներկայացնում էր իրեւ համաշխարհային մի մեծ ոգի, որից բղիւել, բաժանւել են հրկըորդական ոգիների մի ամբողջ շարք: Մարդը կարող է մօտենալ Աստծուն իր արդար, բարոյապէս և ֆիզիկապէս մաքուր կեանքով, զանազան ծէսներ կատարելով: Դրա հետ միասին ամենաարդար և իմաստուն մարդիկ գեռ մինչկ մտնը գուրս են գալիս բնութեան սովորական օրէնքների հպատակութիւնից և զանում են հրաշագործներ: այգպիսի հրաշագործ էին համարում Պիտթագորէսին, իսկ 1 դարի ֆիլիսոփաներից մէկի՝ Ալուլնէսու Տիանացու մասին գեռ իր կենզանութեան ժամանակ մի

ամբողջ շարք ասացւածքներ կազմւեցին. նրան վերագրում էին ամենազիտութիւնն, հիւանդներին բուժելու, մեռեներին յարուցանելու կարողութիւնն, և այլն:

ՃԳՆԱԼՈՐԾՈՒԹԻՒՆ

Վերջապէս քրիստոնէութիւնն ընդունելը մի ելք տևեց մարդկութեան լարւած կրօնական պահանջներին: Եւ նոյն իսկ քրիստոնէութեան մէջ, բացի հերետիկոսական վարդապետութիւնները և նրանց գէմ վարւած կրիւը, նշմարւում էին երկու զլխաւոր կրօնաբարյական ուղղութիւններ: Դեռևս հալածանքների ժամանակ արևելքում կազմւեց մենակեցութիւնը. ճգնաւորները հեռանում էին թէբէտական սարսափելի անսպատը, հրաժարւում էին աշխարհից, փախչում մարդկանցից, մտնում էին մշտատե կուի մէջ մարմանակուն դոյութեան կարիքների և փորձութիւնների հետ, որպէսզի այդ «վարժութիւնով» (ասկէս՝ վարժութիւն. դրանից ասկէտիզմ) համան լիակատար անտարբերութեան դէպի արագին տանջանքներն ուղարձութիւնները և ապրեն միայն հոգու համար, Աստւածութեան վրայ մտածելով, ազօթքներով և զդշումով: Քրիստոնէութեան յաղթանակը կոստանդիանոսի ժամանակ չոչնչացրեց այդ ճգնաւորական (ասկէտական) ուղղութիւնը: Կեանքն այնքան լի էր չարիքներով, հասարակութիւնն այնքան փչացած էր և լի հրապոյրներով, մարդկային բնաւորութիւնը երևում էր այնքան թոյլ և ախտաւոր, որ ռաջսարհի, մարմնի և սատանայի» գէմ կուելը չէր կորցրել իր նշանակութիւնը և շարունակում էր զրաւել մարտնչող սրբերին: Մենակեցութիւնն աւելի և աւելի զարդացաւ և արևելից արևմուտք էլ անցաւ: Ճգնաւորների (էրեմիտներ՝ անսպատականներ) ետեից երեան եկան կինովիս (հանրակեաց) կոչւածները (Κοίνος Βίος ῥնդ-

հանուր կեանք), որոնք ապրում էին միասին և ենթարկում էին որոշ ընդհանուր կանոնների:

Առանձին անհատների փրկութեան համար իրր եկեղեցին, միջոց ծառայող ճգնաւորութեան հետ միասին ընթանում էր հաւատացեալների ամբողջութեան կամ եկեղեցու զարգացումը: Համաշխարհային պատմութիւնը ցոյց է տալիս եկեղեցական իդէալների ահազին նշանակութիւնը մարդկութեան կեանքի վրայ: Կարելի է ասել, որ քրիստոնէութեան երեալուն պէս՝ աշխարհում հարց զրւեց, թէ ինչ փոփոխութեան կենթարկւի դրանով ժողովրդի բաղզը, ինչ ձեռվ եկեղեցին կարող է նպաստել արդարութեան և կարգաւորութեան թագաւորելուն երկրի վրայ: Պակաս չէին այնպիսի մարդիկ, որոնք այդ միջամտութիւնը հասկանում էին շատ անմիջական և կոպիտ ձեռվ: Օրինակ, սպասում էին, որ Քրիստոս կը թագաւորէ, ինչպէս երկրային թագաւոր, և ճշմարտութիւնն ու երջանկութիւնը կը մտցնէ երկրի վրայ: Բայց եկեղեցին այդ տեսակ հայեցակէտ չունէր: Նա քարոզում էր, որ իր դերն է հոգու դաստիարակութիւնը և առաջնորդութիւնը և ոչ աշխարհային վարչութիւնը, թէև այս վերջինս էլ պէտք է առաջնից որոշ կախման մէջ լինի:

Եկեղեցու հայացքների ամենանշանաւոր մեկնաբառ օգոստինունողն էր երանելի Օգոստինոսը, աֆրիկական Հիպատիո քաղաքի Եպիսկոպոսը, որ ապրում էր Վ դարի առաջին կիսում: Նա ստացել էր ամենալաւ նելլենական կըրթութիւն, որ այդ ժամանակներում հսարաւոր էր ստանալ, և մի քանի ժամանակ փայլեց իբրև աշխարհական մարդ և ճաշակաւոր զրադէտ: Բայց բաւական վաղ նա մի կողմ նետեց բոլոր աշխարհային զբաղմունքները, գարձաւ ուղղափառութեան զլխաւոր մարտնչողն արևմուտքում և ամբողջովին նւիրւեց քրիս-

տոնէական իդէալների և վարդապետութեան բացատրութեան հոգսերին:

Նրա շարադրութիւնն «Աստծու թագաւորութեան մասին» պատմական մեծ նշանակութիւն ունի: Այդ շարադրութիւնը հիմք զրեց այն հայացքներին, ուրոնցով առաջնորդում էր արևմտեան քրիստոնէութիւնն ամբողջ միջին դարերում: Կարեւորութեան տեսակետից նրան կարելի է դասել Արիստոտելի պետութեան մասին ունեցած վարդապետութեան հաւասար, միայն այն զանազանութիւնով, որ Արիստոտելիս տալիս է գլխաւորապէս արդէն վերջաւորւած յունական զարգացման գնահատութիւնն, իսկ Օգոստինոսը որոշում է գաղափարներ ապագայի համար: Երկու հեղինակները նման են իրար նրանով, որ զըրում են այն հասարակութիւնների աւերակների մէջ, որոնց իրանք պատկանում են: Օգոստինոսը վկայ էր բարբարոսների սարսափելի արշաւանքներին և արևմտեան հսումէական կայսրութեան աստիճանաբար կործանւելուն: Նա նրան դասում է պատմութեան մեծ միապետութիւնների շարքում: Ասորեստանի կայսրութիւնից յետոյ եկաւ պարսկականը, յետոյ մակեդոնականը, վերջապէս հոռմէականը: Աշխարհը միացնելու այս բոլոր փորձերը նշանաւոր էին, բայց բոլորն էլ հասցըին միայն բոպէական յաջողութիւնների և վերջնական անկման, որովհետեւ շէնքը շնողներին պակասում էր անկիւնաքարը կամ վէմը: Բոլորն էլ շինում էին օսատանայի թագաւորութիւնները, որ բարձրանում էին մարդկանց կուով, կրքերով և ախտերով: Գրա հակառակ՝ այժմ կառուցում է Ասծու բազաւորութիւնը, որ հիմնած է նախախնամութեան խորհրդաւորութեան վրայ, որը կրկին իր գոյութիւնը զգալ է տալիս ապօբնութիւնների և բռնութիւնների մէջ: Արդէն չին կտակարա-

նով մարդիկ բարձրից հրաման ստացան արդար կեանք վարելու մասին: Փրկիչն իր աշխարհ գալով սկիզբ դրեց ճշմարիտ եկեղեցու, որը պէտք է պահպանէ և սարածէ մարդկանց մէջ նրա պատւիրանները: Թողքայքայի Հոռմի փառքը: Նա զարդարում էր սատանայի բռնութեամբ շինւած շէնքը: Ինչպէսոր առանձին անհատ չէ կարող Փրկիւ առանց եկեղեցու միջնորդութեամբ նաև Ասծու օրինութիւնը նաղողելու, այնպէս էլ մարդկանց նազարակութիւնը կարող է Ասծու բազաւորութիւնը դառնալ միայն եկեղեցու օգնութեամբ: Եկեղեցին պարտաւոր է իր վրայ առնել առանձին անհատների դաստիարակութիւնը և բոլոր մարդկային հասարակութիւնների բարձրագոյն առաջնորդութիւնը: Անկարգութիւնը և թշշւառութիւններն օգտակար են, որովհետեւ նրանք ցոյց են տալիս, թէ որտեղ պէտք է որոնել փրկութիւնը:

Այսպիսով որոշւեցին աշխարհի ըմբռնողութեան միջնադարեան երկու նշանաւոր գծերը, որոնք են՝ մարդու մեղանչական բնութեան դատապարտումը եւ եկեղեցու կոչումը դեկափարել բաղամացիական յարաբերութիւնները:

Վ Ե Ր Զ



- | | |
|--|-----|
| 10) Մակեդոնական Միապետութիւնը: | 114 |
| 11) Յունական կրթութիւնը: Անկման շրջան
(431—146թ.) | 128 |

ԵՐՐՈՐԴ ՄԱՍ, ՀՈՌՄ

Ց Ա Ն Կ

I Թարգմանչի կողմից:	Երես
II Ներածութիւն:	3
—	5

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ, ԱՐԵՒԵԼՔ.

1) Եզիզտոս:	11
2) Բարելաստան և Ասորեստան:	19
3) Մարաստան և Պարսկաստան:	25
4) Փինիկիա:	31

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ, ՅՈՒՆԱՍՏԱՆ:

1) Աշխարհագրական ակնարկ:	35
2) Յոյների ամենահին կուլտուրան:	40
3) Սպարտա:	53
4) Աթենք:	59
5) Պարսկական պատերազմներ:	69
6) Աթենքը V դարում:	81
7) Ծաղկման շրջանի յունական գարզացումը (VIII—V դարերում):	89
8) Պէտոնէսեան պատերազմը:	97
9) Սպարտայի և Թէրէի գերիշխանութիւնը:	108

1) Իտալիայի աշխարհագրական նկարագրութիւնը:	138
2) Ամենահին շրջանի Հռոմէական կուլտուրան:	141
3) Պատրիկիների կոփու պլեբէյների դէմ:	147
4) Իտալիայի նուաճումը:	161
5) Միջերկրական ծովի նուաճումը:	169
6) Քաղաքացիական խռովութիւնների շրջանը:	188
7) Հանրապետութեան անկումը:	210
8) Կայսրութիւն:	232
9) Կայսրութեան անկումը:	261
10) Հռոմէական կուլտուրան:	279

Այս

Վ Բ Ի Պ Ա Կ

14-ր երեսի վերջին տողում բաց է թող-
նոած «պլխով և կրծքով» բառերը:

100

100 100 100
100 100 100

11



NL0402896

«Ազգային գրադարան»

